

ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
№ 4 (53)

ԵՐԵՎԱՆ - 2021

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
АРМЕНОБЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. Վ. Խոեցյան (նախագահ),

Մ. Գ. Գիլավյան (գլխավոր խմբագիր),
Ա. Ա. Ավագյան, Ա. Վ. Գալստյան, Ս. Դ. Դանիելյան,
Ա. Գ. Դոլուխանյան, Լ. Մ. Խաչատրյան, Վ. Լ. Կատվալյան,
Ա. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան, Ա. Ա. Մակարյան,
Է. Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,
Մ. Ադամյան (Մեծ Բրիտանիա), Հ. Նալբանդյան (ԱՄՆ), [Ա. Սեփեթճյան]
(Բելրուժ)

Ա. Հ. Հարությունյան (պատասխանատու քարտուղար և տեխնիկական խմբագիր)

Գրանցման վկայական՝ 211.200.00182
Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.
Պարբերականությունը՝ եռամսյա

Բոլոր նյութերն ուղարկվում են գրախոսության:

Հոդվածները տպագրվում են անվճար: Ցանկացողները հանդեսը կարող են ձեռք բերել համալսարանի հաշվեհամարին (1570027790960100) փոխանցելով համարի արժեքը:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-20)
Էլեկտրոնային փոստ՝ hayagitakanhandes@gmail.com
Կայքէջ՝ www.hayagitakan-handes.com

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

ՀՀ Լեզվի կոմիտեի նախագահ

Բան. գիտ. թեկն., դոցենտ

gyurjidav@mail.ru

ՀՐԵԱՆԵՐԻ ԼԵԶՎԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. սեմական լեզուներ, լեզուների անվանացանկ, հրեական լեզու, եբրայեցերեն / եբրայերեն, հրեարեն / հրեերեն, բառային տարբերակ, բառակազմական տարբերակ, ուղղագրական տարբերակ, գրաբար, արևելահայերեն, արևմտահայերեն

Ключевые слова и выражения: семитские языки, перечень языков мира, ивритский язык, еврейский язык, лексический вариант, словообразовательный вариант, орфографический вариант, древнеармянский язык, западноармянский, восточноармянский.

Key words and expressions: Semitic languages, list of world languages, ивритский язык, еврейский язык, лексический вариант, словообразовательный вариант, орфографический вариант, Old Armenian language, Western Armenian, Eastern Armenian.

Հրեաների լեզուն պատկանում է սեմաքամյան ընտանիքի սեմական ճյուղի հյուսիսարևմտյան քանանական խմբին: Մ.թ.ա. II-I հազարամյակներում խոսել են Պաղեստինի հրեաները: Գիրը բաղաձայնական է, ծագել է արամեական գրից (գրվում է աջից ձախ): Հնագույն գրավոր հուշարձանը Հին Կտակարանն է, որի որոշ հատվածներ վերաբերում են մ.թ.ա. XIII-XII դարերին: Մ.թ.ա. VI-V դարերում արամեերենն աստիճանաբար գործածությունից դուրս է մղել հրեաների խոսակցական լեզուն, որը մ.թ.ա. III դարից մեռած լեզու է:

1948 թվականից հրեական լեզվի արդի տարբերակը Բարայելի պետական լեզուն է:

Հրեաների լեզուն անվանելու համար հայերենում ստեղծվել են մի շարք տարբերակներով բառեր՝ կազմված աշխարհի հին ժողովուրդներից

մեկին անվանող **եբրայեցի** (նշանակում է «հրեա, Իսրայելացի» < Եբեր¹), **հրեայ**² / **հրեա**, **ջուղ** բառերից, ինչպես նաև **իվրիտ** և **իվիշ** փոխառյալ լեզվանուններից: Մրանք, իհարկե, նույնարժեք միավորներ չեն, այլ էականորեն տարբեր իրենց ստեղծման ժամանակով, գործառական արժեքով, կանոնականության հատկանիշով, նաև իմաստային դրսևորումներով: Անդրադառնանք այդ լեզվանուններին՝ ըստ բառակազմական հիմքերի:

ԵՐՐԱՅԵՑԻ ՀԻՄՔՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

V դարից վկայվել է **եբրայեցերեն** բառը: Նոր Կտակարանում՝ Ղուկասի և Հովհաննու ավետարաններում, այսպիսի համարներ կան, որոնցում գործածվել են երեք լեզվանուններ. «Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա Յունարէն և Դաղմատերէն եւ **Եբրայեցերէն** գրով թէ Սա է արքայն Հրէից» (Ղուկ. 23.38) և «... եւ էր գրեալ **Եբրայեցերէն**, Դաղմատերէն եւ Յունարէն» (Հովհ. 19.20)³:

Եբրայեցերէն բառը գործածել է նաև Եզնիկ Կողբացին. «.... ոգւոյ և հողմոյ անուն **եբրայեցերէն** և յունարէն և ասորերէն նոյն է»⁴: Բերված նմուշների հիման վրա վստահաբար կարող ենք ասել, որ այս բառը V դարի

¹ Հմմտ. «.... ընդհանրապես կը կարծուի ծագեալ յԵբերայ, երկայնակեաց նահապետաց վերջինէն» և «Կ'երևի թէ Հրեայք այն ատեն օտար ազգերէն կը կոչուէին Եբրայեցի, մինչ անոնց ընտանի անունն էր Իսրայելացի: Իսրայելացիք յետ ժամանակաց Յուդա անունէն կոչուեցան Հրեայ, այսինքն բնակիչք Յուդայի երկրին կամ Յուդայաստանի որ Հայերէն կը կոչուի Հրեաստան» (**Բառարան Սուրբ Գրոց**, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 139):

² Սեմական ծագում ունի: Ըստ Հ. Հյուբշմանի՝ հայերեն **հրեայ** «եբրայեցի» բառն առաջացել է *հուրեայ ձևից, որի **եայ**-ն հայերեն վերջավորություն է, համեմատելի **քրիստոն-եայ**, **պաշտօն-եայ**, **Հրաչ-եայ**, **քաղղեայ**, **քաղեայ** բառերի հետ (Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 134):

³ **Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց**, Երևան, 1997, էջ 91, 118: Հունարեն լավագույն բնագրերը չունեն Ղուկասի ավետարանի «գրեալ ի վերայ նորա Յունարէն և Դաղմատերէն եւ **Եբրայեցերէն** գրով» բառերը, ուստի նոր թարգմանություններում դրանք երբեմն բացակայում են:

⁴ **Եզնիկ Կողբացի**, Եղծ աղանդոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1994, էջ 74: Ի դեպ, արևելահայերեն զուգադիր թարգմանության մեջ ևս **եբրայեցերեն** է (էջ 75):

հայերենի բառային կազմի միավոր է, որ գործածվել է ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն երկերում⁵:

Եբրայեցերեն-ը կազմվել է **եբրայեցի** հիմքի **-եցի** ածանցի ի ձայնավորի անկումով և «լեզու» իմաստն ունեցող **-երեն** ածանցի միացումով:

Ըստ Մ. Աբեղյանի՝ **-երեն** կամ **-արեն** ածանցներով բառերը կազմվում են «բոլոր ազգերի անուններից՝ վերջի **ացի** մասնիկը դուրս ձգելուց հետո. բացառություն՝ **վրացի-վրացերեն**»⁶: Ինչպես տեսնում ենք, նշվում է մեկ բացառություն: Հետևելով Մ. Աբեղյանին՝ Ա. Մուրվալյանը ևս կարծում է, որ «**-երեն** ածանցը ընդհանրապես ազգերի անուններից կազմում է ածականներ՝ նրանց լեզուն նշանակելով, որոնք գործ են անում նաև իբրև գոյականներ»⁷, ինչպես՝ **հայ - հայերեն, ռուս - ռուսերեն, իտալ-ացի - իտալերեն, գերման-ացի - գերմաներեն** և այլն, բայց՝ **վրացի - վրացերեն** (առանց **-ացի** ածանցը կորցնելու): Մատնանշվում է նույն բացառությունը: Մ. Գալստյանը նշում է, որ **-երեն** ածանցով կազմված բառերում որպես նախատիպ դրվում են նաև «ազգերի մի քանի անուններ, կազմված **-ացի//եցի//ցի** ածանցով, ինչպես՝ **վրացերեն, եբրայեցերեն, լիտովցերեն**»⁸:

Ազգի անուն նշանակող ածանցավոր հիմքերով լեզվանունները, ինչպես տեսանք, հայերենում հազվադեպ են. լեզվաբանները նշում են մեկից երեք միավոր: Հավելենք ևս հինգը:

Ահա **հռոմայեցերեն** (< հռովմայեցի) բառի գործածության մի նմուշ XVIII դարի վերջի (1799 թ.) ձեռագրից. «Թե յո՞ր լեզուս գրեցին զԱւետարանն – *Մատթէոս եբրայեցերէն, Մարկոս հռոմայեցերէն՝ ի Պետրոսէ՝ ի Հոսմ քաղաքի, Ղուկաս եւ Յոհաննէս՝ յունարէն*»⁹: Առձեռն բառարանում **հռոմարեն, հռոմերեն** տարբերակները բացատրվում են այսպես՝ «**հռոմայեցերեն, լատիներեն**»¹⁰: Ածանցավոր հիմքով այս

⁵ V դարի հայերենի բառակազմությանը նվիրված աշխատության մեջ **-արեն / -երեն** ածանցներով կազմված բառերի շարքում **եբրայեցերեն**-ը չի հիշատակվում (տե՛ս Լ. **Հովսեփյան**, Գրաբարի բառակազմություն, Երևան, 1987, էջ 196):

⁶ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 254:

⁷ Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 338:

⁸ Մ. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 130: **Լիտովցերեն**-ն արձանագրված է ակադեմիական բացատրական բառարանում (**Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 2, Երևան, 1972, էջ 413), այն **լիտվերեն / լիտվաներեն** լեզվանվան անհանձնարարելի մի տարբերակ է:

⁹ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հմ. 2752, 7ա:

¹⁰ **Առձեռն բառարան հայկազնեան լեզուի**, Բ տպ., Վենետիկ, 1865, էջ 504:

լեզվանունը աշխարհաբարի բառարաններում չի գրանցվել, հանդիպում է նրա **հռոմայերեն** «լատիներեն» տարբերակը¹¹:

Դիտարկենք այս պատահիկը XIX դարավերջի գիտական աշխատությունից. «...արեւելեաններէն՝ ասորերէնն, արաբերէնն ու **եթովպացերէնն**»¹²: Գործածել է նաև Հր. Աճառյանը. «**Եթովպացերէն** կամ հաբեշերէն»¹³ (այսօր ընդունված **եթովպերէն** տարբերակը նույնիսկ չի գործածել):

Հին եգիպտացիների լեզուն այժմ անվանում ենք **եգիպտերէն**, մինչդեռ նախնական տարբերակը եղել է անանցավոր հիմքով՝ **եգիպտացերէն**: Գործածության մեկ նմուշ Հր. Աճառյանից. «**Եգիպտացերէնը** ծանոթ է մեզ մ.թ.ա. 4000 թվից»¹⁴:

Այդպես էլ՝ **բաբելացերէն** և **գոթացերէն**¹⁵:

Լեզվաբանական բառարաններում արձանագրվել են **բաբելացերէն**, **գոթացերէն**, **եգիպտացերէն** և **եթովպացերէն** արդեն հնացած տարբերակները¹⁶: Այս տարբերակները մյուս -**ացի**/-**եցի**/-**ցի** ածանց չունեցող լեզվանունների «ճնշման» հետևանքով գործածությունից դուրս են մղված, կանոնական են համարվում անաձանց տարբերակները **բաբելերէն** / **բաբելոներէն**, **գոթերէն**, **եգիպտերէն**, **եթովպերէն** :

Աստվածաշնչի լեզվի քննությանը նվիրված աշխատության մեջ Վ. Առաքելյանը գրում է, որ «ինչպես այժմ, այնպես էլ Աստվածաշնչում -**արէն**, -**երէն** ածանցները ազգի անուններից կազմում են տվյալ ազգի լեզվին վերաբերող մակբայներ. օրինակ՝ **ասորերէն**, **դադմատերէն**, **եբրայեցերէն**, **լիկայոնարէն**, **հայերէն**, **հրեայերէն**, **յունարէն**», ապա ավելացնում է, որ

¹¹ Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 140,

Էդ. Աղայան, Արդի հայերէնի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 899:

¹² Հ. Յակովբոս վ. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրությունք, Վիեննա, 1895, էջ 162:

¹³ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, «Ներածություն», Երևան, 1955, էջ 526:

¹⁴ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, «Ներածություն», էջ 528:

¹⁵ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 448, 640:

¹⁶ Մ. Հարությունյանց, Հայ-ռուսերէն լեզվաբանական բառարան, Երևան, 1963, էջ 35, 70, 71, Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարաբյուրյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 41, 74, 86, 87, **եթովպացերէն**-ը նաև այստեղ՝ **Էդ. Աղայան**, Արդի հայերէնի բացատրական բառարան, էջ 320:

սրանց մեջ «ոչ մի հնացած բառ չկա»¹⁷: Այնինչ ակնհայտ է, որ **դադմատերեն** «լատիներեն» և **լիկայոնարեն** բառերը հնացած են, **հրեայերեն**-ը մասամբ ձևափոխվել է, իսկ **եբրայեցերեն**-ի փոխարեն գրաբարագետ լեզվաբանը գրքի ուրիշ մասում երկու անգամ նախընտրել է գործածել **եբրայերեն** տարբերակը¹⁸:

Հարց է առաջանում՝ **եբրայեցերեն** բառը նոր ժամանակներում արդյոք պահպանել է իր կենսունակությունը: Հարցի պատասխանն իմանալու համար հետևենք ավետարանների այդ համարներում գործածված **եբրայեցերեն**-ի ընթացքին XIX-XXI դարերի աշխարհաբար թարգմանություններում:

Նոր Կտակարանի արևմտահայերեն հին և նոր թարգմանություններում հիմնականում պահպանվել է գրաբարից ավանդված **եբրայեցերեն**-ը¹⁹: Կան նաև բացառություններ, երբ գործածվել է **եբրայերեն** տարբերակը²⁰: Թարգմանությունների ժամանակագրությանն ուշադրություն դարձնելով՝ պարզ է դառնում, որ **եբրայեցերեն**-ը գործածվել է նախանցյալ և անցյալ դարերի թարգմանություններում, իսկ XX դարավերջի և այս դարասկզբի երկու թարգմանություններում **եբրայերեն** տարբերակն է ընտրվել:

Նոր Կտակարանի արևելահայերեն թարգմանություններում ընդհանուր առմամբ համանման պատկեր է. ա) պահպանվել է **եբրայեցերեն** / **եբրայեցերեն**-ը (դասական և նոր ուղղագրությամբ)²¹, բ) գործածվել է

¹⁷ Վ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984, էջ 91: Երկու լեզվանուն վրիպակով է տպված **հրեաերեն** (առանց յ-ի) և **հունարեն** (բառասկզբի յ-ով)

¹⁸ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 221:

¹⁹ **Աստուածաշունչ** կամ Գիրք Հին և Նոր Կտակարաններու, եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած, Բեյրութ, 1992, էջ 120, 154 (թարգմանությունն արվել է XIX դարի առաջին կեսին), **Սուրբ Աւետարան Յիսուս Քրիստոսի**, աշխարհաբար թարգմանութիւն, աշխատասիրեց Հ. Սրապիոն արք. Ուլուհոճեան, Գ տպագր., Վենետիկ, 1989, էջ 455, 602, **Նոր Կտակարան**, արևմտահայերեն նոր թարգմանութիւն համեմատութեամբ յունարէն բնագրերու, Երուսաղեմ, 1981, էջ 255, **Նոր Կտակարան**, աշխարհաբար թարգմանութիւն, Մեսրոպ վրդ. Ճուրեան, Բեյրութ, 1982, էջ 320:

²⁰ **Աստուածաշունչ. Նոր Կտակարան Յիսուս Քրիստոսի**, նոր աշխարհաբար թարգմանութիւն, Անթիլիաս, 1993, էջ 294, 377 (աշխատասիրող՝ Զարեհ արք. Ազնաուրեան), **Աստուածաշունչ**. Գիրք Հին և Նոր Կտակարաններու, Բեյրութ, 2001, էջ 129, 167:

²¹ **Աստուածաշունչ մատեն** Հին եւ Նոր Կտակարանների, եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած, Շոտուգարտ («Արարատ» անվամբ հայտնի թարգմանությունն է, լուսապատճենված է 1896-ի հրատարակությունից), 1989, էջ

Եբրայերեն տարբերակը (կրկին զույգ ուղղագրությամբ)²², գ) գործածվել են երկու տարբերակներն էլ՝ **Եբրայեցերեն** (Ղուկաս) և **Եբրայերեն** (Հովհաննես)²³, որ զուգաձևության վերաբերյալ լրացուցիչ վկայություն կարող ենք համարել: Ի դեպ, այս վերջին թարգմանության խմբագրված տարբերակում պատկերը տարբեր է. Ղուկասի Ավետարանում լեզվանունը դարձել է **Եբրայերեն**, իսկ Հովհաննեսի Ավետարանում լեզվանունները չկան²⁴:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ վերջին շրջանի արևելահայերեն թարգմանություններում գերիշխողը **Եբրայերեն** տարբերակն է:

Հայերենի մյուս լեզվանունների ազդեցությամբ՝ համաբանության օրենքով **Եբրայեցերեն**-ը «դիրքերը զիջեց» իր սեղմ տարբերակին՝ **Եբրայերեն**-ին: Այս դեպքում **Եբրայեցի** հիմքի **-եցի** ածանցը կրճատվում է, միանում է **-երեն** ածանցը (բնականորեն պահպանվում է **ա**-ից հետո եղած **յ**-ն²⁵):

Ինչպիսի՞ն է բառի գործածության պատկերը գիտական խոսքում:

1194, 1228, **Նոր Կտակարան**, արևելահայերեն նոր թարգմանություն համեմատությամբ յունարեն բնագրերի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1975, էջ 242, 309:

²² **Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների**, արևելահայերեն նոր թարգմանություն, Ս. Էջմիածին, 1994, էջ 116, 147 (նույնը՝ նաև այստեղ՝ **Աստվածաշունչ մատյան Հին և Նոր Կտակարանների**, արևելահայերեն նոր խմբագրություն, Ս. Էջմիածին, 2017, էջ 1295, 1324), **Ավետարան ըստ Հովհաննեսի**, Երևան, 2000, էջ 74, **Աստվածաշունչ. Նոր Կտակարան Հիսուս Քրիստոսի**, աշխարհաբար նոր թարգմանություն, հրատարակության պատ. խմբագիր՝ Դ. Գյուրջինյան, Երևան, 2001, էջ 234, 299: Նույնը՝ ավանդական ուղղագրությամբ՝ **Աստուածաշունչ. Նոր Կտակարան Յիսուսի Քրիստոսի**, Թեհրան, 2001, էջ 300, 383, **Աստվածաշունչ**, «Նոր աշխարհ» թարգմանություն (անգլերենից), Նյու Յորք, 2011, էջ 1617, **Աստվածաշունչ**, Երևան, 2012, էջ 1107, 1140:

²³ **Նոր Կտակարան**, «Նոր Արարատ» արևելահայերեն թարգմանություն, Երևան, 2003, էջ 174, 226:

²⁴ **Աստվածաշունչ մատյան Հին և Նոր Կտակարանների**, թարգմանություն Եբրայական և հունական բնագրերից (Նոր Արարատ), Երևան, 2019, էջ 1226:

²⁵ Լեզվանվան գլխաբառերի ցավալի վրիպակներ կան վերջերս հրատարակված երկու բառարաններում. գլխաբառերում՝ **Եբրաերեն**, **Եբրաեցերեն** (առանց **յ**-երի), բառահոդվածում՝ **հրեյերեն** (ավելորդ **յ**-ով) (**Էդ. Աղայան**, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Երևան, 2014, էջ 290, 784) և **Եբրաերեն**, **Եբրայերեն** (**Ջ. Աղաջանյան**, Արդի հայերենի իմաստաարժեքային զուգաձևությունների բառաբերականական բառարան, Երևան, 2017, էջ 191):

XIX դարի վերջին հայր Ղևոնդ Ալիշանը իր հայտնի «Հայրուսակ»-ում նախապատվությունը տվել է **եբրայերեն** կարճ տարբերակին. «Ս. Գրոց բնագրին (**եբրայերեն**), յորմ և լատին թարգմանութեան մէջ նշանակուած չէ ծառին տեսակն» [Եղեւին (ծառ)], «Մաբաք թոյլ նշանակէ **եբրայերեն**» (Մաբեկ)²⁶ և այլն: Մա գուգաձևության սկզբնավորման վաղ դրսևորումներից է: Հետաքրքրական է, որ ոսկեդարյան տարբերակից հրաժարվել է երևելի հոգևորականը, մեծ գիտնականը: Մեր կարծիքով դա աշխարհաբարով ստեղծագործող բանաստեղծի (որ հանդես էր գալիս Նահապետ ստորագրությամբ) սկզբունքային մոտեցումն է եղել, հանուն նոր, ավելի կարճ տարբերակի:

Հր. Աճառյանն իր երկարատև գիտական գործունեության ընթացքում առհասարակ գործածել է ավանդական **եբրայեցերեն**-ը²⁷: Բայց որ այս տարբերակի «դիրքերը խարխլվել էին», երևում է հենց Աճառյանի մի աշխատությունից, որտեղ միննույն պարբերության մեջ գործածվել են լեզվանվան երկու տարբերակները. «Նույնիսկ այն դեպքում, երբ հրեաները կորցրած չլինեին իրենց լեզուն, դարձյալ նրանք չէին կարող Հայաստանում խոսած լինել **եբրայերեն**, որովհետև պատմությունից գիտենք, որ հրեաները Բաբելոնում գերության ժամանակ կորցրին **եբրայերենը**» և «Հրեաները անշուշտ իրենց կրոնական հաստատությանց մեջ պահած էին **եբրայեցերենը**»²⁸: Գրեթե վստահ ենք, որ **եբրայերեն** գրությունը Աճառյանի գրչի արդյունքը չէ, այլ կողմնակի (օրինակ՝ մեքենագրողի կամ գրաշարի) միջամտության հետևանք: Հետագա շարադրանքում, իհարկե, կրկին **եբրայեցերեն**-ն է գործածվել:

XX դարի երկրորդ կեսին հայ լեզվաբանական գրականության մեջ սկսեց ավելի շատ գործածվել **եբրայերեն** տարբերակը²⁹: Հատկանշական է, որ այս բառն է ընտրվել տվյալ լեզվի դասագրքի և ձեռագրացուցակի

²⁶ **Հ. Ղևոնդ Ալիշան**, Հայրուսակ կամ Հայկական Բուսաբարութիւն, Վենետիկ, 1895, էջ 157, 552:

²⁷ Հմմտ., օրինակ, **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, «Ներածություն», էջ 50, 51, 125 և այլն:

²⁸ **Հր. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 54-55:

²⁹ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1960, էջ 149, **Է. Աղայան**, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 581, **Հ. Ամայան**, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (XVI-XVII դդ.), Երևան, 1971, էջ 110, **Ն. Մկրտչյան**, Բառերի կենսագրությունից, Երևան, 2004, էջ 22, **Լ. Հովհաննիսյան**, Գրաբարի բառապաշարը (V դար), Երևան, 2006, էջ 47 և այլն:

անվանումների մեջ³⁰: Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե գիտնականները լիովին հրաժարվել են **եբրայեցերեն**-ից³¹:

Անրաժեշտ է նշել, որ «եբրայեցերեն» իմաստն է արտահայտում նաև **եբրայեցի** բառը. «**Եբրայեցի** (տպ. հեբրայեցի) խօսեր» (Հովհ. Ոսկեբերան)³²:

ՀՐԷԱՅ ՀԻՄՔՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

V դարի հայերենում վկայվել են հրեաների լեզվի անվան տարահիմք տարբերակներ ևս՝ **հրէարէն** կամ **հրէերէն**: Սրանք գործածվել են հայերեն առաջին գրավոր սկզբնաղբյուրում՝ Սուրբ Գրքի թարգմանության մեջ՝ Հին Կտակարանում: Այսպես, Թագավորությունների Դ. գրքում. «եւ մի՛ խօսիր **Հրէարէն** յականջս ժողովրդեանդ» (18.26), «եւ աղաղակեաց մեծաձայն **Հրէարէն**» (18.28)³³:

Ածանցների տարբերակայնությանը պայմանավորված գուգաձևությունը Նոր հայկազյան բառարանում դրսևորվել է Նեեմիի գրքի գործածության նմուշը ներկայացնելիս. «Ոչ գիտէին խօսել **հրէերէն** (կամ **հրէարէն**)» (13.24)³⁴: Սուրբ Գրքի 1997թ. հրատարակության մեջ **-արէն**-ով տարբերակն է. «Ոչ գիտէին խօսել **հրէարէն**»³⁵:

Հետաքրքրական է լեզվանունների այդպիսի բաշխումը. Հին Կտակարանում **հրէարէն** / **հրէերէն** տարբերակներն են գործածվել, Նոր Կտակարանում՝ **եբրայեցերէն**-ը: Փորձենք մեկնաբանել, թե ինչո՞ւ է այդպես:

³⁰ Հմմտ. **Ա. Հակոբյան**, Արդի **եբրայերեն**, Երևան, 2003 և Յուզակ Մատենադարանի **եբրայերեն** ձեռագրաց, կազմող **Ռ. Պողոսյան**, Երևան, 2017:

³¹ Տե՛ս, օրինակ, **Պ. Բեդիրյան**, Բառերի խորհրդավոր աշխարհում, Երևան, 2003, էջ 5, 247 և այլն:

³² **Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատուր Միրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 645-646:

³³ **Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց**, Երևան, 1997, էջ 423:

³⁴ **Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատուր Միրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 142:

³⁵ **Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց**, Երևան, 1997, էջ 538:

Աստվածաշնչի աշխարհաբար հրատարակություններում կա ն՝ **հրէարէն** և թե՛ **հրէերէն**, ինչպես և **եբրայերէն (Աստուածաշունչ** կամ Գիրք Հին և Նոր Կտակարաններու, եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած, Բեյրութ, 1992, էջ 629): Աստվածաշնչի ռուսերեն կանոնական թարգմանության մեջ **հրէարէն** / **հրէերէն** բառի դիմաց по-иудейски է (Библия, Книги Ветхого и Нового завета, Библейские общества, 1982, էջ 529), իսկ նոր թարգմանության մեջ՝ по-еврейски (Библия, Современный перевод библейских текстов, Москва, 2002, էջ 486), Մարտիի Լյութերի գերմաներեն թարգմանության մեջ՝ jüdisch (Lutherbibel Erklärt, Stuttgart, 1974, էջ 748):

Բաբելոնյան գերության ժամանակ հրեաները կորցրին իրենց լեզուն՝ եբրայեցերենը, և օտարախոս, հիմնականում արամեախոս դարձան: Երուսաղեմ վերադառնալուց հետո նրանք Հուդայի լեզվով չէին խոսում, քանի որ մոռացել էին հրեական՝ հրեաների լեզուն՝ հրեարենը կամ հրեերենը (Նեեմիի գրքի վերոբերյալ համարում ասվում է, որ ազովտացի, ամոնացի, մովաբացի կանանց առած հրեաների զավակների կեսը հրեերեն խոսել չգիտեր, այլ խոսում էր ազովտացիների կամ ուրիշ ազգերի լեզուներով): Հրեաները չէին կարողանում հասկանալ հրեաբար՝ հրեայի պես ասված խոսքը, խոսել հրեայի նման:

Ուշագրավ է, որ **հրեարեն** / **հրեերեն** բառերը գրաբարում նշանակել են նաև «հրեաբար, հրեորեն», նաև «հրեական». հմմտ. «Եւ ոչ հրեաբար դատարկանալ ի սմա հրաման ընկալաք, մինչ զի եւ զկերակուրս անգամ **հրեարեն** ոչ պատրաստել ի սմա»³⁶: Այս տեսանկյունից դիտարկելիս կարող ենք ենթադրել, որ բուն լեզվանունը **եբրայեցերեն**-ն է եղել, իսկ **հրեարեն** / **հրեերեն** լեզվի երկրորդ անունն է:

Հրեարեն կամ **հրեերեն** տարբերակները կազմվել են **հրեայ** հիմքով բառակազմական հիմքի (**ա**)յ-ի անկումով (այդպես է նույնահիմք մյուս բառերում՝ **հրեաբար**, **հրեախումբ**, **հրեական**, **հրեանալ**, **հրեապետ**, **Հրեաստան**, **հրեութիւն** և այլն) և «լեզու» նշանակող **-արեն** և **-երեն** ածանցներով:

Ընդհանուր առմամբ **-արեն** ածանցով հայերենում քիչ բառեր են կազմվել (լեզվանուններին ավելացնենք **փոխարեն**): Գրաբարում **-արեն** ածանցով կազմվել են մի շարք լեզվանուններ՝ **լիկայոնարեն**, **հռովմարեն** և **հռոմարեն** «լատիներեն», **յունարեն**, **պարթևարեն**, **քաղղեարեն**: Մրանցից առաջին երեքը հնացել և գործածությունից դուրս են մղվել, վերջին երկուսը գործածվում են գիտական խոսքում, բայց **-երեն** ածանցով՝ **պարթևերեն**, **քաղղեերեն**: Միայն **հունարեն**-ն է այժմ գործածական մնացել **-արեն** ածանցով (**չինարեն**-ի հետ), նրա **-երեն**-ով կազմված **հուներեն** / **յուներեն** տարբերակը սխալ է համարվում, թեև վկայված է V դարից (Ղազար

³⁶ **Ղևոնդ վարդապետ**, Պատմություն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 85: ՆՀԲ-ում սույն նախադասության մեջ գրված է **հրեերեն** (հ. 2, էջ 142): Հմմտ. արևելահայերեն թարգմանությունը. «Մենք այդ օրը հրաման չատացանք այդ օրը դատարկ մնալու հրեաների նման, որոնք այդ օրը մինչև անգամ **հրեական** կերակուրներ չեն պատրաստում» (**Ղևոնդ**, Պատմություն, Երևան, 1982, էջ 76. թարգմանությունը՝ Ա. Տեր-Ղևոնդյանի):

Փարպեցի) և արձանագրված Հայկազյան, Առձեռն, Մալխասյանցի բառարաններում³⁷:

Կան այս հիմքով կազմված ուրիշ տարբերակներ, որոնք տեղ են գտել ՆՀԲ-ի **հրէայրէն / հրէերէն** բառահոդվածում:

Հրէայերէն-ը բառակազմական տարբերակ է. **-երէն** ածանցն անմիջականորեն միացել է ազգ, ժողովուրդ նշանակող **հրէայ** հիմքին: Հայերենում լեզվանուն կազմելու եղանակներից մեկն է, օրինաչափ կազմություն. հմմտ. **հայ – հայերէն, յոյն – յունարէն, պարսիկ – պարսկերէն, հռոմ – հռոմարէն / հռոմերէն** և այլն:

Հրեարէն-ը ուղղագրական տարբերակ է, որի հիմքը **է**-ով պիտի լիներ, սակայն հայտնի է, որ **հրէայ** բառը հանդիպում է նաև եչով գրությամբ (**հրէայ**), որն էլ տարբերակի առաջացման հիմք է դարձել:

Հրէերէն-ը սխալագրության հետևանք է. այդպես է գրվել արտասանության թելադրանքով: Այս վրիպակն առկա է մի քանի բառարանում³⁸:

ԻՎՐԻՏԵՐԵՆ

Իվրիտերեն բառը կազմվել է **իվրիտ** (միջնորդավորված փոխառություն է ռուսերենից³⁹) լեզվանուն հիմքից **-երեն** «լեզու» նշանակող ածանցով:

Հայկական բազմահատորյա հանրագիտարանը **«Իվրիտերեն»** բառահոդվածում գրում է. «նույն *եբրայերենն* է՝ փոքր տարբերություններով: Պահպանել է վերջինիս ձևաբանական համակարգը, հիմնականում նաև բառապաշարը»⁴⁰, կրել է իդիշի, գերմանական և սլավոնական որոշ լեզուների ազդեցությունը: Ըստ հանրագիտարանի՝ ժամանակակից Իսրայելի պետական լեզուն է⁴¹:

³⁷ **Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատուր Միւրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 375, **Առձեռն բառարան հայկազեան լեզուի**, էջ 599, **Սո. Մալխասյանց**, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջ 419:

³⁸ **Մխիթար Սեբաստացի**, Բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1749, էջ 559, **Առձեռն բառարան հայկազեան լեզուի**, էջ 513 և այլն (տե՛ս հետագա շարադրանքը):

³⁹ Հմմտ. ռուս. иврит < գերմ. Iwrieth < հուն. ἑβραϊκός < արամեերեն ibray, բառացի՝ «Իսրայելի զավակներ» (հմմտ. **Ա. Հայրապետյան**, Օտար բառերի բառարան, Երևան, 2011, էջ 236):

⁴⁰ **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 4, Երևան, 1978, էջ 424:

⁴¹ Ըստ հայերեն նոր տեղեկատուներից մեկի՝ Իսրայելի Պետության պաշտոնական լեզուներն են եբրայերենը և արաբերենը (**Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան**, Երևան, 2012, էջ 44):

Արևմտահայերենն այս բառը չունի, արևելահայերենում հազվադեպ է գործածվել է հիմնականում հայկական բազմահատորյա հանրագիտարանում և նրանից ծագած կամ առնչվող տեքստերում (համացանց և մամուլ): Հայերենի բանասիրական (լեզվաբանական) բառարաններում արձանագրված չէ:

ԻԴԻՇԵՐԵՆ

Իդիշերեն բառի հիմքում ընկած է **իդիշ** փոխառյալ լեզվանունը, որը նույնպես, ինչպես **իվրիտ**-ը, միջնորդավորված փոխառություն է ռուսերենից⁴²: Իդիշը Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում, Ամերիկայում, Հարավային Աֆրիկայում և Իսրայելում բնակվող հրեաների մի մասի լեզուն է (բարբառը), համարվում է ժամանակակից կամ նոր հրեերեն: Ձևավորվել է X-XIV դարերում. հիմքում ընկած են հին հրեերենը և վերին գերմանական բարբառները՝ սլավոնական տարրերի խառնուրդով⁴³: Այս լեզուն, ի տարբերություն ցարդ քննածների, սեմական չէ, այլ պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի գերմանական ճյուղին, սակայն գրի հիմքում սեմագիր հրեական այբուբենն է:

Իդիշերեն խոսել են աշքենագի (աշկենագի) հրեաները (Աշքենագ-ը միջնադարյան Գերմանիայի հրեական անունն է), դրա համար էլ կազմվել է նաև **աշկենագերեն** լեզվանունը⁴⁴:

Հայերենում ընդունված է **իդիշ** լեզվանունը, բայց հանդիպում է նաև հայերեն կազմությունը՝ **-երեն** ածանցով: Օրինակները թարգմանական են (Ֆրանսերենից)՝ «Դիբբուկ կոչված հմայիլները նվիրված են պատժված հոգուն, որն ըստ միջնադարյան հրեական հավատալիքների անմահացվել է

⁴² Ծագել է վերին գերմաներեն jüdisch «հրեական» < գերմ. Jüde «հրեա» բառից (հմմտ. **Ա. Հայրապետյան**, Օտար բառերի բառարան, Երևան, 2011, էջ 216):

⁴³ Հմմտ. Лингвистический энциклопедический словарь, Մոսկվա, 1990, էջ 171:

Նշվում են լեզվի կազմավորման այլ ժամանակաշրջաններ, ինչպես օրինակ՝ X-XII դարեր (**Հ. Պետրոսյան**, **Ս. Գալստյան**, **Թ. Ղարազյուլյան**, Լեզվաբանական բառարան, էջ 117, **В. И. Кодухов**, Введение в языкознание, Մոսկվա, 1979, էջ 312), XII-XIII դարեր (**Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 4, Երևան, 1978, էջ 311):

⁴⁴ **Հ. Պետրոսյան**, **Ս. Գալստյան**, **Թ. Ղարազյուլյան**, Լեզվաբանական բառարան, էջ 117:

Ամ Սկիի **իդիշերեն** դրամայում»⁴⁵, «Նրա երգացանկը հատկապես կազմված էր իդիշերեն և եբրայերեն երգերից»⁴⁶:

Ածանցավոր լեզվանունը հայերենի բառարաններում արձանագրված չէ:

ՋՀՈՒԴԵՐԵՆ

Այս բառը կազմվել է **ջհուդ** «հրեա» արաբերենից փոխառյալ հիմքից՝ - **երեն** ածանցով: Խիստ հազվադեպ է: Գործածված ենք գտնում Բաֆֆու «Կայծեր» վեպում՝ հերոսների երկխոսության մեջ.

«- Ջհուդի տառեր չեն,- պատասխանեց Ջալլադը և շարունակեց իր խոսքը:
- Դուք **ջհուդերեն** իմանո՞ւմ եք»⁴⁷:

Ջհուդ բառը հայերենում ընդհանրապես անարգական երանգ ունի, որի հիման վրա կազմված **ջհուդերեն**-ը համացանցում ոմանք գործածում են այդ երանգավորումով: Օրինակ՝ «Հիշենք Խամսայի մելիքությունը: «Խամսան» **ջհուդերեն** բառ է, նշանակում է՝ 5, և «մելիքն» էլ է ջհուդական բառ, որը նշանակում է «իշխան»⁴⁸: Բաֆֆուց բերված բնագրային օրինակի մեջ, իհարկե, բառը չեզոք է:

Խոսակցական բառային միավոր է, բառարաններում գրանցված չէ:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այժմ ներկայացնենք, թե ինչպիսի՛ն է հրեաների լեզվի անունների և նրանց տարբերակների ներկայացվածության ընդհանուր պատկերը Արևելահայերենի ազգային կորպուս (ԱՐԵՎԱԿ) լեզվաբանական որոնողական համակարգում:

Եբրայեցերեն-ը հանդիպում է ընդամենը 10 համատեքստում (դրանցից 8-ը՝ Հայկական սովետական հանրագիտարանից, մեկը՝ Բաֆֆուց, մեկը՝ «Նոր Դար» թերթից), **եբրայերեն**-ը՝ 163 (52-ը՝ հանրագիտարանում, գեղարվեստական խոսքում՝ Շիրվանզադե, Ստ. Ջորյան, Վ. Փափազյան, Գ.

⁴⁵ **Ճ.-Պ. Սահե**, Հարգանքի տուրք Ֆրեդերիկ Ֆեյդիի (1908-1991) հիշատակին (ֆրանսերենից թարգմանեց Ա. Բոզոյանը) / «Պատմա-բանասիրական հանդես», 1991, թիվ 1, էջ 82:

⁴⁶ **Շ. Ազնավուր**, Անցած օրեր, Երևան, 2004 (ըստ ԱՐԵՎԱԿ-ի) (թարգմանիչ՝ Հ. Գասպարյան):

⁴⁷ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1986, էջ 345: Ասենք, որ նույն վեպում՝ մեկ այլ երկխոսության մեջ, գործածվել է **եբրայեցերեն** ավանդական բառը. «Բանտի մեջ սկսեց **եբրայեցերեն** սովորել՝ Հին Կտակարանի հետ լավ ծանոթանալու համար» (էջ 425):

⁴⁸ <https://archive.168.am/articles/25907>, 20.01.2011 (մուտք՝ 30.03.2021):

Էմին, Գր. Գուրգաղյան, Ս. Վարդանյան, նաև թարգմանական՝ Ֆ. Վերֆել, Ա. Ֆրանս, Վ. Սարոյան, Նոր Կտակարան, մամուլում), **հրեերեն**-ը՝ 23 համատեքստում (դրանցից 10-ը՝ հանրագիտարանում, մնացածը՝ Հին Կտակարանում, Ա. Չեխովի, Ա. Ռիբակովի երկերի թարգմանություններում, այլ տեքստերում), **իվրիսերեն**-ը՝ 7 համատեքստում (բոլորն էլ հանրագիտարանում), **ջիուդերեն**-ը՝ 1 (Րաֆֆու վերոբերյալ օրինակը), **իդիշերեն**-ը՝ 1: **Հրեարեն, հրեայերեն և հրեաերեն** տարբերակները չկան 110 միլիոն բառագործածություն ամփոփող կորպուսում:

Այսպիսով՝ ըստ նվազող հաճախականության՝ քննարկվող բառերը դասավորվում են այսպես՝ **եբրայերեն, հրեերեն, եբրայեցերեն, իվրիսերեն, ջիուդերեն և իդիշերեն**: Վիճակագրական տվյալները կարևոր հիմք կարող են լինել բառարանագիրների համար, որոնք վերջապես ինչ-որ չափով կհրաժարվեն այլևս չգործածվող տարբերակները բառարաններ ներմուծելուց՝ այդպես նպաստելով լեզվանունների կանոնարկմանը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայերենում հրեաների լեզուն անվանող բառերը «լեզու» նշանակող – **երեն / -արեն** ածանցներով կազմվել են ազգ, ժողովուրդ նշանակող **եբրայեցի, հրեայ (հրեա)**, ինչպես նաև **ջիուդ** բառերից, **իվրիս** և **իդիշ** լեզվանուններից:
2. Հայերենում հրեաների լեզուն անվանելու համար կազմվել են հետևյալ բառերն ու նրանց տարբերակները՝ **եբրայեցերեն (եբրայեցերեն), եբրայերեն (եբրայերեն), հրեարեն (հրեարեն), հրեերեն (հրեերեն), հրեայերեն / հրեայերեն, ջիուդերեն, իվրիսերեն և իդիշերեն** (հազվադեպ են): Նաև սխալագրությամբ՝ **հրեերեն, հրեաերեն, եբրաերեն** և այլն:
3. **Եբրայեցերեն, հրեարեն** կամ **հրեերեն** բառերը գրավոր ավանդվել են V դարից, **իվրիսերեն**-ը և **իդիշերեն**-ը XX դարի կազմություններ են:
4. Քննարկվող բառերը միավորվում են «հրեաների լեզու» ընդհանուր իմաստով, բայց կան իմաստային և ոճական-գործառական տարբերություններ. **հրեարեն**-ը գրաբարում նշանակել է նաև «հրեաբար», **եբրայերեն**-ը գործածվում է գիտական, պաշտոնական խոսքերում, այնինչ **ջիուդերեն**-ը խոսակցական բնույթ ունի և այլն:
5. Արդի հայերենի գրական երկու տարբերակներում այժմ գործածական է գերազանցապես **եբրայերեն**-ը: Այն համահայերենյան բառային միավոր է, **հրեերեն**-ը բնորոշ է արևելահայերենին, **հրեարեն**-ը՝ արևմտահայերենին, սակայն գործածությունից դուրս է մղված:

6. **Եբրայեցերեն**-ը հայերենի արդի փուլում հնացած է, հազվադեպ գործածվում է լեզվաբանական և կրոնատեղեցական աշխատություններում:

Դավիթ Գյուրջինյան

Հրեաների լեզվի հայերեն անունները և դրանց տարբերակները
Ամփոփում

Հրեաների լեզուն անվանող հայերեն բառերն ու տարբերակները կազմվել են «լեզու» նշանակող **-երեն / -արեն** ածանցներով ազգ, ժողովուրդ նշանակող **եբրայեցի, հրեայ (հրեա)** և **ջիուդ** բառերից, **իվրիտ** և **իդիշ** լեզվանուններից: Դրանք են **եբրայեցերեն / եբրայեցերեն, եբրայերեն / եբրայերեն, հրեարեն / հրեարեն, հրեերեն / հրեերեն, հրեայերեն / հրեայերեն, ջիուդերեն, իվրիտերեն** և **իդիշերեն**:

Եբրայեցերեն, հրեարեն կամ **հրեերեն** բառերը գրավոր ավանդվել են V դարից, այնինչ **իվրիտերեն**-ը և **իդիշերեն**-ը XX դարի կազմություններ են:

Քննարկվող բառերը միավորվում են «հրեաների լեզու» ընդհանուր իմաստով, բայց կան իմաստային և ոճական-գործառական տարբերություններ. **հրեարեն**-ը գրաբարում նշանակել է նաև «հրեաբար», **եբրայերեն**-ը գործածվում է գիտական, պաշտոնական խոսքերում, այնինչ **ջիուդերեն**-ը խոսակցական բնույթ ունի և այլն:

Արդի հայերենի գրական երկու տարբերակներում այժմ գործածական է գերազանցապես **եբրայերեն**-ը: Այն համահայերենյան բառային միավոր է, **հրեերեն**-ը բնորոշ է արևելահայերենին, **հրեարեն**-ը գործածությունից դուրս է մղված: **Եբրայեցերեն**-ը հայերենի արդի փուլում հնացած է:

Давид Гюрджинян

Армянские названия еврейского языка и их варианты
Резюме

Армянские слова, называющие еврейский язык, составлены суффиксами **-երեն / -արեն** (означают «язык») на основе этнонимов **եբրայեցի, հրեայ** «еврей», **ջիուդ** «жид», а также названий языка - **իվրիտ** «иврит», **իդիշ** «идиш». Составлены следующие слова и их варианты: **եբրայեցերեն / եբրայերեն, հրեարեն / հրեերեն / հրեայերեն, ջիուդերեն, իվրիտերեն** и **իդիշերեն**.

Названия **եբրայեցերեն, հրեարեն** и **հրեերեն** «еврейский язык», «иудейский язык» письменно засвидетельствованы в V веке, в переводе Библии.

В обсуждаемых словах есть семантические, функциональные и стилистические различия. Слово հրէաբէն в древнеармянском означает не только «еврейский язык», но и «по обычаями евреев», «как еврей» и т.д. Название երրայերեն со значением «древнееврейский язык» используется в научных и официальных текстах, в то время как редкое ջհուղերեն «язык жидов» имеет неодобрительный характер.

В обоих литературных вариантах современного армянского языка в настоящее время используется преимущественно краткий вариант երրայերեն «еврейский язык» (без суффикса -եց/ի/, обозначающий народ, нацию), которая является общеармянской лексической единицей. Традиционный вариант երրայեցերեն в настоящее время считается устаревшим.

David Gyurjinyan

Armenian names of the jewish language and their variants

Summary

The Armenian words for the Hebrew language are composed on the basis of the ethnonyms երրայեցի, հրէայ (հրէա) "Jew", ջհուղ "Zhid", as well as the names of the languages - իվրիտ "Hebrew", իդիշ "Yiddish" with the suffixes -երեն / -արեն (meaning "language"). The following words and their variants are composed: երրայեցերեն / երրայերեն, հրէաբեն / հրեերեն / հրէայերեն, ջհուղերեն, իվրիտերեն and իդիշերեն.

The names երրայեցերեն, հրէաբեն и հրեերեն "Hebrew language", "Jewish language" were acknowledged in writing in the 5th century, in the translation of the Bible.

There are semantic, functional and stylistic differences in the discussed words. The word հրէաբեն in ancient Armenian means not only "Hebrew language", but also "according to the customs of the Jews", "like a Jew", etc. The name երրայերեն meaning "Hebrew" is used in scientific and official texts, while the rare ջհուղերեն "language of the Jews" is frowned upon.

In both literary versions of the modern Armenian language, at present, the predominantly short version of երրայերեն "Hebrew language" (without the suffix -եց/ի/, meaning people, nation) is used, which is a common pan-Armenian lexical unit. The traditional version of երրայեցերեն is now considered outdated.

Խմբագրություն է ուղարկվել 20.06.2021թ.

Հանձնարարվել է գրայնություն 05.07.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06. 10. 2021թ.

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան
Բան. գիտ. թեկն., դոցենտ
susannagrigoryan@ysu.am

ՄԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երևանի պետական համալսարան
Բան. գիտ. թեկն., ասիստենտ
sirarpikarapetyan@ysu.am

**ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՅՈՒ ՀՈԳԻՈՐ
ԵՐԳԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Հովհաննես Երզնկացի, բառապաշար, նախածանց, վերջածանց, տաղաչափական, աշխարհըմբռնում, լեզվամտածողություն, շարական, ներբող, տրակտատ:

Ключевые слова и выражения: Ованес Ерзнкаци, лексика, префикс, суффикс, метрический, миропонимание, лингвистическое мышление, песнопение, ода, трактат.

Key words and expressions: Hovhannes Yerznkatsi, vocabulary, prefix, suffix, metric, worldview, language thinking, church psalm, ode, treatise.

Միջնադարյան տաղերգությունը հայ բանաստեղծության կարևորագույն բաժինն է: Հայ դասական բանաստեղծները տարբեր չափերով ու մակարդակով զարգացրել են միջնադարի հայկական չափածո գրականությունը, որն էլ իր ազդեցությունն է թողել հայ ազգային նկարագրի, մտավոր և հոգևոր կյանքի վրա: 13-16-րդ դարերի քնարերգությունը, ի տարբերություն նախորդ շրջանի, առանձնանում է թեմաների բազմազանությամբ, գրական նոր որակով, քնարական արվեստի նվաճումներով: «Ծիածանի յոթ գույներով ճաճանչող, բոլոր թանկագին քարերի փայլով շողշողացող, հոտավետ, ինչպես դաշտային ծաղիկներն ու քնքշացող բույրերը, մերթ անտառի վտակների նման կարկաչափոս, մերթ լեռնային գետակների պես շառաչող, քնքուշ սիրո քաղցրազվարճ բառերն ու հաղթանակած կրքի այրող խոսքերն իմացող, միշտ կուռ, ներդաշնակ, մասերը ընդհանուր մտահղացմանը ենթարկել կարողացող միջնադարյան հայ քնարերգությունը հայկական ոգու իսկական հաղթանակն է համաշխարհային պատմության մեջ»¹:

¹ Поэзия Армении, под. Ред. В. Брюсова, 2-ое изд., Ереван, 1966, стр. 52-53.

Հովհաննես Երզնկացին՝ հայ գիտական մտքի նշանավոր ներկայացուցիչը, հանրագիտակ մտածողը՝ Պլուզ մականունով, ծնվել է Մեծ Հայքի Եկեղյաց գավառում՝ հավանաբար Երզնկայում՝ մոտավորապես 1220-1230-ական թվականներին: Հայտնի է, որ Երզնկան պաշտամունքային վայրերով հարուստ անվանի կենտրոն էր, կրթական երազելի օջախ, որտեղ իրենց գիտական մկրտությունն էին ստանում բազմաթիվ ուսումնաստենչներ: Երզնկացին նախնական կրթություն ստացել է Լուսավորչի լեռներում գտնվող սուրբ Մինասի անապատում, իսկ հետագայում աշակերտել է հռչակավոր գիտնական Վ. Արևելցուն և դարձել վարդապետ: Նա ծավալել է հասարակական-քաղաքական, եկեղեցական գործունեություն, ստեղծել պատմագիտական, գիտական ու գեղարվեստական բարձրարժեք գործեր, քերականական ձեռնարկ: Մահացել է 1293 թ. Ակների վանքում՝ երկու տարի Կիլիկիայի վանքերում հուսահատ ու պանդխտաբար շրջելուց հետո:

Հովհաննես Երզնկացու կամ Պլուզի անունով պահպանվել են թե՛ արձակ, թե՛ չափածո հարյուրից ավելի ստեղծագործություններ, որոնց մեջ արծարծվում են գրական, երաժշտական, բժշկագիտական, իրավագիտական, հոգեբանական և բազմաբնույթ այլ հարցեր՝ փիլիսոփայական խոր ընդհանրացումներով, ճշմարիտ ու խստապահանջ վերլուծություններով: Նրան հետաքրքրել են քերականությունը, նկարչությունը, երաժշտությունը, ճարտարապետությունը, բնագիտությունը, տիեզերագիտությունը, բժշկագիտությունը: Մեծ բանաստեղծը հեղինակ է շարականների, տաղերի, ներբողների, որոնք կյանքի կարոտ են ու սեր, ողբ ու գանգատ, դրամատիկ երկխոսություններ են անցավորի ու հավիտենականի՝ Ադամի և Աստծու, մարդու և Աստվածամոր միջև, որոնց նյութը հեղինակի երկրային անանց ցավն է՝ ժողովրդի, երկրի անվտանգությունն ապահովելու մշտահոլով ու անմոռաց հոգսը²:

Իր ստեղծագործություններում Երզնկացին ողբում է իր հայրենիքի ամայի ու անբնակ վայրերը, կիսաքանդ խորաններն ու տաճարները, իր գերեզմարված ու ցրված ժողովրդի անմխիթար վիճակը: Բայց մյուս կողմից նաև սփոփանքի ու լավատեսության կոչ է անում, հաղթանակ ու խրախույս կարդում իր ժողովրդին, մաղթում իմաստություն՝ վիրավոր հայրենիքը կրկին շենացնելու, իր բազմահոգ ու բազմաչարչար երկրի տերը լինելու: Գրիգոր Լուսավորչին նվիրված տաղում հեղինակն իր մորմոքն է արտահայտում ժողովրդի պանդուխտ զավակների, ավերված խորանների

² Արմենուհի Երզնկացի Սրայյան, Հովհաննես Երզնկացի, Բանք չափաւ, Եր., 1986, էջ 11:

ու տաճարների, իր երկրի անմխիթար վիճակի համար, նաև փորձում սփռվել և հավատ ներշնչել:

Սույն հոդվածում անդրադարձել ենք Հովհաննես Երզնկացու ստեղծագործության մեկ հատվածին՝ հոգևոր երգերին՝ շարականներ, ներբողներ և հայտնի տրակտատը, որոնք ոչ միայն դավանաբանական տեսանկյունից են արժեքավոր, այլ նաև բանասիրական: Երզնկացու հոգևոր երկերը սերմանում են ազգային արժանապատվություն, հայրենասիրական ոգու զորացում, մարդկային մտքի արթնացում: Դրանք հաստատում են բարին, փորձում են ուղղել մարդկանց մեջ եղած արատները, բարձրացնել սերնդի բարոյական ու մտավոր մակարդակը: Մեծ բանաստեղծի հոգևոր երգերի առանցքը հեղինակի խորհրդածություններն են բնության, Աստծու, մարդու և ինքն իր հետ:

Մենք մասնավորապես անդրադարձել ենք Հ. Երզնկացու հոգևոր երկերում տեղ գտած նորակազմությունների բառակազմական կաղապարներին, դրանց կազմության եղանակին: Հ. Երզնկացու չափածոն առանձնանում է հարուստ բառապաշարով, բազմազան բառակազմական դրսևորումներով և խորիմաստ բաղադրություններով: Առանձնացրել ենք հարյուրից ավելի նոր բառեր՝ ի համեմատություն «Նոր հայկազեան», Առձեռն, Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան»-ի, Լ. Հովհաննիսյանի «Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր» բառարանների³: Սույն հոդվածում չենք ներառել հեղինակային այն նորակազմությունները, որոնք արձանագրված են վերոբերյալ բառարաններում Հ. Երզնկացու անվամբ թողնելով դրանք հետագա ուսումնասիրության, և հեղինակային նորակազմություն ենք համարել բոլոր այն բառերը, որոնք ընդհանրապես չկան մեր նշած բառարաններում:

Հ. Երզնկացին ներքին նուրբ զգացողությամբ է ստեղծում նոր բաղադրություններ, որոնք պատճառաբանված են և քերականորեն ճիշտ: Նկատելի է, որ երբեմն հեղինակի ստեղծած նորակազմություններն արդարացվում են բանաստեղծական տաղաչափական նկատառումներով: Հ. Երզնկացին խիստ ուշադիր է լեզվի մաքրությանն ու պարզությանը, իր բառազանձի ընտրությանն ու արտահայտման ձևին, տիրապետում է բառի նրբիմաստներին, կշռին ու ներգործության ուժին: «Բանաստեղծը հոգեբանի

³ Տե՛ս Գ. Աւետիքեան, Խ. Միրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, 1836-1837(այսուհետ՝ ՆՀԲ), Մ. Աւգերեան, Գր. Ճէլակեան, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865, Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004, Լ. Հովհաննիսյան, Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010 :

ու իմաստասերի բացառիկ խորաթափանցությամբ է զգում բառի ու բանի ներունակության երանգաշատ ծալքերն ու արժեքը, ներգործության բազմաբնույթ ուժն ու խորությունը, ըստ ժամանակի ու տեղի համապատասխան ընտրություն կատարելու անհրաժեշտությունը... Տաղերգուի հոգևոր երգերի մտահղացումն արտահայտված է ...մեծ հուզականությամբ, ն՛քնարական, ն՛ դրամատիկական շնչով, գեղեցիկ պատկերների, համեմատությունների, բնակարների միջոցով, գործողությունների, երկխոսությունների շարժուն խոսքի, կրկնակների ու բաղաձայնությունների օգտագործմամբ, երաժշտականության հասնող վարպետությամբ»⁴:

Օգտագործելով հայերենի բառաբարդման անսպառ հնարավորությունները՝ հեղինակը շրջանառության մեջ է դրել տարատեսակ բարդություններ՝ հաստատելով դրանց գոյության իրավունքը՝ իբրև մեր լեզվին ոչ օտար ու ցանկալի նորաբառեր: Հ. Երզնկացու հոգևոր երգերում նրա ստեղծած յուրաքանչյուր նոր բառաձև հեղինակի անհատական ոճի, ինքնատիպ մտածողության արդյունք է և ծառայում է՝ ընկալելի դարձնելու պատկերը՝ պայմանավորելով բանաստեղծության իմաստային խորքը, մեղեդիականությունն ու հնչեղությունը. ամեն նոր բառ պատճառաբանված է ու տեղին, հայկաբան է, օրինաչափ ու նպատակային: Երզնկացիի բառաստեղծման թե՛ բարդության, թե՛ ածանցման եղանակին դիմելիս չափավոր է և զգույշ՝ բարձր ու վսեմ գաղափարները ճշգրիտ արտահայտելու, ընթերցողին իր ներհուն մտքերը հնարավորինս մատչելի ներկայացնելու համար: Բարդությունների և առհասարակ բոլոր նորակազմությունների քննությունը ցույց է տալիս մի կարևոր առանձնահատկություն. հեղինակը ստեղծում է այնպիսի բառեր, որոնք ձուլվում են բանաստեղծական ընդհանուր հյուսվածքին:

Նորակազմ բառերի մեջ ըստ խոսքիմասային պատկանելության գերակշռում են ածականական կազմությունները՝ *աղօթանման* (207), *աստուազարդ* (151), *արփիադեզ* (152), *կայծակնաթափ* (261) և այլն: Կա նորակազմ մեկ գոյական՝ *հանդիմանիչ* (202), երկու բայ՝ *դիմականալ* (244), *պտղաձեցուցանել* (156):

Ըստ բարդությունների խոսքիմասային արտահայտության՝ նորակազմ բարդ բառերի կառուցվածքային կաղապարներում առաջին հերթին ակտիվություն է դրսևորում գոյականը: Բաղադրյալ բառերի մեծ մասը կազմված է կենսունակ բառակազմական կաղապարներով, որոնցում հաճախված են հոդակապով բարդությունները:

⁴ Արմենուհի Երզնկացի Սրապյան, նշվ. աշխ., էջ 20:

Անհողակապ բարդ նորակազմությունները երկուսն են՝ *աստուծուսոյց* (164), *փեսասեր* (145):

Գոյական+ գոյական-փայտակերպ(155)

Գոյական + ածական-աղօթանման (207), կայծակնաթաւ (261)

Գոյական+բայ- աստուազարդ (151), աստուծուսոյց (164), փեսասեր (145)

Ածական+ գոյական- սակաւակեան (251)

Մակբայ+ գոյական- առաջահրաւէր (138)

Բերենք բարդ նորակազմությունների գործածության մի քանի օրինակ.

Հրոյ ցոլմունք *կայծակնաթաւ* փայլատական//Ի ծոցս ամպոյ հողմով հոսեալ հուր կիզական (261):

Ազն ազնուական ընտրեալ *յառաջահրաւէր* կոչմամբ, //Գերագոյն անուան ժառանգորդ (138):

Սուրբ Ներսէս...*աղօթանման* հայցմանն եւ խնդրուածոցն պարգեւ (207):

Հ. Երզնկացին իրեն անհրաժեշտ նոր գաղափարն արտահայտելու համար մեծապէս օգտվել է նաև մեր բառապաշարի հարստացման ամենավստահելի և տարածված միջոցից՝ ածանցումից: Նրա ստեղծած ածանցավոր նորաբառերը բանաստեղծական խոսքում ճիշտ են ու անփոխարինելի՝ ասելիքի բովանդակության ու արտահայտման ներդաշնակության առումով: Երբեմն նորաստեղծ ածանցավոր բառերը զարմանալի են ու անսպասելի, նույնիսկ ինչ-որ չափով արհեստական, սակայն հեղինակը կարողանում է իր ոճը ընկալելի դարձնել ընթերցողին՝ այս նորաստեղծումներով ըստ հարկի ընդգծելով ասելիքն ու արտահայտել խտացած ապրումները: Պետք է ընդգծել, որ հենց ածանցավոր նորակազմություններն են դառնում միջոց արտահայտելու Հ. Երզնկացու լեզվամտածողությունն ու ոճի ինքնատիպությունը: Ածանցմանը դիմելու անհրաժեշտությունը պայմանավորվում է իր փիլիսոփայական խոհերի ու ընդհանրացումների արտահայտման, որն է երևույթի գունային խտացման կամ իմաստային նոր երանգի հավելման մեջ:

Հոգևոր երգերի հնչյունական ներդաշնակության, խոսքի երաժշտականության ու արտահայտչականության համար հեղինակը նոր բառի համար պարբերաբար կիրառում է նույնաբնույթ հնչյունական կազմ, որն արտահայտվում է նույն ածանցի կրկնությամբ. հատկապես բազմաթիվ անգամ կրկնվում է *-ական* ածանցը՝ ամառն*ական* (247), երկբայ*ական* (255), թանձր*ական* (246) և այլն: Այս միջոցով չափածո խոսքում առաջ է գալիս բանաստեղծական յուրահատուկ համանվագայնություն: Ածանցման հիմնակաղապարն իրենից ներկայացնում է մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևույթի՝ ածանցի բաղադրություն, իսկ ըստ հիմնական ձևույթի նկատմամբ ածանցի գրաված դիրքի՝ դրանք բաժանվում են նախաածանցավոր և վերջածանցավոր կաղապարների, որոնցից վերջինները մշտապես

զերակշռում են: Ածանցավոր բառերի սերող հիմքերը կարող են լինել ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ կազմություններ, ըստ որի էլ առաջանում են նախածանցների և վերջածանցների, ինչպես նաև տարբեր ձևավորում ունեցող հիմքերի ու ածանցների գույզորություններ: Նախածանցավոր կաղապարների մեջ Հ. Երզնկացին հաճախ է գործածում *ան-* նախածանցը՝ *անշփոթական* (264), *անպիտանական* (141), *անօգտական* (258), *նախ-* ածանցը՝ *նախատեղծական* (265):

Հաճախադեպ են սերող հիմք + վերջածանց կաղապարով նորակազմությունները, որն անշուշտ բխում է հայերենի բառակերտման առանձնահատկություններից, որտեղ վերջածանցումն ավելի կենսունակ է: Հ. Երզնկացու բառապաշարում զգալիորեն արդյունավետ են արմատ+վերջածանց(ներ), արմատ+վերջածանցավոր բառ մասնակաղապարները՝ հետևյալ վերջածանցներով՝ *-ական*՝ ամառն*ական* (247), աշխատ*ական* (268), աշնան*ական* (247), բարբառ*ական* (249), գիճ*ական* (236), երկբայ*ական* (255), թանձր*ական* (246), թիւր*ական* (258), խառնակ*ական* (266), խոցոտ*ական* (265), կրետ*ական* (240), հասար*ական* (264), հեռ*ական* (257), հոռոմ*ական* (245), մաշող*ական* (243), մրրկ*ական* (246), նշող*ական* (244), վնաս*ական* (251), տազնապ*ական* (259), ունայն*ական* (258), փայլատ*ական* (261), *-ելի*՝ ներբող*ելի* (145), *-իչ*՝ թռուց*իչ* (196), հանդիման*իչ* (202), հոգիացուց*իչ* (215): Հետաքրքիր են առաջին կրկնավոր բաղադրիչով ածանցավոր նորակազմությունները՝ բարբառ*ական* (249), կասկած*ական* (251): Իմաստային առումով առանձնանում են այնպիսի ածանցավոր նորակազմությունները, որոնց հիմքում հատուկ անուններ են, ինչպես՝ գամր*ական* (239), լիբե*ական* (240), կենտուր*ական* (154), սինե*ական* (171), սուրեն*ական* (154):

Հանդիպում նաև նախածանցավոր բառ + վերջածանց կաղապարով նորակազմություններ՝ *անշփոթական* (264), *անպիտանական* (141), *անօգտական* (258), *պարբերական* (239): Հ. Երզնկացին հետաքրքիր նորակազմություններ է ստեղծել նաև բայական ածանցներով. բայերի կերտումը այլ խոսքի մասերից տեղի է ունենում պարզապես բայական վերջավորության կցումով կամ *-անալ* բաղադրյալ բայակերտ ածանցով՝ դիմակ*անալ* (244), պատճառական ածանցով՝ պտղաճեցուցանել (156):

Բերենք բնագրային օրինակեր.

Ահ եւ երկիւղ եւ մահաբեր *կասկածական*, // Եւ այլ բազում մասանց իրաց գուշակական (251): Յանապատական վարս *թռուցիչ* երկնահաս (196): Ի *կենտուրական* ծնունդսն բուրումն անուշից խնկոց ծածկեալ (154):

⁵ Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 300:

Եկաւորին ձեռքն են եւ ուսքըն **գամրական**, եւ Խեցգետնի լանջք կոչեցեալ են Հայաստան (239):

Հ. Երզնկացու ստեղծագործությունը վկայությունն է իմաստասեր քերթողի աշխարհայացքի ու լայնախոհության, նրա արվեստի բարձր մակարդակի ու իր մարդկային նկարագրի: Գրաբարը նրա գրչի տակ ճոխ է, պարզ, հասկանալի, կենդանի ու երաժշտական: Լավագույն բնութագիրն իրենն է, թե իր գործը «դեղ է ցաւելի կենաց, եւ իբրեւ զհատ ցորենոյ՝ սերմանել ի սիրտս ձեր, յաճեցումն բազմապատիկ պտղոց, եւ իբրեւ զգաւազան հաստատուն ի ձեռս ձեր՝ գտանել զհուն անցից հորձանահոս գետոց փորձանաց մեղաց, կամ խթան ընդոստուցիչ ի քնոյ երազական քնից...»⁶:

Սուսաննա Գրիգորյան, Սիրարփի Կարապետյան
Об одном из способов передачи слов-реалий в русских переводах армянского исторического романа Раффи «Самвел»

Резюме

Полноценное воспроизведение художественного исторического произведения в переводе требует отображения индивидуального стиля автора - его специфических приемов исторической стилизации, отражающихся в языковой системе произведения, что в свою очередь предполагает оценку качества перевода с позиций воспринимающего языка и культуры, требующих от переводчика создания фраз, подчиненных логике и эстетике русского языка, иначе говоря, фраз, звучащих по - русски.

Сопоставительный анализ оригинала исторического романа Раффи «Самвел» с его переводами на русский язык вырисовывает картину достижения на протяжении почти полувека понимания необходимого сочетания вышеназванных факторов, демонстрируя зависимость качества перевода не только от индивидуальности, таланта, «вкуса», опыта, интуиции и чутья переводчика, но и от его мировоззрения, национальной среды, эпохи и литературного окружения.

Լուիզա Տեր-Սարգսյան

Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի ռուսերեն թարգմանություններում ազգային բառերի արտացոլման միջոցներից մեկի մասին Ամփոփում

Թարգմանության մեջ պատմավեպի լիարժեք վերարտադրումը ակնկալում է հեղինակի յուրահատուկ ոճի արտացոլումը, ստեղծագործության լեզվական համակարգում արտացոլված պատմական երանգա-

վորման նրան բնորոշ միջոցների օգտագործումը: Անհրաժեշտ է նաև թարգմանության որակի գնահատումը ընդունող լեզվի և մշակույթի տեսակետից, որը թարգմանչից պահանջում է ռուսերենի տրամաբանությանը և գեղագիտությանը համապատասխանող արտահայտությունների ստեղծում, այլ կերպ ասած՝ ռուսերեն հնչող արտահայտություններ:

Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի բնագրի համեմատական վերլուծությունը իր ռուսերեն թարգմանությունների հետ ի հայտ է բերում թարգմանական արվեստի գրեթե կետարյա զարգացման պատկեր, որը ցույց է տալիս թարգմանիչների կողմից վերը նշված գործոնների համադրությունը պարտադիր իրականացնելու փաստի հասկանալը և կիրառելը, այսպիսով ցույց տալով թարգմանության որակի կախվածությունը ոչ միայն թարգմանչի անհատականությունից, տաղանդից, «ճաշակից», փորձից, ինտուիցիայից և «հոտառությունից», այլ նաև նրա աշխարհընկալումից, ազգային միջավայրից, ժամանակաշրջանից և գրական շրջապատից:

Luiza Ter-Sargsyan

About one of the means for the transfer of word realities in Russian translations of the Armenian historical novel “Samvel” by Raffi.

Summary

A full reproduction of a historical fiction in a translation requires a reflection of an individual style of selection and reformation of the facts by the author, his/her specifics of the historical stylization, which is also reflected in the language system of the work, which, on the other hand, is evaluated from the position of the comprehending language and culture, assuming making phrases subjected to logics and aesthetics of the Russian language. In other words, phrases must sound Russian.

A comparative analysis of the original of this Armenian historical novel with its Russian translations made throughout almost half a century draws a picture of how the translators achieved the understanding of the necessary combination of the above mentioned factors, which depends not only on the translator’s individuality, talent, “taste”, intuition and nose, but also on his/her national environment, epoch, literature circle and mind-view.

Խմբագրություն է ուղարկվել 02.07.2021թ.

Հանձնարարվել է գրայնտության 20.07.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան
Բան. գիտ. թեկն., դոցենտ
ghazaryanruzan@ysu.am

**ՈՃԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԸ ԱՎԵՏԻԲ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ»
ՊՈԵՄՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆԳԼԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Ավետիք Իսահակյան, «Աբու-Լալա Մահարի», քնարական պոեմ, անգլերեն թարգմանություն, Զաբել Բոյաջյան, ոճական հնարքներ, թարգմանչական փոխակերպումներ, համեմատություն, փոխաբերություն, տեղափոխում, բաղաձայնությ, երկտող տներ:

Ключевые слова и выражения: Аветик Исаакян, «Абу-Лала Маари», лирическая поэма, английский перевод, Забел Бояджян, стилистические приемы, переводческие трансформации, сравнение, метафора, перенос, аллитерация, двухстрочные строфы.

Key words and expressions: Avetik Isahakyan, “Abu-Lala Mahari”, lyric poem, English translation, Zabelle Boyajian, stylistic devices, translation transformations, simile, metaphor, transposition, alliteration, couplets.

Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը (1911, Կ. Պոլիս) Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթամատյանի հետ միասին՝ ամենից առաջ իր համամարդկային բնույթով, ոչ միայն հայ, այլև համաշխարհային քնարական պոեմի գլուխգործոցներից է: Այն լույսընծայումից զրեթե անմիջապես հետո սկսեց թարգմանվել աշխարհի ամենատարբեր լեզուներով՝¹ արժանանալով դրվատալից գնահատականների:

¹ Սհա այդ թարգմանությունների ժամանակագրական հաջորդականությունը՝ իտալերեն (1913), գերմաներեն (1914, 1919), ռուսերեն (1916, 1956), անգլերեն (1925, 1958, 1975), էսպերանտո (1926), եբրայերեն (1927), ճապոներեն (1928), իսպաներեն (1929), վրացերեն (1931, 1963, 1968), արաբերեն (1940), չեխերեն (1946, 1966), ֆրանսերեն (1952, 1955), հունգարերեն (1964), բուլղարերեն (1967), սերբերեն (1967) և այդպես շարունակ:

Վարպետն իր պոեմի հերոսի ընտրությունը կատարել է 1908-ին, երբ ոգեշնչվելով 10-11-րդ դարերի արաբ նշանավոր բանաստեղծ **Աբու Ալ Ալա Ալ Մահարիի** (973-1057) ստեղծագործությամբ, նույն թվականին թարգմանել է նրա հետևյալ բանաստեղծությունը.

Ես տեսնում եմ՝ մարդկանց տարված կռիվներով, վեճերով,
Աղանդավոր, մոլեկրոն, ապուշ ամեն կողմերով.
Թագավորներ, որ խորհում են միայն ուտել, շվայտել,
Նախարարներ, որ հոգում են հարկ ու տուգանք սուկ կապտել,
Որոնց անհազ ցանկությունն է՝ հպատակի տները
Ավար առնել, ավեր անել, բռնաբարել կիները:
Կա՞ նվիրված արդյոք մի վայր իրավունքին երկրիս մեջ,
Այս խավարում ման գամ, գտնեմ՝ ձեռքիս լապտեր մի անշեջ²:

Այս տողերը գրվել են մեզանից մոտավորապես հազար հարյուր տարի առաջ, թարգմանվել հայոց համար ճակատագրական՝ 20-րդ դարի առաջին տասնամյակում, և որոնց այսօր անդրադառնում ենք 113 տարի հետո՝ մեր ժողովրդի համար դարձյալ մռայլ ու անորոշ ժամանակներում: Ո՞րն է այդ անդրադարձների գաղտնիքը: Պատասխանը մեկն է՝ արվեստի հավերժական երկերի վերժամանակյա բնույթը, գաղտնախորհուրդ շերտերի՝ յուրաքանչյուր վերընթերցման հետ արդիական հիմնախնդիրների հանդիպադրումը: Ի դեպ, դա համամարդկային է. ինչպես չկան ընդհանրապես մարդկային կատարյալ հարաբերություններ ու կապեր, անթերի իշխանություններ, բացառապես բախտավոր ազգեր ու ժողովուրդներ, այնպես էլ չկա բացարձակ երջանկություն: Հենց այդ հանգամանքն է կամուրջ նետել Արևելքի երկու հանճարեղ բանաստեղծների միջև, համամարդկային նույն արժեքաբանությունը՝ ժխտման կրքի հետ միասին լույս եզերքների անսպառ որոնումն է ջերմ, հարազատ, բայց և անհրաժեշտաբար ցավոտ կամրջակներ ստեղծել թարգմանաբար ներկայացվող պոեմն ընթերցող տարբեր ժողովուրդների սրտերում:

Եվ ահա մեր նպատակից դուրս համարելով «Աբու-Լալա Մահարի» պոեմի գաղափարազեղազիտական արժանիքների ու առանձնահատկությունների քննությունը՝ ուսումնասիրենք դրա **անզլերեն թարգմանությունը**, որն այսօր էլ մեծ համարում ունի աշխարհի անգլիախոս հանրության շրջաններում, և շատերի կողմից գնահատվում է իբրև հիրավի հզորագույն գործ:

² **Բսահսկյան Ավ.**, Երկերի ժողովածոփու վեց հատորով, հ. երկրորդ, Երևան, 1974, «Հայաստան» հրատ., էջ 281: Այս հատորից կատարվող մեջբերումների էջերը հետայսու կնշվեն միայն համապատասխան տեղում՝ փակագծի մեջ:

«Աբու-Լալա Մահարի» պոեմը հայերենից անգլերեն է թարգմանել տաղանդավոր թարգմանչուհի **Զաբել Բոյաջյանը** (1873-1957)՝ հայ ժողովրդի երախտագետ դուստրերից մեկը, որը ծնվել էր Մեծ Հայքի Ադձնիք նահանգի Ամիդ (Դիարբեքիր) քաղաքում: Լինելով հայ և անգլուհի ծնողների զավակ՝⁴ այս տաղանդավոր գրագիտուհին միաժամանակ թե՛ գրող էր, թե՛ նկարչուհի, թե՛ դերասանուհի և թե՛ բազմալեզվագետ բարձրակարգ թարգմանչուհի. հրաշալի տիրապետում էր անգլերենին ու հայերենին (ի դեպ, անթերի հայերենով էր խոսում ու գրում նաև անգլուհի մայրը), փայլուն գիտեր ֆրանսերեն և իտալերեն, գերմաներեն ու ռուսերեն, թուրքերեն, շվեդերեն և էսպերանտո (էսպերանտոյի միջազգային ընկերության Լոնդոնի մասնաճյուղի հիմնադիրներից էր):

1923 թվականին Վենետիկում՝ նավի վրա, մի օր պատահաբար միմյանց են հանդիպում Ավետիք Իսահակյանն ու Զաբել Բոյաջյանը, և շուտով նրանց անձնական ծանոթությունը վերածվում է ջերմ բարեկամության: Ինչպես հավաստում է պահպանված նամականին⁵, «Աբու-Լալա Մահարի»-ն թարգմանելիս Բոյաջյանը շարունակաբար խորհրդակցել է Վարպետի հետ, և ինքն էլ նկարագարդել գիրքը՝ պատկերելով անապատի միջով անցնող ուղտերի քարավանը: Արդյունքում **թարգմանչուհին, զգալով ու յուրացնելով բնագրի հարագատ շունչը, անգլերեն տարբերակում պահպանել է պոեմի ըմբոստ տարերքը, պատկերների արտահայտչականությունը և բառերի երաժշտական հնչեղությունն ու ռիթմիկան:**

Նախ՝ «Աբու-Լալա Մահարի»-ն աչքի է ընկնում **համեմատությունների** հարուստ և արտահայտիչ կիրառություններով: Ահա անգլերենն ու թիրախ լեզուն.

... And the caravan of Abu Lala through the sleeping night moved calmly along;

⁴ Հայրը՝ Թովմաս Բոյաջյանը, Օսմանյան կայսրությունում Անգլիայի փոխիուպատոսն էր (նա 1895-ին սպանվում է Համիդյան ջարդերի ժամանակ), մայրը՝ Քեթրին Ռոջերս Բոյաջյանը, անգլուհի էր, ավելին՝ անգլիացի նշանավոր բանաստեղծ Սեմյուել Ռոջերսի (1763-1855) շառավիղը: Ամուսնու սպանությունից հետո նա 1895-ին Զաբելի և որդու՝ Հենրիի հետ տեղափոխվում է Լոնդոն, որտեղ դուստրը սովորում է Սլեյդ գեղարվեստի դպրոցում:

⁵ Տե՛ս Եղիշե Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ավետիք Իսահակյանի ֆոնդ:

Stepped softly along through the hush of night, **like a gentle stream's soft, murmuring song.**⁶ (p. 4)

Եվ քարավանը Աբու-Լալայի՝ **աղբյուրի նման մեղմ կարկաչելով՝**
Քայլում էր հանգիստ, նիրհած գիշերով, հնչուն զանգերի անուշ
դողանջով (էջ 53):

Իրենց բացարձակ իմաստով, անշուշտ, քարավանն ու հոսանքը
չունեն համեմատության որևէ եզր, բայց հեղինակը *like a gentle stream's soft, murmuring song / աղբյուրի նման մեղմ կարկաչելով* արտահայտության
կիրառմամբ ցանկացել է ցույց տալ քարավանի խաղաղ, հավասարակշիռ
ընթացքը: Բնագրում օգտագործված *կարկաչելով* բայը անգլերենում
փոխարինվել է *like a gentle stream's soft, murmuring song* արտա-
հայտությամբ, իսկ *դողանջ* բառը՝ *song* (երգ) բառով:

Թարգմանչուհին կիրառել է նաև **տեղափոխումներ**. բնագրում
համեմատությունը կիրառված է առաջին տողի վերջում, իսկ թարգմանիչն
այն տեղադրել է երկրորդում, որպեսզի առավել ճշգրիտ փոխանցի իմաստն
ու պահպանի հանգը.

... And what is the law, so revered by man? A shield to the strong, **a threat to the weak.**

All-powerful weapon in mighty hands, a sword hanging over the poor
and meek. (p. 19)

Ի՞նչ է օրենքը, - մարդկանցից օրհնած, բիրտ ուժեղների այդ սուրը
դաժան,

Անգորի գլխին կախված հավիտյան, խեղճին խողխողող, հզորին
պաշտպան (էջ 68):

Այստեղ առկա է համեմատություն և փոխաբերություն: Օրենքը
դիտարկվում է որպես *զենք*. **a threat to the weak** ազդեցիկ փոխաբերությունը
ցույց է տալիս, թե ինչպես է Մահարին ատում օրենքը, որը մշտապես
պաշտպանում է հզորին: Այստեղ *threat* (սպառնալիք) բառն օգտագործված
է հայերեն խեղճին խողխողող բառակապակցության փոխարեն: Անգլերեն
տարբերակում առկա է **All-powerful weapon in mighty hands**
արտահայտությունը, որը բնագրում բացակայում է. այս հավելման նպա-
տակն է լուսաբանել օրենքի բնույթը: Թարգմանչուհին այս հատվածում
կատարել է նկարագրական թարգմանություն, որպեսզի առավել ազդեցիկ
պատկերի հեղինակի վերաբերմունքը օրենքի հանդեպ:

⁶ **Boyajian, Z., C.**, Isahakyan, *Avetik. Abu-Lala Mahari: Poem in Seven Suras*, Yerevan, "Hayastan", 1975. Այս գրքից կատարվող մեջբերումների էջերը հետայսու կնշվեն միայն համապատասխան տեղում՝ փակագծի մեջ:

... **Love** I detest- it **is cruel as death**; forever it burns and **secretly stings**...

(p. 8)

Ատում եմ սերը՝ **մահի պես անգութ**, հավիտյան այրող, **խոցող գաղտնաբար**... (էջ 58):

Այս պարբերության մեջ սերը պատկերված է բավական պատկերավոր ու տպավորիչ, հեղինակը մարդու թերևս ամենակարևոր ու հաճելի զգացմունքը՝ սերը, համեմատում է ամենավատ ու սարսափելի երևույթի՝ մահվան հետ՝ ցանկանալով ընդգծել, որ Մահարիի համար այն դաժան զգացմունք է: Մարդիկ ասում են, որ սերն ամեն ինչ է. այն կարող է փրկել աշխարհն ու մարդուն անկումից: Բսահակյանի կերտած հերոսի համար այն, սակայն, այրող ու խայթող է. ավելին՝ կնոջ և ընկերոջ սերը կեղծիք է: Այս զգացմունքային մթնոլորտը պահպանվել է նաև անգլերեն տարբերակում. **մահի պես անգութ / cruel as death** համեմատությունը փոխանցված է անխաթար: Սակայն առկա են նաև տեղափոխություններ. **secretly stings / խոցող գաղտնաբար**: Թարգմանության մեջ առկա է նաև խոսքիմասային համարժեքություն. հայերեն **հավիտյան այրող** արտահայտության մեջ **այրող-ը** բայ-որոշիչ է՝ ենթակայական դերբայ, անգլերենում ևս այն պահպանված է **it burns** բայի տեսքով:

Հայտնի է, որ գեղարվեստական գրականության մեջ իր ուրույն տեղն ունի **փոխաբերությունների** կիրառումը: Այն սահմանվում է որպես իմաստաբանորեն բարդ երևույթ, որտեղ բառը փոխարինվում է մեկ ուրիշով՝ ըստ իմաստաբանական նմանողության, և այդպիսով տվյալ բառը ձեռք է բերում նոր իմաստ: Բսահակյանի պոեզիայում փոխաբերությունների կիրառումը հիմնված է երկու առարկաների կամ երևույթների միջև նմանողության վրա: Այդ առումով նման իրողության ենք հանդիպում խնդրո առարկա պոեմում, երբ հեղինակը բողոքում է հասարակությունից և մերժում կնոջն ու սերը.

..." But to tortured spirits a woman's **love is like salt-water- it fires them more.**" (p. 8)

... Բայց **սերը** կնոջ՝ տոչորված հոգուդ, **աղ-ջուր է տալիս, որ միշտ ծարավնաս** (էջ 58):

Հեղինակը կիրառել է **սերը աղ-ջուր է տալիս** փոխաբերությունը, որ անգլերեն թարգմանված է **like salt water** համեմատությամբ: Բացի այդ՝ թարգմանչուհին կատարել է նաև բուն իմաստային թարգմանություն, որպեսզի կարողանա ապահովել թարգմանության համարժեքությունը. **որ միշտ ծարավնաս / it fires them more**: Առկա է նաև տեղափոխություն, երբ հեղինակը խոսում է կնոջ սիրո մասին, ինչպես նաև խոսքիմասային փոփոխություն **աղ-ջուր է տալիս / "like salt-water"** (նման է աղաջրի):

Հաջորդ՝ երրորդ սուրահում, բանաստեղծը հմտորեն կերտում է անհամար աստղերի հետևյալ հրաշալի ու առեղծվածային պատկերը.

..."And who has **woven this tale sublime, entwined it with stars**, and its wonders planned?

Who tells the story in thousands of forms, in eternal words surpassingly grand?"

Եվ ո՞վ է **հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով**, բյուր հրաշքներով,

Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝ անդուլ ու անխոնջ՝ այսպես թովչանքով:

Այստեղ առկա է *to weave a sublime tale, in eternal words, a tale entwined with stars / հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով* փոխաբերությունը, որը խոսքը դարձնում է առավել ազդեցիկ, կենդանի ու զգացմունքային: Բնականաբար աստղերով հյուսել անհնար է. դա սուկ միջոց է Իսահակյանի համար՝ պատկերելու բնության կախարդական աշխարհը: Թարգմանչուհին կատարել է "*and its*" (*դրա*) և "*the story*" (պատմությունը) բառերի հավելումները՝ պահպանելու համար անգլերենի լեզվական առանձնահատկությունները: Առկա է նաև **կոնկրետացման երևույթը**, երբ *անդուլ ու անխոնջ՝ այսպես թովչանքով* տարբերակը փոխարինվում է *in eternal words surpassingly grand տեսակով*: Նկատելի է, որ Ջ. Բոյաջյանը կատարել է կարճ ու կոնկրետ թարգմանություն, հաղորդել ընդհանուր իմաստը՝ չպահպանելով, սակայն, ազդեցիկությունն ու զգացմունքայնությունը:

Իսկ ահա հինգերորդ սուրահի այս օրինակը պատկերում է փառքի բնույթը.

..."And what is glory? Today you will find the populace **carry you shoulder-high**;

Tomorrow those people will throw you down; will **trample on you**, your merits decay" (p. 17).

Եվ ի՞նչ է փառքը. - այսօր քեզ մարդիկ **եղջուրներից վեր կրբարձրացնեն**,

Վաղը նույն մարդիկ **ամբակների տակ ճմլելու** համար քեզ վար կընետեն (էջ 67):

Ամբողջ հատվածը կազմված է փոխաբերություններից և բնականաբար ունի փոխաբերական բնույթ: Հեղինակն օգտագործում է *to carry you shoulder-high, to trample on you/ եղջուրներից վեր կրբարձրացնեն, ամբակների տակ ճմլելու* փոխաբերությունները մարդկային բնության առավել արտահայտիչ պատկերելու նպատակով: Հեղինակի համոզմամբ փառքը ոչինչ է, իսկ կյանքում էական են մարդկանց միջև առողջ փոխհարաբերու-

թյունները, միմյանց օգնելու բարի կամքը ու երբեք ընկերոջ ունեցվածքին այք չդնելը: Այստեղ Ջ. Բոյաջյանն իրականացրել է զուտ իմաստային թարգմանություն. ավելացրել է *your merits decay* (*ձեր արժանիքները նախատինքի են արժանանում*), որպեսզի պահպանի համարժեքային իմաստը: Առկա է նաև **տեղափոխում** *will throw you down* և **ընդհանրացում**, երբ ընտրված է *shoulder-high* (*ուսից վեր*) տարբերակը՝ որպես հոմանիշ *եղջուրներից վեր* արտահայտությանը: Կա նաև **կոնկրետացման** օրինակ՝ *will trample on you* /*սմբակների տակ ճնկելու համար*.

«Աբու-Լալա Մահարի» պոեմում Ավ. Բասահկյանն օգտագործել է տարբեր **բաղաձայնություններ**: Դա հատկապես նկատելի է առաջին սուրահի այն դրվագներում, երբ հեղինակը պատկերում է քարավանի ընթացքը, գիշերվա լռությունը. բաղաձայնությունների կիրառումը հնարավորություն է տվել նրան հաղորդելու զգացմունքային ճշգրիտ տպավորությունները.

... Եվ դողանջները ծորում քաղցրալուր՝ ողողում էին դաշտերը անդորր...

... Եվ դողանջում էր ողջ երկինքն անհուն՝ աստղերի շքեղ, անշեջ դաշնակով... (էջ 54):

... The music that streamed from their swaying bells flowed over the desert and far away...

... And the heavens were filled with their majesty, with the glorious music of the spheres... (p. 5)

Բնագրում *η* բաղաձայնի կիրառումը հատվածին հաղորդում է մեղեդայնություն. կարողալիս ընթերցողը զգում է դեպի երկինք բարձրացող երաժշտությունը: Նույն զգացողությունն է արթնանում, երբ ընթերցողը կարդում է անզլերեն տարբերակը, չնայած հասկանալիորեն *η* բաղաձայնությոը հնարավոր չէ պահպանել: Եվ սաա թարգմանչուհին փորձել է բաղաձայնությոը կերտել *s*-ի կրկնության միջոցով: Նա այստեղ կատարել է նաև բացթողումներ. բաց է թողել *անդորր* և *անշեջ* բառերը: Առկա է նաև ընդհանրացում, երբ բնագրային *դողանջներ* և *դաշտեր* բառերը թարգմանվել են որպես *music* (երաժշտություն), իսկ *դաշտեր*-ը՝ որպես *desert and far away* (անապատ և հեռու): *Երկինք* / *heaven* բառի թարգմանությունն էլ կոնկրետացման օրինակ է: Թարգմանչուհին կատարել է նաև ժամանակային ձևերի փոփոխություն՝ *ողողում էին* / *flowed*. հայերենում գործածված է անկատար անցյալը, իսկ անզլերենում՝ անցյալ կատարյալը:

Հանգը նմանատիպ հնչյունների կրկնությունն է, որն օգտագործվում է բանաստեղծությունների կամ երգերի վերջին մասում: Սակայն այն ռիթմ առաջացնելու միջոց չէ. օրինակ՝ «Աբու-Լալա-Մահարի»-ում Բասահկյանը հոյակապ հանգով ստեղծում է քարավանի ընթացքի ազդեցիկ պատկերը.

And the caravan of Abu Lala through the sleeping night moved calmly along; (p. 4)

Stepped softly along through the hush of night, like a gentle stream's soft, murmuring song.

With measured footsteps they followed the road, that winding and twisting before them lay;

The music that streamed from their swaying bells flowed over the desert and far away (p. 5).

Եվ քարավանը Աբու-Լալայի՝ աղբյուրի նման մեղմ կարկաչելով՝ Քալում էր հանգիստ, նիրհած գիշերով, հնչուն զանգերի անուշ դողանջով (էջ 53):

Հավասար քայլով չափում էր ճամփան այն քարավանը ոլոր ու մոլոր, Եվ դողանջները ծորում քաղցրալուր՝ ողողում էին դաշտերը անդորր (էջ 233):

Այստեղ կիրառված հանգը երկտողային է, քանի որ երկու հաջորդական տողերի վերջին բառերը հանգավորված են: Թե՛ հայերենում և թե՛ անգլերենում առաջին և երկրորդ տողերի վերջին բառերը, ինչպես նաև երրորդ և չորրորդ տողերի վերջին բառերը հանգավորված են: Սակայն բնագրային *դողանջ* բառն անգլերենում փոխարինվել է *song* (երգ) բառով, իսկ *քայլ-ը՝ footsteps* (ոտնաձայներ)-ով, որը բառաձևի փոփոխություն է: Առկա է նաև խոսքիմասային փոփոխություն, երբ հայերենի *քարավան* գոյականը անգլերենում փոխարինվել է *they* (նրանք) դերանունով, իսկ *աղբյուրի նման մեղմ կարկաչելով* պատկերը, որն արտահայտված է բայի կիրառումով, անգլերեն տարբերակում արտահայտված է *like a gentle stream's soft, murmuring song* (ինչպես հոսանքի նուրբ, շշնջացող երգը) գոյականի օգտագործումով պայմանավորված համեմատությամբ: Պետք է նշել նաև, որ թարգմանչուհին բնագրային *ոլոր ու մոլոր* բառակապակցությունը թարգմանել է *winding and twisting before them lay* (ծովելով ու ոլորվելով փոված էր նրանց առաջ) նախադասությամբ: Այս փոփոխությունների նպատակն, անշուշտ, բնագրում արտահայտված իմաստի, վերաբերմունքի և զգացմունքի համարժեքությունն ապահովելն է:

Մեկ այլ ոճական արտահայտչամիջոց է **գագաթնակետի կամ աստիճանավորման** կիրառումը. գագաթնակետի ժամանակ իրար հաջորդող բառերը, արտահայտությունները կամ նախադասությունները ձեռք են բերում զգացմունքայնորեն ավելի ուժեղ և տրամաբանորեն առավել պատճառաբանված կարևորություն: Առաջին բաղկացուցիչ տարրը սովորաբար թույլ է, իսկ հաջորդող տարրերն աստիճանաբար ուժեղանում են.

... And what is a woman but **crafty and mean, a jealous spider** she weaves her thread... (p. 8).

... Եվ կինն ի՞նչ է որ... **խորամանկ, խաբող, առնախանձ մի սարդ**, հավերժ նանրամիտ (էջ 57):

Պետք է նշել, որ թարգմանությունը կատարված է գազաթնակետի և աստիճանավորման սկզբունքների հստակ պահպանմամբ. էլնելով լեզվական առանձնահատկություններից՝ *խորամանկ, խաբող, առնախանձ մի սարդ / crafty, mean, a jealous spider* արտահայտությունների թարգմանությունը կատարված է համարժեքորեն. միակ տարբերությունն այն է, որ բնագրային *առնախանձ* ածականը, որ նշանակում է **տղամարդուն խանձող** կամ **տարփալից**, անգլերենում բնագրից հեռացել է ու դարձել *jealous* (**նախանձ, խանդոտ**): Սա թարգմանական գուցե թեթև մեղանշում է. նեղ մասնագիտական հմտություն էր պետք՝ տարբերակելու համար «այր» (տղամարդ) բառի գրաբարյան սեռական «առն» (տղամարդու) ձևից կազմված բառաբարդումը՝ առն + ա + խանձել:

Նշյալ արտահայտչամիջոցի մեկ ուրիշ օրինակ է պոեմի հետևյալ հատվածը.

... When thriving they give no thought to the poor, they're **contemptuous, haughty and malign** (p. 21).

... Հարստության մեջ՝ **լկտի, չարախինդ, և վրիժառու, և ամբարտավան** (էջ 70):

Այստեղ *լկտի, չարախինդ, վրիժառու, ամբարտավան / contemptuous, haughty and malign* ածականների կիրառումը օգնում է հեղինակին Մահարիի միջոցով պատկերելու տվյալ ժամանակաշրջանի հասարակությանը բնորոշ վարքագիծը, հարստության պատճառած վնասները: Դրամը մարդկանց դարձնում է եսասեր, դաժան ու կեղծավոր: Պետք է նշել, որ անգլերեն թարգմանությունը նկարագրական է. թարգմանչուհին միտումով բաց է թողել հայերենի *վրիժառու* բառը և միաժամանակ ավելացրել է *give no thought to the poor* (աղքատների մասին չմտածող) հատվածը, որպեսզի առավել հստակ ու ճշգրիտ ընթերցողին փոխանցի հեղինակի մտքերը: Առկա է նաև խոսքիմասային փոփոխություն. բնագրային *հաջողություն* գոյականն անգլերենում փոխարինված է *thriving* (փթթող, զարգացող) ածականով:

Իսահակյանի կերտած Աբու-Լալա-Մահարիի գայրացած է հասարակության և աշխարհի դեմ. նա բնավ չի թաքցնում իրեն համակած դառնությունը, և անտուն ու միայնակ հերոսը հետադարձ հայացք է նետում մարդկային հարաբերությունների վրա և պատրաստ է դիմագրավել ցանկացած փոթորկի.

“Ye tempests, **your fury pour down on my head**- collect your forces from fear and near,

I stand in your presence with blameless heart, I do not fear you – my conscience is clear (p. 15).

Շաչեցէ՛ք գլխիս, ամեհի հողմեր, դո՛ւք, մրրիկնէ՛ր, պայթեցէ՛ք գլխիս,

Ես բաց ճակատով ձեր դեմն եմ կանգնած, ես վախեցող չեմ, զարկեցէ՛ք ձակտիս (էջ) :

Այստեղ գագաթնակետի և աստիճանավորման ցայտուն օրինակ է բնագրային *շաչեցէք - պայթեցէք* բառերի կիրառումը, որը պոեմին հաղորդում է զգացմունքայնություն և գունեղություն: Անգլերեն տարբերակում այն փոխարինվել է *pour down* (թափվել) տարբերակով, որը թարգմանությունը դարձրել է թեպետ համարժեքային, բայց նկարագրական:

Պոեմի վերլուծության ժամանակ նկատելի է ոճական մեկ ուրիշ արտահայտչամիջոցի՝ **անձնավորման** կիրառություն, որը փոխաբերության տեսակ է, երբ անշունչ առարկաներին վերագրվում են մարդկային հատկանիշներ: Ահա մի օրինակ «Աբու-Լալա-Մահարի» պոեմից.

... **The sweet-scented flowers had fallen asleep**, they sparkled with diamonds and jewels bright (p. 11).

...**Նիրհ էին մտել ծաղկունքը բուրյան՝** ադամանդներով, շքեղ զինդերով... (էջ 60):

Ակնհայտ է, որ անձնավորման միջոցով Բահահայանը ցանկանում է շեշտադրել զիշերվա անդորրն ու լռությունը՝ այն հակադրելով Մահարիի հուզված ու տագնապած հոգուն: Թարգմանչուհին կատարել է իմաստային թարգմանություն և ավելացրել է *they sparkled* (նրանք փայլեցին / առկայծեցին) արտահայտությունը՝ փոխանցելու համար հեղինակի մտքերն ամբողջովին: Առկա է նաև տեղափոխում. *had fallen asleep is/ Նիրհ էին մտել* արտահայտությունը բնագրում գրված է տողի սկզբում, իսկ թարգմանված տարբերակում այն ենթակայից հետո է: Ահա անձնավորման մեկ ուրիշ օրինակ.

The winds like mischievous friends **rushed on, and lunged at** the face of Abu Mahari.

They sported and **reveled and clapped** their hands, and tugged at his garments mercilessly (p. 17).

Հողմերն անհեթեթ ջինների նման՝ Աբու-Լալայի խոժոռուն դեմքին

Քրքջում էին, ծափ տալիս, ծաղրում և ապարոշից քաշքշում ուժգին (էջ 66):

Սա անձնավորման ազդեցիկ օրինակ է, որի նպատակն է ցույց տալ, թե ինչպես մարդկանցից հիասթափված, աշխարհի դեմ զայրացած հերոսին տանջում է նույնիսկ բնությունը: Անշուշտ, անգլերեն թարգմանության

առկա են որոշակի տարբերություններ. օրինակ՝ ավելացված է *They* (նրանք) դերանունը, որպեսզի պահպանվի անգլերենին բնորոշ շարադասությունը: Այս հատվածում կա նաև համեմատություն *like / ջինների նման*: Ակնհայտ է, որ բնագրային *ջին* գոյականը, որ պարսկական և արաբական առասպելաբանության մեջ նշանակում է չար ուժ, անգլերենում թարգմանված է *mischievous friends՝ չար ընկերներ* տարբերակով: Բոյաջյանը կատարել է նաև բացթողում՝ անտեսելով բնագրային *խոճոռուն* ածականը:

Անձնավորման մեկ այլ օրինակ է հետևյալ հատվածը.

There lives in me an unquenchable thirst for a mourning heart akin to my own- (p. 14).

Իմ մեջ այրվում է մի անհագ կարոտ, կարեկից մի սիրտ՝ լացող հավիտյան (էջ 62):

Այս հատվածում հատկապես ուշաբժան է *կարոտ* գոյականի անգլերեն տարբերակը՝ *thirst* (ծարավ). թարգմանչուհին միտումնավոր է կատարել այս փոփոխությունը, որովհետև ծարավը կարելի է հագեցնել, իսկ կարոտը՝ բավական դժվար:

Իսահակյանի՝ որպես բանաստեղծի, մեծությունը հատկապես նկատելի է հատկապես չորրորդ սուրահի սկզբնամասում, երբ անձնավորումն իրականացվում է *night spread its wings / գիշերը թևերը փռեց* արտահայտությամբ.

Like an ebon eagle, gigantic and grim, the awesome night spread its wings around;

Swooped down from the skies on camels and road, and about the desert its pinions wound (p. 15).

Գիշերն ահարկու՝ և՛ սև, և՛ հսկա մի չղջիկի պես թևերը փռեց,

Անձիր թևերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ (էջ 63):

Նկատելի է նաև համեմատությունը, երբ գիշերը նմանեցվում է չղջիկի. պետք է նշել, որ անգլերեն տարբերակում *չղջիկը* թարգմանված է որպես *eagle / արծիվ*: Բացի այդ՝ նկատելի է, որ թարգմանությունը նկարագրական է. թարգմանչուհին կատարել է նաև հանելումներ *its (նրա), from the skies*, (երկինքներից) *its pinions wound* (կապող վերքերը):

Մյուս արտահայտչամիջոցը **հիպերբոլան** է, որը ճշմարտության նպատադրված չափազանցումն է՝ լարվածություն, դրամատիկական կամ կատակերգական ազդեցություն գործելու համար.

I will pitch my tent amidst writhing snakes- yes, on the poisonous basilisk's den-

A thousand times safer I'll be with them than in cities with false and smiling men (p. 6).

Խփե՛մ վրանրս, օձ-կարիճների բրնների գլխին վրանրս խփեմ,

Այնտեղ բյուր անգամ ես ապահով եմ, քան թե մարդկանց մոտ, կեղծ ու ժպտադեմ (էջ 55-56):

Այս հատվածում հիպերբոլան արտահայտված է *thousand times safer I'll be* / բյուր անգամ ես ապահով եմ արտահայտությամբ. թարգմանչուհին կատարել է նկարագրական թարգմանություն, ինչպես նաև ավելացումներ՝ *I* (ես) և *cities* (քաղաքներ): Այս հատվածում ընթերցողը բախվում է նաև հակադրության կիրառմանը, որը **հակադրությի** ցայտուն օրինակ է: Հակադրությոը հակադրվող գաղափարների արտահայտումն է զուգահեռ կառուցվածքների միջոցով: Այն կիրառվում է պատկերելու համար հակասությունը, որն առկա է իրականության և հերոսի ներաշխարհի միջև.

Seven times seven, I loathe human rule; whole generations it swallows or maims.

Rapacious usurers, sponging thieves, ever inciting to war and flames (p. 19).

Յոթն անգամ ահա՛ ատում եմ, ատում իշխանությունը – սերունդներ լափող.

Անհագ վաշխառու, անկուշտ ձրիակեր, պատերազմների հավերժ հերյուրող: (էջ 68)

Այստեղ հիպերբոլայի ակնհայտ օրինակ է *seven times seven/յոթն անգամ* արտահայտության կիրառումը, որը շեշտադրում է հերոսի անսահման զայրությոն ու ատելությունը մարդկության հանդեպ: Այստեղ կրկին թարգմանչուհին կատարել է իմաստային թարգմանություն և ավելացումներ. դերանուն *I* (ես) և *flames* (կրակներ) զոյականն ավելացված են: Մինչդեռ *սերունդներ լափող* արտահայտությունը թարգմանված է մի ամբողջ նախադասությամբ. *whole generations it swallows or maims* (այն կուլ է տալիս ու խեղում ամբողջ սերունդներ): Նպատակը, անշուշտ, բնագրում արտացոլված գաղափարների համարժեքային թարգմանությունն է:

With a thousand, thousand effulgent hues and dazzlingly brilliant the sunrise came;

Majestic, and steeped in ineffable light, with rainbow colors and shafts of flame (p. 25).

Հագար ու հագար հրաշալիքներով և հրաբորբոք հրապույրներով

Շեմս–արևն էլավ՝ շքեղ, լուսավառ, վարդի, սնդուսի բյուր պարույրներով (էջ 75):

Այս պարբերությունում հիպերբոլայի օրինակ է *thousand, thousand effulgent hues* / *hագար ու հագար հրաբորբոք հրապույրներով* արտահայտությունը, որը հեղինակային խոսքին հաղորդում է թարմություն

ու գեղեցկություն: Այդ գեղեցկությունն ուժեղանում է նաև բազում մակդիրների կիրառությամբ, որոնք շեշտադրում են գրական հերոսի ձեռք բերած անդորրն անապատում: Անգլերեն թարգմանությունը նկարագրական է, իսկ շարադասությունը՝ հիմնականում փոխված: Այս ամենի նպատակը խաղաղ մթնոլորտի փոխանցումն է, բնագրային գաղափարների լուսաբանումը:

Հեղինակի մտքերի արտահայտման մեկ այլ յուրահատուկ միջոց է **հռետորական հարցի** կիրառումը, որն ավելի շատ դրական կամ ժխտական հայտարարություն է, իսկ հնարավոր պատասխանը հենց հարցադրման մեջ է.

“What is a friend?” Thus Abu Mahari, resumed his reflections, that had no end.

“In my faithful heart I cherished a snake- fly on caravan, my only true friend (p. 17).

– Ի՞նչ է ընկերը... – կրկնում էր անդուլ զայրացած սրտում Աբու Մահարին.-

Օոցիդ մեջ սև օձ, մահիճդ պղծող... Թո՛ղ ի՛ր, քարավա՛ն, ընկեր մտերիմ (էջ 66):

Հռետորական հարցն այստեղ “*what is a friend*” / *ի՞նչ է ընկերը* հարցադրումն է, որը հենց նույն պահին էլ բացահայտում է քնարական հերոսի համար ընդունելի միակ պատասխանը. այն է՝ ընկերությունը կեղծիք է, վտանգավոր ու թունավոր: Նկատելի է, որ Մահարիի համար գերադասելի է գազանների ընկերակցությունը, որն առավել քան անկեղծ է: Թարգմանչուհին կատարել է նկարագրական թարգմանություն, ինչպես նաև բառային փոփոխություն. օրինակ՝ բնագրային *ոց գոյականը* անգլերենում փոխարինված է *heart (սիրտ)* տարբերակով, որն առավել խորն է փոխանցում զգացմունքային շերտը, իսկ հայերենի *ոցիդ մեջ սև օձ* արտահայտությունն անգլերենում թարգմանված է մի ամբողջ նախադասությամբ *in my faithful heart, I cherished a snake* (իմ հավատարիմ սրտում, ես օձ եմ փայփայում): Թարգմանչուհին բաց է թողել *անդուլ զայրացած սրտում* բառակապակցության թարգմանությունը, բայց ավելացրել է *my only (իմ միակ)* արտահայտությունը: Բնագրային *ընկեր մտերիմ* բառակապակցությունը թարգմանված է *true friend* (ճշմարիտ ընկեր) տարբերակով, քանի որ *մտերիմ / close* տարբերակն այդքան շեշտադրված չէր փոխանցի մտերմության գաղափարը: Իհարկե, այս բոլոր փոփոխությունների նպատակն է կատարել համարժեքային փոխանցում և հասնել ցանկալի արդյունքի:

Ահա հռետորական հարցի մեկ ուրիշ օրինակ.

Contemptible man, both coward and slave, who placed the sword in your similar's hand?

Who gave him the right of revenge, and the task his fellow-men to rule and command? (p. 19).

Ապիկա՛ր մարդիկ, ստրուկ ու վախկոտ, ո՞վ տվեց սուրբ նմանիդ ձեռին,

Ո՞վ տվեց նրան վրեժի իրավունք իշխել, խողխողել իր նմաններին (էջ 69):

Ակնհայտ է, որ *Who gave/n՞վ տվեց* հարցադրմամբ հեղինակն իր հերոսի բերանով ժխտում է մարդկանց միջև առկա անհավասարությունը, հասարակության կողմից հաստատված օրենքներն ու իրավունքները: Ինչ վերաբերում է հինգերորդ սուրահում այս հատվածի անգլերեն տարբերակին ընդհանրապես, ապա այն իմաստային թարգմանություն է՝ լի պատշաճ փոխարինումներով. կան նաև *task* (հանձնարարություն) բառի հավելում և տեղափոխություններ, օրինակ, երբ *to rule (իշխել)*, *command (հրամայել)* բայերը դրված են նախադասության վերջում. *coward / վախկոտ և slave / ստրուկ* բառերը ևս փոխել են իրենց հերթականությունը: Այս ամենն օգնել է թարգմանչուհուն հասնելու բնագրի համարժեք թարգմանության:

«Աբու-Լալա Մահարի» պոեմում բավական հաճախադեպ է նաև **պոլիսինդենտոնը**, կապերի իրար հաջորդող կրկնությունը, որի նպատակն է միացնել նախադասություններն ու դրանց արտաբերումը դարձնել առավել ռիթմիկ: Հեղինակը մեծ մասամբ միացնում է կապակցվող անդամներին, օրինակ, *չար ու բարին, արմավն ու նոճին, օրենք և արդարություն, ուղին և դաշտերն*: Բացի այդ և համադասական շաղկապը միացնում է ավելի ծավալուն շարահյուսություն ունեցող հատվածները, առանձին կառույցներն ու խոսքին հաղորդում զգացմունքային լարվածություն: Ասվածի ապացույցն է հինգերորդ սուրահի հետևյալ հատվածը, երբ բազում հատվածներ սկսվում են հենց և շաղկապով.

Եվ իրավունքի դաժան անունով բյուր կառափներից բուրգեր է կերտում... (էջ 68):

And in our innocent country's name raises tombs and monuments high in the air... (p. 19).

Եվ ամեն ինչ է իշխանությունը – իրավունք, օրենք և արդարություն... (էջ 68):

The will of the ruler is all in all; righteousness, justice and law he decides; (p. 19).

Եվ նզովում եմ իշխանությունը՝ հազարաճիրան մոլի բորենին... (էջ 69):

I curse the potentates- pillars of state; like long-clawed badgers they stir up the mud... (p. 19).

Ակնհայտ է, որ մակդիրների, փոխաբերությունների և ոճական այլ արտահայտչամիջոցների կիրառումը բավարար չէր լինի արտահայտելու ժամանակի հասարակության բնույթը, գրական հերոսի տազնապները, գայրույթն ու մտադրությունները, իսկ *և* շաղկապի օգտագործումը հաղորդում է հավելյալ ենթաշերտ և ուժեղացնում է խոսքը: Պետք է նշել, որ թարգմանչուհին շատ դեպքերում անտեսել է այդ շաղկապի գործածությունն ու այն բաց է թողել, ինչը թարգմանությանը որոշ դեպքերում զրկել է ռիթմից ու մեղեդայնությունից, որ բնորոշ է բնագրին:

«Աբու-Լալա Մահարի» պոեմի մեկ ուրիշ պատկերում տեսանելի է **նվազող գագաթնակետի** կիրառումը, երբ ամեն մի բառի, նախադասության օգտագործմանը զուգընթաց՝ զգացմունքայնությունն ու տրամաբանությունը նախորդի համեմատ նվազում է.

The will of the ruler is all in all; righteousness, justice and law he decides;
He is our conscience for evil and good; we are just nothing- our morals be guides (p. 19).

Եվ ամեն ինչ է իշխանությունը – իրավունք, օրենք և արդարություն
Նա ինքն է խիղճը և չարն ու բարին, իսկ դու գերեզման, դու՝
ոչնչություն (էջ 68):

Նվազող գագաթնակետի օրինակ է բնագրում *գերեզման, դու՝ ոչնչություն* արտահայտությունը, որը թարգմանության մեջ փոխարինվել է *our morals be guides (մեզ բարոյականությունը պետք է ուղղորդի)* տարբերակով, որպեսզի հնարավոր լինի ապահովել համարժեքային թարգմանությունը, բայց նվազող գագաթնակետի երևույթը մասամբ է փոխանցվում ընթերցողին: Բացի այդ՝ վերոնշյալ հատվածի թարգմանության մեջ *իշխանությունը* փոխարինված է *ruler / կառավարիչ* բառով, որը վերացական զգացողություն է հաղորդում: Անգլերեն տարբերակում կան նաև հավելումներ՝ *he decides / նա որոշում է, the will / կամքը, just / հենց*.

Այդ ամենից գատ, ինչպես ժամանակին՝ շուրջ կես դար առաջ, իրավացիորեն նկատել է խնդրո առարկա պոեմի անգլերեն թարգմանության առայժմ գրեթե միակ ուսումնասիրողը՝ Տրդատ Խորշիդյանը, «թարգմանչուհին ամեն կերպ ձգտել է պահպանել բնագրի շունչը, աշխատել է չխախտել տողի ամբողջականությունը, կառուցվածքն ու հանգավորումը: ...Պահպանելով պոեմի դիստիկոս (երկտող) տները, թարգմանչուհին միաժամանակ աշխատել է հնարավորության սահմաններում ճիշտ վերարտադրել հեղինակի խոհափիլիսոփայական մտքի ընթացքն ու գեղարվեստական խոսքի նրբերանգները, պատկերավոր արտահայտչամիջոցներն ու լեզվառճական գունեղ դարձվածքները: ... Իսկ երկի արևելյան

կոլորիտը ընդգծելու նպատակով անգլերենում պահպանել է «քարավան», «դուրան», «բեղվին», «ջեննեթի հուրի փերի» և նման շատ այլ բառեր»¹:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Ավետիք Բասիակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի անգլերեն թարգմանությունն իսկապես տպավորիչ է: Ջաբել Բոյաջյան տաղանդավոր թարգմանչուհին համարժեքորեն փոխանցել է հեղինակի զգացմունքներն ու խոհերը՝ խուսափելով բառացի թարգմանությունից, որպեսզի ընթերցողին հաղորդի հանճարեղ բանաստեղծի գաղափարներն ու արվեստը:

Ռուզան Ղազարյան

Ռճական հնարքները Ավետիք Բասիակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմում և դրանց անգլերեն թարգմանությունը Ամփոփում

Հոդվածը նվիրված է Ավետիք Բասիակյանի «Աբու-Լալա Մահարի» քնարական պոեմի անգլերեն թարգմանության ուսումնասիրությանը: Հեղինակը մանրամասն, փաստացի օրինակներով բացահայտում է, որ թարգմանչուհին՝ Ջաբել Բոյաջյանը, հրաշալի տիրապետելով իր համար մայրենի երկու լեզուներին՝ հայերենին ու անգլերենին, և անձնական մտերմություն ունենալով ու խորհրդակցելով Վարպետի հետ, խորապես զգացել ու յուրացրել է բնագրի հարազատ շունչը. նա անգլերեն տարբերակում պահպանել է պոեմի ըմբոստ տարերքը, պատկերների արտահայտչականությունը և բառերի երաժշտական հնչեղությունն ու ռիթմիկան:

Рузан Казарян

Стилистические приемы в поэме Аветика Исаакяна «Абу-Лала Маари» и их английский перевод

Резюме

Статья посвящена исследованию английского перевода лирической поэмы Аветика Исаакяна «Абу-Лала Маари». На основе конкретных примеров автор подробно раскрывает, как переводчица Забел Бояджян, в совершенстве владея двумя родными языками - армянским и английским, будучи близка с Мастером и консультируясь с ним, глубоко прочувствовала и уловила дух оригинала. В английской версии она сохранила бунтарскую стихию поэмы, выразительность образов, а также музыкальное звучание и ритмику слов.

¹ **Խորշիդյան Տ.** Ավետիք Բասիակյանի ստեղծագործությունները Ջաբել Բոյաջյանի թարգմանությամբ // «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1975, թիվ 3, էջ 67-68:

Ruzan Ghazaryan

**Stylistic Devices in Avetik Isahakyan’s “Abu-Lala Mahari”
and Their English Translation**

Summary

This study investigates the English translation of Avetik Isahakyan’s lyric poem “Abu-Lala Mahari”. The author provides specific details and examples to show that the translator of the poem, Zabelle Boyajian has revealed the poem at a deep level, feeling the true spirit of the original which was so close to her heart. It was due to that fact that she had a solid command of English and Armenian as she had grown up speaking both. Also, she was in a close relationship with the Master and could consult him whenever needed. Thus, she has managed to fully convey to the English-speaking readership the rebellious spirit of the poem, the poetic imagery contained in the text as well as the musicality and rhythm of the words used there

Խմբագրություն է ուղարկվել 29.07.2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 15.08.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բանասիրական գիտությունների թեկնածու
armine-hakobyan72@mail.ru

**ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ
ՄՍՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԲՆՈՒՑԹԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ.**

**«ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ», «ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ», «ԿՈՒՆՏՈՒՐ-
ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ԵՎ «ՄՇԱԿՈՒՑԹ»**

(Նվիրվում է Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գրադարանագիտության և
մատենագիտության ամբիոնի հիմնադրման 50-ամյակին)

Բանալի բառեր և արտահայտություններ. գրադարանագիտություն, մատենագիտություն, գրադարանային գործ, գրադարանավարներ, միջոցառումներ, ամսագիր:

Ключевые слова и выражения: библиотековедение, библиография, библиотечное дело, библиотекари, мероприятия, ежемесячник.

Keywords and expressions: Library science, bibliography, library work, librarians, event, review.

Պարբերականների հսկայական քանակության և բազմազանության պարագայում ժամանակի հրամայականն էր դառնում ստեղծել գրադարանային մասնագիտական ամսագիր: 1941 թ. Ալ. Սյանիկյանի անվան պետական հանրային գրադարանի (այժմ՝ Հայաստանի ազգային գրադարանի) և նախանձախնդիր անհատների՝ Գ. Լևոնյանի, Գ. Հայրյանի, Ա. Ստեփանյանի, Վ. Համազասպյանի, Ս. Ղազարյանի, Ա. Բաբայանի, Հ. Քոչարի (պատասխանատու խմբագիր) շնորհիվ ստեղծվեց այդ պարբերականը՝ «Բիբլիոգրաֆիական ամսագիր» անունով: Հիշատակումներն ամսագրի մասին հանդիպում ենք Ա. Կիրակոսյանի և Ս. Բաբլոյանի մատենագիտական ցանկերում. «Բիբլիոգրաֆիական ամսագիրը» օրգանն էր Ալեքսանդր Սյանիկյանի անվան Պետական հանրային գրադարանի (այժմ՝ Ազգային), Երևան, 1941, 78 էջ: Լույս է տեսել ընդամենը 1 համար»¹:

Ինչպես ամսագրի առաջնորդող հոդվածում ենք նկատում. «Ընթերցողին տպագիր խոսքով օգնելու գործի մեջ լուրջ նշանակություն

¹ Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794 - 1967): Համահավաք ցանկ /Գազմ.՝ Ա. Կիրակոսյան, խմբ., առաջ. հեղ.՝ Հ. Կոստիկյան և Հ. Սիլվանյան, Ե., 1970, էջ 238 (Ընդ. գիրքը 621 էջ):

ունի հանձնարարական բիբլիոգրաֆիան – ամենասեղմ, համառոտ տեղեկությունն արժեքավոր գրքերի և մամուլում հրատարակված կարևորագույն հոդվածների, աշխատությունների ու երկերի մասին»²:

Պարբերականի միջոցով ընթերցողները պետք է իրազեկվեին ոչ միայն տպագիր գրականության, այլև Մատենադարանում հանգրվանած ձեռագիր ժառանգության մասին:

Առաջնորդողի վերջում խմբագրակազմը կարևորում է ոչ միայն նոր ամսագրի ծնունդը մեր իրականության մեջ, այլև մեծ տեղ է հատկացնում գրադարանավարների ընթերցողների հետ այս մատենագիտական ամսագրի սերտ կապի հաստատմանը: Նկատի առնելով նրանց դիտողությունները, աշխատանքային փորձը և այլ հանգամանքներ՝ ժամանակի դրոշմով ամսագիրը տպագրում է այդ հասարակարգի առաջնորդների հետ կապված նյութեր:

Սովետահայ գրողների երկերը բաժնում առկա են գրախոսականներ Մ. Արագիի «Հորիզոն», Սիրասի «Անահիտ», Մտ. Զորյանի «Ընտիր երկեր», Գ. Բորյանի «Ճանապարհ դեպի ծով», Գ. Հայրյանի «Լիություն», Վ. Գրիգորյանի «Արևն ազդանշան», Գրիգոր Սար (հեղինակը) և Նոր-Այր «Փրկության փարոսը» գրքերի մասին³:

Ուշագրավ է Հրաչյա Աճառյանի հոդվածը «Մեսրոպ Մաշտոց» վերնագրով, որը տպագրվել է «Հայ գրի և գրականության պատմությունից» բաժնում⁴: Այս խորագրի հաջորդ հոդվածը նվիրված է հայերեն առաջին տպագիր գրքին՝ «Հայկական առաջին տպագիր գրքերը», որի հեղինակն է Մտ. Կուրտիկյանը⁵, Հովհ. Պետրոսյանի հոդվածը պատմում է մեր առաջին պարբերականի մասին՝ «Հայ առաջին պարբերականը» խորագրով⁶, Ա. Աբրահամյանի հոդվածը նվիրված է Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկության» աշխատությանը⁷, Վ. Համազասպյանի հոդվածը՝ Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» աշխատությանը⁸:

Նշանավոր տարեկիցներ⁹ բաժնում «Բիբլիոգրաֆիական ամսագիրը» անդրադառնում է Մ. Յու. Լերմոնտովի 100-ամյակին (հեղինակ Մ. Բաբայան), Միքայել Նալբանդյանի 75-ամյակին (հեղինակ Նշ. Մուրադյան),

² Բիբլիոգրաֆիա, 1941, թ. 1, էջ 5:

³ Նույն տեղում, էջ 31-38:

⁴ Նույն տեղում, էջ 44-47:

⁵ Նույն տեղում, էջ 48-49:

⁶ Նույն տեղում, էջ 49-50:

⁷ Նույն տեղում, էջ 51-53:

⁸ Նույն տեղում, էջ 53-54:

⁹ Նույն տեղում, էջ 55-68:

Ղազարոս Աղայանի 100-ամյակին (հեղինակ Գարեգին Սարգսյան): Այս բոլոր հոդվածներն էլ անդրադարձ են կատարում այդ անվանի գործիչների կյանքին և գործունեությանը և ունեն հարուստ գրականության ցանկ:

Անտոսացիաներ նոր¹⁰ գրքերի մասին հատվածում հանդիպում ենք Ա. Ղանազանյանի «Ժողովրդական խառդիկներ», «Գյուղական փոքր երգեր» իրենց փոփոխակներով (խմբ.՝ պրոֆեսոր Մանուկ Աբեղյան, մասնակի աշխատակից՝ Կոմիտաս, Երևան, Հայպետհրատ, 1940, 582 էջ):

Հրայր Հովակիմյանի գրքի տեսությունը նվիրված է Գ. Լևոնյանի «Թատրոնը հին Հայաստանում»¹¹ աշխատությանը;

Բիբլիոգրաֆիական ամսագրի օրացույցը անդրադարձ է կատարում մայիս ամսվա իրադարձություններին¹², կազմել է Ա. Բաղդասարյանը.

«Բիբլիոգրաֆիական ամսագիրը» իր գրադարանագիտական և մատենագիտական բովանդակությամբ առաջնեկը և միակը լինելու օրինակով պարարտ հող հանդիսացավ, որպեսզի տարիներ հետո Հայաստանում լույս տեսնեն այլ վերնագրով և բնույթով նմանատիպ ինքնատիպ մասնագիտական ամսագրեր:

Շուրջ քսան տարվա ընդմիջումից հետո՝ 1960 թ., Երևանում լույս է տեսնում «Գրադարանավար» ամսագիրը, որի մասին Ա. Կիրակոսյանը և Մ. Բաբլոյանը նույնպես հիշատակում են:

«Գրադարանավար» գրադարանային գործի տեսության և պրակտիկայի բյուլետեն: Ալ. Մյասնիկյանի անվան պետական Ռեսպուբլիկական գրադարան: Երևան, 1960 – 1961, 47 էջ: Խմբ. կոլեգիա, պատ. խմբ. Ա.Գ. Ղազարյան¹³:

Գրադարանավար: Երևան, 1960-1961, Նույնը. Խմբագիր՝ Անդրանիկ Ղազարյան¹⁴:

Այն հրատարակվել է նախկինում ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության (այժմ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն) և Ալ. Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլի-

¹⁰ Նույն տեղում, էջ 55-68:

¹¹ Լևոնյան Գ., Թատրոնը հին Հայաստանում. պատմաբանասիրական տեսություն, Եր., 1941:

¹² Նույն տեղում, էջ 77-78:

¹³ Հայ պարբերական մամուլը: Մատենագիտություն (1794-1967): Համահավաք ցանկ / Կազմ՝ Ա. Կիրակոսյան; Խմբ. և առաջաբանը՝ Հ. Կոստիկյանի և Հ. Միլվանյանի, Եր., 1970, էջ 250:

¹⁴ Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980) / ՀՄՍՀ ԳԱ Պատմ. ին.տ., Կազմ.՝ Մ.Ա. Բաբլոյան, Պատ. խմբ. Մ.Հ. Մխիթարյան, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ. 1986, էջ 278:

կական գրադարանի (այժմ՝ Հայաստանի Ազգային գրադարան) կողմից: Համարը ունեւ խորագիր «ՄՄԿԿ Կենտկումում», «Վ.Ի. Լենինի ծննդյան 90-ամյակի նախօրյակին», «Ռեսպուբլիկայի գրադարաններում», «Մանկական գրադարաններում», «Ռեսպուբլիկայի վաստակավոր գրադարանավարներ» և «Գրքերի համառոտ անտագիաներ»: Յուրաքանչյուր խորագրում հետաքրքրաշարժ հողվածներ են մեր երկրի գրադարանային գործի կազմակերպման, ղեկավարման, նրա հիմնախնդիրների վերաբերյալ: Ուշագրավ է Ազգային գրադարանի նախկին տնօրեն Արագի Թիրաբյանի «Մյասնիկյանի անվան գրադարանը նոր խնդիրների իրականացման ճանապարհին» հողվածը, որտեղ առավել քան արդիական հնչեղությամբ արժարծվում է այն միտքը, որ գրադարանները և, հատկապես, Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանը կոչված է առաջինը լինելուն¹⁵: «Պետք է արմատապես վերակառուցել գրադարանային կադրերի պատրաստման գործը Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում: Այստեղ գրադարանային ֆակուլտետի համար պետք է ստեղծել գրադարանագիտական, բիբլիոգրաֆիայի և մանկական գրադարանագիտական բաժիններ, ինչպես նաև գրադարանային բաժիններ, ինչպես նաև գրադարանային ֆակուլտետի համար առանձին դեկանատ»: Սա նախապայմաններից մեկն է, որի հիման վրա հետագայում ստեղծվեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի «Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտություն» ամբիոնը (նախկինում՝ Գրադարանագիտություն և մատենագիտություն ամբիոն)

«Առաջին շրջանավարտները»՝ այսպես է վերնագրված «գրադարանավար» ամսագրի 1960թ. թ. 5-ում գտնվող հողվածը¹⁶, որտեղ մասնագիտական կրթության պատմական ակնարկից հետո ծանոթանում ենք հեռակա մանկավարժական ինստիտուտի գրադարանային բաժնի առաջին շրջանավարտներին՝ Օֆելյա Ղարիբյան, Մարգո Միրզոյան, Ռոբերտ Մուշեղյան, Վիկտորյա Ղուշյան, Զարուհի Զիլովյան և այլք, որոնք աշխատում են տարբեր գրադարաններում:

Հարկավոր է նշել, որ ամսագրի բոլոր համարներում էլ գրեթե պահպանվում են նույն խորագրերը՝ աննշան փոփոխությամբ:

1961թ. թ. 2-ում՝ «Ռեսպուբլիկայի վաստակավոր գրադարանավարները» խորագրում, Ալվարդ Հայրապետյանի հողվածն է «Գրադարանագետ-գիտնականը»՝ նվիրված Արամ Բաբայանին, Ա.

¹⁵ Գրադարանավար, 1960, թ. 1, էջ 14-15:

¹⁶ Գրադարանավար, 1960, թ. 5, էջ 19:

Ամիրյանի «Աճել է իր սիրած գործի մեջ» հոդվածը՝ նվիրված Հրայր Կոստիկյան, Ն. Դավթյանի հոդվածը նվիրված է Համիկ Միլվանյանին «Բեղմանվոր աշխատանքի համար» վերնագրով, Ն. Մեքատյանի հոդվածը նվիրված է Քսենյա Զաքարյանին՝ «Համեստ և նվիրված աշխատողը», Մտ. Հովիվյանի հոդվածը նվիրված է Լենա Հովհաննիսյանին՝ «Պատվավոր կոչում» վերնագրով և Մ. Կարապետյանի հոդվածը՝ «Գրքի պատրիոտը», նվիրված Էմմա Արտազյանին: Հոդվածաշարերում նրանց կյանքի ու գործունեության որոշակի գծեր են ներկայացվում¹⁷:

Խմբագիրներ Անդրանիկ Ղազարյան, ապա Հայկազ Երանոսյան, Էմիլ Դանեղյան¹⁸:

«Գրադարանավար» ամսագիրը անդրադառնում էր նաև նոր լույս տեսած գրքերին և հանդես գալիս ուշագրավ գրախոսականներով:

Պարբերականը «Գրադարանավար» 1961թ. թ. 4-րդ համարից կոչվում է «Կուլտուր-լուսավորչական աշխատանք», որի հիշատակումները նույնպես կան Ա. Կիրակոսյանի և Մ. Բաբլոյանի մոտ:

Կուլտուր-լուսավորչական աշխատանք: Օրգան Հայկ. ՍՍՌ կուլտուրայի մինիստրություն; Երևան 1961-1967: Պատ. խմբ. Ա. Ղազարյան, Ն. Երանոսյան¹⁹: Կուլտուր-լուսավորչական աշխատանք, Երևան 1961-1970: Հայկական ՍՍՌ մինիստրության բյուլետեն (8 համար):

«Կուլտուր-լուսավորչական աշխատանքն» ուներ գրեթե նույն խորագրերը, ինչ «Գրադարանավարը» առաջնորդող նյութեր «Դեպի ՍՄԿԿ 22-րդ համագումարը», «Ռեսպուբլիկայի գրադարաններում», «Կուլպասացիա», «Համեստ աշխատանքի մարդիկ», «Ռեսպուբլիկայի կուլտուրայի տներում», «Մտքերի փոխանակության կարգով», «Մեզ գրում են», «Գրախոսություն և քննադատություն» և «Նոր գրքեր»:

«Կուլտուր-լուսավորչական աշխատանք» ամսագիրը անդրադառնում է հանրապետության ոչ միայն գրադարանային կյանքին, այլևս ամբողջ մշակութային կյանքին:

«Կուլտուր-լուսավորչական աշխատանք» ամսագրի էջերում ուշագրավ գրադարանագիտական, մատենագիտական, գրքագիտական

¹⁷ Գրադարանավար, 1961, թ. 2, էջ 13-18 (լուսանկարներով):

¹⁸ Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980) / ՀՄՍՀ ԳԱ Պատմ. ին.տ., Կազմ՝ Մ.Ա. Բաբլոյան, Պատ. խմբ.՝ Մ.Հ. Մխիթարյան, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ. 1986, էջ 281:

¹⁹ Հայ պարբերական մամուլը: Մատենագիտություն (1794-1967) Համահավաք ցանկ / Կազմ՝ Ա. Կիրակոսյան; Խմբ. և առաջաբանը՝ Ն. Կոտիկյանի և Ն. Միլվանյանի, Եր., 1970, էջ 322:

հողվածներով հանդես են եկել պրոֆեսորներ, գրադարանագետներ, մատենագետներ, զրքագետներ Արամ Բաբայանը, Հրաչյա Կոստիկյանը, Հայկ Դավթյանը, Ռաֆայել Իշխանյանը, Նինել Ոսկանյանը, Հայկանուշ Դանիելյանը, Ներսես Հայրապետյանը, Գագիկ Մուքիայանը, Արագի Թիրարյանը, Բալաբեկ Մելյանը և շատ ու շատ նշանավոր անհատներ:

Այստեղ տպագրվում էին բազմաթիվ, արժեքավոր հողվածներ: Գ. Դադումյանի «Պատրաստվում է հայ պարբերական մամուլի լիակատար ցուցակը»²⁰, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի ժուռնալիստիկայի պատմության սեկտորի կողմից, որը դեկավարում էր Արտաշես Կարինյանը, հրապարկվելիք «Հայ պարբերական մամուլի ստուգված ճշտված լիակատար ցուցակն էր լինելու՝ սկզբից մինչև մեր օրերը (1794 – 1961 թթ.)»²¹: Սա հիմք է հանդիսանում 1980 թ. Մանվել Բաբլոյանի կազմած «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն»²² զրքի համար: Ինչպես նշեցինք, ամսագիրը անդրադառնում է ոչ միայն գրադարանային կյանքին, այլ ողջ մշակույթին: Դրա առհավատչյան թանգարանների պատմության, դրանց ստեղծման ու ներկայացմանը վերաբերող հետաքրքրաշարժ հողվածներն են Գ. Գևորգյանի (Պ. Պռոշյանի տուն-թանգարանի նախկին տնօրենի) հողվածը և Է. Վառիկյանի (թանգարանի նախկին տնօրեն) «Հայաստանի բնության թանգարանը» նյութերն են²³:

Նախկին Լենինի անվան (այժմ՝ Ռուսաստանի Պետական) գրադարանի 100-ամյակին են նվիրված Վ. Օղովի (Վ.Ի. Լենինի անվան ՍՍՌՄ) Պետական գրադարանի գլխավոր գրադարանավար և Հրաչյա Կոստիկյանի (Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի դիրեկտորի գիտական զծով տեղակալ) հողվածները²⁴:

Լվովի ռեսպուբլիկական պատմական թանգարանի գիտական աշխատող Նադեժդա Կրիվոնոսը հատուկ «Կուլտուր-լուսավորչական աշխատանք» ամսագրի ընթերցողների համար գրել է՝ «Պատմում են արխիվային դարավոր փաստաթղթերը» նյութը, որտեղ ներկայացվում է Ուկրաինայում հայերի բնակության հաստատման և նրանց վճռորոշ դերի

²⁰ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1961, թ. 5, էջ 46:

²¹ Նույն տեղում, էջ 46:

²² Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980) / ՀՄՄՀ ԳԱ Պատմ. ին.տ., Կազմ՝ Մ.Ա. Բաբլոյան, Պատ. խմբ.՝ Մ.Հ. Մխիթարյան, Եր., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1986:

²³ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1962, թ. 1, էջ 31-35:

²⁴ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1962, թ. 4, էջ 27-32:

մասին այդ իրականության կյանքում: Անդրադարձ կա նաև Լվովի հայ մարդկանց Անդրեյ Ավետիքովիչին (1643թ), Նիկոլայ Ավետիքովիչին (1644թ), Քրիստոփոր Գլուշկովիչին (1651թ), Թորոսովիչին (1617թ) և ուրիշների անձնական գրադարաններին²⁵:

Նրանց անձնական գրադարանը շատ հարուստ է եղել: Ըստ արխիվային փաստաթղթերի այստեղ են պահվել հայերեն, ուկրաիներեն, լեհերեն, լատիներեն, հունարեն, գերմաներեն և այլ լեզուներով գրքեր գիտության տարբեր բնագավառների մասին:

Հայկական պարահանդեսային պարի հմտություններն է բացատրում բեմադրող և գրառող Սարգիս Խաչատրյանի նյութը, որին հետևում են Արամ Խաչատրյանի երաժշտության նոտաները:

Վաստակավոր ուսուցիչ Ար. Սարգսյանի նյութը՝ «Մտանում են գրադարանագիտական կրթություն» դպրոցահասակ տարիքից աշակերտների շրջանում խորագրով, գրադարանային և մատենագիտական գիտելիքների տարածումն ու ուսուցումն է: Նկատելի է, որ որոշ դպրոցներում եղել են նմանատիպ փորձեր և հաջողությամբ են պսակվել: Շատ ողջունելի է, որ աշակերտը և վաղվա ուսանողն ու քաղաքացին ճանաչի և իմանա իր երկրում գտնվող մշակութային կարևորագույն օջախների և նրանց գործունեության մասին²⁶:

Ն. Կրիվոնոսի «Ուկրաինայում հայ գրքի տպագրության 350-ամյակը» հոդվածում խոսվում է հայ գրքի սկզբնավորման, Հովհաննես Քարամատենցի «Սաղմոսարանի», առաջին հայերեն գրքի մասին²⁷:

Հրաչյա Կոստիկյանի հոդվածը՝ «Հայ մշակույթի բազմահարուստ շտեմարանը» խորագրով, նվիրված է հանրային գրադարանին (այժմ Ազգային), որտեղ հեղինակը կարևորում է այդ բացառիկ մշակութային հաստատության տեղն ու դերը մշակութային կյանքում²⁸:

Անվանի մատենագետ, գրականագետ, բանասեր Ռաֆայել Իշխանյանի «Հայ մատենագիտության պատմություն» երեք պրակներին է անդրադարձել Գորիսի Րաֆֆու անվան շրջանային գրադարանի վարիչ Նինա Հովսեփյանն իր «Արժեքավոր ներդրում մատենագիտության մեջ» հոդվածում, որտեղ հանգամանորեն վերլուծվում և ներկայացվում են այդ եզակի աշխատանքի բոլոր հարցերը²⁹: Մատենագետ, գրադարանագետ

²⁵ նույն տեղում 1963, թ. 6, էջ 42-43:

²⁶ Նույն տեղում, թ. 5, էջ 25-27:

²⁷ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1966, թ. 5, էջ 45-46:

²⁸ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1967, թ. 7, էջ 10-14:

²⁹ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1969, թ. 1, էջ 29-30:

Հայկ Դավթյանի գրախոսականն էլ նվիրված է Նինա Հովսեփյանի կազմած «Պարույր Սևակի» կենսամատենագիտությանը³⁰:

Պետք է նշել, որ ամսագրի 1969 թ. 6-7-րդ համարները գրեթե ամբողջությամբ նվիրված են հայ մշակույթի երկու հսկաների՝ Հովհ. Թումանյանի և Կոմիտասի 100-ամյա հոբելյաններին՝ տարատեսակ հոդվածների, կարծիքների և ուսումնասիրությունների ընդգրմամբ:

Ռաֆայել իշխանյանի հոդվածը վերաբերում է գրադարանային մատենագիտական անվանումների հայերեն գործածությանը՝ «Գրադարանային մատենագիտական մի քանի հարց» վերնագրով³¹:

«Գիրք բուրին» 1972 գրքի միջազգային տարի» խորագրով Ս. Առաքելյանի նյութը մեզ ծանոթացնում է Հայաստանի 19-րդ դարի և 20-րդ դարի գրադարաններին³²:

Անվանի մատենագետ Նինել Ոսկանյանի հոդվածը՝ «Ազգային մատենագիտության զարգացումը Հայաստանում և նրա հեռանկարները» վերանգրով, մեզ ծանոթացնում է մեր մատենագիտության անցած ճանապարհին և հեռանկարներին³³:

Հայ պարբերական մամուլի 180-ամյա հոբելյանի առիթով է Հրաչյա Կոստիկյանի «Պեղել հայ լրագրության անդաստանը» նյութը: Հեղինակը խոսում է պարբերական մամուլի բացառիկ դերի և նշանակության մասին³⁴:

Հանրապետության գլխավոր մանկական գրադարանի՝ «Խնկո-Ապոլո» անվան մանկական գրադարանի 40-ամյա հոբելյանի մասին է գրադարանի նախկին տնօրեն Հայկանուշ Դանիելյանի հոդվածը³⁵:

Հայկ Դավթյանի հոդվածը նվիրված է հայկական օրացույցներին և դրանց մատենագիտական աշխատանքներին՝ «Հայկական օրացույցների պատմությունն ու մատենագիտությունը» վերնագրով³⁶: Այն հանդիսանում է Հայկ Խաչատրյանի կազմած համանուն մատենագիտության վերլուծությանը՝ 1513-1973թթ.³⁷: Բավականին մանրամասն դիտարկելով մատենագիտական ցանկը, նրա բաժիններն ու ենթաբաժինները՝ հեղինակը գտնում

³⁰ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1969, թ. 3, էջ 30-31:

³¹ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1970, թ. 6, էջ 20-24:

³² Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1973, թ. 5, էջ 30-31:

³³ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1973, թ. 6, էջ 12-16, թ. 7, էջ 26-33:

³⁴ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1975, թ. 4, էջ 30-35:

³⁵ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1975, թ. 8, էջ 8 - 14:

³⁶ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1976, թ. 7, էջ 37-40:

³⁷ Խաչատրյան Հայկ: Հայկական օրացույցների և տարեցույցների մատենագիտություն 1513-1973 /ՀՄՍՀ կուլտուրայի մինիստրություն: Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, Եր, 1975, 360 էջ:

է, որ «Հայկ Խաչատրյանի աշխատությունն իր ամբողջության մեջ մնում է իբրև արժեքավոր ու դրական ներդրում բանասիրության բնագավառում: Կասկած չկա, որ այն դասվելու է պետքական և միջտ օգտագործվող մատենագիտական ձեռնարկների շարքը»:

Հրայա Կոստիկյանի հոդվածը հայկական մատենագիտությունն է՝ «Հայկական մատենագիտության պատմության և տեսության հարցեր» վերնագրով: Կատարելով պատմական ակնարկ հայ մատենագիտության պատմության քառուղիներով՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ մատենագիտական օբյեկտ կարող են հանդիսանալ ոչ միայն տպագիր արտադրանքը (գիրք, պարբերականներ), այլև նկարները, տեսալսողական նյութերը և այլն: Պետք է նկատենք, որ այժմ (թվայնացման ժամանակահատվածում) այս շրջանակը բավականին ընդլայնվել է և ներառում է բազմաթիվ էլեկտրոնային պաշարներ³⁸:

Ամսագրի էջերում կան նաև գեղարվեստական ստեղծագործություններ, որոնց առիավատյան Արտաշես Քալանթարյանի «Բացք էր աչքերը» պիեսն է՝ բաղկացած երկու մասից³⁹:

Ռոբերտ Բաղդասարյանի «Հայ նկարիչները գրքի նկարազարդումներ»-ը ներկայացնում է անվանի նկարիչներ Հակոբ Կոջոյանի, Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի, Գրիգոր Խանջյանի և այլոց անկրկնելի գրքի նկարազարդումները⁴⁰:

Հարկ է նշել, որ 1981 թվականից սկսած «Կուլտուր-լուսավորչական աշխատանք» ամսագիրն իր տարվա վերջին՝ ութերորդ համարում տպագրում է տարվա ընթացքում «Հանդեսում տպագրված նյութերի ցանկը»⁴¹:

«Պապիրուսից մինչև հնչունագիրք»՝ այսպես է վերնագրված ներկայիս ԱՄՆ-ի դեսպանատան տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի տնօրեն, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դասախոս Ներսես Հայրապետյանի հոդվածը⁴²: Այստեղ հանգամանորեն ներկայացված են գրքի՝ մարդկության պատմության այդ հրաշագործության անցած փառավոր ուղին և գալիքը՝ պապիրուսից մինչև հնչունագիրք, դարերի միջով անցած և մեզ հասած կենդանի վկաները:

³⁸ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1978, թ. 4, էջ 6-12:

³⁹ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1978, թ. 4, էջ 42-43, թ. 5, էջ 39-46:

⁴⁰ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1979, թ. 8, էջ 45-48:

⁴¹ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, թ. 8, էջ 46-47:

⁴² Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1982, թ. 3, էջ 17-27:

«Գիրքը քաղաքակիրթ մարդու ամենահին և մտերիմ ուղեկիցներից է»: Վերջում հոդվածագիրը, նկարագրելով էլեկտրոնային գրքի նախատիպի մասին տեղեկությունը, հավատում է, որ գիրքը կմնա մարդու հավերժ ուղեկիցը:

Պրոֆեսոր Գագիկ Սուքիասյանի նյութը նվիրված է կենսամատենագիտական ցանկերին «Ավելի մեծ ուշադրություն կենսամատենագիտությանը» վերնագրով⁴³: Գ. Սուքիասյանը, վկայակոչելով լույս տեսած շատ կենսամատենագիտություններ՝ նվիրված Ավ. Իսահակյանին, Գարրիել Սունդուկյանին, Ղ. Աղայանին և ուրիշներին, անդրադառնում է նրանց կառուցվածքին և տալիս է դրանց գնահատումն ու կարևորությունը մեր իրականության մեջ:

Խնկո-Ապր անվան հանրապետական մանկական (այժմ՝ Ազգային) գրադարանի նախկին տնօրեն Հայկանուշ Դանիելյանի հոդվածը նվիրված է Խնկո-Ապր անվան գրադարանի կետարյա հոբելյանին, անցած ուղուն և պատմական զարգացմանը՝ վերջում վկայակոչելով, որ այս գրադարանը իր մեծ նվիրումով երեխաների համար բացել ու բացում է մի նոր աշխարհի դռներ:

Մատենագետ, բանասեր Բալաբեկ Մելյանի «Մայր գրադարանի առաջին տնօրենը» նյութը Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի (այժմ՝ Ազգային) առաջին տնօրեն Ստեփան Կանայանի կյանքի գծերն է ներկայացնում⁴⁴:

Բանասիրական գիտությունների դոկտոր Պիոն Հակոբյանի նյութը տեղափոխում է մեծ լուսավորչի, մանկավարժի՝ Խաչատուր Աբովյանի անձնական գրադարան և ծանոթացնում նրա առաջին կարդացած գրքերին և այլ գրքերի հետ:

Այս թեման է նորից շոշափվում Ներսես Հայրապետյանի «Չարենցը և գիրքը» հոդվածում, որտեղ ներկայացված են մեծ բանաստեղծի և գրքերի՝ նրա կյանքում մեծ մեծ դեր խաղալու, անձնական գրադարանի կառուցվածքի, լեզվական առանձնահատկությունների մասին տեղեկություններ⁴⁵:

Բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դասախոս Բալաբեկ Մելյանի «Գրադարանայի գործի նվիրյալը» հոդվածը

⁴³ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1983, թ. 4, էջ 18-21:

⁴⁴ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1985, թ. 5, էջ 35-38:

⁴⁵ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1987, թ. 3, էջ 21-25:

նվիրված է Հանրային գրադարանի (այժմ՝ Ազգային) բաժնի վարիչ, այնուհետև տնօրեն Երվանդ Թադանոսյանի կյանքին և գործունեությանը⁴⁶:

1989 թվականից սկսեց լույս տեսնել «Մշակույթ» վերնագրով պարբերականը, որի գլխավոր խմբագիրն էր Էմիլ Դանեղյանը: Ամսագիրը լույս տեսավ ընդամենը երկու տարի՝ 1989-1990 թվականներին, և ամեն տարի լույս տեսավ երեք համար՝ 60 էջով:

«Մշակույթ» հանդեսում մատենագետ Բալաբեկ Մեյանի հոդվածը՝ «Վերադարձված անուններ» խորագրով, պատմում է գրադարանային գործի նվիրյալ անհատի պաշտամունքի գոհ, Հանրային, այժմ՝ Ազգային գրադարանի նախկին տնօրեն Ազատ Մարտիկյանի կյանքի և գործունեության մասին⁴⁷: Հոդվածի վերջում Ռաֆայել Աթայանի հիշողություններն են սպազրված Ազատ Մարտիկյանի մասին (23 ապրիլի 1988թ, Երևան):

«Հայ հանդեսներ, մոռացված էջեր» հոդվածը նվիրված է «Գեղանի» (Վենետիկ 1901-1908, 1909-1927, 1947 և 1947) պատմաբանասիրական, գրական գեղարվեստական պատկերազարդ հանդեսին: Հեղինակը Անահիտ Հարությունյանն է⁴⁸: Եվգենյա Ջավադսկայայի չափազանց հետաքրքրական նյութը «Աշխարհն իբրև գիրք» գիրք-հասկացողության, նրա դերի ու նշանակության, աշխարհի հանդեպ վերաբերմունքի չափանիշի ստեղծման մասին է⁴⁹:

Պատմական գիտությունների դոկտոր, պատմաբան Կարեն Մաթևոսյանի ուսումնասիրությունն էլ նվիրված է հայերեն ձեռագրերի հիշատակարաններին՝ «Հայոց Կեռան թագուհին» խորագրով⁵⁰:

Ինչպես նկատում ենք, 1990թ. 2, 3 համարներով ավարտվում է մասնագիտական պարբերականների մի շատ կարևոր շրջանփուլ՝ հիմք դնելով նոր ժամանակահատվածի՝ Հայաստանի երրորդ հանրապետության, գրադարանագիտական մատենագիտական, գրքագիտական բնույթի պարբերականների համար:

⁴⁶ Կուլտուր-լուսավորչական աշխատանք, 1987, թ. 8, էջ 34-35:

⁴⁷ Մշակույթ, 1989, թ. 1, էջ 40-41:

⁴⁸ Մշակույթ, 1989, թ. 2-3, էջ 32-38:

⁴⁹ Մշակույթ, 1989, թ. 2-3, էջ 74 – 84:

⁵⁰ Մշակույթ, 1990, թ. 1, էջ 49-51:

Արմինե Հակոբյան

**Նախկին Խորհրդային Հայաստանի գրադարանագիտական
և մատենագիտական բնույթի պարբերականները. «Բիբլիոգրաֆիական
ամսագիր», «Գրադարանավար», «Կուլտուր-լուսավորչական աշխատանք»
և «Մշակույթ»
Ամփոփում**

Հնդվածում անրադարձ է կատարվում նախկին Խորհրդային ժամանակահատվածում լույս տեսած մատենագիտական և գրադարանագիտական բնույթի պարբերականներին՝ «Բիբլիոգրաֆիական ամսագիր», «Գրադարանավար», «Կուլտուր-լուսավորչական աշխատանք» և «Մշակույթ»: Ներկայացվում է տվյալ ժամանակահատվածի գրադարանային և մատենագիտական կյանքը, կարևորվում դրանց դերն ու նշանակությունը այս մասնագիտության բնագավառում:

Армине Акопян

**Библиографические и библиотековедческие периодические издания
бывшей Советской Армении: “Библиографический
ежемесячник”, “Библиотекарь”, “Культурно-просветительская работа
и “Культура”**

Резюме

В статье говорится о библиографических и библиотековедческих периодических изданиях опубликованных в бывшем Советском периоде: “Библиографический ежемесячник”, “Библиотекарь”, “Культурно-просветительская работа и “Культура”. Представлена библиотечная и библиографическая жизнь данной эпохи, отмечается их роль и значение в сфере этой профессии.

Armine Hakobyan

**The Post Soviet Armenia,s library and bibliographic periodicals: “Bibliographia”,
“Gradaranavar”, “Kultur-lusavorchakan ashkhatanq” and “Mshakuyt”**

Summary

The article is devoted to the bibliographic and library periodicals published during the Soviet period: “Bibliografiakan amsagir”, “Gradaranavar”, “Kultur-lusavorchakan ashkhatanq” and “Mshakuyt”. The library and bibliographic activity of that period is presented, their role and significance are valued in this professional sphere.

Խմբագրություն է ուղարկվել 05.05.2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 20.05.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Երևանի պետական համալսարան
Ակադ. Հրանտ Թամրազյանի անվան հայ
գրականության պատմության ամբիոնի ասպիրանտ
anna.stepanyan.1993@mail.ru

**ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՒ ԾՆՈՐՀԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՆ
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ
ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Բանալի բառեր և արտահայտություններ. հուր, լույս, Ներսես Շնորհալի, հանելուկ, Տիրատուր Վարդապետ, տեսիլ, խորհրդանշան, Սահակղուխտ Սյունեցի, Վերածնունդ, իմացության լույս

Ключевые слова и выражения: огонь, свет, Нерсес Шнорали, загадка, Тиратур Вардапет, явление, символ, Саакдукт Сюнеци, Возрождение, свет познания.

Key words and expressions: fire, light, Nerses Shnorhali, riddle, Tiratur Vardapet (Archimandrite), vision, symbol, Sahakdukht Syunetsi, Renaissance, light of knowledge.

Արվեստի ստեղծման, ստեղծագործելու շնորհի վերաբերյալ հայ միջնադարյան քնարերգուների ընկալումները հարազատ են տվյալ ժամանակի աստվածաբանական և փիլիսոփայական պատկերացումներին ու ընկալումներին: Թե՛ Վաղ, թե՛ Ուշ միջնադարի հեղինակային անհատական հայեցակարգը ավելի ցայտուն է դրսևորվում, երբ քնարերգուն, կարծես, դուրս է գալիս իրեն կաշկանդող կաղապարումից՝ տարածված բանաստեղծական տեսակով գրելուց, լինի հոգևոր տաղ, թե՛ ոչ հոգևոր: Ժամանակաշրջանի, ժանրային առանձնահատկությունների, հեղինակային-անհատական ընկալումների և սուրբգրային-կանոնական շերտերի պատկերման կերպի տարբերությունները հաշվի առնելով՝ փորձելու ենք ներկայացնել հայ միջնադարյան քնարերգուների ընկալումները ստեղծագործելու շնորհի վերաբերյալ:

Հանելուկի ժանրի դեպքում նկատելի է հեղինակի խոսքի անկաշկանդ լինելը, երևույթների պատկերման ազատ դրսևորումները՝ ի տարբերություն օրինակ՝ ուշմիջնադարյան շատ տաղերի:

Դրախտից մարդու վտարվելու թեման Ներսես Շնորհալու հանելուկում ներկայացված է հեղինակային-անհատական մտորումների

հիման վրա. «Զուակ ծնալ յայն մեծ այգին, //Օտոն ետուր ծիծ 'ւ եսպան գորդին, // Նոքա սպիտակ զգեստ ունէին, //Հանին 'ւ ազան գայծու մորթին»¹: Հանելուկի պատասխանն է՝ Աղամ և Եվա: Հանելուկում շեշտված է նաև դրախտ-այգի բանահյուսական տարածված զուգահեռը: Մեկ այլ հանելուկում Շնորհալին մարդու մտքի արագահոսությունը ներկայացնում է համեմատությամբ, որի շնորհիվ հնարավոր է դառնում արագ կողմնորոշվել, թե ինչի մասին է խոսքը. «Արդ, է անթև և անփետուր// Քան զծիծառն երթայ նա սուր, // Յերկրէ յերկրի շրջի թափուր, // Դառնայ ու գայ, բերէ շատ հիւր, // Գետք ի գետոց հանէ նա ջուր, // Քակէ զամուր զտուն և զբլուր»²:

Տիրատուր Վարդապետը (14-րդ դար) հանելուկներից մեկում ներկայացնում է առհասարակ մարդկային բնույթի, էության մասին իր պատկերացումը՝ ըստ էության, առանձնացնելով մարդկային տարբեր տեսակներ. «Ոմանք ստեղծան մաքուր հոգի, // Կէսք գոյացան զուտ զգալի, // Ի մէջ սոցա մին կենդանի, // Որ գերկոցունց յինքեան ունի»³:

Տիրատուր Վարդապետի մեկ այլ հանելուկում շեշտվում է արվեստի ստեղծման վերաբերյալ ընկալումը՝ հարազատ ժամանակի աստվածաբանական-փիլիսոփայական մտքին. «Մարդիկ յինքն յոյժ համարձակին, // Գազանք լռեն և դադարին, // **Արուեստք ամէն նովալ լինին // Եւ հումանուն է ինք Փրկչին**»⁴ (ընդգծումը մերն է-Ա. Ս.): Հանելուկի պատասխանն է՝ հուր: Ըստ հեղինակի՝ արվեստը ներքին բունկման, ինքնայրման արդյունք է: Ուշագրավ է երևույթի ներկայացման գեղարվեստական պատկերավորությունը: Հանելուկի ժանրը այս դեպքում շատ ավելի ազատ դրսևորման հնարավորություն է թողել հեղինակի համար: Գեղարվեստական նուրբ խտացմամբ, հստակ բանաձևմամբ Տիրատուր Վարդապետը ներկայացրել է իր ընկալումը հուր երևույթի մասին: Պատկերացումները հարազատ են միջնադարյան ընդհանուր ընկալումներին, սակայն ընդգծված տողում հստակ է հեղինակի անհատական մոտեցումը՝ արվեստը, ստեղծագործական արարումը ծնվում է ներքին բունկման, ստեղծագործական հրի միջոցով: Հետաքրքիր է, որ հանելուկի ժանրը ենթադրում է հստակություն, տեղեկատվության փոխանցման ռացիոնալ-իրական բովանդակություն, իսկ այս դեպքում խոհափիլիսոփայական, ներքին համեմատության միջոցով

¹ Գանձարան հայ հին բանաստեղծության, Երևան, 2000, էջ 264:

² Նշվ. աշխ., էջ 265:

³ Նշվ. աշխ., էջ 481:

⁴ Նշվ. աշխ., էջ 481:

ակնկալվում է ստուգել ընթերցողին, սովորեցնել, զարգացնել գեղագիտական միտքը:

Վ. Սաֆարյանը գրում է. «Ժանրի ամբողջական պահանջով հանելուկն է, որ ստիպում է ընթերցողի կամ ունկնդրի գուշակությանը ներկայացվող անձը, առարկան, երևույթը բանաստեղծական պատկերավորման ուղղակի կամ այլաբանական ձևերի մեջ կերպավորվեն իրենց անհատական-բնութագրական կողմերով, հակառակ դեպքում անիմաստ է դառնում ժանրը»⁵:

Ինչպես նշեցինք, օրհներգերում, տաղերում ընդգծուն է ստեղծագործելու շնորհը իբրև Հայտնություն, աստվածային շնորհ ներկայացնելու գաղափարի անխախտ դրսևորումը: Մարդուն ստեղծագործելու, արարելու շնորհը, ըստ միջնադարյան ընկալման, տրվում է հենց Հրի՝ Քրիստոսի միջոցով: 12-13-րդ դարերում Վերածննդի հանրագիտակ հեղինակներն այս թեման քննել էին՝ հարցը հասցնելով ասածը փորձով ապացուցելու հստակ, գիտական մոտեցմանը: Իսկ սա արդեն Վերածննդի բնորոշ հիմնական սկզբունքներից է⁶:

Վ. Սաֆարյանը գրում է. «Հանրագիտակությունը վերածննդյան բանական մարդու ինքնաարտահայտման կարևոր ձևերից մեկն է: Միաժամանակ մարդը հանդես է գալիս իր մարմնա-հոգեկան մանրամասների կոնկրետությամբ: Սա այն մարդն է, որն ընդհանրապես արվեստի նյութն է, և այսպես է, որ ազատագրվող մարդը պետք է վերածնվի ազատվող արվեստի մեջ»⁷:

Հայտնի փաստ է, որ քրիստոնեական խորհրդանշանային համակարգում հուրը խորհրդանշում է Քրիստոսին: Սակայն ուշագրավ է, որ մարդու տառապանքով ծնված արվեստը, նրա «հոգին այրած» արարումը ևս համեմատվում, նույնացվում է հրի հետ: Ներքին համեմատության միջոցով միջնադարյան գրողները ներկայացնում են իրենց անհատական ընկալումները՝ համադրելով ժամանակի քրիստոնեական-սուրբգրային նշանակությունների հետ:

Հայտնի է նաև, որ ըստ միջնադարյան գրողների՝ տաղանդը համարվում է աստվածային շնորհ՝ Հայտնություն՝ տրված տառապանքի, ներքին պայքարի արդյունքում գիտության ու արվեստի ճշմարտությունը «բացահայտած» մահկանացուին:

⁵ Վ. Սաֆարյան, Հայ միջնադարյան գրականություն, Երևան, 2016, էջ 222:

⁶ Տե՛ս Վ. Սաֆարյան, Միջնադարի հայ գրականության պարբերացման հիմունքները, Երևան, 2012, էջ 164-166:

⁷ Վ. Սաֆարյան, Կիլիկյան Հայաստանի գրականությունը, Երևան, 1990, էջ 34:

Հուր-Քրիստոս խորհրդանշանի երկբևեռ ընկալումը (Հուր-Քրիստոս, Քրիստոսի՝ մարդուն տրված ստեղծագործ շնորհն իբրև հուր) համանշանակումով ներկայացնելը ևս յուրօրինակ անհատական դրսևորում է հայ միջնադարյան գրականության մեջ:

Ներկայացնենք տվյալ երևույթի վերաբերյալ ընկալումները օրհներգերում, վաղ և ուշմիջնադարյան տաղերում:

Արեգակի, լուսի վերաբերյալ միջնադարյան գիտական բացատրությունը հետևյալն է. Արեգակն «ցուրտ է բնութեամբ, զջերմութիւն եւ զլուսաւորութիւն յԱրփոյ առեալ, հեղու յօղս, որով լուսաւորի եւ ջեռնու երկիր... որպէս առաջնոցն հաճոյ թուեցաւ ասել»⁸: Անանիա Շիրակացին շեշտում է նախորդ դարերից հայտնի փիլիսոփայական մտքից բխող եզրահանգումները⁹: Միջնադարյան քնարերգության մեջ գիտական այս ընկալումների գեղարվեստական արծարծումները համադրվում են նաև աստվածաբանական ընկալումներով:

Սահակղուխտ Սյունեցին (8-րդ դար)՝ Ստեփանոս Սյունեցու քույրը, առանձնացնում է աստվածության Հուր գաղափարը: Ինչպես ստորև կտեսնենք, տաղերգուների գործերում Հուրը խորհրդանշում է Քրիստոսին, սակայն Սահակղուխտ Սյունեցու «Սրբուհի Մարիամ...» տողով սկսվող կցուրդում¹⁰, դիմելով Աստվածամորը, հեղինակը մասնավորեցնում է աստվածային Հրի գաղափարը, շեշտում Քրիստոսի աստվածային էությունը. «Իհլթական, եղական անեղ Բանին բնակարան, //Որ զՀուրն աստուածութեան // Յորովայնի քում ընկալար և ոչ բոցակիզար...»¹¹:

Ստեփանոս Սյունեցին «Ստեփանոսի Սինեաց եպիսկոպոսի տաղ սուրբ խաչին» տաղում Հուր-Լույս-Գիտություն խորհրդանշանային ընկալումը ներկայացրել է գեղարվեստական պատկերավորմամբ. «Արհընեա՛լ է փայտն՝ ընծայող լուսոյն, // Յորմէ ծագեաց մեզ լոյս, զմեզ

⁸ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն եւ տումար, աշխատասիրությամբ՝ Ա. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 47-48:

⁹ Տե՛ս Ջուլիետա Էյնսթայն, Տիեզերագիտության և տումարի մեկնություններ. (Է.-ԺԵ. դարեր), Երևան, 2015, էջ 9:

¹⁰ Սահակղուխտ Սյունեցու «Սրբուհի Մարիամ...» տողով սկսվող ստեղծագործության ժանրային առանձնահատկությունները նկատի ունենալով՝ Ասատուր Մնացականյանը այն համարում է տաղ և ոչ կցուրդ, ինչպես ներկայացվել է: Առավել մանրամասն տե՛ս Աս. Մնացականյան, Ստեփանոս Սյունեցու նորահայտ տաղերը, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1973, № 11, էջ 278-279:

¹¹ Գանձարան, էջ 72:

լուսաւորեաց: // Ներգործեցեր յաշխարհի զգիտութիւն լուսոյ, // Որ եղեր, ը՛, մեզ ճանապարհ կենաց»¹²:

Ներսես Շնորհալին դիմում է Հուր-Քրիստոսին՝ իբրև «Լոյս է լուսոյ», «Անճառելի լոյս»¹³: Այսինքն՝ միջնադարյան օրհներգուի պատկերացմամբ՝ ստեղծագործելու, իմացության շնորհը տրվում է Քրիստոսի միջոցով: Այս խորհրդանշական ընկալումը շատ ավելի ընդգծուն է Ներսես Շնորհալու հայտնի շարականում. «Առաւօտ լուսոյ՝ //Արեգակն արդար, //Առ իս լոյս ծագեա: Բղխումն ի չօրէ, // Բղխեա ի հոգւոյս // Բան քեզ ի հաճոյս»¹⁴:

Շարականագիրների կամ օրհներգուների գործերում արմատացած «իմանալի Լոյսի» պաշտամունքը, Մանուկ Աբեղյանի բնորոշմամբ, քրիստոնեական դավանաբանության մի մասն է՝ «արևագալի» երգերի մեջ հանդիպող. «Երգիչը հոգւով վերանալով լուսոյ միստիկական աշխարհը և դիմելով լուսոյ Արարչին՝ խնդրում է, որ իր հոգու մեջ ծագէ իմանալի լոյսը. Լոյս, արարի չ լուսոյ, առաջին լոյս... Ի ծագել լուսոյ առաւօտուս՝ Ծագեա ի հոգիս մեր զլոյս քո իմանալի»¹⁵:

Ե՛վ օրհներգերում, և՛ հոգևոր տաղերում, ինչպես և ուշմիջնադարյան քնարերգության մեջ հստակ է սուրբգրային կանոնի և խորհրդանշանի կիրառությունը: Կիրակոս Թարգմանչի (Արևելցի, 12-րդ դար) օրհներգը ասվածի ընդհանրական օրհնակներից մեկն է. «Էիցս Էակ Բանն // Չօր պարագրեցաւ ի մարմնի, // Լոյսն ծնունդ ծոցածին // Էառ զբնութիւն նախաստեղծին...»¹⁶:

Օրհներգերում և տաղերում Աստվածամորը գովերգում են «Տաճար լուսոյ» հայտնի խորհրդանշանով կամ, ինչպես Հովհաննես Մայրագոմեցին է մեկնում Աստվածամորը տրված «Խնկանոց» բնութագրումը՝ իբրև բուրվառ-Աստվածածնի որովայն՝ լույսն ու կրակը իր մեջ կրող¹⁷:

Ինչպես օրհներգերում, աղոթքներում ևս աստվածային լույսի կրող Քրիստոսին փառաբանելուն զուգահեռ, հեղինակները խնդրում են նաև իմաստություն՝ իմացության լույս. «Իմաստութիւն չօր Յիսուս, տուր ինձ

¹² Աս. Մնացականյան, Ստեփանոս Սյունեցու նորահայտ տաղերը, էջ 289:

¹³ Տե՛ս «Նորաստեղծեալ» շարական:

¹⁴ Հայ հին և միջնադարյան քնարերգություն, կազմ.՝ Ս. Հակոբյան, Է. Չալիկյան, Երևան, 1987, էջ 148:

¹⁵ Ս. Աբեղյան, Ուրուագծեր հայոց գրականութեան պատմութիւնից, ԽԶ տարի, Երևան, 1912, № Թ, էջ 1160:

¹⁶ Գանձարան, էջ 236:

¹⁷ Հ. Քյոսեյան, Հայ միջնադարյան արվեստի կրոնամիլիտոփայական տեսությունը (V-XII դդ.), Երևան, 2009, էջ 120: Մայրագոմեցու «Վերլուծութիւնք կաթողիկէ եկեղեցոյ» երկից հաստատվածներ, տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, 1967, № 1-2:

իմաստություն՝ զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քոյ յամենայն ժամ... Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեալ յանձն իմ, զի այրեացէ զաղտ հոգոյ իմոյ և սրբեացէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեացէ զմեղս մարմնոյ իմոյ և վառեացէ զլոյս զիտութեան քո ի սրտի իմում»¹⁸:

Խոսելով աղոթքի կառուցվածքի մասին՝ Վ. Սաֆարյանը առանձնացնում է աղոթքի կանոնիկ բաղադրամասերը՝ աղերս առ Աստված, ինքնաձաղկում, մեղքերի թողության և փրկության հույս, որտեղ երևոյթ-բառերի կրկնությունը միտումնավոր բնույթ է կրում¹⁹: Տվյալ դեպքում շեշտվում-կրկնվում է իմաստությունն ստանալու խնդրանքը՝ իբրև փրկության հույս:

Ֆրանց Քլայնը, ուսումնասիրելով Փիլոն Ալեքսանդրացու հայացքներն ու դրոյթները լույսի ուղիղ և փոխաբերական իմաստների՝ ժամանակի ընկալման ու մեկնաբանման մասին, գրում է, որ Աստծո Լույսը նախատիպային Լույսն է՝ համահավասար Գիտություն իմաստին, այսինքն՝ Աստծո Լույս ասելով՝ պետք է հասկանալ Իմացության, Գիտության Լույս: Աստված, որին հաճախ անվանում են որպես հոգևոր Արև, պատկերն է իրական արևի: Այդ արևը «Նշանակումն և պատկերն» է մեր արևի: Աստված ընկալվում է որպես «կանոնի արքետիպային համակարգ և հոգևոր Արև», որը մյուս կողմից, որպես հոգևոր Արևի համակարգ-ամբողջություն, տեսանելի է ու հայտնի²⁰:

Ներսես Շնորհալու տաղերից մեկում արևի ուղիղ և փոխաբերական իմաստներն են զուգահեռվում. «Օագեալ ի Հարե լոյս ի լուսոյ ծընունդ:// Օընունդ էական Աստուած ընդ Հար լոյս քան զարե յառաջ...»²¹ կամ Այսաւր յարութեան մեզ ծագեցաւ, ը , լոյս, // Լոյսն որ ի Հարե // Յառաջ քան զարե անունն իւր»²²:

Այս առումով ուշագրավ է նաև երաժշտագետ Ն. Թահմիզյանի մի դիտարկումը Ներսես Շնորհալու՝ լույսի խորհուրդը ընկալելու վերաբերյալ. «...Քննարկվող երգերում («Երգ» խորագիրը կրող տաղերում-Ա.Ս.)» Շնորհալին փաստորեն այն միտքն է արտահայտում, թե հեթանոսական աշխարհընկալմանը հատուկ՝ առարկայական լույսի մեծարումը նախնական քայլ է՝ հանգելու իմանալի կամ հոգևոր լույսի գաղափարին»²³:

¹⁸ Ն. Շնորհալի, Հաւատով խոստովանիմ, Վենետիկ, 1923, էջ 24, 22:

¹⁹ Տե՛ս Վ. Սաֆարյան, Կիլիկյան Հայաստանի գրականությունը, էջ 108:

²⁰ Տե՛ս Franz Klein, Die Lichtterminologie bei Philon von Alexandrien und in den hermetischen Schriften, Leiden, 1962, S. 70.

²¹ Ներսես Շնորհալի, Տաղեր և գանձեր, Երևան, 1987, էջ 66:

²² Շնորհալի, նշվ. աշխ., էջ 121:

²³ Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 75:

Կարծում ենք, որ հոգևոր Լույսի միջնադարյան նոր ընկալումը կապվում է նաև Վերածննդի շրջանի՝ գիտելիքի, շնորհի ընկալման, գիտության լույսի հասկացության հետ: Անցյալի լուսապաշտությունը չէր կարող բերել գիտության լույսի շնորհալիական նման ընկալմանը, այն շատ ավելի խորն է ու հենց Հուր-Լույս-Իմաստության Արեգակ-Քրիստոս խորհուրդն ունի: Աղոթքներից մեկում Ներսես Շնորհալին գրում է. «Նոր և առաջին լոյս ծագեալ հայրն լուսոյ, Երկրորդ գնոյն վառեալ լոյս շատավիղն լուսոյ»²⁴, այլ կերպ ասած, Լույսից բխեց Լույս: Կարծես, կարողում ենք հայտնի շարականի («Առաւօտ լուսոյ») առաջին տողերի արձակ մեկնությունը: Ներսես Շնորհալին Հայր Լույսից բխած Իմաստության Լույսից ինդրում է իմացության լույսը:

Իմացության լույսի, առհասարակ Վերածննդի շրջանում հայ սաղերգուների՝ լույսի ու գիտելիքի, իմացության լույսի ու շնորհի ընկալումներն արտահայտող խորհրդանշանները, անգամ ուշմիջնադարյան տաղերգուների՝ վերոնշյալ երևույթների վերաբերյալ ընկալումները, կարծես, ամփոփված են Գրիգոր Տղայի «Զի՞նչ լոյս և լոյս» բանաստեղծության մեջ: Առաջին չորս տողերում ներկայացվում է խորհրդանշանը, ապա՝ յուրաքանչյուր տողի դիմաց գրված տողում տրվում է մեկնաբանությունը: Խորհրդանշանների մեկնությունները պարզորեն վկայում են գիտելիքի ու լույսի՝ քնարերգուների ընկալման մասին.

Զի՞նչ՝ լոյս և լոյս,	Իմաստութիւն և գործ,
Զի՞նչ՝ լոյս և անլոյս.	Տեսութիւն առանց կրթութեան:
Զի՞նչ դարձեալ՝ խավար և խաւար,	Մարմին և թմբրութիւն
Զի՞նչ՝ խաւար և անխաւար:	Եւ եղելոց իրացս գիտութիւն և առանց բայի... ²⁵

Վերածննդի շրջանի համաշխարհային գրականության ուշագրավ արտահայտություններից մեկն է՝ «Խմել» իմաստություն: Այդ շրջանի նշանավոր ներկայացուցիչներից Ֆ. Ռաբլեի «Գարգանտյուա և պանտագրյուել» վեպում կարողում ենք այս խորհրդանշական բառը՝ «Խմիր», այսինքն՝ խմիր իմաստության շշից: Սա գիտելիքին իմացության լույսին տրվող Վերածննդի նոր մտածողության կարևոր բնորոշիչներից է: Փոխերից մեկում Ներսես Շնորհալին գրում է. «Նորոյ գինւոյն իմաստութեան // Յոգիս նորոգ արկող Յիսուս: Բենական լոյս յարփւոյն ծագեալ// Ի րաբունից

²⁴ Ներսես Շնորհալի, Հուստով խոստովանիմ, էջ 463:

²⁵ Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1972, էջ 420:

փայլեալ յաշխարհս: Երգէ Դաւիթ՝ գետք Աստուծոյ // Ջրովք պարարին բրդիւմամբ Հոգոյն...»²⁶: Հայ քնարերգոյթյան մեջ Ֆրիկը ևս այս նոր մտածողոյթյան կրողն է. «Դու Աստուած ես զթած ու խիստ բարեկամ, //Յայն ջրէն ինձ արբո, որ ես լիանամ...»²⁷:

Կ. Երզնկացին գոհոյթոյն է հայտնում Բարձրյալին՝ «իմաստոյթյան զինին» իմելու՝ մտքի պայծառոյթյան հասնելու, գրողական կարողոյթոյն ձեռք բերելու համար. «Այսօր հոգովս ուրախ եմ և ի մեծ մուրատ հասայ, //Որ ես առանց շրթոնք կու իմեմ յայն զինուն շիշայ...»²⁸:

Լույսի ընկալման և մեկնաբանման առումով խորհրդանշանը նույնն է ամբողջ Միջնադարի համար: Աստվածային լույսը Իմացոյթոյնն է, Գիտելիքը:

Վ. Սովոյովը գտնում է, լույսը մտքի նախասկզբնական իրողոյթոյնն է, այդ առումով նա բնոյթյան մեջ գեղեցկի նախասկիզբն է²⁹:

Հայտնի է, որ «Ի լոյս անմատոյց» արտահայտոյթոյնը ապոֆատիզմի³⁰ երևոյթ է, մինչդէռ «Իմանալի լոյս», «Իմանալի Արեգակ», «Իմանալի Ճառագայթ» արտահայտոյթոյնները կատաֆատիզմի երևոյթին են բնորոշ, այսինքն՝ մարդու համար մեկնաբանելի են երևոյթի խորքայնոյթյամբ և նույնականոյթյամբ, ինչպէս որ այն կա, ոչ թէ՝ ինչպէս մարդն է ունակ հասկանալու կամ մեկնաբանելու: Այսինքն՝ այս արտահայտոյթոյնները արդէն ճանաչելի և ընդունված կանոն էին նաև միջնադարյան տաղերգոյնների համար:

Կոստանդին Երզնկացու «Ոմանք չարախօսեն զինէն վասն նախանձու...» տաղում ներկայացվում է Տիրոջից շնորհի արժանանալու պատմոյթոյնը. «Ես եմ աման հողէ՝ ի յիս լըցած կայ խազինայ, //Չոր ես խօսիմ հոգով, այն մեծ Տիրոջն է մանանայ...Միրով ու մեծ յուտով ես այս բանիս ի փորձ մըտայ, (ընդգծումը մերն է- Ա.Ս.) // Ձեզիս փոխան տըրի, ի ապա ես այն հոգոյն հասայ...»³¹:

²⁶ Շնորհալի, Տաղեր և գանձեր, էջ 213:

²⁷ Գանձարան, էջ 390:

²⁸ Գանձարան, էջ 468:

²⁹ Տե՛ս Է. Степаненко, Свет как эстетический феномен, "Философские науки", № 6, Москва, 1982, с. 93:

³⁰ Ապոֆատիզմ՝ ըստ այս գիտակցոյթյան՝ Աստվածոյթոյնը մարդուն ոչ թէ իր լիակատար նույնոյթյամբ է հասանելի կամ ընկալելի դառնում, այլ հենց մարդը իր ընկալունակոյթյան համապատասխան է մեկնաբանում այն: Տե՛ս Զ. Քյոսեյան, Հայ միջնադարյան արվեստի կրոնափիլիսոփայական տեսոյթոյնը (V-XII դդ.), Երևան, 2009, էջ 125 :

³¹ Հայ հին և միջնադարյան քնարերգոյթոյն, էջ 229, 231:

Չ. Ավետիսյանը հայտնությունը բնորոշում է իբրև ենթագիտակցական երևույթ՝ քննելով հատկապես Կոստանդին Երզնկացու ընկալումները այս հարցի վերաբերյալ. «Ենթագիտակցական այս հայտնությունը խորապես հետաքրքրել է արվեստագետներին, գիտնականներին...13-րդ դարի հայ բանաստեղծը՝ Կոստանդին Երզնկացին, երևույթը համարել է «շնորհքն ի հոգւոյն»³²:

Ուշագրավ է տաղերգուի անհատական-անմիջական պատմելաոճը: Զրույց է բացում տասնհինգ տարեկանում իրեն զարմացրած մի երևույթ-հայտնության մասին, որն անվանում է տեսիլ:

Կոստանդին Երզնկացու տաղից պարզ է դառնում, որ գրողը ստեղծագործելու տաղանդը համարում է տեսիլային պարզ, աստվածային շնորհ: Շնորհը հոգու միջոցով ձեռք բերելը, տեսիլային պատկերումը հայ միջնադարյան քնարերգության մեջ ոչ հաճախ հանդիպող երևույթ է: Ուշադրություն դարձնենք, որ քնարերգուն շնորհի ձեռքբերումը համարում է «հոգին վաճառելու» արդյունք: Այսինքն՝ հավատարմորեն պահպանում է Աստծո պատգամները և ձեռք է բերում աստվածային շնորհ՝ արարման, ստեղծագործելու տաղանդ:

Տեսիլի նկարագրությունը ենթադրում է հեղինակի հավաստիության և ապացուցողականության հաստատման փորձի մասին: Հեղինակը, կարծես, պատմում է՝ ապացուցելու անհավատ եղբայրներին «Եղբարց միաբանութեան»³³, որ իր գրողական տաղանդը հենց այնպես չի տրվել, այլ աստվածատուր շնորհ է, որի ընծայումը տեղի է ունեցել խորհրդավոր պայմաններում՝ տեսիլով:

Ո՞րն է միջնադարյան ընկալումը տեսիլի վերաբերյալ: Արդյո՞ք Երզնկացին չի փորձում երևույթը ներկայացնել առեղծվածային, որպեսզի ընդգծի, շեշտի երևույթի գերբնականությունը՝ իր «անմեղությունը» գրելու շնորհ ունենալու հարցում: Տեսիլի ժանրատիպը³⁴ հայ գրականության մեջ հայտնի է հինգերորդ դարի պատմագրությունից³⁵: Քնարերգության մեջ

³² Չ. Ավետիսյան, Գրական ստեղծագործության հոգեբանություն, Երևան, 2011, էջ 16:

³³ Առավել մանրամասն տե՛ս Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280թ.), «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1962, № 6, էջ 365-377:

³⁴ Բնորոշումը՝ Ջավեն Ավետիսյանի, տե՛ս Չ. Ավետիսյան, Ե դարի հայ պատմագրության տիպաբանությունը, Երևան, 2013, էջ 48:

³⁵ Հայտնի են Սուրբ Գրիգորի տեսիլը (Ագաթանգեղոս), Սահակի տեսիլը (Փավստոս Բուզանդ), Խոսրովիդոլիտի և Բարսիլիոս կաթողիկոսի, Ներսես Մեծի տեսիլները: Տե՛ս Ա. Մադոյան, Ներսես Մեծի տեսիլը միջնադարյան հայ պոեզիայում, «Պատմա-

Կոստանդին Երզնկացու տաղը առաջիններից է, որում տեսիլը անմիջաբար հեղինակի արթնության պահին տեսածի դրսևորումն է՝ ի տարբերություն, օրինակ՝ Առաքել Բաղիշեցու, ով պատմագրական հայտնի տեքստից մշակել է Ներսես Մեծի տեսիլը կամ Ներսես Շնորհալու «Վիպասանություն»-ում հանդիպող տեսիլը, որտեղ նույնպես ներկայացվում է Ներսես Մեծի տեսիլը³⁶։ Կոստանդին Երզնկացին ապրում ու նկարագրում է տեսիլը, Առաքել Բաղիշեցին, Ներսես Շնորհալին ներկայացնում են տեսիլի բովանդակությունը։

Ուշադրություն դարձնենք Կոստանդին Երզնկացու՝ տեսիլի պատկերմանը. տեսնում է արեգակնազգեստ մի մարդու՝ լույսով լի³⁷, այլ կերպ ասած՝ Հուր։ Էական են հատկապես հետևյալ տողերը. «Մանուկ ի լուսեղէն յաթոռ նըստել որպէս արքայ, // Նըման արեգական է գեղեցիկ, որ լոյս կու տայ...»³⁸։

Մանուկ Աբեղյանը, Կոստանդին Երզնկացու այս տաղի վիպական՝ պատմողական բնույթը, ձևավորվող նոր մտածողությունը, երևույթի ընկալման ու արտահայտման նոր մոտեցումը նկատի ունենալով, այն համարում է ն՝ տեսիլ, ն՝ վիպական երկ, ն՝ անձնական բանաստեղծություն³⁹։

Այս դեպքում, անշուշտ, աստվածաբանական-կանոնական ընկալման և անհատական ընկալման փոխհարաբերակցությունը սերտ է՝ անհատականի զգալի գերակշռությամբ։

Տաղերգուն երևույթը անվանում է տեսիլ, քանի որ արթուն է եղել, իսկ արթնության խորհուրդը տվյալ դեպքում կարելի է հասկանալ նաև հետևյալ կերպ. լինել պատրաստ՝ երկնային շնորհը ընդունելու։ Ուշագրավ է Ս. Ստեփանյանի՝ միջնադարյան հեղինակ Ֆրիդրիխ Հյոդեռլինի վերաբերյալ հետևյալ դիտարկումը, որը փաստում է ուշմիջնադարյան մտածողությունը տվյալ երևույթները մեկնաբանելու տեսակետից. «...Արթնությունը

բանասիրական հանդես», Երևան, 1969, № 4, 237-247 կամ՝ [http://hpi.asj-oa.am/1414/1/1969-4\(237\).pdf](http://hpi.asj-oa.am/1414/1/1969-4(237).pdf)

³⁶ Միջնադարյան պատմագրության և քնարերգության մեջ տեսիլի երևույթի քննությունը տե՛ս Վ. Դևրիկյան, Հայոց միջնադարի ազատագրական լեզենդը. մաս երկրորդ։ Ներսես Մեծի մարգարեական կանխասացությունը և այլ տեսիլներ, «ՎԷՄ», Երևան, 2011, Գ(Թ) տարի, թիվ 1 (33), հունվար-մարտ, էջ 55-77։

³⁷ Հայ հին և միջնադարյան քնարերգություն, էջ 229։

³⁸ Նույն տեղում, էջ 229։

³⁹ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Գիրք երկրորդ, Պէրյուֆ, 1959, էջ 329, կամ

<https://archive.org/details/AbeghyanHhgpat02/page/n347/mode/2up/search/329>

գիտակցվում է որպես բանաստեղծական բարձրագույն առաքինություն և «սուղ ժամանակ» աստվածայինի հայտնության գրավական... Ինչպե՞ս է հնարավոր նոր բանաստեղծությունը ազատության անսահմանափակ շնորհի պայմաններում»⁴⁰:

Կոստանդին Երզնկացին ժամանակի ընկալումների համար խորթ, բայց ձևավորվող նոր բանաստեղծության կրողն էր: Եվ պետք էր «Եղբարց միաբանութեան» անդամներին հիմնավոր ապացույց ներկայացնել: Այս «բացատրությունը» արտաքին շղարշ էր թաքցնելու ներսում կուտակված անվերահսկելիին՝ նոր միտքը, նորի ընկալումը:

Ըստ Գերմանացի հետազոտող Պետեր Դինցելբախերի՝ տեսիլի գրականությունը միջնադարում հատկապես տարածված էր 12-րդ դարում, և հստակ էր այն հանգամանքը, որ տեսիլը պատկերվում, ներկայացվում է կամ քաղաքական կամ որոշ հստակ գաղափար ապացուցելու, առաջ մղելու համար⁴¹:

Գրիգոր Տաթևացին առանձնացնում է իմացության՝ ճանաչման հասնելու երկու կերպ՝ տրվող՝ «շնորհական» և «բնական», ընդ որում, «շնորհական իմաստությունը» պիտի լուսավորվի «բնական ճանաչման» լույսով⁴²: Ժամանակի փիլիսոփայությունը բնական իմացությունը և ճանաչումը համեմատում է «մշտաշարժ վերընթաց» կրակի հետ⁴³: Հենց այսպիսի «գործընթաց» ենք տեսնում նաև քնարերգության մեջ:

Հովհաննես Պլուզ Երզնկացին այդ «մշտաշարժ վերընթաց» կրակն է խնդրում Աստծուց՝ խրատի միջոցով մարդուն փոխանցելու Լույսի խորհուրդը. «Աղաչեմ գԱրարիչն, որ զիս ստեղծել, //Ու զհոգիս ու զմարմինս մտօք յորինել, //Որ տայ **բան** ինձ խօսել ու զձեզ խրատել, (ընդգծումը մերն է-Ա.Ս.) // ՁԱստուծոյ անձառեմ բանիւ ձեզ պատմել»⁴⁴:

Վերոնշյալ երևույթի վերաբերյալ ուշմիջնադարյան ընկալումները ևս հարազատ են վաղմիջնադարյան պատկերացումներին: Կարապետ Բաղիշեցու գանձերից մեկում («Գանձ Գրիգորի Աստուածաբանին ի գծողէ այսմ գանձարանիս, յանմիտ Կարապետէ Բաղիշեցոյ») նույն գաղափարների ու ընկալումների դրսևորումներն ենք տեսնում՝ անփոփոխ

⁴⁰ Ս. Ստեփանյան, Ֆրիդրիխ Հյոլդեռլին, Երևան, 2013, էջ 124, 91:

⁴¹ St u Peter Dinzelbacher, Vision und Visionsliteratur im Mittelalter. Monographien zur Geschichte des Mittelalters, Bd. 23, Stuttgart, 1981 կամ <https://www.degruyter.com/view/journals/dante/64/1/article-p173.xml>

⁴² Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան. Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 187:

⁴³ Գրիգոր Տաթևացի, նշվ. աշխ, էջ 187:

⁴⁴ Գանձարան, էջ 359:

նույնիսկ արտահայտման կերպի տեսանկյունից. «Ետուր շնորհ դու արբիրարար, // Որ քարոզեր զքեզ, Տեր բարերար...»⁴⁵:

Մաղաքիա Դերջանցու տաղում ևս անխախտ դրսևորվել են տվյալ երևույթի վաղմիջնադարյան ընկալման բովանդակային և արտահայտման կերպերը. «Այլ հաւատամ ես սերտ յուսով, // Ով որ դիմէ յաստուած սիրով // Եւ աշխատի ուղիղ ջանով, // Լցեալ լինի ինքն շնորհով: // Վառեալ լինի ինքն սիրով // Եւ անդադար սաղմոսելով...»⁴⁶:

Այսպիսով՝ միջնադարյան օրհներգերում, տաղերում նաև հանելուկներում արվեստի, ստեղծագործության ծնունդը կապվում է Հայտնության խորհրդի հետ, ընկալվում իբրև աստվածային շնորհ: Վերածննդի մարդակենտրոն ուղղվածության համաձայն՝ իմաստության, գիտելիքի լույսին ձգտելու մարդկային ջանքը հատուցվում է ստեղծագործելու կարողությամբ: Այս ընկալման լիարժեք արտահայտման համար ժանրային փոփոխությունները էական ազդեցություն ունեն, քանի որ ժանրի հետ փոխվում է նաև հեղինակային-անհատական մոտեցումը տվյալ գաղափարը կամ ընկալումը ներկայացնելիս: Հեղինակի՝ հոգևոր տաղերի կանոնական կաշկանդվածությունը հաղթահարված է հանելուկի ժանրով ասելիքը ներկայացնելիս: Նույն երևույթի՝ շնորհի, արվեստի մասին պատկերացումներն արտահայտելիս օրհներգերում, տաղերում հստակ են կանոնական մոտեցումները, մինչդեռ հեղինակներն ավելի ազատ են հանելուկի բովանդակային տիրույթում: Հանելուկի ժանրում անհատական-ազատ դրսևորումը կարելի պայմանավորել, ինչպես նշեցինք, նախնական ընկալումների հետ, տվյալ դեպքում այն «նախնական ներքին պայմանավորվածության», որ հանելուկը պարունակում է խրատական բնույթ:

Աննա Ստեփանյան

Ստեղծագործելու շնորհի անհատական եվ կանոնական ընկալումների դրսևորումը հայ միջնադարյան քնարերգության մեջ

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում են հայ միջնադարյան քնարերգուների ընկալումները ստեղծագործելու շնորհի վերաբերյալ: Հայ միջնադարյան օրհներգերում, տաղերում նաև հանելուկներում արվեստի, ստեղծագործության ծնունդը կապվում է Հայտնության խորհրդի հետ, ընկալվում իբրև աստվածային պարզ՝ դրսևորվելով լույս-հուր-արեգակ խորհրդա-

⁴⁵ Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, Երևան, 1986, Հ.1, էջ 26:

⁴⁶ Նույն տեղում, էջ 54:

նշաններով: Շնորհի, արվեստի մասին պատկերացումներն արտահայտելիս օրհներգերում, տաղերում հստակ են սուրբգրային-կանոնական մոտեցումները, մինչդեռ հեղինակներն ավելի ազատ են հանելուկի բովանդակային տիրույթում: Հանելուկը պարունակում է խրատական բնույթ: Խրատի դեպքում ընգծվում է հեղինակի անհատական մոտեցումը:

Анна Степанян

Проявление индивидуального и канонического восприятия таланта творчества в средневековой армянской лирике

Резюме

В статье представлены восприятие средневековых армянских лириков о даре творчества. В средневековых армянских гимнах, стихах также в загадках, рождение искусства и творчества связывается с таинством откровения, воспринимается как божественный милость, дар проявляясь символами свет-огонь -солнце. При выражении представлений о благодати, об искусстве в гимнах и стихах ясны священные и канонические подходы, между тем авторы более свободны в содержательном пространстве загадок. Загадка содержит поучительный характер. В случае наставления гораздо более акцентирован индивидуальный подход автора.

Anna Stepanyan

The manifestation of individual and canonical perceptions of the creative gift in Armenian medieval lyrics

Summary

The article presents the perceptions of Armenian medieval lyricists on the creative gift. In the Armenian medieval hymns, chants and riddles, the birth of art and composition is connected with the Council of Revelation, perceived as a divine grace, a gift, manifested by the symbols of light-fire-sun. When expressing ideas about grace and art in hymns and chants, the biblical-canonical approaches are clear, whereas the authors are more free in the sphere of the content of the riddle. The riddle is of instructive character. In the case of homily, the individual approach of the author is much more emphasized.

Խմբագրություն է ուղարկվել 10.07.2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 25.07.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

ՈՂԲԵՐԳԱԿԱՆՆ ՈՒ ՀԵՐՈՍԱԿԱՆԸ ՍՏ. ԱԼԱԶԱԶՅԱՆԻ
ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ
(«ԵՂԵԳՆԵՐԸ ՉԽՈՆԱՐՀՎԵՑԻՆ»)

Բանալի բառեր և արտահայտություններ. Զեյթուն, եղեռն, ինքնապաշտպանություն, Փառեն, Արամ, Կարո, Էկեղեցի, ժողովուրդ, պետություն:

Keywords and expressions: Zeytun, genocide, self-defense, Paren, Aram-Karo, church, religion, state.

Հողվածում քննության են առնվում Ստ. Ալազաջյանի պատմագեղարվեստական արձակի լավագույն ստեղծագործություններից մեկում՝ «Եղեգները չխոնարհվեցին» վեպում առաջ քաշված հարցադրումների արդիականությունը Արցախյան գոյամարտի համապատկերում:

Անհատի պաշտամունքի հաղթահարումից հետո գաղափարախոսական պարտադրանքից ու թեմատիկ սահմանափակություններից աստիճանաբար ազատագրվող գրականության առաջատար թեմաներից մեկը դարձավ անցյալի հերոսական ու ողբերգական իրադարձությունների արտացոլումը. «Խորհրդահայ արձակագիրները գեղագիտական ուրույն սկզբունքներով, ստեղծագործական-աշխարհայացքային մոտեցմամբ գնացին դեպի անցյալի թեմատիկան, դեպի պատմությունը սկսվեց չափազանց արտասովոր շարժում: Անցյալի գեղարվեստական յուրացումը նույնիսկ ինչ-որ տեղ դարձավ գայթակղության քար՝ իր ամեն փորձություններով: Անգամ փոխվեց հախուռն գրոհի՝ գրական շարժման ժամանակակից փուլում թեմատիկ ընդգրկումների հաշվեկշիռը՝ թեթևով դեպի անցյալի թեմատիկան»¹:

Ընդամենը 2-3 տարվա ընթացքում լույս տեսան պատմական թեմայով գրված մի քանի տասնյակ վեպեր՝ նվիրված հայոց պատմության տարբեր իրադարձություններին՝ մեր գորավարների տարած փառահեղ հաղթանակներին, գոյապահպանության համար պայքարում հոգևոր մաքառումների կարևորությանը, Եղեռնի ահասարսուռ դեպքերին, Եղեռնի ժամանակ

¹ Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, Գ. 3, Եր., «Սովետական գրող» հրտ., 1886, էջ 6:

տարբեր վայրերում կազմակերպված ինքնապաշտպանական կոիվներին, նաև թույլ տված սխալներին ու վրիպումներին:

Մի քանի տասնյակ վեպերի շարքում իր հարցադրումների սրությամբ և մինչև այժմ էլ արդիականությամբ աչքի է ընկնում Ստ. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» երկհատոր վեպը (1866-1967)՝ նվիրված 1918-1921 թվականների զեյթունյան ազատամարտին: 1915 թվականի իրենց ծրագրերը դեռևս ավարտին չհասցրած համարելով՝ երիտթուրքերը սկսեցին հաշվեհարդար տեսնել Եղեռնից հրաշքով փրկված հայության բեկորների հետ, որոնք ապաստան էին գտել Մարաշում, Հաճնում, Ջեյթունում, Կիլիկիայի մի շարք բնակավայրերում:

Վիպական գործողությունների՝ տարբեր ուղություններով ծավալվող շարժընթացում Փառենի, Կարոյի, Արամի առանցքային կերպարներն են՝ «Երեք քաջ, երեք համոզմունք, երեք ուղի»: Նրանցից Փառենը և Կարոն հանդես են գալիս ժողովրդին զինելու, ամեն գնով գենք գնելու, կազմակերպած ինքնապաշտպանության անցնելու կոչերով՝ վկայակոչելով Վասպուրականի, Ուրֆայի, Շապին-Գարահիսարի, Ֆինդիճաքի, Մուսա լեռան, Երզնկայի հերոսամարտերը, ինչպես նաև բազմաթիվ այլ բնակավայրերի՝ թշնամու խոստումներին հավատալու և բնաջնջվելու դառը փորձը:

Փառենից ու Կարոյից տարբերվում է Արամը, ով հավատում է ամերիկաների, ֆրանսիաների, գերմանիաների՝ Կիլիկիայում ինքնուրույն հայկական պետականություն ստեղծելու կեղծ խոստումներին ու Շևքեթ բեյի շուրթերից հնչող անվտանգության հավաստիացումներին:

Երեքն էլ նույն նպատակն են հետապնդում՝ թշնամուց ազատվել, ժողովրդին փրկել, նպատակին հասնելու միջոցներն են տարբերվում:

Թշնամուց ազատվելու համար Փառենը հետևյալ ճանապարհն է ցույց տալիս. «Զինվել, զինվել, և թող գենքը մնա բահի կողքին, որը որ պետք լինի, այն էլ կվերցնի հողագործը: Բայց բահի կողքին միշտ գենք պիտի լինի, հայի ճակատագիրն է այդպես, և ով չի հասկանում, ամոթ իրեն»², Կարոն վրեժխնդրության մարմնացում է, Արամը՝ թուրքերի հետ «լեզու գտնելու և խաղաղ ապրելու, այդ մասին է նա խորհրդակցում հոր հետ.

-Մի թե, հայր, մենք չենք կարող թուրքերի հետ լեզու գտնել և խաղաղ ապրել մեր լեռնաշխարհում:

² Ալաջաջյան Ստ., Եղեգները չխոնարհվեցին, Եր., «Սովետական գրող» հրտ., 1979, էջ 189:

-Երբ թշնամին խաղաղություն է առաջարկում, ուրեմն պատրաստվում է նենգորեն կռվել: Հին առած կա, նախ հանձնվիր՝ հետո...³»:

Նենգորեն կռվելու համար հող է նախապատրաստվում, և Արամը չի հասկանում դա, հավատում է Մարաշի շրջակա գորքերի հրամանատար Շևքեթ բեյի խոստումներին.

-Ի՞նչ երաշխիք տվեց Շևքեթը,-հարցնում է Կարոն, որ ճանապարհներ եր որոնում նրան «շանաստակ» անելու համար. «Արամը մի թուղթ հանեց ու տվեց Կարոյին. Շևքեթը երաշխավորում էր Ջեյթունի հայերի հանգիստը, անվտանգ երթևեկը գորանոցի և հարևան գյուղերի միջև, խոստանում էր օգնել քաղաքի վերակառուցմանը, պետականորեն վավերացնում էր հայերի իրավունքը իրենց նախկին կալվածքներին տիրանալու համար: Այն հողերը, որոնք մնացել են անժառանգ ու տերերը զոհված են, ձևակերպել զոհվածների ազգականների ու բարեկամների անունով: Թուրքիայում սպրոդ յուրաքանչյուր մարդ օրինական քաղաքացի է, և երաշխավորում է նրա անվտանգությունը: Ջեյթունի համայնքի ղեկավարումը հանձնվում է իրենց՝ զեյթունցիներին: Չարդախ ավանում նստած գայմադամը պարտավորվում է նաև հսկել Ջեյթունի հարևան թուրք, չեզեք և քուրդ գյուղացիների վրա, որպեսզի չխանգարեն վերաբնակներին, չզբաղվեն կողոպուտով: Իսկ զեյթունցիները պարտավորվում են չանհանգստացնել հարևան մուսուլման ազգաբնակչությանը, անցած եղեռնի համար վրեժ չլուծել անմեղներից»⁴:

Թուրքական հնամենի քաղաքականություն, որը բանեցվում է մինչև օրս՝ խաղաղության համաձայնագրով հակառակորդի զգոնությունը թուլացնելու և նենգորեն իրենց նպատակին հասնելու համար:

-Կեղծիք է,-ասաց Կարոն,-եթե թշնամին մեզ չի առաջարկում հանձնել զենքերը, ուրեմն կեղծիք է:

-Նա եկել է հետախուզելու, Կարո,-նստած տեղից գոռաց Փառենը,-եկել է տեսել մեր զենք չունենալը ու վերադարձել:

-Կեղծիք չէ, նույնիսկ խոստացավ մթերքով օգնել,- մեղմ ու հանգիստ խոսեց Արամը,-աղ է ուղարկելու ու ցորեն: Ոչ, պետք չէ: Մարդը քեզ հետ խոսում է իր պետության անունից, միլլական պետության անունից: Ուրեմն՝ ճանաչում ես նրա պետականությունը»⁵,-հակադարձում է Արամը՝ հավատալով ինչպես Շևքեթին, այնպես էլ Կիլիկիայի ինքնուրույն պետականություն ստեղծելու եվրոպացիների խոստումներին:

³ Նույն տեղում, էջ 190:

⁴ Նույն տեղում, էջ 212-213:

⁵ Նույն տեղում, էջ 213:

Փառենը հայ ժողովրդի, «արծվաբույն Զեյթունի և նրա ազատամարտիկների սխրագործ ու նահատակ ոգու» մարմնացումն է, «քայլող պատմություն»⁶, հերոսական ու ողբերգական դրսևորումներով:

Կարոն յուրովի է լրացնում Փառենի կերպարը՝ բորբոքել ցասումի ու վրեժի ոգին. «Վրեժը սուրբ զգացում է, արդար,-ինքն իրեն տրամադրում է Կարոն,-բայց եթե արդար էլ չէ, մեկ բան ընդունելի է չարին պատժելը, չարագործին պատժելը: Աշխարհի բոլոր երկրներում նրանց պատժում են պետականորեն: Դե մենք պետություն չունենք, դատ ու դատաստան չունենք: Ո՞վ պիտի պատժի նրանց: Ես, ես, ես»⁷:

Արամի Զեյթունում խաղաղ ապրելու երազանքները հողս են ցնդում, թուրքը մնում է թուրք և քմծիծաղում է Արամի ու նրա նման միամիտների՝ վրա: Երբ հերոսներից մեկը՝ Միքայելը գնում է գայմադամի մոտ՝ վավերացնելու իր վերցրած հողակտորը, հետևյալ պատասխանն է ստանում. «գայմադանը կարդաց Արամի գրածը. օրինական էր, ճիշտ: Առարկելու բան չկար:

-Լսիր, գյավուր,-բորբոքվեց գայմադամը,-ախր դուք շատ հիմար եք:

Միքայելը գունատվեց.

-Ի՞նչ էր եղել:

-Երեկ չէ առաջին օրը Արամն այստեղ էր, մենք նրանից պահանջեցինք բոլոր զենքերը, իսկ նա, ահա, մի զինված մարդ է ուղարկում և հող է պահանջում: Ախր դուք ո՞ւմ հողը ու մ եք բաժանում»:

-Հողը մեր պապերինն է, մերը:

-Ո՞չ, գոռաց գայմադամը,-մի հողը երկու տեր չի ունենում: Դուք հող չունեք այս երկրում, հասկացեք»⁸:

Միքայելը սպանվում է, բայց հերոսի մահով, գնդակահարելով գայմադամին ու մի քանի ասկյարների:

Ստ. Ալաջաջյանը վեպում նկարագրում է զեյթունցիների բազմաթիվ քաջագործություններ: Ապավինելով հայրենի լեռներին՝ քաջաբար կռվում են բոլորը՝ կին թե տղամարդ, մանուկ թե ծեր՝ այն անխախտելի համոզմամբ, որ «առյուծները լալ չգիտեն, մոնչալ գիտեն»: Այս համոզմունքով են նրանք ժխտում թուրքերի մոտ արմատավորված այն կարծիքը, թե «հայերը եղեգներ են, նրանց քամին որ կողմը փչի, այն կողմ էլ կխոնարհվեն»:

Այս մտայնության ժխտմանն են նվիրված 1960-ականների պատմավեպերից շատերը, որոնց մեջ հայը ոչ միայն հնազանդ քրիստոնյա

⁶ Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, Գ. 3, էջ 401:

⁷ Ալաջաջյան Ստ., Եղեգները չխոնարհվեցին, էջ 496:

⁸ Նույն տեղում, էջ 298:

է, այլև կարող է առաջնորդվել «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» կարգախոսով: Այդպիսի հերոսների մենք հանդիպում ենք Ս. Խանգաղյանի «Խոսեք, Հայաստանի լեռներ», «Գարեգին Նժդեհ», «Անդրանիկ» վեպերում, «Արաքսը պղտորվում է» վիպակում, Մ. Այվազյանի «Ճակատագիրն հայոց» վեպում, տասնյակ այլ վեպերում ու վիպակներում:

Ամսագրային հոդվածի շրջանակներում հնարավոր չէ բնութագրել վեպի բոլոր կերպարներին, նրանց ներկայացնել իրադարձությունների լայն շրջանակներում, անդրադառնալ հեղինակի կերպարանակերտման յուրահատկություններին, պատումի հետաքրքիր, անկաշկանդ ոճին:

Ամփոփենք՝ Ստ. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» վեպը խիստ արդիական է հատկապես մեր օրերում, երբ նորից մոլեգնում է պանթուրքիստական ժանտախտը, երբ գերտերությունները, իրենց շահերից ելնելով, նոր սիրախաղեր են սկսել Թուրքիայի հետ: «Եղեգները չխոնարհվեցին» վեպը այսօր էլ սեփական ուժերին ապավինելու, համախմբվելու, կեղծ խոստումներին չհավատալու ահազանգ է ու կոչ:

Գարին Քեսսաբիլյան

Ողբերգականն ու հերոսականը Ստ. Ալաջաջյանի պատմագեղարվեստական արձակում («Եղեգները չխոնարհվեցին») Ամփոփում

Ստ. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» վեպը խիստ արդիական է հատկապես մեր օրերում, երբ նորից մոլեգնում է պանթուրքիստական ժանտախտը, երբ գերտերությունները, իրենց շահերից ելնելով, նոր սիրախաղեր են սկսել Թուրքիայի հետ: «Եղեգները չխոնարհվեցին» վեպը այսօր էլ սեփական ուժերին ապավինելու, համախմբվելու, կեղծ խոստումներին չհավատալու ահազանգ է ու կոչ:

Garin Qessabilyan

Summary

In the article there are explored issues about church, state and struggle for liberation that are proposed in St.Aghajanyan's novel.

*Խմբագրություն է ուղարկվել 25.02.2021թ.
Հանձնարարվել է գրախոսության 10.03.2021թ.
Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.*

ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Պատմ. գիտ. թեկն., դոցենտ

G mkrtumyan@ysu.am

**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՍԱՍԱՆՑԱՆ
ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՄԱՆ ՄԱՍԻՆ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Արաբական արշավանք, հաշտության պայմանագիր, պարսիկ մարզպան, գլխահարկի վճարում, անձի ապահովություն, պարսկա-բյուզանդական պատերազմ, իսլամի հովանավորություն, հողատիրական-ժառանգական իրավունք, ռազմատուգանք, պարսից թագավոր:

Ключевые слова и выражения: арабское завоевание, мирный договор, персидский марзпан, уплата подушной подати, личная безопасность, персидско-византийская война, исламское спонсорство, землевладельческое и наследственное право, военные репарации, персидский царь.

Key words and expressions: Arab invasion, peace treaty, Persian marzban, head tax payment, personal security, Persian-Byzantine war, Islam sponsorship, land-use and hereditary right, war reparations, Persian king.

Սասանյան Պարսկաստանի միջնադարյան շրջանի պատմության ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն հայկական և մուսուլմանական աղբյուրները, որոնք ներկայացնում են նաև 7-րդ դարի երկրորդ կեսին սկսված արաբական արշավանքները: Պարսկա-բյուզանդական պատերազմները (572-591, 602-628) շարունակվեցին մոտ 45 տարի, որի արդյունքում այդ երբեմնի հզոր տերությունները ի վիճակի չեղան դիմադրելու արաբական արշավանքներին:

Հետազոտողները, հաշվի առնելով Մերձավոր Արևելքում արաբական արշավանքների և ռազմական հետագա տեղաշարժերի հաջորդականությունը արաբական զորքերի ռազմական գործողությունները բաժանում են երեք շրջանի. 1) մինչև Հիրա քաղաքը, 2) Հիրայից մինչև Քտեսիֆոն, 3) Քտեսիֆոնից հետո¹:

¹ Колесников А., Завоевание Ирана арабами, Москва, 1982, с. 56:

633թ. զորավար Խալիդ իբն ալ-Վալիդի գլխավորությամբ արաբական զորքը շարժվեց պարսկական Միջագետք: Գրավելով մի շարք քաղաք-ամրոցներ (Օբոլլա, ալ-Կազիմ) Խալիդը մոտեցավ Հիրային, որը Սասանյան Պարսկաստանի ռազմական կարևոր հենակետերից մեկն էր: Այն պարիսպներ չուներ, այստեղ կային միայն լավ ամրացված մի քանի ամրոցներ և եկեղեցիներ: Կարճատև մարտերից հետո քաղաքի բնակչությունը խաղաղություն խնդրեց արաբներից ռազմատուգանք և ամեն տարի գլխահարկ վճարելու պայմանով²: 9-րդ դարի մուսուլման պատմագիր ալ-Բալազուրին հիշատակում է, որ քաղաքի վեց հազար չափահաս տղամարդ պարտավորվեց վճարել 14 դիրհեմ, ամեն տարի հարյուր հազար դիրհեմ չափով: Բնակչությունը պարտավորվում էր լրտեսություն անել արաբների համար պարսիկների դեմ, իսկ Խալիդը չպետք է ոչնչացներ նրանց եկեղեցիներն ու ամրոցները³: Ըստ 10-րդ դարի պատմագիր ալ-Տաբարիի՝ քաղաքի բնակիչները հարկ էին վճարում՝ 190 հազար դիրհեմի չափով: Պատմագիրը նշում է, որ սա առաջին գլխահարկն էր, որ վճարում էր Իրաքի (Սավադ) բնակչությունը: Գլխահարկից ազատվում էին հոգևորականները, օտարականները⁴: 8-րդ դարի հայտնի մուսուլման իրավագետ Աբու Յուսուֆը ևս անդրադարձել է Հիրայի բնակչությանը տված պայմանագրին, ըստ որի քաղաքի բնակիչներին թույլ էր տրվում հնչեցնել եկեղեցիների զանգերը, տոն օրերին խաչը հրապարակավ դուրս հանել, բնակիչներին արգելվում էր սուտ ցուցմունքներ տալ:

Պայմանագրում նշվում էր, որ իսլամի հովանավորության տակ անցած քրիստոնյաները իրենց հագուստով և արտաքինով պետք է տարբերվեին մուսուլմանից⁵: Հիրան որոշ ժամանակ ռազմական հենակետի դեր խաղաց արաբների համար, որտեղից Խալիդը հսկում էր սահմանային ամրությունները: Հիրայի նվաճման մասին հիշատակում է նաև 8-9-րդ դդ. քրիստոնյա պատմագիր Թեոփանես Խոստովանողը⁶: Խալիդը գրավեց նաև Հիրայի շրջակայքում գտնվող մի շարք բնակավայրեր (Բանկիյա, Այյաս) սպահովության գիր (աման) տալով բնակչությանը: Այնուհետև շարժվելով դեպի Այն ալ-Թամր ամրոց, բռնի ուժով գրավեց այն, օգտվելով տեղի պարսկական կայազորի և քրիստոնյա-արաբների միջև ծագած հակասություններից: Մուսուլման պատմագիրները հիշատակում են, որ Խալիդը

² Ibn al-Athir, Al-Kamil fi al-Tarikh, II, Kahira, 1930, p. 266:

³ Al-Balazouri, Futuh al-Buldan, Bayrut, 1983, p. 240-241:

⁴ Ibn Jaafar, Jarir al-Tabari, Tarikh al-rusul wa al-muluk, III, Kahira, 1962, 2017/I.

⁵ Православный палестинский сборник, 50-й выпуск, т.17, С.П.,1897, с.1326-1327:

⁶ Թեոփանես Խոստովանող, Բյուզանդական աղբյուրներ Դ, Երևան, 1983, էջ 50:

տեղի եկեղեցում գտավ քառասուն արաբ երիտասարդների, որոնք Սվետարան էին սովորում և գերեվարեց նրանց⁷: Սակայն, երբ Խալիդը հեռացավ Հիրայից, տեղի բնակչությունը դրժեց նրա հետ կնքած իր պայմանագիրը, և քաղաքը երկրորդ անգամ գրավեց զորավար ալ-Մուսաննան, վերականգնելով նախկին պայմանագիրը⁸: Վերջապես, Հիրայի երրորդ և վերջին նվաճումը տեղի ունեցավ զորավար Իբն Աբու Վակասի միջոցով, որի հետևանքով Հիրայի բնակչությունը պարտավորվեց վճարել 400 հազար դիրհեմ:

636թ. Յարմուկում բյուզանդացիների դեմ տարած հաղթանակից հետո արաբական զորքերը կրկին մտեցան Սասանյան Պարսկաստանի սահմաններին զորավար Սաադ իբն Աբու Վակասի գլխավորությամբ և բանակ դրեցին Քադեսիայի մոտ: Արաբական մեծաքանակ զորքի առկայությունը անհանգստություն պատճառեց պարսից մեծամեծներին, որոնց նստավայրն էր Սասանյան Պարսկաստանի մայրաքաղաք Քտեսիֆոնը (ալ-Մադահին): Քադեսիայի ճակատամարտի մասին վկայում են հայ միջնադարյան պատմագիրները: 7-րդ դարի հայ պատմագիր Սեբեոսը գրում է, որ երբ պարսից թագավորությունը թուլացավ, «յայնժամ զաւրացն Իսմայելի... երթեալ պաշարեցին զՏիգրոն, զի անդ նստէր թագաւորին Պարսից»⁹: Պարսկական զորքերը միավորվեցին Ռուստամի զորավարի գլխավորությամբ ութսուն հազար հեծյալներով և նախապատրաստվեցին մարտին: Արաբները անցան Տիգրիս (Դգլադ) գետը և հասան Հերթիճան¹⁰ գյուղը: Ըստ պատմագրի՝ պարսկական կողմում կռվում էին «Մուշեղ Մամիկոնեան որդի Դաւթի, զաւրաւարն Հայոց երեք հազար սպառազինաւք, և Գրիգոր իշխանն Սիւնեայ տէրն՝ Ռ արամբ»¹¹: Արաբներին հաջողվեց կոտորել թշնամու դիմադրությունը: Ըստ պատմագրի՝ բոլոր անվանի նախարարները զոհվեցին, այդ թվում՝ Ռուստամ զորավարը, Մուշեղը՝ երկու քեռորդիների հետ, Սյունյաց տեր Գրիգորը՝ որդու հետ:

10-11-րդ դարերի հայ պատմագիր Մովսես Կադանկատվացին էլ, որը Սասանյան Պարսկաստանի նվաճումը ներկայացնում է Աղվանքի պատմության հետ շաղկապված, գրում է, որ երբ թագավորեց պարսից Խոսրով թագավորի որդի Հազկերտը, հազարացիները տասներկու ցեղերով

⁷ **Ibn Jaafar, Jarir al-Tabari**, Tarikh al-rusul wa al-muluk, III, Kahira, 1962, 2064/1.

⁸ Նույն տեղում, 2045/1:

⁹ Պատմութիւն Սեբեոսի, Երևան, 1979, էջ 137:

¹⁰ Հերթիճան – Պարսկաստանի սահմանամերձ գյուղերից է – Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005, էջ 354:

¹¹ Պատմութիւն Սեբեոսի, էջ 137:

միաբանվելով, հսկայական բազմությանը անցան անապատով, Սաորեստանով և հարձակվեցին «ընդդեմ թագաւորին Պարսից»¹²: Պարսիկ մեծամեծները զորաժողով արեցին, որին մասնակցում էր նաև Աղվանքի Վարազ-Գրիգոր իշխանի որդի Ջվանշիրը: Պատմագիրը հիշատակում է, որ պարսիկ զորավարը (ակներևաբար Ռուստամը), վերցնելով իր զորքը, անցավ Տիգրիսը և «եհաս ի Վեհկաւատ գաւառ»): Վերջինս «պարծեալ ի բազում զօրս իւր մեծամեծս՝ խրոխտայր առաթուր հարկանել զհարաւայինս զամենայն»¹³: Նրա զորքում արաբների դեմ կռվում էր նաև Ջվանշիրը՝ մեծ սխրանքներ գործելով: Ըստ Մովսես Կաղանկատվացու հիշատակության՝ երկու օր հետո երեսուն հազար հեծյալներ ու տասը հազար հետևակ նրանց դեմ մենամարտեցին: Քաղեսիայից եկած հազարացիները «ասպարախիտ շարժամաբք, յառաջ խաղացեալք նախաձեռն լինեին հարկանել զզօրս Պարսից»¹⁴: Այս կռվում ծանր վիրավորվեց Ջվանշիրը: Պարսից արքա Հազկերտը՝ պատվեց Ջվանշիրին թանկարժեք նվերներով:

Քաղեսիայի ճակատամարտի մասին համառոտ հիշատակությունների հանդիպում ենք նաև 12-րդ դարի պատմագիր Միքայել Ասորու մոտ: Նա գրում է, որ արաբների Սաադ զորավարը Յասրիբից դուրս գալով բանակ դրեց Քուբար քաղաքի մոտ: Հազկերտը եկավ և բանակեց Եփրատ գետի մոտ: Երկու կողմերի միջև սկսված ծանր մարտը ավարտվեց արաբների հաղթանակով, որոնք պարսկական զորքին «փախստական տարան ... մինչեւ ի Կատիգրոն, սակաւք և անզէնք ի Տաճկաց գրագումս և զգինեալս ի Պարսից»¹⁵: Պատմագիրը մանրամասնորեն նկարագրում է, թե ինչպես մի պարսիկ զինվոր փորձում էր փախչել, սակայն արաբները սպանեցին նրան: Այս դեպքի մասին հիշատակում են նաև մուսուլմանական աղբյուրները¹⁶, որոնք ավելի մանրամասն են նկարագրում Քաղեսիայի ճակատամարտի ընթացքը՝ նշելով որ պարսիկ զորավար Ռուստամը հսկայական զորք հավաքեց՝ մոտ 40 հազար, 30-33 ռազմական փղերով 25-30 հազար արաբների դեմ¹⁷: Ինչպես գրում է ալ-Տաբարին՝ Ռուստամը իր մոտ կանչեց Հիրա քաղաքի մեծամեծներին և մեղադրելով նրանց, որ նրանք ծառայում են արաբներին հարկեր վճարելով նրանց: Նա հույս ուներ

¹² **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 198:

¹³ Նույն տեղում, էջ 199:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորուց պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 306:

¹⁶ **Ibn Jaafar, Jarir al-Tabari**, III, 2226/I.

¹⁷ Նույն տեղում, 2267-2268/I

բանակցությունների միջոցով լուծել այս հակամարտությունը, սակայն արաբները մերժեցին նրա առարկությունները:

Ճակատամարտը տևեց մի քանի օր, որի մանրամասն նկարագրությունը հաղորդվում է մուսուլման պատմագիրների երկերում¹⁸: Ծանր կորուստները վիրավորների մեծ թիվը ստիպեցին արաբներին մեկ ամիս մնալ Քադեսիայում, որից հետո նրանք Եփրատով ուղևորվեցին պարսկական զորքի հետևից: Քադեսիայի ճակատամարտը թվագրվում է 637 թվականով: Այդ ընթացքում Հազկերտն իր արքունիքով և գանձերով փորձում էր մայրաքաղաքից հեռանալ Հուլուան, որի մասին տեղեկություններ է հաղորդում Մեբեոսը: Ըստ պատմագրի՝ պարսկական զորքի մի մասը անցավ Ատրպատական, Խոռոխագատի առաջնորդությամբ (ակներևաբար Ռուստամի եղբայրը): Վերջինս շտապեց Տիգրոս վերցնելու պարսից արքունիքի գանձերը, թագավորին և իր հետ տանելու քաղաքի բնակիչներին: Սակայն արաբները դարանամուտ լինելով, հարձակվեցին նրանց վրա, իսկ Խոռոխագատը զարհուրելով փախավ՝ թողնելով գանձերը, փախուստի դիմեց նաև Հազկերտը¹⁹: Ըստ Մովսես Կաղանկատվացու հիշատակության «յուր ամուջն Յազկերտի, էլ միւս անգամ թշնամին և պաշարեաց ի Տիսպոն քաղաքի զամիսս վեց»²⁰: Այդ ժամանակ Խոռոխագատ զորավարը Ջվանշիր իշխանի հետ դիմադրելով արաբներին նախահարձակ եղավ երեք հազար զինվորով: Ըստ պատմագրի՝ նրանք վեց ամիս թույլ չտվեցին, որ թշնամին անցնի Տիգրիս գետը, «մինչև առեալ զթագաւորն էլանէին ի դաստակերտն մեծ»²¹... և անտի շարժէին զթագաւորն ի Բեկղաղ»:

Մարտերը շարունակվեցին մինչև «եղև բեկումն չար ի՛Տեառնէ Պարսից զորուն ի լրման ժամանակի նոցա, և վերնառաք հրամանն երթայր կործանէր զթագավորութիւն նոցա»²²:

Միքայել Ասորին էլ գրում է, որ Հազկերտը, փախչելով արաբներից, անցավ Տիգրիսը, նրան հետևեցին նաև արաբները: Պարսիկ զորքը, երբ տեսավ արաբների մեծ բազմությունը, ավերեց կամուրջները իր հետևից²³: Սակայն արաբներին հաջողվեց անցնել գետը և փախուստի մատնել

¹⁸ **Ալ-Բալագուրի**, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներած. և բնագրերից թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 286-289:

¹⁹ Պատմութիւն Մեբեոսի, էջ 213:

²⁰ **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 201:

²¹ Դաստակերտը և Բեկղաղը Խոսրովի (Պարսից թագավորի) սիրած նստավայրերն էին, գտնվում էին Տիգրիսի դիմաց, Մովսես Կաղանկատուացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ. և ծանոթագր. Վ. Առաքելյանի, Երևան, 1969, էջ 284:

²² **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 201:

²³ Ժամանակագրութիւն տեառն Միխայելի Ասորուց պատրիարքի, էջ 307

պարսիկներին: Այս դեպքերի մասին վկայում են նաև մուսուլման պատմագիրները²⁴:

Այսպես, Մասանյան Պարսկաստանի մայրաքաղաք Քտեսիֆոնը արաբների կողմից գրավվեց առանց դիմադրության: Արաբական զորքը բռնագրավեց արքունիքի ողջ գանձերը: Այդ ընթացքում Ջալուլա քաղաքի մոտ 637թ. հավաքվեց պարսկական զորքը՝ Հուրրազադ գորավարի (հայկական աղբյուրներում՝ Խոռոխազատ, Խոռազատ) գլխավորությամբ: Մեքեոսը այս կապակցությամբ նշում է, որ Հազկերտի իշխանության տասներորդ տարում պարսիկները դուրս եկան Իսմայելի գորքի դեմ, որի կազմում կռվում էր, 40 հազար զինվոր²⁵: Հակառակորդները միմյանց բախվեցին Մարս գավառում²⁶: Մարտերը տևեցին երեք օր, մինչև պատերազմող կողմերի ուժասպառ լինելը: Ըստ պատմագրի՝ շուտով արաբները օգնական զորք ստացան: Այս մասին հիշատակում են նաև մուսուլման պատմագիրները, որ Հաշիմ իբն Ութբա գորավարին, որը Ջալուլայում արաբական զորքի առաջնորդն էր, ուղարկվեց երեք ջոկատ՝ 200 հեծյալով²⁷: Պարսկական զորքը զիշերը փախուստի դիմեց, առավոտյան «մնացորդն զարուն Իսմայելի գնացին ի վերաց նոցա... եւ ոչ գոք գտին ի բանակին»²⁸: Ըստ Մեքեոսի արաբները ասպատակեցին ամբողջ երկիրը, սրի քաշեցին մարդկանց, գրավելով 22 բերդ: Պարսիկների ճամբարում արաբները մեծ քանակությամբ ավար գտան՝ 30 միլիոն դիրհեմ և ավելի չափով:

Ըստ Միքայել Ասորու՝ Հազկերտը «չորիցս անգամ եկն ի վերայ Տաճկաց և յամենայն յաղթեցաւ», հետո փախավ «ի սահմանս Թուրքաց, որ Սագաստան կոչեն», հինգ ամիս թաքնվեց և սպանվեց թուրքերի կողմից, որով որ «առին Տաճկունք զիշխանութիւն Պարսից»²⁹: Այդ իրադարձությունների մասին վկայում է նաև Մեքեոսը³⁰:

Արաբական հետագա արշավանքները դեպի Մասանյան Պարսկաստան, մանրամասնորեն շարադրված են մուսուլման պատմագիրների երկերում: 638թ. Բասրայի կառավարիչ դարձավ Աբու Մուսա ալ-Աշարին,

²⁴ **Բալազուրի**, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, էջ 289:

²⁵ Պատմություն Մեքեոսի, էջ 141:

²⁶ Մարս գավառ – Այս տեղանվան առնչությամբ Գ. Աբգարյանը նշում է, որ Մ. Կաղանկատվացին «Բեկ դաղ կոչե գանուն տեղոյն մեծի պատերազմին ի մեջ տաճկաց և պարսից», տե՛ս Պատմություն Մեքեոսի, աշխատասիր. Գ. Աբգարյանի, էջ 308:

²⁷ **Ibn Jaafar, Jarir al-Tabari**, Tarikh al-rusul wa al-muluk, III, 2474/I.

²⁸ Պատմություն Մեքեոսի, էջ 141:

²⁹ Ժամանակագրություն տեառն Միխայելի Ասորույ պատրիարքի, էջ 207-308:

³⁰ Պատմություն Մեքեոսի, էջ 141:

որի անվան հետ է կապված Խուզիստան (հայկական աղբյուրներում՝ Խուժաստան) նահանգի նվաճումը³¹: Արաբների հաղթանակին այստեղ նպաստեց այն հանգամանքը, որ պարսկական բանակը պարբերաբար օգնություն չէր ստանում պարսից արքունիքի կողմից: Հուլուան քաղաքի ու նրա շրջակայքի գրավումը ալ-Տաբարին թվագրում է 637-ով: Ալ-Բալազուրին էլ նշում էլ, որ քաղաքը արաբներին հանձնվեց հաշտության պայմանագրով. բնակիչներին տրվեց անձեռնմխելիության և ապահովության երաշխիք՝ իրենց անձերի և ունեցվածքի համար³²:

Այսպես, արաբները շարժվում էին երկրի խորքը առանց լուրջ դիմադրության, տեղական շատ իշխաններ անցնում էին նվաճողների կողմը՝ իսլամ ընդունելու կամ հարկեր վճարելու պայմանով: 642թ. Նեհավենդի շրջանի կառավարիչ Դինարը հանձնվեց արաբներին խնդրելով երաշխավորագիր իր և քաղաքի բնակչության համար: Պայմանագրի տեքստը առկա է ալ-Տաբարիի պատմության մեջ. քաղաքի բնակիչներին շնորհվում էր իրենց անձերի, գույքի, հողերի համար ապահովություն, նրանք կարող էին հետևել իրենց օրենքներին և սովորույթներին՝ ամեն տարի արաբ կառավարչին գլխահարկ վճարելու պայմանով: Բնակիչները նաև պետք է ճանապարհ ցույց տային մուսուլման ճամփորդին, նորոգեին ճանապարհները, օգնեին արաբներին, կացարան հատկացնեին նրանց մեկ օր ու գիշեր, խորհուրդներ տային նրանց³³: Սակայն եթե նրանք խորամանկեին և դրժեին պայմանագիրը, չէր երաշխավորվում բնակիչների կյանքի և գույքի ապահովությունը: Նեհավենդի ճակատամարտից հետո գրավվեց նաև Սպահան քաղաքը, որի բնակչությանը տված պայմանագրում կրկնվում են Նեհավենդի բնակչությունը տված դաշնագրի պայմանները³⁴: Կումիսի բնակիչներն ստացան ապահովության ու անվտանգության երաշխիք՝ պահպանելու համար իրենց ատրուշանները, արաբները պարտավորվեցին չսպանել բնակիչներին, այլ հովանավորել նրանց՝ վերջիններին կողմից գլխահարկ և հողահարկ վճարելու պայմանով³⁵: Արաբական գորքը գրավեց նաև Պարսկաստանի Գորգան (Ջուրջան) շրջանը Մուույադ իբն Մուկարրինի գլխավորությամբ: Տեղի բնակչությունը ևս պարտավորվեց հարկեր վճարել³⁶: 638թ. նվաճվեց նաև Մուսուլի մարզը,

³¹ **Al-Balazouri**, Futuh al-buldan, p. 368:

³² Նույն տեղում, էջ 295:

³³ **Ibn Jaafar, Jarir al-Tabari**, Tarikh al-rusul wa al-muluk, III, 2658/I.

³⁴ Նույն տեղում, 2461/I

³⁵ **Al-Balazouri**, Futuh al-buldan, p. 310:

³⁶ **Ibn Jaafar, Jarir al-Tabari**, Tarikh al-rusul wa al-muluk, IV Kahira 1977, 2658/I.

այստեղ կային վանքեր և եկեղեցիներ, որտեղ բնակվող վանականները պայմանագիր ստացան՝ գլխահարկ վճարելու պայմանով: Օմար Խալիֆան Մուսուլ քաղաքը բնակեցրեց արաբներով:

Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆայի (634-644) օրոք նվաճվեց նաև պարսկական Ատրպատական նահանգը՝ Արդաբիլ մայրաքաղաքով: Տեղի բնակչությանը տրված պայմանագրի տեքստը առկա է ալ-Տաբարիի երկում, ըստ որի՝ ապահովություն էր տրվում Ատրպատականի լեռներին, դաշտերին, ինչպես նաև բնակչությանը՝ իրենց կյանքի, գույքի համար, պայմանով, որ գլխահարկ վճարեն յուրաքանչյուրը իր կարողության չափով: Գլխահարկից ազատվում էին կանայք, երեխաները, չքավորները, կրոնավորները³⁷: Հետագայում Ատրպատականի բնակչության մեծ մասը իսլամ ընդունեց: Արաբները պարսիկ հողատերերից հողեր գնեցին հանձնարարելով նրանց հողերի պահպանությունը:

Ըստ ալ-Տաբարիի՝ 642թ. գրավվեց Դարբանդը (ալ-Բաբ): Պատմագիրը հաղորդում է, որ այդ երկրամասում ապրում են հայեր, որոնք մշտական բնակության վայր չունեն: Ջորավար Մույաբա իբն Ամրուն հաշտության պայմանագիր տվեց տեղի բնակիչներին, այդ թվում՝ հայերին: Տեղի բնիկ և եկվոր բնակչությունը պարտավորվեց օգնել մուսուլմաններին արշավանքների ժամանակ, ենթարկվել մուսուլման կառավարչի հրամաններին: Նշվում էր, որ այն բնակիչները, որոնք կցանկանային անցնել ծառայություն, կազատվեին հարկերից³⁸: Այնուհետև գրավվեց նաև Մուղանը հաշտության պայմանագրով, որ ամեն մի չափահաս անձ վճարի մեկ դինար:

Արաբների ներխուժումը 652թ. Մասանյան Պարսկաստանի Խորասան նահանգ մուսուլմանական աղբյուրները կապում են պարսից թագավոր Հակվերտին հետապնդելու խնդրի հետ, որն իրագործվեց Պարսկաստանի մեծ մասը գրավելուց հետո: Մերվի մարզպանը (հավանաբար Մահույեն) շտապեց առանց կռվի պայմանագիր կնքել արաբների հետ, պարտավորվելով վճարել 100 հազար դիրհեմ, որոշակի քանակով հացահատիկ, պայմանով, որ արաբ զորահրամանատար Իբն ալ-Կայսը ընդունի իր ժառանգական հողատիրական իրավունքները այն հողերի նկատմամբ, պարսից Խոսրով թագավորը շնորհել էր իր պապին: Իբն ալ-Կայսը հաստատեց այդ իրավունքները և մարզպանը և նրա զինակիցները ազատվեցին հողահարկ վճարելուց³⁹: Պետք է նշել, որ Պարսկաստանի նվաճման ժամանակ արաբները խուսափում էին բնակչության

³⁷ Նույն տեղում, 2662/1.

³⁸ Նույն տեղում, 2665/1.

³⁹ **Ibn Jaafar, Jarir al-Tabari**, Tarikh al-rusul wa al-muluk, IV, 2896/1-2900/1.

մասսայական ջարդեր կազմակերպելուց: Շատ դեպքերում էլ սասանյան վարչական ծանր լծի տակ կքած պարսիկ բնակիչները արաբներին դիմավորում էին որպես ազատարարների: Արաբական գորքի հաղթանակները այստեղ բացատրվում էին այն հանգամանքով, որ արաբների դեմ պայքարող աշխարհագորը և տեղի կառավարիչները չէին կարողանում փոխադարձ պայմանավորվածությամբ դիմադրություն կազմակերպել: Պարսկաստանի իշխող դասի կենտրոնախույս ձգտումները ևս նպաստեցին արաբների հաղթանակին: Պարսկաստանի նվաճման ժամանակ շատ քաղաքներ, ազդեցիկ կառավարիչներ պայմանագրեր կնքեցին արաբների հետ, պարտավորվելով հարկեր վճարել մուսուլմանական գանձարանին, պահպանելով իրենց հողատիրական ժառանգական իրավունքները:

Այսպիսով, Սասանյան Պարսկաստանի տարածքի մեծ մասը նվաճվեց խաղաղ ճանապարհով՝ պայմանագրերի հիմքի վրա: Պարսիկ ազնվականության մի ստվար խումբ էլ իսլամ ընդունեց իր նյութական վիճակի բարելավման համար: Այստեղ հատկապես մեծ դեր խաղաց արաբների կողմից առաջ քաշված մուսուլմանների իրավահավասարության և նրանց հարկերից ազատելու դրույթները: Եվ հետագա դժվարություններից ու հալածանքներից խուսափելու համար պարսիկ բնակչության որոշ մասը իսլամ ընդունեց:

Գայանե Մկրտումյան

**Հայկական և արաբական աղբյուրները Սասանյան Պարսկաստանի
նվաճման մասին
Ամփոփում**

Հոդվածի ուսումնասիրության նյութ է հանդիսացել Սասանյան Պարսկաստանի նվաճումը 7-րդ դարի երկրորդ կեսին ըստ հայկական և մուսուլմանական աղբյուրների: Միավորելով բոլոր աղբյուրները, մենք փորձել ենք ներկայացնել Սասանյան Պարսկաստանի նվաճման ամբողջական պատկերը հենվելով նաև նվաճված երկրների բնակչությանը տրված պայմանագրերի վրա:

Гаяне Мкртумян

Армянские и арабские источники о завоевании Сасанидской Персии

Резюме

Материалом исследования статьи стало завоевание Сасанидской Персии во 2-й половине 7-го века, согласно мусульманским и армянским источникам. Объединяя различные источники, мы попытались представить полное изображение завоевания Сасанидской Персии, ссылаясь также на договоры, данные населению оккупированных поселений.

Gayane Mkrtumyan

Armenian and Arabic sources about the conquest of the Sasanian Persia

Summary

The study material of the article is the conquest of the Sasanian Persia in the 2nd half of the 7th century, according to the Muslim and Armenian sources. Combining different sources, we have tried to represent the complete image of the conquest of the Sasanian Persia, referring also to the treaties given to the population of the occupied settlements.

Խմբագրություն է ուղարկվել 19.06.2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 07.07.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

ՏԻՐՈՒՀԻ ՄԻՐԵԿԱՆՑԱՆ

Խաչատուր Արովյանի անվան ՀՊՄՀ
Հայ ժողովրդի պատմության ամբիոնի հայցորդ
tiruhi.sirekanyan@list.ru

**ԹԻՖԼԻՍԻ ՆԵՐՏԻՍՅԱՆ ԴՊՐՈՑԻ
ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(1819-1870 թվականներին)**

Բանալի բառեր և արտահայտություններ. Թիֆլիս, Ներսես Աշտարակեցի, Ներսիսյան հոգևոր դպրոց, Գևորգ Երեմյան Արծրունի, Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարան, գրքատպություն:

Ключевые слова и выражения: Тифлис, Нерсес Аштаракети, духовная семинария Нерсисян, Геворг ага Еран Арцруни, типография духовной семинарии Нерсисян, книгопечатание.

Keywords and expressions: Tiflis, Nerses Ashtaraketsi, the Nersisyan theological seminary, Gevorg agha Yeran Artsruni, the printing house of the Nersisyan theological seminary, book printing.

ՄՈՒՏՔ

1512 թվականին հեռավոր Իտալական Վենետիկ քաղաքում Հակոբ Մեղապարտը դրել է հայերեն գրքատպության հիմքը: Մինչև 19-րդ դարը հայկական տպագրության օջախներ են հիմնվել գրեթե բոլոր մոտ ու հեռու երկրներում: Եվ միայն 19-րդ դարի առաջին տասնամյակում վերջապես հայկական տպարան է հիմնվել Կովկասի ամենահայկական մշակութային քաղաքում՝ Թիֆլիսում: Հողվածի հեղինակը ուսումնասիրել է Թիֆլիսում, Ներսիսյան հոգևոր դպրոցում հիմնադրված առաջին տպարանի պատմությունը, որը ձեռք է բերվել հենց այդ դպրոցի համար և շուտով 1823 թվականին հայալեզու գիրք է տպագրել դառնալով Վրաստանում հայկական գրքատպության ծիծեռնակը: Հեղինակը խնդրի ներկայացման համար կիրառել է համալիր ուսումնասիրության, համեմատական վերլուծության և համադրման մեթոդները, ուսումնասիրել 1823-1870 թվականների ժամանակահատվածում տպարանի գործունեության կենդարյա պատմությունը, հաստատել, որ տպարանն իրականում բացվել է 1819 թվականին, տպագրության գործն սկսել է 1823 թվականին, ներկայացրել տպարանի հրատարակած գրքերի մատենագիտությունը:

ՏՊԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Ներսես եպիսկոպոսը¹, 1814 թվականին նշանակվելով Վրաստանի Հայոց հոգևոր թեմի առաջնորդ, հնարավորություն է ստացել իրագործելու երազանքը՝ ստեղծելու հոգևոր-կրթական-մշակութային-գրահրատարակչական կենտրոն՝ Մխիթարյան միաբանության, Լազարյան դպրոցի նմանությամբ: 1824 թվականին Թիֆլիս քաղաքում ավարտվել և շահագործվել է հոգևոր դպրոցի շենքը, որը հետագայում ստացել է հիմնադիրի՝ Ներսես կաթողիկոսի անունը՝ Ներսիսյան հոգևոր դպրոց²: Դպրոցաշինությանը զուգահեռ լուծվել է նաև տպարան ունենալու խնդիրը:

Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանի պատմությունն առաջին անգամ շարադրվել է 1826 թվականին նույն տպարանում տպագրված ականավոր պատմաբան, քերական, լեզվաբան, աստվածաբան և մանկավարժ Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» աշխատության համարակալված 600-րդ էջից հետո եղած չէջակալված 5-րդ թերթի հիշատակարանում³: Նույն պատմությունը շարադրված է 1851-1861 թվականների գործունեությանը նվիրված հաշվետվության ցուցակի մեջ⁴:

Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանի պատմությանն անդրադարձել են Հայր Գարեգին Ջարբխանայանը⁵, Ալեքսանդր Երիցյանը⁶, Ստեփան Մալխասյանը⁷, Լեոն⁸, Թեոդիկը⁹, Գարեգին Լևոնյանը¹⁰: Թվարկված

¹ **Ներսես Ե Աշտարակեցի** /1770-1857/, Ամենայն Հայոց կաթողիկոս 1843 թվականից: Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Հայկական հանրագիտարանի խմբագրություն, Ե., 2002 թ., էջ 782-783:

² Համառոտ պատմություն Ներսիսեան հոգևոր դպրոցի եօթանասունեւինգամեայ գոյութեան (1824-1899): Կազմեց Ստ.Մալխասեանց: Թիֆլիս, Կ.Մարտիրոսեանցի տպարան, 1900 թ.:

³ **Չամչեան Միքայել**, Քերականութիւն հայկազեան լեզուի: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց ընծայեցելոյ յազնուական Գեորգայ Երեմեան Արծրունոյ», 1826 թ.:

⁴ Տեսութիւն տասնամեայ գործողութեանց եւ հաշուոյ հոգաբարձուաց Ներսիսեան Հայոց հոգևոր ուսումնարանին Տիֆլիսայ ի 1851- ց1861 ամն: Տիֆլիս, տպարան Ներսիսեան հոգևոր դպրոցի, 1861 թ., էջ 46:

⁵ **Ջարբխանայան Գ.**, Պատմութիւն հայկական տպագրութեան, էջ 220-221:

⁶ **Երիցեանց Ա.**, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի: **Նույնի** Գրիգոր Արծրունու եւ նրա քսան հինգ տարւայ գրական գործունէութեան առիթով, էջ 25-27:

⁷ Համառոտ պատմութիւն Ներսիսեան հոգևոր դպրոցի, էջ 30:

⁸ **Լեո**, Հայ գրքի տունը, էջ 156-157:

⁹ **Թեոդիկ**, Տիպ ու տառ, էջ 181:

հեղինակները, բացի Ալեքսանդր Երիցյանից կամ հպանցիկ են անդրադարձել տպարանի պատմությանը, կամ կրկնել են Ալեքսանդր Երիցյանի հավաստի տեղեկատվությունը: Տպարանի մասին հոդված է տպել Հայ գրատպության հանրագիտարանը¹¹: Մեր օրերում տպարանի պատմությանը անդրադարձել է Վլադիմիր Մաղայանը¹², թեև վերջինս նույնպես հիմնականում օգտվել է Ալեքսանդր Երիցյանի գրքից:

Վլադիմիր Մաղայանը Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանի մասին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ հրատարակած «Հայկական տպագրությունը դարերի միջով» հոդվածների ժողովածուում զետեղված «Հայկական տպագրության սկզբնավորումն ու զարգացումը Վրաստանի հայկական և հայաբնակ գավառներում (19-րդ դարի վերջ – 20-րդ դարի սկիզբ)» հոդվածում գրել է. «...գուտ հայկական տպարան Թիֆլիսում հիմնադրվել է 1819 թ., որը հետագայում՝ 1824 թ., նվիրաբերվել է նորաստեղծ Ներսիսյան դպրոցին»¹³: Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանի գործունեությանը առավել ամբողջական անդրադարձ նա կատարել է «Հայկական գրատպությունը Թիֆլիսում (XIX դար – XX դարասկիզբ)»¹⁴ հոդվածում, որտեղ մանրամասնել է, որ տպարանն ի սկզբանե բերվել է Ներսիսյան հոգևոր դպրոցի համար և 1819 թվականին տեղադրվել է Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցու կառուցած կրպակներից մի քանիսում: Ալեքսանդր Երիցյանը գրել է. «Քանի դեռ Ներսեսի ուսումնարանը չէր շինված, հիշյալ տպարանը զետեղվեց առաջնորդի կառուցած կրպակներում, իսկ դրանից էլ առաջ՝ վանքի առաջնորդարանում: Թեև 1819 թվականից տպարանը արդեն բաց էր համարվում, բայց հայտնի չէ մեզ, թե մինչև 1823 թվականը ինչ ու ինչեր են տպվել»: Փաստորեն տպարանը իրոք հիմնադրվել է 1819 թվականին և 1824-ի փոխարեն առաջին գիրքը տպագրել է 1823 թվականի օգոստոսին: Գրիգոր Արծրունու կենսագիր Խ.Մալումյանը խոսելով նրա պապի՝ Գևորգ աղա

¹⁰ **Լևոնյան Գ.**, Հայ գիրքը և տպագրության արվեստը: Պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը, էջ 223-227: **Նույնի**, Հայ գիրքը և տպագրության արվեստը: Պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը (երկրորդ տպագրություն), էջ 220-224:

¹¹ Հայ գրատպություն և գրքարվեստ: Հայկական հանրագիտարանի հրատարակչություն: Ե., 2015 թ., էջ 803:

¹² **Մաղայան Վ.**, Հայկական տպագրության սկզբնավորումն ու զարգացումը Վրաստանի հայկական և հայաբնակ գավառներում, էջ 107: Նաև՝ http://hpj.asj-oa.am/5892/1/6_Vladimir_Maralyan.pdf

¹³ **Մաղայան Վ.**, Նշված աշխատություն, էջ 107:

¹⁴ http://hpj.asj-oa.am/5892/1/6_Vladimir_Maralyan.pdf

Արծրունու մասին նշել է, որ նա առաջին Հայոց տպարանը հիմնել է 1824 թվականին¹⁵: Այսօրինակ կարծիքը քննադատության չի դիմանում, քանի որ տպարանը հիմնադրվել է 1819 թվականին:

Տպարանը Ներսիսյան հոգևոր դպրոցին փոխանցելու մասին նշված 1824 թվականը, ճիշտ չէ, քանի որ այն ի սկզբանե բերվել էր հոգևոր դպրոցի համար, ի սկզբանե դպրոցին էր և արդեն 1823 թվականի օգոստոսի 22-ին այդ տպարանում իրականացվել է բժշկապետ, Պարսից շահից բժշկական ծառայության գեներալի (խան) աստղեր ստացած Դավիթ Մկրտչյան Կարբեցու¹⁶ «Պատմութիւն և խրատ բժշկութեան ցառոյն նորոց ծագելոյ յաշխարհին Հնդկաց և երևելոյ ի զանազան աշխարհս, որ անուանեայ կոչի՝ կալիքամարապս» 15 էջանոց գրքի տպագրությունը՝ մաղձախտ-խուլերայի մասին:

Թեև 1819 թվականին տպարանն արդեն պատրաստ է եղել գործարկման և ըստ լուրերի հոգևոր թռուցիկներ է տպագրել, բայց այն անմիջապես չէր կարող գործարկվել, անհրաժեշտ էին փայտյա մեծ մամուլ, գրաշար բանվոր, տպագրիչ, տպագրված մամուլները հավաքող-կարող, էջակալված թերթեր կտրող, կազմարար, ինչպես նաև անհրաժեշտ էր թուղթ, տպագրական մուր (ներկ), թուրխալ (սոսինձ): Թղթի և տպագրական ներկի ներկրումը պետք է իրականացվեր Մոսկվայից: Իսկ այս աշխատանքները կատարելու համար ժամանակ էր անհրաժեշտ: Փաստորեն տպագրություն իրականացնելու համար «նորաբողբոջ տպարան»-ին ժամանակ էր պետք: Այդ ամենը կատարվել է 1819-1822 թվականներին և ավարտին հասցվելուց հետո առաջին գիրքը տպագրվել է 1823 թվականին:

Թիֆլիս փոխադրված տպարանը հիմնականում ապահովված էր հայերեն տառերով, այն առավել պահանջված դարձնելու նպատակով Ներսես Աշտարակեցին տպարանը համալրել է պարսկերեն, վրացերեն, լատիներեն տառերով: Գևորգ Արծրունին իր բերած պղնձյա նախագաղափար տառամայրերը չի հանձնել տպարանին, պահել է իր մոտ: 1830 թվականին Արծրունու հանկարծահաս մահից հետո դրանք անցել են որդուն՝ իշխան Երեմիա Արծրունուն¹⁷: Վերջինս դժգոհ լինելով Ներսես

¹⁵ Մալումեան Խ., Մոքի մշակը: էջ 2:

¹⁶ Տիգրան Հայազն /Տիգրան Պետրոսյանց/, Ղազարյան Գ., 1000 հայագրի գեներալներ, ծովակալներ: Ե., 2009 թ., էջ 75-76:

¹⁷ Իշխան Երեմիա Գևորգի Արծրունի (1804-1877). ուսական բանակի գեներալ-մայոր (1848 թ.), Թիֆլիսի առաջին քաղաքապետ (1866-1868 թթ-ին): Սերում է Արծրունիների արքայական տոհմից: Ծառայությունը լեյք գվարդիայի ուլանական գնդում սկսել է 1823 թ-ին: Ռազմական աստիճանակարգով բարձրացել ու 1839 թ-ին

Աշտարակեցուց, որ դրամական պահանջ էր ներկայացրել իր դեմ, հրաժարվել է դրանք վերադարձնել տպարանին: Այդ տառամայրերը ընդմիջտ կորել են¹⁸:

Ա.Երիցյանը գրել է. «Որովհետև Արծրունին տառերի և մյուս պարագաների հետ բերած էր միայն մի փոքրիկ փայտյա մամուլ, վասնորոյ Ներսեսը յուր միջոցներով ձեռք բերեց մի մեծ մամուլ և մյուս պակասորդ իրերը: Շուտով Արծրունույ օրինակին հետեւեց քաղաքիս հայագն իշխան Աղամալ Խոջամինասեանցը՝ ընծայելով ռուսերէն տառերի պղնձեայ մայրերը: Ձեռք բերվեցան նմանապես վրացերէն, պարսկերէն և լատինական տառեր: Տպարանն ուներ բավականաչափ պողպատեայ գանազան զարդեր, ծաղկատառեր և պատկերներ»¹⁹:

Ա.Երիցյանը տպարանի առաջին աշխատողների մասին գրել է. «Հարկ է ասել, որ հրատարակութեանց վերադիտողը, ավագ գրաշարն ու երեսկապողն էր ոմն Գեւորգ, որ ծառայեց տպարանին բացվելու օրից մինչև գոցվելը (1830 թ.) և հայտնի էր «տպագրապետ» անունով: Դա իրեն օգնական ուներ մի գրաշար՝ հավլաբարցի Հովակիմին: Ոչ պակաս ծառայած է նմանապես «տպիչ» Սարգիսն: Տպարանի վրա ծախս էր լինում ամսական՝ տպագրապետ Գեւորգին 12 ռ. 50 կ., գրաշար Հովակիմին 4 ռ., տպիչ Սարգսին 8 ռ., մրագարկին 6 ռ. 50 կ., ի պետս մանր ծախուց 10 ռ., ընդամենը 41 ռուբլի, իսկ տարեկան՝ 492 ռուբլի»²⁰:

Տպարանի վերահսկողությունն ի սկզբանե իրականացրել է Գեւորգ աղա Երեմյան Արծրունին, 1824-1828 թվականներին այդ աշխատանքը դեկավարել է դպրոցի և տպարանի տեսուչ Հարություն Ալամդարյանը²¹,

նշանակվել է Կովկասյան առանձին կորպուսի գլխավոր մատակարար: Մասնակցել է 1826-1828 թթ-ի ռուս-պարսկական պատերազմին: Ընտրվել է Թիֆլիսի առաջին քաղաքապետ: Երկրաբան Անդրեաս Արծրունու և հրապարակախոս, «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունու հայրն է: 1872 թ-ին հահերեն և ռուսերեն տպագրել է «Խնդիր երկաթե ճանապարհիվերայ դեպի Հնդկաստան» գրքույկը (տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 355): Կենսագրությունը տե՛ս **Տիգրան Հայագն /Տիգրան Պետրոսյանց/, Ղազարյան Գ.**, 1000 հայագգի գեներալներ, ծովակալներ, էջ 285-286:

¹⁸ **Երիցեանց Ա.**, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք, էջ 167:

¹⁹ **Երիցեանց Ա.**, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան, էջ 121:

²⁰ **Երիցեանց Ա.**, Նշված աշխատություն, էջ 129:

²¹ **Երիցեանց Ա.**, 1824-1899: Ներսիսեան հոգևոր դպրոցը, էջ 123: Երևանից գրած նամակում Ներսես արքեպիսկոպոսը այսպես է ներկայացրել Ալամդարյանին «Պատուարժան աւագ քահանայ Տէր-Յարութիւն Մանուկեան (Ալամդարեան) **կառավար տպարանի** Հայոց Ուսումնարանի»:

1828-1830 թվականներին տպարանի աշխատանքը կրկին համակարգել է Գևորգ աղա Երանյան Արծրունին: 1830-1850-ական թվականներին հիշվում է Գրիգոր քահանա Տեր-Բարսեղյանի անունը: 1841 թվականին, տպարանի վերաբացվելուց, վերանորոգումից հետո տպարանի կառավարիչ և գրադարանապետ է նշանակվել Տեր Ստեփան Մանդինյանցը, 1844-1847 թվականներին տպարանի աշխատանքը կառավարել է Տեր Մովսես Սայաթնեանցը: Նրա գործունեությունը դադարեցվել է գործունեության մեջ թույլ տված խախտումների համար: Նրանից պահվել է տպարանից ստացած գումարները²²: 1860-ական թվականներին վերատեսուչ է հիշվել Հարություն քահանա Մուզանաճյանը:

1828 թվականին Ներսես Աշտարակեցին նշանակվել է Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի Հայոց թեմի առաջնորդ, փաստորեն Հայաստանի վարչական կարգավիճակի հարցերում ռուս պաշտոնատարների հետ ունեցած հակասությունների պատճառով արտրվել է Անդրկովկասից; Վրաստանի Հայոց թեմի նորանշանակ առաջնորդը չի գրադվել վարժարանի ինդիքներով: Եվ վարժարանը, և տպարանը թողնվել են բախտի քմահաճույքին: Ահա այդ ժամանակ պատասխանատվությունն ամբողջովին ստանձնել է Գևորգ Արծրունին: Նա հոգացել է ուսուցիչների, աշխատողների մասին, իր միջոցներից վճարել աշխատավարձ, կատարել տպարանի ծախսերը: Ցավոք, 1830 թվականին խուլերայից նրա անակնկալ մահով աշխատանքները մնացել են երեսի վրա, իսկ տպարանի գործունեությունը մեկ տասնամյակով դադարել է: Տպարանում տպագրված գրքերի, աշխատավարձերի վճարումների մանրամասնությունների մասին Հարություն Շերմազան-Վարդանեանին 1830 թվականի հոկտեմբերի 15-ին նամակով հայտնել է Ներսես Աշտարակեցին²³:

Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին եվրոպական տառատեսակներով ևս տպարանը ապահովելու նպատակով Փարիզից հոգևոր դպրոցում աշխատելու հրավիրած Հակոբ Շահան-Ջրպետյանին առաջարկել է գնել և իր հետ Թիֆլիս բերել եվրոպական տառատեսակների հայրեր և մայրեր, տառեր ձուլելու ձուլարան, ճշտել գրաձուլության կապարի Բաղադրությունը և տպագրական ներկի պատրաստման եղանակը: Բայց մինչ Ջրպետը ինչ-ինչ քայլեր կձեռնարկեր, առաջնորդի «կարգադրությամբ տպարանն արդեն կազմել էր իր ձուլարանը և ձուլում էր հայերեն ու ռուսերեն տառեր: Բացի ձուլարանից՝ տպարանն ունեցավ նաև իր

²² Երիցեան Ա., 1824-1899: Ներսիսեան հոգևոր դպրոցը, էջ 434:

²³ Երիցեանց Ա., Գրիգոր Արծրունու եւ նրա քան հինգ տարւայ գրական գործունեութեան առիթով, էջ 28-29:

վիմագրությունը (լիտոգրաֆիա), վիմագրական մամուլ երեք քարեայ և մի արձձեայ տախտակներով»²⁴:

Տարիների ընթացքում արձձաձույլ տառերը մաշվում, կոտրվում, շարքից դուրս են գալիս, ինչպես նաև որոշակի հրատարակությունների համար նոր տառերի անհրաժեշտություն է առաջանում: 1856 թվականի փետրվարի 22-ին տպարանի պատասխանատու Գրիգոր քահանա Տեր-Բարսեղյանը դիմել է դպրոցի հոգեբարձությանը տպարանի համար նոր տառեր ձուլելու խնդրանքով: Նա նշել է, որ Ասոյանի ժամգրքի տոնացույցի մասի տպագրությունը ժամանակավորապես դադարեցված է՝ տառերի պակասության պատճառով: Նա խնդրել է միջին մեծության տառեր ձուլել ընդ որում պատվավոր²⁵ և ծոցավոր²⁶: Պատասխանատու քահանան միաժամանակ խնդրել է, որպեսզի Տոնացույցի տպագրության դադարեցման պատճառով տպարանը պարապուրթի չենթարկվի, իրենք այլ գիրք տպագրեն²⁷:

Ամենայն հավանականությամբ Տոնացույցի տպագրությունը մինչև վերջ չի իրականացվել, քանի որ մեզ հայտնի գրացուցակում 1856-1870-ական թվականներին նման վերնագրով գիրք չի նշվում:

Մեկ այլ առիթով արդեն 1863 թվականի սեպտեմբերի 12-ին Հոգաբարձությանն է դիմել տպարանի վերատեսուչ Հարություն քահանա Սուգանաճյանը՝ տառեր ձուլելու և Ավետարանի տպագրությունն իրականացնելու հարցով: Նա խնդրել է ձուլել *ա, լ, ն, մ* և *Ա, Հ, Ռ, Տ, Բ, Կ, Յ* միջակ տառեր, ինչպես նաև գծեր և տարբեր ծաղկազարդեր ձուլել: Դրանց ձուլումը պատճառաբանվել է Ավետարանի Գործք Առաքելոց բաժնի տպագրությունն իրականացնելու համար: Նշել է, որ դրանց ձուլումն իրականացնելու համար տպարանը տվել է 7 փուլ 23 ֆունտ արձիճ, բայց դրանց ձուլումից հետո պակասել է քսանմեկ ֆունտ արձիճ: Աշխատանքը

²⁴ **Շրիգեանց Ա.**, Գրիգոր Արծրունու եւ նրա քսան հինգ տարւայ գրական գործունէութեան առիթով, էջ 129:

²⁵ Պատվավոր կամ պատվո նշան ունեցող տառերը մի դեպքում գործածվել են իբրև թիվ ցույց տվող նշաններ, մեկ այլ դեպքում օգտագործվել են բառակրճատումների ժամանակ:

²⁶ Ծոցավոր են այն տառերը, որոնց դեպի աջ թեքվող վերջավորությունները հնարավորություն չեն տալիս, որ հաջորդ տառը կանգնի համապատասխան հեռավորության վրա:

²⁷ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան: Գիրք Բ: Ս.Էջմիածինը եւ Հայոց գրերի զիւտի 1500 ու տպագրութեան 400 ամեակների սոնակատարութիւնը 1912-1913 թթ.: Փաստաթղթերի ժողովածու (ըստ Հայաստանի ազգային արխիւի նիւթերի): Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2019 թ., էջ 426-427:

կատարելու համար տառաձույլ վարպետ ռուս Պավլե Ռատինովին 86 ռուբլի վճարելու դիմաց նա գանձապետից ստացել և վճարել է 23 ռուբլի: Անհրաժեշտ է ևս 61 ռուբլի՝ գործարքն ավարտելու համար: Վերատեսուչը նաև գրել է, որ եթե Գործք Առաելոցի տպագրության մասը չիրականացվի իրեն թուլատրեն իրականացնել արդեն տպագրված Ավետարանը կազմելու գործը: Նա նաև առաջարկել է Ավետարանի տպագրված 250 օրինակից 100-ը իրականացնել կաշվե, 150-ը՝ թղթե կազմով: Միաժամանակ խնդրել է Մոսկվայից բերել տալ մի տակառ մուր: Սեպտեմբերի 19-ին դպրոցի Հոգեբարձությունը անդրադարձել է տպարանի վերատեսչի գրությանը և հանձնարարել է գանձապետին վճարել գումարը, ինչպես նաև պատրաստել 100 կաշեկազմ, 150 թղթե կազմով Ավետարան: Նաև առաջարկվել է գրությամբ դիմել Մոսկվա, գերապատիվ Մագիստրոս Մսեր Մսերյանցին, խոնարհաբար խնդրել Մոսկվայում ձեռք բերել մեկ տակառ տպագրական մուր և ուղարկել Թիֆլիս²⁸:

Ներսիսյան հոգևոր դպրոցի հոգաբարձության նիստերում քննարկվել են տպարանում տպագրվելիք գրքերի տպագրական ծախսերի հարցերը: Ահա մեկ օրինակ: Լսվել է տիտղոսավոր խորհրդական (տիտուլյարնի սովետնիկ) Գաբրիել Երեցփոխեանցի «Բառարան ի ռուսաց լեզուէի ի հայ» գրքի տպագրական ծախսերի մասին հարցը: Նշվել է, որ գրքի համար ծախսված 76,5 տպագրված յուրաքանչյուր թերթը (մամուլ) անժե 14 ռուբլի: Այդ հաշվարկով գրքի տպագրությունն արժեցել է 1041 ռուբլի: Հաշվարկի համաձայն 1853-1854 թվականներին հոգաբարձության գանձարկղ է մուծվել 343 ռուբլի արծաթ: Կարգադրվել է վերջին 25 արծաթ ռուբլին մուտքագրել հոգաբարձության մատյանում, ինչպես նաև որոշակի գումար վճարել Գաբրիել Երեցփոխեանցին որպես ապահովագիր²⁹:

Տպարանը արդյունավետ գործել է 1823-1830, ապա 1841-1863 թվականներին: Առաջին շրջանի յոթ տարիներին տպագրվել է 31 անուն գիրք, գումարած մեկ օրացույց, մոտ 18000 հազար օրինակով: Գրքերի տպաքանակը դասագրքերի համար եղել է 2000, օրացույցների համար՝ 1200, այլ հրատարակությունների համար՝ 50-600 օրինակ: Գործունեության երկրորդ շրջանում՝ 1841-1863 թվականներին տպագրվել է 60 գիրք, գրքույկ, գումարած 17 օրացույց: Այդ տարիներին տարեկան տպագրվել է 3-4, իսկ 1858 թվականին՝ 8 գիրք, 1860 թվականին՝ 2, 1861 թվականին՝ 1, 1863 թվականին՝ 2 գիրք: 1863 թվականից հետո տպարանը անգործության է մատնվել մինչև 1870 թվականը: 1870 թվականին տպարանը վերջապես

²⁸ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան: Գիրք Ի, էջ 429:

²⁹ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան: Գիրք Ի, էջ 425:

գործել և տպագրել է 3 գիրք: Գրքերին զուգահեռ 1846-1847 թվականներին Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանում տպագրվել է «Կովկաս» քաղաքական և բանասիրական թերթը, 1858-1862 թվականներին՝ «Մեղու Հայաստանի» քաղաքական, բանասիրական և առևտրական թերթը³⁰:

1870 թվականին դադարել է գրահրատարակչական կարևոր օջախի գործունեությունը և այդ կամ դրան հաջորդող տարում Ներսիսյան դպրոցի հոգեբարձություն կողմից տպարանը վաճառվել է տպարանատեր, հրատարակիչ Համբարձում Էնֆիաջեանցին:

1830 թվականին, երբ տպարանի գործունեությունը ժամանակավորապես դադարել էր, տպարանի գույքը պահպանության տակ վերցնելու նպատակով 1831 թվականի օգոստոսի 25-ին Սիմեոն Եպիսկոպոս Բզնունյանը գրությամբ դիմել է Թիֆլիսի Հայոց ուսումնարանի կոմիտեին՝ տպարանի գույքը ցուցակագրելու և փակի տակ դնելու մասին. «Հայոց ուսումնարանի յարգուպատիւ կօմետաթ ի Սիմէօնէ Եպիսկոպոսէ Հայոց Տիֆլիս: Ներսիսեան հայոց տպարանի բոլոր սարքն, որ դաւթար արարիմք, տարիք առ ձեզ, բասմախանի դուռն փէշատեցիք ձեր փէշատովն, բալանին առ ինձ կա և դաւթարն առ ձեզ: Խոստացաք նվաստիս, թէ դէվթերի օրինակն քեզ կու տանք և բալանին կառնունք: Յերկար սպասելով չուղարկեցիք, յիմացեալ ենք, որ մեք ճանապարհոյ ենք օր յառաջ դաւթարն ուղարկէք և բալանին ստանայք, որ իմ ճանապարհիս արգելք չլինի: Սպասեմ սոյն թղթիս պատասխանոյն: Սիմեոն Եպիսկոպոս Բզնունեանց»³¹:

Տպարանի երկրորդ անգործության մատնված ժամանակ, 1865 թվականի հուլիսի 28-ին «Հայկական աշխարհի կռունկ» օրագրի խմբագիր Խորեն Ստեփանեն³² գրությամբ դիմել է Ներսիսյան դպրոցի հոգաբարձությանը՝ անգործ տպարանը գործարկելու և այդտեղ իր օրագիրը տպագրելու համար, խոստանալով ամսական 2,5-3 թերթ (մամուլ) տպելու համար յուրաքանչյուր թերթի համար վճարել 10 մանեթ (ռուբլի): Հոգաբարձությունը գրության առթիվ պահանջել է տպարանի վերատեսուչ

³⁰ Նույն տեղում, էջ 386, թիվ 2575: Տե՛ս **Մխիթարյան Մ.Հ.**, Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը XIX դարի առաջին կեսին: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Ե., 1994 թ.:

³¹ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան: Գիրք Բ, էջ 355:

³² Խորեն Եպիսկոպոս Ստեփանէ, տե՛ս **Երիցեանց Ա.**, Գրիգոր Արծրունու..., էջ 71 և հետո: «Կռունկ Հայոց աշխարհի» և «Հայկական աշխարհի կռունկ» կամ «Հայկական աշխարհ» ամսագրերի մատենագիտություն, ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, թիվ 2 /66/, Ե., 1982 թ.: **Մխիթարյան Մ.**, Խորեն Ստեփանէի «Հայկական աշխարհ» ամսագիրը, «Քննասեր» հրատարակչութիւն, Ե., 2002 թ., էջ 6 և հետո:

Հարություն քահանա Սուգանաճյանի բացատրությունը: Վերջինս մանրամասն բացատրություն է տվել, թե ինչ պայմաններով է հնարավոր իրագործել տպարանի բացումը: Ամենայն հավանականությամբ գործարքը չի կայացել, քանի որ մինչև 1870 թվականը տպարանը չի գործել³³:

Գրահրատարակչական գործում շատ կարևոր է սրբագրման աշխատանքը: Եթե քաղաքացիական գրքերի տպագրության ժամանակ այդ աշխատանքը կարող էին կատարել քաղաքացիական կրթությամբ անձինք, եկեղեցական, կրոնագիտական գրքերի տպագրության ժամանակ սրբագրիչների դերը բավական մեծ էր: 1854 թ. փետրվարի 10-ին Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային կոնսիստորիան գրություն է ուղարկել Ներսիսյան հոգևոր դպրոցի հոգեբարձությանը՝ եկեղեցական գրականության տպագրության համար սրբագրիչներ նշանակել: Առաջարկն ուղղվել է Ամենայն Հայոց կաթողիկոսին: Վերջինս գրության վրա մակագրել է. «Նշանակեմ վասն սրբագրութեան եկեղեցական գրոց ի տպարանի ուսումնարանի զպատուելի Իսահակ աւագ քահանայն Սահառունի և զՄկրտիչ քահանայն Տէր Գրիգորեանց զատենակալս ի Կոնսիստորի, և նախագգուշացուցանեմ, զի ի յայտնի լինել սխալանաց ի տպեցեալսն պատժապարտ ունեն լինել որպէս վերատեսուչն տպարանի Տէր Գրիգոր Տէր Բարսեղեանն, այնպէս և նշանակեալ անդամք Կոնսիստորի»³⁴:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐՈՑԻ ՏՊԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ³⁵

Գրքեր

1. **Մկրտչեան Դավիթ Կարբեցի**, Պատմութիւն և խրատ բժշկութեան ցառոյն նորոց ծագելոյ յաշխարհին Հնդկաց և երևելոյ ի զանազան աշխարհս, որ անուանեայ կոչի՝ կալիրամարապս: Թիֆլիս, «Ի նորաբողոքոջ տպարանի նորակերտ ուսումնարանի», 1823. օգոստ. 22: 15 էջ: Շարվ. 8,5x14 ս
2. **Ներսես Ե Աշտարակեցի**, Համառօտութիւն անցից Քրիստոսակերտ Մայր Աթոռոյ Հայոց ս. Էջմիածնի: Տպագրեալ յաղագս համազգային

³³ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան: Գիրք Ի, էջ 440-443:

³⁴ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան: Գիրք Ի, էջ 423-424:

³⁵ Օգտվել ենք՝ 1. **Դավթյան Հ.**, Հայ գիրքը 1801-1850 թվականներին: Մատենագիտություն: ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, Ա.Սյանսիկյանի անվան հանրապետական գրադարան: Ե., 1967 թ., էջ 120-402: 2. **Ոսկանյան Ն., Սավայան Ա., Մողոմոնյան Ս., Գյուլումյան Օ., Սահակյան Ա., Թադևոսյան Ս.**, Հայ գիրքը 1851-1900 թվականներին: Ե., 1999 թ., էջ 1-165:

Տե՛ս <http://serials.flib.sci.am/matenagitutyun/ninel1851-1900/book/content.html>:

- ծանօթութեանց: Թիֆլիս, «Ի նորահաստատ տպարանի նորաշէն դպրոցի Հայոց», 1824. 75 էջ: Շարվ. 10,3 x15,3 սմ: Տպաքանակ 600:
3. **Եփրեմ Խուրի Ասորի**, Սրբոյ հօրն մերոյ Եփրեմի Խուրին Ասորոյ Գիրք աղօթից: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1825. 106 էջ: Շարվ. 9x15 սմ: Տպաքանակ 60
 4. Հրահանգ Քրիստոնէական վարդապետութեան ի պետս մանկանց Հայաստանեայց ս. Եկեղեցոյ: Թարգմանութիւն: (Թարգմ. Տէր Հարություն Ալամդարեան): Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1825. 2 չհ., 94 էջ: Շարվ. 9 x15 սմ: Տպաքանակ 600:
 5. **Ներսէս Աշտարակեցի**, Հայելի պարտաւորութեանց ծիսատէր քահանայից: Յօրինեալ առաջնորդական պարտաւորութեամբ ի Ներսէսիէ արքեպիսկոպոսէ Աշտարակեցոյ: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1825. 16 էջ: Շարվ. 9 x15 սմ:
 6. **Յովհաննէս Մեքաստացի**, Ներբողական նուագերգութիւնք Յօրինեալ ի սրբազան Յովհաննէս արքեպիսկոպոսէ Մեքաստացոյ՝ յառաքելայշաւիղ առաջնորդէ աստուածապահ Մեքաստիայ քաղաքի: ...Տպագրեալ յար և նման ձեռագրաց հեղինակի: Թիֆլիս, տպ. «Դպրոցի Հայոց», 1825. 21 էջ: Շարվ. 9x15 սմ: Տպաքանակ 300:
 7. *Այբուբեն Հայոց*³⁶: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1825 թ.: Տպաքանակ 2000:
 8. *Հէզ Սաղմու:* Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1825 թ.: Տպաքանակ 2000:
 9. *Այցելություն սգաւորաց.* Ներսէսի յօրինած իւրատներն՝ սգաւորութեան ժամանակ հեռու կենալ սնտոխապաշտական և քրիստոնէից անվայել սովորութիւններից: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1825 թ.: Տպաքանակ 300:
 10. *Յիշատակութիւնք Կայսերական անուանց.* Եկեղեցեաց համար: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1825 թ.: Տպաքանակ 100:
 11. **Ներսէս Աշտարակեցի**, *Ծանուցումն վախճանի վեհագնեայ աղայ Յովակիմայ (Լազարեանց):* Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1826 թ.: Տպաքանակ 120:
 12. **Ներսէս Աշտարակեցի**, *Թուղթ գոհութեան զԱմիլիախվարավ իշխանէն:* Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1826 թ.: Տպաքանակ 120:

³⁶ Յուցակի 7-14, 18-19, 23, 87-90 համարների տակ նշված գրքերը և օրացույցները իրականում չեն հասել մեր օրերը, դրանք ներկայացրել և տպաքանակները նշել է Ալեքսանդր Երիցեանը (տե՛ս 1824-1899: Ներսիսեան հոգեւոր դպրոց, էջ 124-127, 433):

-
13. *Յայտարարություն ինչ ըստ խնդրոյ իշխանին Բ.Բեհրուդեանց*. Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1826 թ.: Տպաքանակ 50:
 14. *Խրատ պատուաստի ծաղկան. ևս ըստ խնդրոյ իշխանին*: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1826 թ.: Տպաքանակ 50:
 15. **Ներսես Դ Աշտարակեցի**, Յայտարարություն Քրիստոնեական պարտաւորութեան հպատակաց ամենաբարեպաշտ կայսերութեան Ռուսաց: Թիֆլիս, «Ի գործարանի դպրոցի Հայոց», 1826. 6 էջ: Շարվ. 9,3x17,5 սմ: Տպաքանակ 500:
 16. **Չամչեան Միքայել**, Քերականություն հայկազեան լեզուի: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1826. 10 չհ., 600. 5 չհ. էջ: Շարվ 9,3 x17,7սմ: 1500 օրինակ:
 17. *Ազդարարություն ի Խովէն քաղաքայետէ վասն վաճառման հացի*: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», թարգմանություն: 1827 թ.: Տպաքանակ 200:
 18. *Կարգ եկեղեցեաց և եկեղեցականաց Տիֆլիսայ աղիւսակաւոր գիրք*: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1827 թ.: Տպաքանակ 100:
 19. Ազդարարություն առ Հայս: Առաջադրություն Հայոց նոր սարքվող գորքի համար: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1827: Տպաքանակ 600:
 20. Համբարձ ի գնդէ որոշեցելոյ վասն Կովկասեան սահմանաց, արտահանեալ ի համբարազրոց կոչեցելոյ Московские ведомости N 76, յամի 1826, ի սեպտեմբերի 22, յերես 3056, 3057, 3058, 3059: Թարգմանեալ յաշակերտաց ուսումնարանի Հայոց, որ ի Տիֆլիս: Տիֆլիս, տպ. Ուսումնարանի Հայոց, 1827. 12 էջ: Շարվ. 9,2x17,2սմ: Տպաքանակ 300: Տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 378:
 21. Հռչակ ողորմութեան աստուածագոր մեծափառութեան ինքնակալի և կայսեր ամենայն Ռուսաց Նիկողայոսի Առաջնոյ առ ազգս Հայոց, որ ի Վրասստան (Ներսես Աշտարակեցու աստենախոսությունը): Թիֆլիս, տպ. Ուսումնարանի Հայոց, 1827. 4 չհ., 15 էջ: Շարվ. 13,2x23 սմ: Տպաքանակ 600:
 22. *Հանդէս օրհնութեան Միւռնի*: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց», 1826 թ.: Տպաքանակ 600:
 23. Թուղթ յայտարարութեան նոր կուսակալին Պասկևիչի, Պարսից պատերամի մասին: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի: Հրատարակչական տեղեկություններ չեն նշվել³⁷: Տպաքանակ 200:

³⁷ Հավանաբար տպագրվել է 1827 թվականին:

24. Առաջադրութիւն Հայոց նոր սարքվող զօրքի մասին: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի 1828:
25. Երախայրիք Ներսիսեան դպրոցի. (Ա գիրք): Թիֆլիս, տպ. Ուսումնարանի Հայոց, 1828, 94 էջ³⁸: Շարվ 11x18 սմ:
26. Երախայրիք Ներսիսեան դպրոցի. (Բ գիրք): Թիֆլիս, տպ. Ուսումնարանի Հայոց, 1828, 56 էջ: Շարվ 11x18 սմ: Տպաքանակ 700:
27. **Ղամազեանց Մելիքսեդէկ**. Բան ի վերայ առման քաջակառոյց ամրոցին Երևանայ: ...Ասացեալ յաւագ քահանայէ Հայոց ի Մելիքսեդէկէ Ղամազեանց...ի հոկտեմբերի 9 ամի 1827, ի Տիֆլիս: Թիֆլիս, տպ. Ուսումնարանի Հայոց, 1828. 5 էջ: Շարվ 12x18 սմ:
28. **Արծրունի Գեորգ**, Դարաստան խրատուց: Քաղեալ ի գրոց իմաստասիրաց ջանիք ազնուական Գեորգայ Արծրունոյ՝ որոյ ծախիւք իսկ տպի, ի վայելս մանկանց Հայաստանի: Թիֆլիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1829. 212 էջ, 6 չհ.: Շարվ. 7 x12,5: Տպաքանակ 600:
29. **Ներսես Շնորհալի**, Ողբ Եղեսիոյ: Յօրինեալ տեառն Ներսիսի Կլայեցոյ երանաշնորհ հայրապետի Հայոց: Ի լոյս ածեալ ի Յ. Շահան-Ջրպետանց, յԱրքայական վարժապետէ ի Գրատան Փարիզոյ Դամարձակին աշխեանց Համալսարանին Հնագիտաց Գաղղիոյ Դամարձակին աշխարհագրաց Փարիզոյ և Հայկական ճեմարանի սրբոյն Ղազարու, որ ի Վենետիկ: Թիֆլիս, տպ. Ներսիսեան դպրոցի Հայոց, 1829, Թ, 110 էջ: Շարվ 7,5 x11,3 սմ: Տպաքանակ 600:
30. **Տէր-Մարուգեանց Յովսէփ**, Հանդէս օրհնութեան եօթնալոյս իւղոյն միտոնի: Թիֆլիս, տպ. Ներսիսեան դպրոցի Հայոց, 1829. 8 էջ: Շարվ 9,5x17 սմ:
31. **Արծրունի Գեորգ**, Դարաստան խրատուց: Քաղեալ ի գրոց իմաստասիրաց ջանիք ազնուական Գեորգայ Արծրունոյ ի վայելս մանկանց Հայաստանի: Տիֆլիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1830. 212, 6 չհ., էջ: Շարվ. 7x12,5: Տպագրվել է 600 օրինակ: Տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 553:
32. **Կարենեանց Յակոբ**, Ճառ վասն փրկագործ չարչարանց և խաճելութեան տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի: ...Յաշխարհիկ բարբառ, աշխատասիրութեամբ Կարնոյ գաղթական Յակոբայ Կարենեանց: Թիֆլիս, տպ. Հոգևոր Դպրոցի Հայոց, 1841. 23 էջ: Շարվ. 11,2x17 սմ:

³⁸ Պատահում են նաև Ա գրքի օրինակներ, որոնք ավարտվում են 63 էջով, տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 5965 օրինակը:

33. Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Թիֆլիս, տպ. Հոգևոր դպրոցի Հայոց, 1842. 299 էջ: Շարվ. 14,5x24 սմ:
34. Թերթ վասն պարտաւորութեան երեցփոխանաց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1842:
35. **Ջալալեանց Սարգիս**, ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան: Մասն Ա: Թիֆլիս, տպ. Հոգևոր ճեմարանի Հայոց, 1842. 234., 1 չի. էջ: Շարվ. 10,2x16 սմ: Տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 487:
36. **Երզնկեան Ռոստոմ**, Համառոտութիւն պատմութեան Հայոց: Վասն աշակերտաց ուսումնարանաց: Թիֆլիս, տպ. Գրատան Հոգևոր ճեմարանի Հայոց, 1843. 200 էջ: Շարվ. 10,5x17 սմ:
37. Սաղմոս Դաւթի, որ է աղօթք և օրհնութիւն առ աստուած և մարգարէութիւն վասն մարդէղութեանն Քրիստոսի: Թիֆլիս, տպ. Ճեմարանի Հայոց, 1844. 491 էջ: Շարվ. 7,3x13,3 սմ:
38. Հրահանգ Քրիստոնէական վարդապետութեան ի պէտս մանկանց Հայաստանեայց ա. Եկեղեցոյ: Երկրորդ տպագրութիւն: Թարգմանութիւն (թարգմ. Հարություն Ավանդարյան): Թիֆլիս, տպ. Ուսումնարանի Հայոց, 1847. 96 էջ: Շարվ. 8,7x14,7 սմ:
39. **Ներսէս Աշտարակեցի**, Այցելութիւն սգաւորաց: Ի սահմանի առաքելական ւսանողութեանց: Երկրորդ տպագրութիւն: Թիֆլիս, տպ. Ուսումնարանի Հայոց, 1847. 15 էջ: Շարվ. 7x12 սմ:
40. **Օրբելի Յովսէփ**, Այբբենարան: Նորակարգ ոճով, յորում պարունակին սկզբունք հարկաւոր ուսանելեաց: Թիֆլիս, տպ. Հոգևոր ճեմարանի Հայոց, 1849. 84 էջ: Շարվ. 9x15 սմ:
41. Առաջին կանոն Սաղմոսի, բաժանեալ ի հոգենայս, ի պէտս դեռավարժից: Թիֆլիս, տպ. Ուսումնարանի Հայոց, 1850. 48 էջ: Շարվ. 6,5x10 սմ:
42. Յուցակ ամենայն ազգ հայերէն մատենից, տպագրելոց ի Վենետիկ, ի Վեննա, ի Կոստանդնուպօլիս, ի Կալկաթա, ի Ջմիռնա, ի Մոսկով և յայլ քաղաքս: Վաճառին ի գրատան եղբարցք Աւետիքայ Համբարձումայ Էնֆիաճեանց ի Տփլիս, ի պանդոկի Գ.Թամամշեանց թիվ 18, ի վերին յարկս: Թիֆլիս, տպ. Ներսիսեան Հոգևոր Դպրոցի Հայոց, 1850. 24 էջ: Շարվ. 10,3x17,2 սմ:
43. **Պատկանեանց Միքայէլ**, Պարգէւ մանկանց: Թիֆլիս (Տփլիս), տպ. Ներսիսյան դպրոցի: Առաջին հրատարակություն: 1851: 116 էջ, շարվ. 16,5x10 սմ:
44. Ժամագիրք աստենի արարեալ սուրբ եւ աստուածաշնորհ թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ եւ երանելի Հայրապետացն մերոց Գիւտոյ եւ

- Յովհաննու Մանդակունոյ եւ սրբոյն Ներսիսի Շնորհալոյ: Տփխիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1852: 203 զարդափակ էջ, շարվ. 26x12 սմ:
45. Ակտ կամ տարեկան հանդէս Ներսիսեան հոգևոր դպրոցի հայոց Թիֆլիզոյ: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1853: 47 էջ, շարվ. 14x10 սմ:
46. **Գալլուայ Լեոնարդ**, Ինկվիզիցիայ: Ի թարգմանութեանց Յակոբայ Կարէնեանց եւ Միքայէլի Պատկանեանց: Հտ. 1: Տփխիս, տպ. Ներսիսեան ուսումնարանի, 1853: 102 էջ, շարվ. 16,5x11,5 սմ:
47. **Գալլուայ Լեոնարդ**, Ինկվիզիցիայ³⁹: Ի թարգմ. Յակոբայ Կարէնեանց եւ Միքայէլի Պատկանեանց: Հտ. 2: Տփխիս, տպ. Ներսիսեան ուսումնարանի, 1853: 66 էջ, շարվ. 16,x11,5 սմ:
48. **Ներսէս Աշտարակեցի**, Համառոտութիւն անցից քրիստոսակերտ մայր աթոռոյ Հայոց Սրբոյ Էջմիածնի: 2-րդ տիպ: Տփխիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1853: 80 էջ, շարվ. 16x10 սմ:
49. **Երիցփոխեանց Գաբրիէլ**, Բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ: Աշխատասիրեալ ի Գաբրիէլէ Երիցփոխեանց: Տփխիս, տպ. Ներսիսյան դպրոցի 1854: 10 չհ., 591 էջ, շարվ. 21x14 սմ:
50. Համառոտութիւն Նոր կտակարանի: Մասն Առաջին: Տփխիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1854: 79 էջ, շարվ. 16x9 սմ:
51. Նոր այբբենարան կամ սկիզբն ընթերցանութեան Հայոց: Հանդերձ կարեւոր գիտելեօք: Տփխիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1854: 64 էջ, շարվ. 16x9 սմ:
52. **Տը Ֆերէալ Մ.**, Գաղտնիք ինկվիզիցիայի: Բօման: Ի թարգմ. Յակոբայ Կարէնեանց եւ Միքայէլի Պատկանեանց: Մասն առաջին: Թիֆլիզ, տպ. Ներսիսյան դպրոցի 1854: 5 չհ., 121 էջ, շարվ. 16x22 սմ:
53. **Տը Ֆերէալ Մ.**, Գաղտնիք ինկվիզիցիայի: Բօման: Թիֆլիզ, տպ. Ներսիսյան դպրոցի 1854: 122 էջ, շարվ. 16x12 սմ:
54. Բարոյական խրատք եւ հատուածք արձակք եւ չափաւորք ի պէտս ընթերցանութեան մանկանց: Գիրք 2-րդ: Տփխիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1855: 97 էջ, շարվ. 18x9 սմ:
55. Քրիստոնէական նախագիտելիք: Գիրք 3-րդ: Տփխիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1855: 63 էջ, շարվ. 17x8 սմ:
56. **Տը Ֆերէալ Մ.**, Գաղտնիք ինկվիզիցիայի: Բօման: Թիֆլիզ, տպ. Ներսիսյան դպրոցի, 1855: 120, 1 չհ. էջ շարվ. 16x11,5 սմ:

³⁹ Պատահում են նաև երկու հատորները մեկ կազմի մեջ, տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 373 գիրքը:

57. **Մատթեոս Կոստանդնուպոլսեցի**, Հանդիսարան ուղղափառության Հայոց եկեղեցւոյ: Բ տիպ: Թիֆլիս (Տփլիս), տպ. Ներսիսյան դպրոցի, 1856: 492 էջ:
58. **Պատկանեանց Միքայել**, Պարզեւ մանկանց: Աշխատասիրեալ ի Միքայելէ Սերովբեան Պատկանեանց: 2-րդ տպագր.: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1856: 112 էջ, շարվ. 15x10,5 սմ:
59. Տաղարան Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ ի Հայրապետութեան Տեառն Տեառն Ներսիսի սրբազանակատար կաթողիկոսի Ամենայն Հայոց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1856: 332 էջ, շարվ. 9x4,5 սմ:
60. **Գարենեանց Յակոբ**, Պատմութիւն եւ պատճառք վերադարձի երից վարդապետաց Հայոց Սարգսի, Գաբրիէլի եւ Ամբրոսեայ ընդ հովանեաւ Լուսաւորչական Սուրբ Աթոռոյ Հայաստանեայց եկեղեցւոյ: Կրկին տպագրեալի 1857 ամի: Թիֆլիս (Տփլիս), տպ. Ներսիսյան դպրոցի, 1857: 48 էջ, շարվ. 12x17 սմ:
61. Պատմութիւն կայսերն Փոնցիանոսի եւ կնոջն եւ որդւոյն նորին Դիոկղետիանոսի եւ եօթն իմաստասիրաց: Տփլիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1857: 194 զարդափակ էջ, նկ., շարվ. 15x9 սմ:
62. Պատմութիւն Պղնձէ քաղաքին: Յորում են բանք խրատականք եւ օգտակարք Խիկարայ իմաստնոյ եւ այլ բանք պիտանիք: Տփլիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1857: 225 էջ, շարվ. 12x7 սմ:
63. **Աբովեանց Խաչատուր**, Վերք Հայաստանի: Ողբ հայրենասիրի: Պատմական վէպ: Թիֆլիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1858: 275 էջ, շարվ. 16x10 սմ: Տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 608:
64. **Արարատեանց Առաքեալ**, Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոց ամենապատուական նախամայր մաքուր լեզուիս Հայոց: Տփլիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1858: 110 էջ, շարվ. 16x11 սմ: Տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 737:
65. **Արարատեանց Առաքեալ**, Սխալանք գրոցն որ կոչի Վարժապետարան կրօնի: Տփլիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1858: 100 էջ, շարվ. 12x7 սմ:
66. **Զօհրապեանց Մովսէս**, Վէպք զուարճալի անցից յորս պարունակին խրատական եւ իմաստալից ասացուածք ժողովեալ եւ թարգմանեալ յայլ եւ այլ լեզուաց: Աշխատասիրութեամբ՝ Մովսիսի Զօհրապեանց Արցախեցւոյ: Տփլիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1858: 109 էջ, շարվ. 15x10 սմ, գ. 20 կոպ.:
67. **Գարենեանց Յակոբ**, Բաղդատութիւն պատմութեան Մովսիսի Խորենացւոյ տպագրելոյն ի Վենետիկ ընդ երկուց ձեռագրաց: Տփլիս, տպ. Ներսիսեան դպրոցի, 1858: 130 էջ, շարվ. 19,5x16,5 սմ:

68. **Զալալեանց Սարգիս**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան: Աշխատասիրութեամբ Տեառն Սարգսի Սանահնեցոյ Զալալեանց: Մասն Բ: Տփխիս, տպ. Ներսիսեան հոգևոր դպրոցի, 1858: 517 էջ, շարվ. 16x11 սմ: Տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 343:
69. **Մանդինեանց Ստեփաննոս**, Չորս եղանակք տարւոյ: Յայտնողք աստուածային գործոց եւ նախախնամութեան: Թիֆլիս (Տփխիս), տպ. Ներսիսյան դպրոցի, 1858: 55 էջ, շարվ. 13x10 սմ:
70. **Արարատեանց Առաքեալ**, Համառօտ վարք Յովհաննու աւագ քահանայի Մարտիրոսեան Ոսկերչեանց Վաղարշապատեցոյ ընդ ինչ ինչ գրաւոր գործոց նորա: Թիֆլիս (Տփխիս), տպ. Ներսիսյան դպրոցի, 1859: 77 էջ, շարվ. 11,5x7,2 սմ:
71. Հանդէս այցելութեան վեհափառ հայրապետին ամենայն Հայոց տեառն Մատթեոսի ի հոգևոր դպրոցն հայոց Տփխիսայ ի 16 յունիսի 1859 ամի: Տփխիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1859: 18 էջ, շարվ. 17x10 սմ:
72. **Մանդինեանց Ստեփաննոս**, Հայելի դաստիարակութեան տղայոց: Թիֆլիս (Տփխիս), տպ. Ներսիսյան դպրոցի, 1859: 156 էջ, շարվ. 17x11 սմ:
73. Խորհրդատետր սրբազան պատարագի: Թիֆլիս (Տփխիս), տպ. Ներսիսյան դպրոցի, 1860: 31 գծափակ էջ, նկ., շարվ. 24x12 սմ:
74. **Մատթեոս կաթողիկոս**, Բարի մարդ եւ բարի քրիստոնէայ: Երկրորդ տպագր.: Թիֆլիս (Տփխիս), տպ. Ներսիսյան դպրոցի, 1860: 5 չհ., 273էջ, շարվ. 15,6x9,5 սմ:
75. **Մատթեոս կաթողիկոս**, Հանդիսարան ուղղափառութեան հայոց եկեղեցոյ: Թիֆլիս (Տփխիս), տպ. Ներսիսյան դպրոցի, 1860: 5 չհ., 439 էջ, շարվ. 12x7 սմ:
76. **Պատկանեանց Միքայէլ**, Պատասխանիք Յակոբայ Կարենեանց գրուածքի դէմ: Տփխիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1860: 56 էջ, շարվ. 14x9,5 սմ:
77. Նամակներ փոքր Հէնրիի վրայ իր Սօրաքոյրից: Պարզեւ երեխանց: Թրգմ. անգլ. Յովհ. Ախվերդեան: Տփխիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1861: 59 էջ, շարվ. 12x8 սմ:
78. **Պատկանեանց Միքայէլ**, Կրիտիք Յակոբայ Կարենեանց հեղինակութեան վրայ: Տփխիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1861: 84 էջ, շարվ. 14,5x9,5 սմ:
79. Տեսութիւն տասնամեայ գործողութեանց եւ հաշուոց հոգաբարձուաց Ներսիսեան հայոց հոգևոր ուսումնարանին Տփխիսայի 1851-ց 1861 ամն: Տփխիս, տպ. Ներսիսեան հոգևոր դպրոցի, 1861: 155 էջ, 3 թ. հաշվեցուցակ, շարվ. 16x10 սմ: Տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 2634:

80. Նոր կտակարան Սրբոյ Աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...: Տփլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1863: 601 էջ, շարվ. 16x10 սմ: Տպաքանակ 250 (100 օրինակ կաշեկազմ, 150 օրինակ թղթե կազմով):
81. **Շահնազարեանց Դանիէլ**, Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ աթոռոյն Էջմիածնի: Տպագրեալ Հրամանաւ Տեառն Մատթեոսի ընդհանրական Հայրապետին ամենայն Հայոց: Տփլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1863: 7 չհ., 230 էջ, շարվ. 24x17,5 սմ:
82. **Նազարեանց Ստեփաննոս**, Պատմութիւն Պիղագոզիկայի և երկու հաս ձառ: Տպագրեալ Ներսիսեան դպրոցի տարեկան համարատուութեան տետրակում: Տփլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1870:
83. **Օրբէլի Յովսէփ**, Նախաշաւիղ կրօնագիտութեան ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ: Ա. Նախագիտելիք քրիստոնէական հավատոյ...: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1870: 67 էջ, շարվ. 16x9 սմ:
84. **Օրբէլի Յովսէփ**, Նախաշաւիղ կրօնագիտութեան ըստ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ: Բ. Գլխաւոր հաւատալիք քրիստոնէական կրօնի: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1870: 66 էջ, շարվ. 15x9 սմ:
- Օրացույցներ**
85. Օրացոյց 1830 ամի տեառն ՌՄՀԹ: Որ ցուցանէ զտօնս և զպահս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ: Հրանմանաւ սրբազան Սիննոդոսի Արարատեան աթոռոյ սուրբ Էջմիածնի, յԱբրահամ դպրէ Պաղտասարեան Կոստանդնուպօլսեցւոյ, ի միաբանութենէ սրբոյ Էջմիածնի: Թիֆլիս, տպ. «Ներսիսեան դպրոցի Հայոց»: 78 էջ, 2 չհ.: Շարվ 6,7x12,7 սմ: Տպագրվել է 500 օրինակ:
86. Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1843: Տպաքանակ 1000:
87. Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1844: Տպաքանակ 1000:
88. Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1845: Տպաքանակ 1000:
89. Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1846: Տպաքանակ 1000:
90. *Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1847 ("):*
91. *Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1848 ("):*
92. Օրացոյց 1849 հասարակ ամի տեառն և Հայոց ՌՄԴԸ թուականի: Թիֆլիս, տպ. «Ուսումնարանի Հայոց` ընծայելոյ Արծրունոյ»: 68 էջ: Շարվ 4,8x8,7 սմ:
93. *Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1850 ("):*
94. *Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1851 ("):*
95. *Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1852 ("):*
96. *Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1853 ("):*

97. *Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1854 ("):*

98. *Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1855 ("):*

99. Օրացույց: 1856 ամի: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1855:

100. Օրացույց 1857 ամի տեառն եւ Հայոց ՌՅՁ-1306 Հայոց թուականի: Թիֆլիս (Տիֆլիս), տպ. Ներսիսյան դպրոցի, 1856: 88 գծափակ էջ, 1 թ. նկ., շարվ. 22x10 սմ:

101. *Օրացույց: Թիֆլիս, տպ. Ներսիսյան դպրոցի, 1858 ("):*

102. Օրացույց եւ գուշակությունք օրոց 1859 թուականին Քրիստոսի եւ Հայոց ՌՅՇ: Թիֆլիս (Տիֆլիս), տպ. Ներսիսյան դպրոցի, 1858: 46 գծափակ էջ, շարվ. 10,5x6 սմ:

Թերթեր

103. **Կովկաս:** Քաղաքական, բանասիրական թերթ: Թիֆլիս, տպ. Ներսիսյան հոգևոր դպրոցի, 1846-1847, 4 էջ, (41x31 սմ): Խմբագիրներ՝ Հակոբ Կարենեանց, Միքայել Պատկանեանց, Հակոբ Արզանեանց: Լույս է տեսել շաբաթ օրերին:

104. **Մեղու Հայաստանի:** Քաղաքական, բանասիրական, առևտրական թերթ: Թիֆլիս, 1862⁴⁰ (41x50 սմ), տպ. Ներսիսյան հոգևոր դպրոցի, 1862: Խմբագիր Ստեփանոս Մանդինեանց:

Տպարաններն անհայտ

105. **Գերամբարձ յայտարարություն կայսեր Նիկողայոսի յաղագս պատերազմին ընդ Օսմանեան տերութեան: Նամակք Ռուսաց և Օսմանեան արտաքին գործոց նախարարաց և մեկնություն պատճառաց պատերազմին**⁴¹: Թարգմանություն ռուսերէնից: Թիֆլիս, 1828, 12 էջ:

106. **Մանուէլ Կիւմիշխանեցի**⁴²: Լուծ արմատոյ մերոյ: Տիֆլիս, 1832:

⁴⁰ 1862 թվականից սկսել է հրատարակվել տպարանատեր, հրատարակիչ Համբարձում Էնֆիաջեանցի տպարանում:

⁴¹ Հայր Արսեն Ղազիկյանը տեղեկությունը վերցրել է Հայր Գարեգին Զարբհանալեանցի Մատենագիտությունից: Ղազիկյանը այս գործը հիշատակել է «Նամակք Ռուսաց և Օսմանեան արտաքին գործոց նախարարաց և մեկնություն պատճառաց պատերազմին» (Գերամբարձ յայտարարություն կայսեր Նիկողայոսի յաղագս պատերազմին ընդ Օսմանեան տերութեան):

⁴² Այս գիրքը հիշվում է 1841 թվականին Կ.Պոլսի Օրթագյուղում գտնվող «Երից որդւոց Պողոսի Արապեան Ապուշեխցոյ» տպարանում տպագրված «Լուծ արմատոյ մերոյ: Յօրինեալ ի Մանուէլ վարդապետէ Ծախինեան Կիւմիշխանեցոյ, ի Տիֆլիս 1832» գիրքը: Տե՛ս **Պետրոսյանց Տիգրան, Միքեկանյան Տիրուհի**, Հնաստիպ,

-
107. Прописи армянские. В пользу Тифлисского Армянского и прочк Закавказских училищ. Տիֆլիս վայելչագրութեան⁴³: Тифлис, 1833: 11 թերթ, շարված, 17x20 սմ:
108. Прописи армянские. В пользу Тифлисского Армянского и прочк Закавказских училищ. Տիֆլիս վայելչագրութեան⁴⁴: Тифлис, 1840: 11 թերթ, շարված, 17x20 սմ:
109. Մանդինեանց Ստեփանոս: Օրինակ հայկական վայելչագրութեան: Գծագրեաց աւագ սարկաւագ Ստեփաննոս Մանդինեանց: Տպագրեալ հրամանաւ փոխարքային Կովկասու: Թիֆլիս⁴⁵, 1845, 12 թերթ: Շարվ. 24x15 սմ (շապիկի վրա «Վայելչագրութիւն Հայոց»):
110. Աղօթք հանգստեան ի յիշատակ հանգուցեալ Սերովբէ վարժապետի Պատկանեանց⁴⁶: Թիֆլիս, 1850, 25 էջ:
- Պատկանեանց Միքայէլ, Պարգեւ մանկանց: Թիֆլիս (Տփլիս), տպ. Ներսիսյան դպրոցի: Երրորդ հրատարակություն⁴⁷: 116 էջ, շարվ. 16,5x10 սմ:

Տիրուհի Միրելանյան

**Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տպարանի հիմնումը և
գործունեությունը (1819-1870 թվականներին)
Ամփոփում**

1819-1870 թվականներին Ներսիսյան հոգևոր դպրոցի հիմնադիր, Հայոց ապագա վեհափառ, այդ ժամանակ Վրաստանի թեմի հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոսի ստեղծած տպարանը եղել է Թիֆլիսի հայկական գրահրատարակչական, մշակութաստեղծ կարևորագույն կենտրոններից մեկը: Այն եղել է առաջին հայկական տպարանը Վրաս-

հագուագիտ, սովորական տպագիր գրքերի ձեռագիր յիշատակարանները պատմական սկզբնաղբիւր, «Էջմիածին», 2019, Զ, էջ 103, ծանոթագրություն 40:

⁴³ Վերնագիրը, տպագրության վայրը, տարին նշված է շապիկի վրա, տպարանի մասին տեղեկություն չկա: Այս ալբոմը տպագրվել է նաև 1840 թվականին:

⁴⁴ Նույն է նախորդի հետ:

⁴⁵ Տպարանը չի նշվել և անհայտ է:

⁴⁶ Գրքույկը չի պահպանվել:

⁴⁷ Տպագրության թվականն անհայտ: Երկրորդ հրատարակությունը եղել է 1856 թվականին, չորրորդը՝ 1862 թվականին: Ամենայն հավանականությամբ երրորդ հրատարակությունը եղել է Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանում մինչև 1860 թվականը, մինչև տպարանի փակվելը: Այդ է պատճառը, որ չորրորդ հրատարակությունն իրականացվել է Հ.Էնֆիաճեանցի տպարանում:

տանում: 1823 թվականից մինչև գոցվելը տպարանը իրականացրել է 80 անուն հրատարակություն: Այդ տպարանում է 1823 թվականին տպագրվել Վրաստանում առաջին հայերեն գիրքը, 1858 թվականին՝ առաջին հայերեն թերթը: Նույն թվականին այդտեղ է առաջին անգամ հրատարակվել հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի կամ Ողբ հայրենասերի» վեպը:

Тируи Сиреканян

Основание и деятельность типографии тифлисской семинарии

Нерсисян /1819-1870 гг./

Резюме

В 1512 г. в далеком итальянском городе Венеция Акоп Мегапарт заложил основы армянского книгопечатания. До XIX в. почти во всех близлежащих и дальних странах были открыты армянские типографии. И лишь в первом десятилетии XIX в. армянская типография наконец была основана в Тифлисе, с культурной точки зрения самом армянском городе на Кавказе. Автор статьи изучил историю первой типографии, основанной в Тифлисе при духовной семинарии Нерсисян.

Типография была приобретена для семинарии; вскоре в 1823 г. здесь была напечатана армянская книга, которая стала первой ласточкой армянского книгопечатания в Грузии. Чтобы представить проблему, автор применил методы комплексного исследования, сравнительного анализа и сопоставления, исследовал полувековую историю типографии в период с 1823 по 1870 гг., подтвердил, что в действительности типография была открыта в 1819 г., начала печатать книги в 1823 г., представил библиографический список книг, изданных типографией.

Tiruhi Sirekanyan

Foundation and activities of printing house of Nersisyan

tiflis seminary/ 1819-1870 /

Summary

Hakob Meghapart laid the foundations of the Armenian book printing in the distant Italian city of Venice in 1512. The Armenian printing houses have been opened in almost all the neighboring and distant countries until the 19th century. And only in the first decade of the 19th century an Armenian printing

house was finally established in Tiflis, being the most Armenian city in the Caucasus from the cultural point of view. The author of the article studied the history of the first printing house founded in Tiflis at the Nersisyan Theological Seminary.

The printing house was acquired for the seminary, and an Armenian book was published here soon in 1823, which became the first swallow of the Armenian book printing in Georgia. To present the problem, the author applied the methods of complex research, comparative analysis and comparison, investigated the half-century history of printing in the period from 1823 to 1870, confirmed that in reality the printing house was opened in 1819 and began printing books in 1823, as well as presented the bibliographic list of books published by the printing house.

Խմբագրություն է ուղարկվել 22.01.2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 06.02.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐՓԻՆԵ ԹՈՐԻԿՅԱՆ

Երևանի պետական հումանիտար քոլեջի
գարդակիրառական արվեստ և ժողովրդական
արհեստների ամբիոնի դասախոս
arpine0306@gmail.com

**ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՈՒՆԻ ԹԵՄԱՆ ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. կտավ, ստեղծագործություն, ցեղասպանություն, վիշտ, գաղթական, արվեստ, նկարիչ, ցուցահանդես, ժողովուրդ:

Ключевые слова и выражения: холст, произведение, геноцид, горе, мигрант, искусство, художник, выставка, народ.

Key words and expressions: canvas, artwork, genocide, grief, migrant, art, artist, exhibition, people.

Սարգիս Խաչատուրյանը սփյուռքահայ կերպարվեստի ականավոր դեմքերից մեկն է:

Նկարիչը ծնվել է 1886 թվականին Արևմտյան Հայաստանի Մալաթիա քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղական կրթօջախում, որտեղ և նկատվում է պատանի Սարգսի նկարչական ընդունակությունները: Տեղի իշխանությունների դիմումով Սարգիսը տեղափոխվում է Կարին (Էրզրում)՝ Սանասարյան վարժարան՝ ուսումը շարունակելու նպատակով¹: Վարժարանը ավարտելուց հետո Խաչատուրյանը մեկնում է Հոմ՝ ընդունվում Գեղարվեստի ակադեմիա, երեք տարի անց տեղափոխվում է Փարիզ, որտեղ և կրթությունը շարունակում է Դեկորատիվ արվեստների դպրոցում:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին հայ ժողովրդի ապրած ողբերգությունը, թերևս, հայ արվեստում լայն ընդգրկում ստացավ: Սուլթանական թուրքիայի կողմից կազմակերպված ռճրագործությունն իր արտահայտումը ունեցավ հատկապես այն արվեստագետների մոտ, որոնք անցել էին այդ դժոխքի միջով ու խորապես ապրել արհավիրքի ցավը: Սարգիս Խաչատուրյանն այդ արվեստագետներից մեկն էր, որի ստեղծա-

¹ Տեփոյան Պ., Սարգիս Խաչատուրյան, Արև, Կահիրե, 1947, 4-5 ապրիլ:

գործությունների մի զգալի մասը նվիրվեց հայ ժողովրդի պատմության դառն էջերին: Թերևս շատ դիպուկ Սարգիս Խաչատուրյանին անվանել են «Հայոց վշտի երգիչ» կամ «Հայաստանի երգիչ»²:

Խաչատուրյանը, շրջելով գաղթականերով լեցուն վայրերով, ամենուր հանդիպելով մարդկանց խմբերի, որ ապաստանել էին բացօթյա կացարաններում՝ եկեղեցիների շրջակայքում, իր նկարչական տետրակներում փորձում էր վերարտադրել այդ վշտալի տեսարանները: Ահա և բազմաթիվ էսքիզներից ստեղծվեց ավելի քան 500 նկար³:

Այդ ծանր օրերին հազարավոր մարդիկ ապաստան էին գտնում Կովկասի մի շարք քաղաքներում և գյուղերում: Անդրկովկասի մշակութային կենտրոն Թիֆլիսը դարձավ հայ պանդուխտների հիմնական կացարանը: Նորաբնակների մեջ էր Սարգիս Խաչատուրյանը: Նկարիչը Կովկասում՝ 1914-1917 թթ. ծավալում է ստեղծագործական եռանդուն գործունեություն՝ այցելում Թիֆլիս, Բաթում, Դիլիջան, Ալեքսանդրապոլ (այժմ Գյումրի), Ղարաբիլիսա (այժմ Վանաձոր), լինում է Երևանում և Էջմիածնում: 1916 թվականին մայր հողում գտնվելով, նկարիչը գերվում է Արարատով և Արարատյան դաշտավայրով: Օճվում են մի շարք գործեր՝ «Արարատ» (1916), «Արարատ» (1919), «Արարատ» (1921), «Արարատը և Արարատյան դաշտավայրը» (1916-1917), «Հայկական պար Արարատ լեռան դիմաց» և մի շարք այլ աշխատանքներ:

Պետք է նշենք, որ Խաչատուրյանի Հայոց ցեղասպանությանը նվիրված նկարների շարքը ծնունդ է առնում 1914 թվականից: Հենց 1914-ին է ստեղծվում արվեստագետի «Հայերի տեղահանությունը» կտավը:

Այդ ամենի հետ մեկտեղ Խաչատուրյանը ակտիվ գործունեություն է ծավալում հայապահպան կազմակերպությունների հետ, մասնակցում իրենց կողմից կազմակերպած ցուցահանդեսներին: Արդեն 1916 թվականին Խաչատուրյանը անդամակցում է Թիֆլիսում հիմնված «Հայ արվեստագետների միությանը» (ՀԱՄ): Միության կազմակերպած ցուցահանդեսների առթիվ ռուս բանաստեղծ և թարգմանիչ Սերգեյ Գորոդեցկին գրում է «Դժվար է խոսել Սարգիս Խաչատուրյանի մասին: Չափից դուրս շատ խնդիրներ է նա առաջադրում ինքն իրեն, անխոնջ որոնում է սեփական

² Կուրդիյան Կ., Սարգիս Խաչատուրյան, ցուցահանդեսի կատալոգ, Երևան, 1971: Տե՛ս նաև, Կուրդիյան Կ., Պանդուխտ նկարներ, Սովետական Հայաստան, Երևան, 1967, թիվ 4:

³ Ցավոք, այս նկարների մեծ մասը ցրված են աշխարհով մեկ: Դրանք պահվում են տարբեր թանգարաններում և մասնավոր հավաքածուներում, հայտվում աճուրդների տներում:

«Ես»-ը: Նրա ուշադրությունը գրավում են թե՛ բնանկարները, թե՛ կենցաղը, թե՛ ազգագրությունը, սակայն բոլոր որոնումներում երևում են բնածին տաղանդն ու չափազանց ճկուն վարպետությունը... Ծայրահեղ զգացմունքայնությունը նրա տաղանդը սփռում է չորս դին»⁴:

Խաչատուրյանի համար շրջադարձային էր 1919 թվականը. Պոլսում բացվեց նկարչի առաջին անհատական ցուցահանդեսը, որը մեծ արձագանք ունեցավ տեղի արվեստասերների մոտ, իսկ մամուլը նրան անվանեց ժամանակի տաղանդավոր արվեստագետներից մեկը:

Իր անհատական ցուցահանդեսում Խաչատուրյանը ցայտուն ու տիպական կերպով ներկայացնում է տառապած հայ կանանց և երեխաների, հայ ժողովրդի կրած դառնությունները և վիշտը: Մի շարք գործերում էլ նկարիչը պատկերում է տոկուն ժողովրդի առօրյան՝ սրանցում արտահայտելով տեղահանության դեգերումներում հասարակ ժողովրդի ազգային ավանդույթների, կենցաղավարության և հույսի պահպանման միտումները:

Աշխատանքներում գրեթե չեն երևում ցնցոտիավոր և ցավատանջ կերպարներ: Նրանց մոտ չկա հուսահատություն: Կտավների զաղափարական իմաստը կայանում է նրանում, որ արհավիրքների դիմանալով հայ ժողովրդի նորաբնակ հատվածը, հաստատվելով օտար ափերում, չկորցրեց ազգայինը, էթնիկ գծերը: Այս ամենը ցայտուն կերպով դրսևորվում է Խաչատուրյանի գործերում:

Ոգևորված իր հաջողություններով, 1920 թ. նկարիչը մասնակցում է Թիֆլիսում բացված «Հայաստանն ու հայ ժողովուրդը» խորագիրը կրող ցուցահանդեսին:

Տոկուն, դիմացկուն բնավորության տեր էր Խաչատուրյանը: Հենց այդ հատկանիշի տեսանկյունից է, որ լավատես արվեստագետի պատկերներում հայ գաղթականերին մոտ երևում է վերարտադրվելու հատկություն:

Ի դեպ, Խաչատուրյանի արվեստում քիչ չեն մայր ժողովրդի տոնական ավանդույթները արտահայտող թեմատիկ աշխատանքները: Դրանցից կարելի է առանձնացնել «Պարող սասունցիները», «Հարսանիքից առաջ», «Կլոր պար», «Հարսանեկան թափոք», «Տոն Վարագա վանքի մոտ», «Պարող սասունցիները» ստեղծագործությունները: Նշված կտավներում նկարիչը հասնում է գույնի ու լույսի վառ արտահայտմանը, իսկ մարդկային պատկերներն իրենց տոնական հագուստներով ինչ-որ տեղ դառնում են ազգագրական վկայություններ:

⁴ Միքայելյան Մ., Հույսի, սիրո մի աշխարհ, Հայաստանի ձայն, հ. 18, 29 ապրիլի, 1987:

Արվեստագետի գաղթականության թեմայով գրեթե բոլոր աշխատանքների հերոսները պատկերված են բնության մեջ, ծավ բաց երկնքի ֆոնին՝ «Հայ գաղթականներ», «Գաղթականներ», «Գաղթական որբեր», «Վանեցի կանայք», «Մասունցի կինը», «Գաղթական կանայք» :

Ստեղծագործությունները իրենց հնչեղ գույների շնորհիվ ձեռք են բերում տպավորիչ արտահայտչականություն: Երանգային ներդաշնակությունն ակնառու է արվեստագետի աշխատանքներում: Գույները նրբորեն մերվում են, մի գույնից մյուսին անցումը կտրուկ չէ, այլ սահուն, միևնույն ժամանակ ցայտուն:

Այդ կապակցությամբ արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանը իր «Բնանկարը և հայ նկարիչները» ուսումնասիրությունում գրում է. «...մենք կարող ենք Խաչատուրյանին համարել որպես 1915-1916 թվականներին Կովկասում խոնված տարագրության «գունագեղ երգիչը», որովհետև այդ պատմական բացառիկ շրջանում ոչ ոք այնքան ջերմ զգացմունքով ու գուրգուրանքով չի մոտեցել այդ թշվառների անցանկալի կյանքը պատկերելուն, որքան Ս. Խաչատուրյանը»⁵:

Խաչատուրյանի արվեստով հիացած՝ իրենց մեծարման խոսքերն են ասում թե՛ հայրենակից, թե՛ օտար մտավորականները: Գաղթականների թեմայով կազմված ցուցահանդեսներից մեկում ներկա է լինում ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերը: Վերջինս իր հիացմունքի խոսքում ասում է. «Այս արուեստագետը Հայրենասեր է: Գիտե՞ գտնե՞լ ուժգնութիւնը, որպէսզի ներկայացնէ իր գութը, ահաւոր տառապանքը, թրթռացնելու համար սիրտերը, և շարժելու համար խիղճերը՝ դժբախտներու հանդէպ»⁶: Իսկ Հայր Ներսես Ակիւնյանը Խաչատուրյանի նկարներից ստացած տպավորությունը արտահայտել է հետևյալ տողերով. «Հայ հայրենիքը իր հսկայ Մասիսով, հայ հայրենիքը՝ իր նուիրական կոթողներով, հայ հայրենիքը՝ իր ուրախութեան և սուգի ժամերուն, խնջոյք, հարսանիք, սուգ և տարագրութիւն: Ահա՛, այն աշխարհը, որուն դռները կը բանայ մեզի նկարիչը, ցոյց տալու հեռավորին և մերձաւորին հայ աշխարհը: Ամէն ինչ նկատուած և նկարուած են արեգական լուսով, կենդանի, խօսուն»⁷:

Մեծանուն գրող Հովհաննես Թումանյանը հմայված Խաչատուրյանի արվեստով գրում է. «Սարգիս ջան, ինչ որ դու պարզել էս մեզ քո վրձնով,

⁵ Շիշմանյան Ռ., *Բնանկարը և հայ նկարիչները*, Երևան, 1958 «Հայպետհրատ», էջ 342:

⁶ Սարգիս Խաչատուրեանի մահվան 10-ամյա տարելիցի առթիվ, Լոյս Փարիզի, Փարիզ, 1958, թիվ 4-10, էջ 3:

⁷ Սարգիս Խաչատուրեանի մահվան 10-ամյա տարելիցի առթիվ, Լոյս Փարիզի, Փարիզ, 1958, թիվ 4-10, էջ 3:

մենք չենք կարող վերարտադրել մեր գրչով: Քո այս կտավները օտարներին լավագույնս պիտի ծանոթացնեն մեր ժողովրդի տառապանքների հետ»⁸:

Այդ ամենից բացի Ավետիք Իսահակյանը Խաչատուրյանին անվանում է «Ազգային մեծ նկարիչ», ավելացնելով. «Մենք գրչով չենք կարող տալ այն, ինչ որ դու անում ես վրձինով»⁹:

Խաչատուրյանի լավագույն աշխատանքներից է «Հայ գաղթականներ» խորագրով կտավը: Այն, գույների հնչեղ ներկայանակով, առաջին իսկ հայացքից գրավում է դիտողի ուշադրությունը: Սրանք տաք ու վառ երանգներ են՝ կարմիր, դեղին, մանուշակագույն: Բազմաֆիգուր այս կոպզիցիան պատմում է հայ գաղթականների մասին, որոնք, Օսմանական կայսրության իշխանության դեկին կանգնած երիտթուրքական կուսակցության կողմից հալածանքների ենթարկվելով, թողել են իրենց տունն ու տեղը, բռնել գաղթի ճանապարհը: Կտավում առանձնահատուկ ուշադրության է արժանացել յուրաքանչյուր կերպար: Բազմաֆիգուր նկարի կերպարները, իրենց բնորոշ շարժումներով ու կեցվածքով տարբերվում են մեկը մյուսից: Կարմիր տարագով պատանին խմբի ամենամեծ տղան է: Թեպետ դեռ տղամարդ չէ, սակայն գլխիկոր է, մտածմունքների մեջ: Ահա մի աղջնակ, որ դեռ փոքր է, սակայն իր գրկում է պահում մի փոքրիկ մանչուկի: Նրանք ստիպված են եղել ժամանակից շուտ հասունանալ, թողնելով ուրախ, անհոգ խաղն ու պարը: Նրանք բոլորը լուռ կանգնած են՝ կարծես դեռ խորապես չգիտակցելով իրենց վրա եկած արհավիրքը: Նկարի ձախ անկյունում, մեջքը ծառին հենած, աչքերը վար խոնարհած նստած է տարեց մի կին, որի մոտ երևում է անորոշության զգացումը: Ինչպիսին են պատկերացնում իրենց վաղվա օրը, մեծ է արդյոք հույսը, որ կկարողանան տոկալ ու վերածնվել՝ դժվար է ասել, բայց նկարում պատկերված վարդագույն ամպերը վաղվա օրվա փրկության հույսն են ավետում, հույս, որ նկարչի հոգում երբեք չի մարել:

1923 թվականին Փարիզում Սարգիս Խաչատուրյանը կազմակերպում է իր հերթական ցուցահանդեսը: Մեծ գործարար և բարերար Գալուստ Գյուլպենկյանը, որ ներկա էր ցուցահանդեսին, Խաչատուրյանից գնում է երեք

⁸ Հարցազրույց արուեստագիտուհի Վալա Խաչատուրեանի հետ, Յառաջ, Փարիզ, 1967, տե՛ս նաև, Վարսյան Շ., Փշեր ու վարդեր, Հայրենիքի ձայն, Երևան, 1974, 24 ապրիլ: Խաչատուրեան Ա., Նկարչուհի Վալան Սարգիս Խաչատուրեանի մասին, Սփյուռք, Բեյրութ, 1971, 14 մարտ:

⁹ Հարցազրույց արուեստագիտուհի Վալա Խաչատուրեանի հետ, Յառաջ, Փարիզ, 1967, տե՛ս նաև, Խաչատուրեան Ա., Նկարչուհի Վալան Սարգիս Խաչատուրեանի մասին, Սփյուռք, Բեյրութ, 1971, 14 մարտ:

աշխատանք¹⁰: Մի շարք կտավներ, որոնք ներկայացնում էին Մեծ Եղեռնի թեման, գնեց հայ ադամանդավաճառ Արմենակ Համբարձումյանը:

Երկրորդ աշխարհամարտի նախաշեմին, զգալով հետամուտ վտանգը, Խաչատուրյանը իր կտավների մի զգալի մասը ուղարկում է Վենետիկ՝ Սուրբ Ղազար եկեղեցու թանգարան, ուր մինչ այսօր էլ պահվում են:

Ոչ պակաս հաջողությամբ է պսակվում 1925 թվականին կազմակերպված Խաչատուրյանի ցուցահանդեսը: Այդ առիթով անգլիացի մեծ նկարիչ Ֆրենկ Բրենգվիլնը գրում է. «Նրա զգայուն հոգին կրցած է ըմբռնել այն ինչ որ հոյակապ է իր երկրին բնութեան մեջ, ինչ որ կայ տխուր, ճակատագրային խեղճ տեղահան հայերու կեանքին մեջ: Մենք պետք է երախտապարտ ըլլանք արուեստագետին որ մեզի ծանօթացուց իր երկիրը այնքան պատկերալից, որուն գեղեցկությունը չէ նշմարուած մեր եւրոպացի նկարիչներէն: Խաչատուրեան իր երկրին ազգային նկարիչն է, իր վառ ու հարուստ գոյներով, զգացումի խորութիւնով ու արտայայտութեամբ: Իրեն բարի գալուստ կը մաղթենք Եւրոպայի արուեստի աշխարհին մեջ»¹¹:

Մեծ էր Խաչատուրյանի սերը իր ժողովրդի հանդէպ: Շրջելով աշխարհով մեկ, լինելով Եվրոպայի խոշորագույն քաղաքներում՝ Ամստերդամ, Օսլո, Կոպենհագեն, Բրյուսել, Անտվերպեն արվեստագետը ներկայացնում էր կոտորածից մազապուրծ եղած հայ գաղթականների պատկերող իր աշխատանքները: Նրա նպատակն էր, իր արվեստը սփռել աշխարհով մեկ, Եվրոպային ցույց տալ մարդկության դեմ կատարված ոճրագործությունը՝ հայ ժողովրդի վիշտը:

¹⁰ Նշենք, որ Գյուլպենկյանի գնած երեք աշխատանքներն էլ նվիրված էին հայ գաղթականների թեման:

¹¹ Զաքարյան Ռ., Հրաշալիքների աշխարհում, Սովետական արվեստ, Երևան, 1981, թիվ 7, տե՛ս նաև, Խաչատուրեան Ա., Նկարչուհի Վավան Սարգիս Խաչատուրեանի մասին, Սփյուռք, Բեյրութ, 1971, 14 մարտ: Memorial exhibition paintings by Sarkis Katchadourian, grand central art galleries, INC., New York, 1948. Brangwyn Frank, Exposition Sarkis Katchadourian, Armenie-Egypte, Anvers, 1925.

Արփինե Թորիկյան

**Հայոց Մեծ եղեռնի թեման Սարգիս Խաչատուրյանի
ստեղծագործություններում
Ամփոփում**

Սփյուռքահայ կերպարվեստի երևելի դեմքերից մեկի՝ Սարգիս Խաչատուրյանի արվեստում գերակշռող մաս է կազմում Հայոց Մեծ եղեռնի թեման: Լինելով աշխարհի տարբեր մասերում, Խաչատուրյանը իր կտավներով բողոքի ձայնն է բարձրացնում 20-րդ դարում մարդկության հանդեպ կատարված մեծագույն ոճրագործության դեմ:

Սարգիս Խաչատուրյանի հայ գաղթականներին նվիրված նկարների շարքը ոչ միայն պատմական ակնարկ է, այլև գեղարվեստական իմաստով բարձրաժեք գործեր: Դրանք իրենց թեմատիկ, ինքնատիպ գունային և բնութագրական իմաստով դասվեցին հայ կերպարվեստի աննման գոհարների շարքում:

Հոդվածում համառոտ ներկայացվում է Սարգիս Խաչատուրյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը, անդրադարձ է կատարվում Հայոց Մեծ եղեռնից մազապուրծ եղած գաղթականներին, բերվում աղբյուրային նոր փաստեր, իսկ աշխատանքներին տրվում արվեստաբանական մեկնաբանումներ:

Арпи́не Тори́кян

**Тема Армянского Геноцида в работах Саргиса Хачатуряна
Резюме**

Тема Геноцида армян составляет преобладающую часть творчества одного из самого яркого представителя армянской диаспоры - Саргиса Хачатуряна. Находясь в разных странах мира, Хачатурян своими работами показывает свой протест против величайшего преступления 20-ого века.

Серия работ Саргиса Хачатуряна, посвященная армянским мигрантам, - это не только исторический обзор, но и произведения с высокой художественной значимостью. Они являются одним из уникальных жемчужин армянского изобразительного искусства по своему тематическому, своеобразному и колоритному описанию.

В статье кратко представлена жизнь и творческая деятельность Саргиса Хачатуряна, рассказывается о мигрантах, спасшихся от Геноцида армян, приводятся факты из новых источников и дается художественная интерпретация произведений.

Arpine Torikyan

The theme of the Armenian Genocide in Sarkis Katchadourian's art

Summary

The theme of the Armenian Genocide constitutes the overwhelming part of the work of one of the significant representatives of the Armenian diaspora - Sarkis Katchadourian. A series of works by Sarkis Katchadourian dedicated to Armenian emigrants is not only a historical overview but also works of high artistic significance. They are one of the unique gems of the Armenian fine arts in terms of their thematic, colorful and descriptive characteristicness.

The article briefly presents the life and creative activity of Sarkis Katchadourian refers to the migrants, who escaped from the Armenian Genocide, brings new source facts, and gives artistic interpretations of the works.

Խմբագրություն է ուղարկվել 14.06.2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 01.07.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԻ
ԱՐՎԵՍՏՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. իմպրեսիոնիզմ, հայաստանյան շրջան, ստեղծագործություն, պատկեր, ներկապնակ, բնանկար, Սոցիալիստական ռեալիզմ, պլան, տեսարան, քաղաքային բնանկար

Ключевые слова и выражения: импрессионизм, армянский период, творчество, изображение, палитра, пейзаж, социалистический реализм, план, вид, городской пейзаж.

Key words and expressions: impressionism, Armenian period, creation, icon, palette, Landscape, Social realism, plan, scene, city landscape

Գեղանկարիչ, արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանը (1885-1959) հայ արվեստի կարկառուն դեմքերից մեկն է: Նրա ստեղծագործական և արվեստաբանական գործունեությունը դեռևս ամբողջությամբ լուսաբանված չէ: Հռոլվածում քննության առարկա են դարձել արվեստագետի՝ գեղանկար աշխատանքները, որոնք և բաժանել ենք երկու շրջանի՝ ֆրանսիական և հայաստանյան: Մեր խոսքում անդրադարձ է կատարվում արվեստագետի հայաստանյան շրջանին պատկանող այն կտավներին, որոնցում առավել արտահայտված են Հայաստանի գեղատեսիլ վայրերին բնորոշ առանձնահատկությունները և ժամանակի՝ Սոցիալիստական ռեալիզմի արձագանքները:

Իր ժողովրդի մշակութային վերելքով խանդավառված՝ 1947 թվականին Ռաֆայել Շիշմանյանը Ֆրանսիայից ներգաղթում է Սովետական Հայաստան: Օտար ափերում ստեղծագործող արվեստագետի համար հայրենիքից բխող երազային կարոտը դառնում է իրականություն: Դեռ Ֆրանսիայում ապրելու տարիներին մեկ առիթով մայր հողի կարոտով տենչող արվեստագետը գրել է. «Փարիզը գեղեցիկ քաղաք է, Ֆրանսիան չքնաղ բնութիւն ունի, սակայն ինձ համար օտար է: Ես օր ու գիշեր տառապում էի իմ հայրենիքի, ինձ ծնող հարազատ ժողովրդի կորստով ու երազում էի այն օրը, երբ ես էլ իմ ժողովրդի հետ կ'ապրեմ Արարատի դեմ-

դիմաց և հնարատրություն կ'ունենամ իմ վրձինն ու գրիչը ի սպաս դնել սովետահայ կերպարուեստին...»¹:

Սայր հայրենիքը գրկաբաց ընդունեց իր զավակին: Շիշմանյանը դառնում է Հայաստանի նկարիչների միության անդամ, հրատարակում բազմաթիվ տեսական հոդվածներ և գրքեր, դասավանդում Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, իսկ 1956 թվականին արժանանում ԽՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման:

Հայաստան վերադառնալուն պես հասարակական գործունեության հետ մեկտեղ Շիշմանյանն անցնում է ստեղծագործական փնտրտուքների: Հմուտ արվեստագետը ջերմ խանդավառությամբ նվիրվեց հայրենի բնաշխարհի ուսումնասիրմանն ու պատկերմանը:

Բնությամբ հրապուրված, նրա բոլոր գաղտնիքները ուսումնասիրած նկարիչը մայր հողում գտնում է լիովին այլ միջավայր, այլ կոլորիտ և, իհարկե, Հայաստանյան բնաշխարհին հարիր հոգեհարազատ տեսարաններ: Լինելով Երևանի շրջակայքում, Արարատյան դաշտավայրի տարբեր վայրերում, Ծաղկաձորում, Սևանում՝ Շիշմանյանը ստեղծում է մի շարք մնայուն գործեր: Մասնակցելով Ժողովրդական նկարիչ Գաբրիել Գյուրջյանի գլխավորած «Նկարիչների շրջիկ արվեստանոցի» այցերին² լինում է Լոռիում և Զանգեզուրում՝ վրձնում տարածաշրջանի ամենաբնութագրական տեսարանները: Ի դեպ, հենց բնության գրկում ստեղծված աշխատանքներից առավել հաջողվածները Շիշմանյանը ներկայացնում էր Կերպարվեստագետների միության տարեկան ցուցահանդեսներին:

Հայաստանյան բնաշխարհի հանդեպ սիրով լցված վարպետն առույգ և աշխույժ, եռանդով և զգացմունքով օր ու գիշեր ստեղծագործում է հայրենի հողի վրա, հարազատ միջավայրում ու երազած վայրերում:

Պետք է նկատենք, որ Հայաստանում արված Շիշմանյանի բնանկարների կատարման բարձր կուլտուրան գալիս է դեռ Փարիզի Գեղարվեստի և զարդարվեստի վարժարանի, ապա Շյուլիան ակադեմիայի դասընթացներից: Ապրելով փարիզյան միջավայրում, կրթվելով մեծանուն

¹ **Ստ. Կուրտիկեան**, «Ռաֆաել Շիշմանեան, Բազմավաստակ նկարիչն ու հայրենասերը», Արարատ, 31 մայիսի, 1960, էջ 3:

² Հայաստանի նկարիչների շրջիկ արվեստանոցը (նախկին ՀԽՍՀ կուլտմինի նկարչական շրջիկ արվեստանոց-ցուցահանդես), հիմնադրվել է 1939 թվականին: Այն կազմակերպել է ստեղծագործական արշավախմբեր Հայաստանի տարբեր տարածքներում և նրա սահմաններից դուրս: Արվեստագետների նվիրած աշխատանքների շնորհիվ էլ կազմակերպվել են շրջիկ ցուցահանդեսներ, իսկ ստեղծագործությունների մի մասը նվիրաբերվել ակումբներին, գրադարաններին, դպրոցներին:

վարպետների մոտ, շփվելով հանրահայտ արվեստագետների հետ՝ Շիշմանյանը ձեռք էր բերել իր մշակված պատկերառճը, որն այժմ էր ընկնում գեղանկարչական թարմությամբ և կատարողական վարպետությամբ:

Անդրադառնալով Շիշմանյանի հայաստանյան բնակարաններին՝ հարկ ենք համարում նկատել ի տարբերություն Ֆրանսիայում կատարած թեթև և իմպրեսիոնիստական վրձնահարվածներով կտավների՝ Հայաստանում փոքր-ինչ փոփոխվում է Շիշմանյանի նկարչաձևը: Պատկերվող մոտիվի հետ ուղղակի հարաբերության պրոցեսում նկարիչը սկսում է ուշադրություն դարձնել ծավալների վրա: Լոկալ գույնի և մասսայի շնորհիվ նկարիչը վերարտադրում է ձևերի ռելիեֆությունը, դրանց իրեղեն, նյութական հատկանիշների զգացողությունը, իսկ թրթռուն վրձնահարվածներին փոխարինելու է գալիս հստակ գծանկարը՝ թերևս ինչ-որ տեղ կորցնելով ֆրանսիական շրջանի գեղանկարչական արտահայտչաձևերը: Սակայն իմպրեսիոնիստ նկարչի արվեստը միայն մասնակի փոփոխությունների ենթարկվեց. նրա համար առաջին տպավորությունից ստացած գունալուսային էֆեկտները, մոտիվի թեթև-եթերային մեկնությունը մնաց հոգեհարազատ ու առաջնային:

Շիշմանյանի հայաստանյան շրջանի ստեղծագործություններում առանձնահատուկ տեղ է գրավում Գյումուշգետի ամբարտակի և միջավայրի պատկերումը: Սրանցում՝ նորակառույցները, սարերն իրենց մոնումենտալ և դեկորատիվ ձևերով վերարտադրում են վեհաշունչ բնության և մարդկային գործոնի համադրումը՝ իհարկե ընդհանուր առմամբ բնորոշելով Սոցիալիստական ռեալիզմի գաղափարախոսությունը:

Դրանցից առավել ինքնատիպ է կատարված «Գյումուշգետի ամբարտակը» (1951) նկարը: Այստեղ կանաչի, օխրայի, կապույտի յուրօրինակ ներդաշնակությունը շահեկան է դարձնում աշխատանքը, իսկ նկարում առկա մարդկային փոքրաչափ ֆիգուրները կենդանություն և իմաստալից են դարձնում պատկերի թեմատիկան՝ Սոցռեալիզմի միտումներին հարիր աշխատավորի հաղթական կերպարը:

Պահպանելով քնարական մեղմ նկարչաձևը՝ Շիշմանյանը դիմեց իր համար լիովին նոր թեմաների, որոնք էլ իրենց հերթին նկարչի արվեստին հաղորդեցին նոր որակ: Ընդհանրապես տոտալիտար ռեժիմի ցանկություններին և հովանավորություններին ենթարկվելով՝ արվեստագետները ստեղծեցին բազմաթիվ տրաֆարետային գործեր, սակայն, պետք է նշել, որ դրանց կողքին ի հայտ եկան բարձրարժեք ստեղծագործություններ, որոնք համարվեցին տվյալ ժամանակաշրջանի մշակութային լավագույն արժեքները: Հիշենք Հովհաննես Զարդարյանի «Սևանգետի շինարարների հաղթանակը» մեծաչափ կտավը, Դուկաս Զուբարյանի կերտած «Անընկճելին»,

ապա 1954-ին «Ելի՛ր, ում կյանքը անիծել է» աշխատանքները և այլն: Այդ առիթով արվեստի գործիչ Քնարիկ Վարդանյանը գրում է. «Լինելով խորաթափանց արվեստագետ՝ նա տեսավ վերակառուցվող նոր Հայաստանը և զգաց նրա հեռանկարների ուժը: Շինարարական թեման նա չըմբռնեց իբրև պատմական փաստ, այլ նրա մեջ տեսավ հավերժության գաղափարը, հայ ժողովրդի ոգին, նրա ապրելու կորովը: Տեսավ խստաշունչ ժայռերի, լեռների վերափոխումը, տեսավ Գյումուշգեսը, արհեստական ջրանցքներ, էլեկտրակայաններ, պատկերեց կանաչ դաշտերն ու ծաղկող ծառերը: Այդ բոլորը վարպետի երկար տարիների երազանքներն էին»³:

Ոչ պակաս հետաքրքրական են Հայաստանում կատարած նկարչի քաղաքային բնանկարները: Դրանցից կարելի է առանձնացնել «Մանկական երկաթգիծը. Երևան» (1952) և «Օպերային թատրոնի շենքը. Երևան» (1950) աշխատանքները: Սրանցում ուշագրավ են ինքնատիպ հորինվածքը, կիզիչ արևի լույսը, դեպի խորքը տարածվող լայնարձակ կապույտ երկինքը, որի վրա սպիտակ ամպերի վազող քուլաներն են: Մասնավորապես «Օպերային թատրոնի շենքը. Երևան» ստեղծագործությունում երկինք սլացող բարդիներն իրենց արևահամ երանգներով ու փոքր ինչ թեք կեցվածքներով բնանկարին տալիս են ամառվա կեսօրյա պահի թափառող գեփյուռի շունչը: Երկու աշխատանքներում էլ երրորդ պլանում երևում են սարերը, որոնք իրենց ամրակազմ լանջերով և գունային լուծումներով շեշտում են խաղաղ երկնքի թեթևությունն ու տարածականությունը: Ջրանցքների ջրերի աշխույժ վազքը ռիթմիկ տպավորություն թողնում կտավներին: Աշխատանքներում նկարիչն իրեն հատուկ նկարչաձևով պահպանում է շարահյուսվածքի դասական մոտեցումն ու մակերեսի ավանդական մշակումը՝ մնալով միշտ իր անհատականության սահմաններում:

Շիշմանյանի հայաստանյան շրջանի աշխատանքներից առավել աչքի են ընկնում «Ձմեռը իմ լուսամուտից» (1948), «Ծաղկաձորի պիոներական ճամբարը» (1948), «Արարատն աշնանը» (1948), «Մի անկյուն Թումանյան գյուղում» (1952) բնապատկերները, որոնք կատարված են մեղմ ներկապնակով ու քնարական մոտեցմամբ՝ մի բան, որն ինչ որ չափով հիշեցնել է տալիս նկարչի ֆրանսիական շրջանը:

«Մի անկյուն Թումանյան գյուղում» (1952) ստեղծագործությունում պատկերված է խաղաղ մի տեսարան՝ չորս-հինգ գյուղական տնակներով: Հեռվում երևում է հայկական բնաշխարհին բնորոշ միայնակ բարդի, իսկ հորիզոնում կապույտով շղարշված վեհ լեռն է: Բնանկարում տիրապետող

³ Ք.Վարդանյան, «Ռաֆայել Շիշմանյան», Հայրենիքի ձայն, 11 նոյեմբերի, 1970, հ. 45, էջ 6:

լիրիկ անդորրը համակում է մարդու հոգին, նրան փոխադրում լեռնային չքնաղ բնության ծոցը:

Բնանկարչի շրջագայության արդյունքում ստեղծված լավագույն աշխատանքներից է «Գորիս. բնանկար» (1954) կտավը: Օխրայի, կանաչի, կարմրաշագանակագույնի երանգները, միմյանց միահյուսվելով, ստեղծվում են յուրահատուկ ներկայակ: Գտնվելով հայկական լեռնաշխարհի չքնաղ անկյուններից մեկում՝ հողմահարված, սլացիկ ժայռերի առաջ, լեռնային կապույտ ու ջինջ երկրակամարի տակ, դիտողը ինչ-որ անբացատրելի հանգստության և կարոտի զգացում է ապրում:

Շիշմանյանի քաղաքային բնանկարների շարքում առանձնանում է «Երևանի տեսարան» (1948) կտավը: Փոքրաչափ աշխատանքում գեղանկարիչը պատկերել է երևանյան մի գեղեցիկ համայնապատկեր, որտեղ արտահայտված է հեռանկարային գրագիտությունը. առաջին պլանում ծառերն են, երկրորդ պլանում շենքերը, իսկ ետին պլանում՝ բիրլիական լեռը: Վարպետորեն գտած կապտականաչավուն երանգները աշխատանքին տալիս են օդայնության և տարածակայնության զգացում:

Ամփոփելով մեր խոսքը՝ նշենք, որ գեղանկարիչ և արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանը իր արվեստով նոր ու թարմ շունչ բերեց հայ կերպարվեստի անդաստանում: Թե՛ Ֆրանսիայում, թե՛ Հայաստանում ստեղծած նրա աշխատանքները իրենց կատարողական բարձր կուլտուրայով և քնարական նրբագրով նոր լիցք ու թարմ շունչ տվեցին հայ արվեստին:

Ռուզան Անանյան

Հայաստանյան պատկերները Ռաֆայել Շիշմանյանի արվեստում

Ամփոփում

Հոդվածում ներկայացված է գեղանկարիչ և արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանի (1885-1959) ստեղծագործական գործունեության հայաստանյան շրջանը:

Շիշմանյանի ստեղծագործությունները բաժանել ենք երկու շրջանի՝ ֆրանսիական և հայաստանյան: 1947 թվականից տեղափոխվելով Սովետական Հայաստան՝ վարպետը վրձնել է շուրջ երեք տասնյակ գեղանկարներ, որոնք իրենց կատարողական կուլտուրայով և ինքնատիպ հորինվածքներով համարվեցին հայ կերպարվեստի դասական գոհարներ: Գեղանկարչի ստեղծագործություններն այսօր իրենց ուրույն տեղն ունեն թանգարաններում և մի շարք մասնավոր հավաքածուներում:

Ցավոք, Շիշմանյանի արվեստի մասին առ այսօր ամփոփ խոսք չկա: Հոդվածը ևս մեկ փորձ է լրացնելու այդ բացը:

Հոդվածի շրջանակներում հակիրճ անդրադարձ է կատարվում արվեստագետի կենսագրությանը, բերվում են Հայաստանում ստեղծած կտավներից լավագույն օրինակները, տրվում է վերլուծական խոսք, նշվում դրանց առանձնահատկությունները:

Рузан Ананян

Армянские виды в искусстве Рафаэла Шишманяна

Резюме

В статье представлен армянский период творчества живописца и искусствоведа Рафаэла Шишманяна /1885-1959/.

Творческое наследие Шишманяна мы разделили на два периода: французский и армянский. С 1947 года художник обосновался в Советской Армении и в этот период создал около трехста живописных работ, которые своей исполнительской культурой и самобытной композицией считаются классикой армянского искусства. Произведения живописца имеют свое место в музеях и частных собраниях.

К сожалению, об искусстве Шишманяна до сегодняшнего дня нет полноценной оценки. Статья является попыткой восполнить этот пробел.

В материале кратко представлена биография художника, представлен анализ лучших произведений рассматриваемого периода.

Ruzan Ananyan

Armenian pictures in Raphael Chichmanian's art

Summary

The article presents the Armenian period of creative activity of painter-art critic Rafael Chichmanian (1885-1959). We have divided Chichmanian's works into two periods: French-Armenian. Moving to Soviet Armenia in 1947, the master painted about thirty paintings, which with their performance culture and original compositions were considered classic treasures of Armenian fine arts. Today, the artist's works have a special place in museums and in a number of private collections.

Unfortunately, until today there is no even one holistic word about Shishmanyan's art.

This article's another attempt to fill that gap. In the article, a brief reference is made to the artist's biography, the best examples of the paintings created in Armenia are given, an analytical speech is given, their peculiarities are mentioned.

Խմբագրություն է ուղարկվել 22.06.2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 05.07.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

ԴԵՎԻ ԴԵՐԵՐԳԸ ԲԵԳԼԱՐ ԱՄԻՐՋԱՆԻ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Բանալի բառեր և արտահայտություններ. Բեզլար Ամիրջան, Անտոն Ռուբինշտեյն, «Դև» օպերա, Մ. Յու. Լերմոնտով, Չայսերական Մեծ թատրոն, Դևի «Проклятый мир» արիա-մենախոսությունը, Դևի «На воздушном океане» ռոմանսը, երդումը ֆինալում «Клянусь я первым днем рождения»:

Ключевые слова и выражения: Беглар Амирджан, Антон Рубинштейн, опера «Демон», М.Ю.Лермонтов, Московский императорский театр, ария-монолог Демона «Проклятый мир», романс Демона «На воздушном океане», финальная клятва «Клянусь я первым днем рождения».

Keywords and expressions: Beglar Amirjan, Anton Rubinstein, opera "The Demon", M.Yu. Lermontov, Moscow Imperial Theater, the Demon's aria-monologue "The Cursed World", the Demon's romance "On the Air Ocean", the final oath "I swear on my first birthday".

Ներածություն

Ծանրակշիռ է հայ երգիչ, Միլանի կոնսերվատորիայի շրջանավարտ, Մոսկվայի մեծ (1895-1903), Թիֆլիսի արքունական թատրոնների (1903-1904), Պետերբուրգի ժողովրդական տան օպերայի (1904-1916) մենակատար Բեզլար Աստվածատուրի Ամիրջանի¹ (Ամիրջանյան, 1868-1935) դերը հայ կատարողական արվեստում, մասնավորապես՝ երգարվեստում: Նա հայ պրոֆեսիոնալ երաժշտական-կատարողական արվեստի պատմության մեջ մտավ գնահատելի ու մեծակշիռ ավանդով և իր արժանի տեղը գրավեց հայ բեմի առաջին խոշոր վարպետների շարքում՝ դառնալով հայ առաջին բարիտոնը:

Իր պրոֆեսիոնալ բարձր մակարդակով տաղանդավոր երգիչը փայլել է թե՛ իտալական քաղաքների, թե՛ Մոսկվայի, Պետերբուրգի և ռուսական այլ քաղաքների, այդ թվում՝ Իրկուտսկի, Կիևի, Նովոչերկասսկի, Սևաստոպոլի, Միմֆերոպոլի, Կազանի, Սարատովի, Թեոդոսիայի, Յալթայի, Ժիտոմիրի, Թիֆլիսի, Ռոստովի, Վլադիկավկասի, Պերմի, Ղարսի,

¹ Ամիրջան ազգանունը Բեզլար Ամիրջանյանն ինքն է իր համար ընտրել՝ պրոֆեսիոնալ կարիերայի սկզբում: Տարբեր աղբյուրներում հանդիպում են Ամիրջան, Ամիրջանյան, Ամիրջանյանց:

Ալեքսանդրապոլի բեմերում: Բ.Ամիրջանի խաղացանկն ընդգրկել է շուրջ 50 օպերաների, այդ թվում՝ Ամոնասար («Աիդա»), Ռիգոլետտո («Ռիգոլետտո»), Ժերմոն («Տրավիատա»), Կոմս դի Լունա («Տրուբադուր»), Մեֆիստոֆել («Ֆաուստ»), Էսկամիլիո («Կարմեն»), Տոնիո («Պայացներ»), Դև («Դև»), Ռուսլան («Ռուսլան և Լյուդմիլա»), Տոմսկի և Իշխան Ելեցկի («Պիկովայա դամա») և այլն, բարիտոնային դերերգերը: Երգչի կատարումներին արձագանքել է ժամանակի հայալեզու և ռուսալեզու մամուլը՝ «Киевская газета», «Театр и искусство», «Русская музыкальная газета», «Новости дня», «Петербургский листок», «Тифлисский листок», «Крымский курьер», «Биржевые ведомости», «Новое время», «Русь», «Տարագ», «Հորիզոն», «Մշակ» ևն:

19-րդ դարավերջին և 20-րդ դարակզբին ռուսական երաժշտական շրջանակներում հայտնի, մեծ հաջողությունների հասած և բարձր գնահատականների արժանացած հայ երգիչը համարվել է «ռուսական երաժշտական թատրոնների ամենաշնորհալի բարիտոններից մեկը, որ անմոռանալի է մնացել արևմտաեվրոպական և ռուսական կլասիկ օպերաների մի շարք դերերգերի հմուտ ու նրբարվեստ կատարումով»²:

Մեր նպատակն է՝ ներկայացնել Անտոն Ռուբինշտեյնի «Դև» օպերայի և Դևի դերերգի նշանակությունը Բեզլար Ամիրջանյանի ստեղծագործական ձևակառուցում:

Անտոն Ռուբինշտեյնի և Բեզլար Ամիրջանի ծանոթությունը

Ռուս ականավոր երաժշտի և ապագա երգչի ծանոթությունը տեղի ունեցավ Պետերբուրգում, 1886 թվականին:

Հայ երաժշտության դասական Մակար Ելմայանի հրավերով Բեզլար Ամիրջանը ժամանել էր Պետերբուրգ և այդ ժամանակ երգում էր Պետերբուրգի Սուրբ Կատարինե հայկական եկեղեցու երգչախմբում՝ կատարելով նաև պատարագի կարևոր մեներգային հատվածները:

Առաջին իսկ Պատարագն անցնում է լեփ-լեցուն եկեղեցում, քանի որ եկեղեցի հաճախող հասարակությունը գիտեր, որ ձևավորվել է նոր երգչախումբ լավագույն հայ երիտասարդ ձայներից: Ամիրջանի ձայնը մեծ տպավորություն է թողնում Պետերբուրգի հայկական եկեղեցի հաճախող հասարակության վրա: Երիտասարդ բարիտոնի ձայնը անտարբեր չի թողնում նաև հայ մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն: Վերջինս, ոգևորված պատանու տաղանդով, հաջորդ պատարագին գալիս է իր ընկերոջ՝ դաշնակահար, կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ,

² Թադևոսյան Ա., Բեզլար Ամիրջան, Երևան, Հայկական թատերական ընկերություն, 1975, էջ 4:

երաժշտական-հասարակական գործիչ, ռուսական առաջին կոնսերվատորիայի հիմնադիր և առաջին տնօրեն Անտոն Ռուբինշտեյնի հետ: Ինչքան տպավորիչ է եղել տաղանդաշատ հայ երիտասարդի ելույթը, որ պատարագից անմիջապես հետո Ռուբինշտեյնը Բեզլարին խորհուրդ է տվել հենց հաջորդ օրը գնալ կոնսերվատորիա և մասնակցել ընդունելության քննություններին:

Ինչպես հետագայում կգրի Ամիրջանն իր ինքնակենսագրության մեջ, այդ գիշեր ինքը չէր քնել ուրախությունից և առավոտը վաղ գնացել էր Կոնսերվատորիա, ուր ընդունող հանձնաժողովի մոտ մասնակցել էր ընդունելության քննությանը: Քննությունը բարեհաջող հանձնելուց հետո նա ոչ միայն 1886թ. սեպտեմբերի 12-ին ընդունվում է կոնսերվատորիա և իր կյանքում առաջին անգամ ծանոթանում օպերային երգեցողության «գաղտնիքիներին», այլև ստանում է կրթաթոշակ:

Փաստորեն՝ Անտոն Ռուբինշտեյնը բախտորոշ դեր կատարեց Ամիրջանի ստեղծագործական ճակատագրում: Կանցնեն տարիներ, և Ամիրջանը կդառնա կոմպոզիտորի «Դևը» օպերայից Դևի դերերգի լավագույն մեկնաբաններից մեկը:

Ի դեպ՝ Մ.Յու.Լեբնոնտովի համանուն պոեմի հիման վրա Ա.Ռուբինշտեյնն օպերան ստեղծել էր 1871-ին, իսկ օպերայի պրեմիերան տեղի էր ունեցել 1875 թվականի հունվարի 25-ին, Պետերբուրգում, Մարիինյան թատրոնում, ռուս օպերային երգիչ Իվան Ալեքսանդրովիչ Մելնիկովի բենեֆիսի ժամանակ. նա էլ դարձավ Դևի կերպարի առաջին մեկնաբանը: Սակայն Դևի դերերգի լավագույն մեկնաբանն էր ռուսական օպերային դպրոցի վառ ներկայացուցիչ, Մեծ և Մարիինյան թատրոնների մեներգիչ, բարիտոն Պավել Խոխլովը (1854-1919), ում դերբուրդ Մեծ թատրոնում 1879 թվականի փետրվարի 19-ին տեղի էր ունեցել Վալենտինի դերերգով Գունոյի «Ֆաուստ» օպերայում: Խոխլովի Դևը մեծ հաջողություն էր վայելում և դարձել էր չափանիշ ու նշաձող երգիչներից շատերի համար. այդ դերերգով նա հանդես է եկել և՛ Մոսկվայում, և՛ Պետերբուրգում՝ 132 անգամ:

Բեզլար Ամիրջանը՝ Դևի դերերգի լավագույն մեկնաբաններից մեկը

1897 թվականի ապրիլի 24-ին Բ.Ամիրջանը Մոսկվայի կայսերական թատրոնի բեմում հանդես է գալիս դերերգով, որն այդ պահից սկսած դառնում է նրա խաղացանկի անբաժանելի մասը: Խոսքը Դևի դերերգի մասին է՝ Ա.Ռուբինշտեյնի համանուն օպերայից: Մա նաև երգչի դերբուրդ էր ռուսական օպերային արվեստում և շատ խորհրդանշական:

Ցավոք, 1894թ. նոյեմբերի 20-ին Ռուբինշտեյնը հեռացել էր կյանքից և չտեսավ ու չլսեց Ամիրջան-Դևին:

Եվ այսպես՝ «ապրիլի 24-ին, Կայսերական Մեծ թատրոնում ներկայացվեց 220-րդ անգամ յայտնի «Դեմոն» օպերան և այս անգամ Դեմոնի պատասխանատու դերը յանձնված էր հայ երգիչ պ. Ամիրջանեանին: Շնորհալի բարիտոնը այս անգամ ևս ցոյց տուեց հասարակութեանը իր ընդունակութիւնը և արժանացաւ անվերջ ծափահարութեան: Եթէ փոքր ինչ թերութիւն նկատվում է նրա խաղի մէջ, դա միայն՝ բառերի վերջաւորութեան ոչ պարզ արտասանութիւնն է»³:

Ինչպես կպատմի ականատեսներից մեկը՝ հայ բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանը. «Իր արտաքինով պ. Ամիրջանեան գեղեցիկ Դեմոն էր՝ բարձր հասակ, վայելչագեղ կազմուածք, դեմքի արտայայտիչ գծագրութիւն, որ այնքան նշանակութիւն ունի թէ մեծ թատրոնի բեմի վրա և թէ մանաւանդ Դեմոնի դերի համար: Գալով խաղին և երգելուն՝ ընդհանրապէս լաւ էր: Երգիչը բաւական ազատ էր պահում իրեն բեմի վրա. երգում էր զգացմունքով և ճաշակով: Չը պէտք է մոռանալ, որ նա առաջին անգամ է բեմ դուրս գալիս այդ ծանր ու պատասխանատու դերում: Ուստի շատ հասկանալի պէտք է թվան նրա այն յուզումն ու շփոթութիւնը, որ նկատելի էին այն էլ սկզբում: Սակայն վերջին գործողութեան մէջ նա մոռացնել տուեց իր բոլոր թերութիւնները: Մօսկվան շատ Դեմոններ է տեսել: Խօխլով, Կօրսով, հռչակաւոր բարիտօն Բատիստիօնի, Սկօտի, Պինեալօզա - բոլորն էլ երգել են այդ դերում: Իսկ դրանցից առաջինը՝ Խօխլովը՝ ուղղակի այդ դերի ստեղծողն է համարվում այստեղ և մինչև այսօր էլ, չը նայելով որ էլ առաջվայ ձայնը չունի, աւանդաբար վայելում է Մօսկվայի թատրօնական հասարակութեան ջերմ սէրն ու համակրանքը: Նշանաւոր երգիչների այդ շարքը, որի հետ կապված է և անցյալ և յայտնի անուն, ինչ ասել կուզէ, որ բաւական ծանրացնում էր մեր երիտասարդ, նոր սկսող երգչի մրցումը: Մակայն նա, եթէ ոչ կատարեալ յաղթանակով, գոնէ պատուով դուրս եկավ այդ մրցումից»⁴:

Ամիրջանի ելույթից օրեր անց՝ 1897թ. մայիսի 7-ին թիֆլիսյան «Արձագանքը» տպագրեց «Պ.Բ.Ամիրջանը Դեմի դերում» հոդվածը⁵, որտեղ նշվում է. «Ներկայումս իւր զօրեղ և հիանալի ձայնի շնորհիւ պ. Ամիրջանը նմանը չունի իւր ծառայակից դերասանների մէջ և թատրոնի վարչութիւնը, լաւ ճանաչելով այդ ամենը, չէր սխալուած իւր ընտրութեան մէջ և Ամիրջանին էր յանձնել Դեմոնի դժուար դերը: Այդ օրը թատրոնը լիքն էր և

³ Ներքին լուրեր, «Մշակ», 3 մայիսի 1897, N 51, էջ 4:

⁴ Ծատուրյան Ա., Նամակ Մօսկվայից, «Մշակ», 10 մայիսի 1897, N 54, էջ 2:

⁵ Տե՛ս Հանդիսական, Պ.Բ.Ամիրջանը Դեմի դերում, «Արձագանք», Թիֆլիս, 7 մայիսի, 1897, N 51, էջ 3-4:

հայ հասարակությունն էլ իւր կողմից շտապել էր ներկայ լինելու օպերային: Աւելորդ է ասել, որ հանդիսականները լարուած ուշադրութեամբ դիտում էին հայ դերասանի ամենայն մի շարժումնքը, ձևերը, խօսքը և երգը և իրանց մտքում հազար տեսակ դատողութիւններ անում: Բայց ահա վարագույրը բարձրանում է և բեմի խօրութեան մէջ՝ մի ժայռի վրայ նստած է դժոխային դեր մտատանջ գլուխը խոնարհած ձախ ձեռքի վրայ, գրիմը և հագուստը շատ վայելուչ են: 120 մարդուց բաղկացած երաժշտական խումբը նուագում էր և այդ միջոցին մենք լսում ենք Դեմօնի ձայնը՝ проклятый мир (անիծեալ աշխարհ): Դերասանի ձայնից երևում է որ նա շփոթուած է և ի՞նչպէս չշփոթուի, երբ նա երգում էր կայսերական բեմի վրայ, ուր հանդես են գալիս երաժշտական աշխարհի պայծառագոյն աստղերը: Բայց պ. Ամիրջանը յաղթահարում է իւր շփոթութիւնը և երգելով բարձր ձայնով այս խօսքերը՝ «и будешь ты царицей мира» ծածկում է օրկեստրի ձայնը: Ծափահարութիւնները, կարծես, անտեղի էին, վասնզի արարողութիւնը քանի որ շարունակում է, ընդունուած չէ այստեղ ծափահարել, բայց հանդիսականներին դժուար է զսպել:

Յաջողութեամբ անցաւ առաջին արարողութիւնը»⁶:

Հոդվածից տեղեկանում ենք նաև, որ «մի փողոցային թերթ» մեղադրել էր Ամիրջանին իտալական ձևերով երգելու և բեմի վրա դանդաղկոտ լինելու մէջ, սակայն օպերայի երրորդ ակտում, երբ Դեր հաղթելով հրեշտակին, մտնում է վանքը և հանդիպում է Թամարային, Ամիրջանը մոռացության է տալիս իր «դանդաղկոտությունը» և այնպիսի կենդանությամբ է սկսում խաղալ իր դերը, որ գերազանցում է ինքն իրեն: «Երրորդ, վերջին արարողութիւնից յետոյ բոլոր ծափահարութիւնները թնդացնում էին ահագին թատրոնը, որի խիստ վարչութիւնը շատ գոհ էր մնացել հայ դերասանից: Այսպէս պ. Ամիրջանը ինքն հարթեց իւր ճանապարհը, հաստատուն ոտքով հաստատուելով կայսերական մեծ թատրոնում, ուր աշնանը մենք առիթ կունենաք նրան լսելու միւս օպերաներում:

26 ապրիլի 1897թ., Մոսկուա»⁷:

«Մշակն» իր 1897թ. մայիսի 10-ի համարում տպագրում է Ալ.Ծատուրյանի կարծիքը Մոսկվայից՝ Ամիրջան-Դեմի խաղի վերաբերյալ՝ գրված նրա առաջնախաղից 1 շաբաթ անց՝ մայիսի 1-ին: «Անցեալ նամակում խոստացանք խօսել երգիչ Ամիրջանեանի մասին: Նա բեմ դուրս եկաւ ապրիլի 24-ին, Կայսերական թատրոնում, «Դեմօն» օպերայում և երգեց հէնց «Դեմօնի» ծանր ու պատասխանատու դերը: Նոյն բեմի վրա մենք պ.

⁶ Նույն տեղում, էջ 3:

⁷ Նույն տեղում, էջ 4:

Ամիրջանեանցին տեսել ենք ուրիշ օպերաներում – «Աիդա», «Տաուստ», «Բոմբե և Ջուլիետ», սակայն այդ օպերաներից ոչ մեկում նրա դերը չունեի այն մեծ ու էական նշանակությունը, ինչպես «Դեմոնում», որտեղ ինքը Դեմոնը օպերայի կենտրոնն է կազմում: Թատրոնում մեծ բազմություն կար:

Ամիրջանեանի ձայնը անպայման հարուստ ու զորեղ ձայն է: Բառականխն դուրեկան է և ձայնի տեմբրը: Բարձր նոտաները նա առնում է ամենայն հեշտությամբ և նրանց կարողանում է բառական ժամանակ պահել նոյն բարձրությամբ վրա, որ մեծ առաւելություն է համարվում և պարզ սպացոյց է նրա ձայնի անվիճելի զորեղության և ուժգնության: Լիահնչին են և միջին նոտաները: Միայն թոյլ են և խուլ ներքին նոտաները և այդ բանը զգացվում էր մանաւանդ Դեմոնի դերում, որովհետև այդ օպերայում Դեմոնի պարտիան անչափ առատ է ցածր նոտաներով: Շլօլայի, մշակման կողմից՝ պ.Ամիրջանեանի մեծ և հարուստ ձայնը դեռ կարօտ է կատարելագործության և անխոնջ աշխատության - և մենք չենք տարակուսում, որ մեր արտիստը չի խնայի ոչ իր ժամանակը, ոչ իր ոյժն ու ջանքը լրացնելու այդ աչքի ընկնող պակասը: Նա լուրջ ուշադրություն պետք է դարձնի և իր շնչառության վրա, որին լաւ իշխելը էական նշանակություն ունի երգելու ժամանակ: Շնչառությանը հստությամբ իշխող երգիչը իշխան է և իր ձայնին, իսկ դա մեծ բան է: Մեր երգչի շնչառության մէջ նկատվում է զգալի անկանօնություն, որ բառական վնասում է նրան երգելու ժամանակ: Մեր նկատած թերությունները, բարեբաղդաբար, բնածին թերություններ չեն. նրանք շատ հեշտ և արագ ուղղելի են, միայն անհրաժեշտ է լուրջ ուշադրություն»⁸:

Ռուբինշտեյնի «Դևի» հիշյալ բեմադրությունը ոչ միայն կարևոր իրադարձություն էր հայ բարիտոնի ստեղծագործական կյանքում, այլև հիշարժան օր ռուսական օպերայի պատմության մեջ: Այդ օրը Մեծ թատրոնում տեղի ունեցավ Լեոնիդ Սոբինովի դեբյուտը. բոլորին անհայտ երիտասարդ իրավաբանը փայլուն կատարեց Մինոդալի դերերգը: Իրեն «իրավաբանների մեջ՝ երգիչ, երգիչների մեջ՝ իրավաբան» համարող Սոբինովը շատ էր հուզվում կարևոր ելույթից առաջ: Եվ ահա օպերայի փորձերից մեկի ժամանակ, լսելով նրա ձայնը, Ամիրջանը քաջալերել է երիտասարդին և գուշակել փայլուն հաջողություն: Եվ իսկապես՝ քնարական տենոր Լ.Վ.Սոբինովը (1872-1934) դառնալու էր ռուս դասական վոկալ դպրոցի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը: «Հետագայում Սոբինովը շատ անգամ է երախտագիտությամբ հիշել Ամիրջանի ընկերական ջերմ վերաբերմունքը, այն, որ նա իր սկսնակ բեմական

⁸ Ծանոթության Ալ., նշվ հոդվ., էջ 2:

ընկերոջ հանդեպ մարդկայնորեն այդքան ուշադիր ու զգայուն գտնվեց...»⁹:

Իր արտիստական գործունեության ընթացքում Դևի դերերգով Ամիրջանը հանդես է եկել Պերմում (1899-1900), Իրկուտսկում (1900), Նովոչերկասսկում (1901), Սևաստոպոլում (1901), Միմֆերոպոլում (1901), Յալթայում (1902), Ժիտոմիրում (1903), Թիֆլիսում (1903), Պետերբուրգում (1904, 1905) ևն:

Ամիրջանը սիրել է Դևի կերպարը և հետագայում դարձրել առավել զրավիչ ու կատարյալ: Միգուցե ամեն անգամ Դևի կերպարը կերտելիս նա իր երախտիքի խոսքն է ուղղել օպերայի հեղինակին՝ լուսահոգի Անտոն Ռուբինշտեյնին, ում շնորհիվ ինքը ընդունվեց Պետերբուրգի կոնսերվատորիա և ընտրեց արտիստի ուղին:

«Ամիրջանը հստակորեն է ըմբռնել այս դերերգի լիրիկական-ռոմանտիկական բնույթն ու բուն բովանդակությունը: Նա ձգտել է աստիճանաբար «մարդկայնացնել» Դևին, ներկայացնել նրան ոչ իբրև վերացական ու անըմբռնելի ոգի, այլ խորապես մարդկային գծերով, երկրային էությամբ, ընդգծելով Դևի հոգու քնքշությունը, վիշտն ու տառապանքը, ազնիվ սիրո տվայտանքները»¹⁰:

Ինչպես նկատել է հայ երաժշտագետ, Բեզլար Ամիրջանի մասին մենագրության հեղինակ Ալեքսանդր Թադևոսյանը՝ «Դևի սքանչելի դերակատարներից հետո, որպիսիք էին Պետերբուրգում Լ.Յակովլևը, իսկ Մոսկվայում Բ.Կորսովը և Պ.Խոխլովը, Ամիրջանը ճանաչվել է որպես այդ դերը ռուսական բեմում հմտորեն մեկնաբանողներից մեկը: Հետագայում արդեն, Դևի կերպարի փայլուն մեկնաբանումով հանդես եկավ հանձարեղ Շայապիինը, որն իր արտիստական կյանքի սկզբնաշրջանում սովորաբար կատարում էր Ռուբինշտեյնի այս օպերայի բասային դերերգը (Գուդալ), իսկ Դևի դերերգը՝ զրված բարիտոնի համար, համեմատաբար ավելի ուշ հետաքրքրեց նրան»¹¹:

Ահա թե ինչ է գրել Ամիրջան-Դևի մասին “Киевская газета”-ն: «Դևի դերերգը կատարում էր Ամիրջանը, և այս ներկայացման մեջ, ըստ արժանավոյն, նրան էր պատկանում առաջնության դափնին: Արտիստն ունի մեծ և գեղեցիկ ձայն, առանձնապես փայլուն՝ վերին ռեգիստրում և երգում է հմտորեն: “Не плачь, дитя” հայտնի արիան նա այնպիսի բարձր էֆեկտով կատարեց, որ դահլիճում, ծափահարությունների փոթորիկ առաջացրեց»¹²:

⁹ Թադևոսյան Ա., նշվ. աշխ., էջ 24:

¹⁰ Նույն տեղում, էջ 66:

¹¹ Նույն տեղում, էջ 66-67:

¹² Նույն տեղում, էջ 65: “Киевская газета”, 2 января 1903:

Այս արհայից բացի՝ օպերայում Ամիրջանը նույնքան փայլուն է կատարել Դևի “Проклятый мир” արհա-մենախոսությունը, երկրորդ գործողությունից Դևի “На воздушном океане” ռոմանսը և վերջապես, երդումը ֆինալում (“Клянусь я первым днем рождения”):

«Դևի» հայերեն բեմադրությունը Մոսկվայում

Խորհրդանշական էր, որ տարիներ անց՝ Մոսկվայում Ամիրջան-օպերային արտիստի գործունեության եզրափակիչ ակորդը կրկին լինելու էր Դևի դերերգը, այս անգամ՝ հայերեն:

Դեռևս 1911 թվականին Ամիրջանը մի խումբ համախոհների հետ Մոսկվայում ձեռնամուխ է լինում Ռուբինշտեյնի «Դև» օպերայի հայերեն լեզվով բեմադրության իրականացմանը: Այդ մասին տեղեկանում ենք մոսկովյան «Март» պարբերականի 1913թ. հոկտեմբերի 30-ի համարից. «Սօս երկու տարի սրանից առաջ Մոսկուայում պատրաստում էին «Դեմոն» (Դև) օպերան հայերեն լեզվում ներկայացնելու: Ձեռնարկողներն այն ժամանակ աջողութիւն չունեցան»¹³:

Եվ ահա երկու տարի անց՝ 1913 թվականի տարեվերջին, «... միևնոյն անձինք ամենայն եռանդով աշխատում են այդ գործը գլուխ բերել: Յիշեալ օպերային պիտի մասնակցեն պ. Բ.Ամիրջան, օր. Մարգարիտ Յովհաննիսեան, օր. Զաքարեան և այլք»¹⁴:

Մոսկովյան «Март» պարբերականի 1913թ. դեկտեմբերի 15-ի համարից տեղեկանում ենք, որ ««Դև» (Демон) օպերան հայերեն լեզուով խաղալու պատրաստութիւններն արդէն տեսնում են: Փորձերն սկսել են և իրազեկ անձինք վկայում են նրա կատարեալ աջողութիւնը: Մասնակցում են լաւ ոյժեր՝ կանանցից օր. Զաքարեան, Յովհաննիսեան, տղամարդկանցից Ամիրջան, որ յայտնի է իբրև լաւ «Դև» և որ երբեմն երգում էր Կայսերական թատրօնում, ապա Միքայելեան, որին իբրև տենորի գուշակում են խիստ փայլուն ապագայ: Ներկայացումը տեղի է ունենալու յունուարի 15-ն վաճառականական ակմբանոցում (Купеческий клуб)»¹⁵:

Մոսկվայում «Դևը» ներկայացնելուց հետո ստեղծագործական կոլեկտիվը պիտի ճանապարհորդեր Պետերբուրգ, Ռոստով, Նախիջևան, Եկատինոդար, Բաքու, Թիֆլիս¹⁶:

¹³ Քրոնիկոն, «Մարտ», 30 հոկտեմբերի, 1913, N 16, էջ 10:

¹⁴ Քրոնիկոն, «Մարտ», 30 հոկտեմբերի, 1913, N 16, էջ 10:

¹⁵ Քրոնիկոն, «Մարտ», 15 դեկտեմբերի, 1913, N 20, էջ 9:

¹⁶ Տե՛ս Քրոնիկոն, «Մարտ», 15 դեկտեմբերի, 1913, N 20, էջ 9:

Ի դեպ՝ «Մարտ» թերթի այս հրապարակումը նույնությամբ արտատպվել է թիֆլիսյան «Հորիզոն» հասարակական գրական և քաղաքական օրաթերթի 1913թ. դեկտեմբերի 21-ի համարում¹⁷:

Եվ ահա 1914 թ. հունվարի 15-ին և 22-ին Մոսկվայի վաճառականների ակումբում հայերեն ներկայացվեց Ա.Գ.Ռուբինշտեյնի «Դև» օպերան՝ Ս.Արիստակյանի թարգմանությամբ: Բեմադրության ռեժիսորն էր Բ.Ամիրջանը: Նա էլ հենց հանդես եկավ Դևի դերերգով¹⁸:

Եզրակացություններ

Այսպիսով՝ բացառիկ էր Անտոն Ռուբինշտեյնի «Դև» օպերայի դերը Բեզլար Ամիրջանյանի ստեղծագործական ճակատագրում: Բ.Ամիրջանը դարձավ Դևի կերպարի լավագույն մեկնաբաններից մեկը՝ կապող օղակ դառնալով այդ կերպարի առաջին մարմնավորողների՝ Պավել Խոխլովի, Բոգոմիր Կորսովի և հռչակավոր Շայյապիսի միջև: Լինելով առաջին հայ բարիտոնը, որը մեկնաբանեց Դևի բարդագույն դերերգը, Ամիրջանը դարձավ հայ-ռուսական երաժշտական առնչությունների վառ խորհրդանիշներից մեկը:

Մյուս կողմից՝ նրա անմիջական ջանքերի շնորհիվ 1914 թվականին Մոսկվայում իրականացվեց «Դև» օպերայի հայերեն լեզվով ներկայացումը:

Գոռ Մալնազարյան

Դևի դերերգը Բեզլար Ամիրջանի մեկնաբանությամբ Ամփոփում

Ծանրակշիռ է հայ երգիչ, Միլանի կոնսերվատորիայի շրջանավարտ, Մոսկվայի մեծ (1895-1903), Թիֆլիսի արքունական թատրոնների (1903-1904), Պետերբուրգի ժողովրդական տան օպերայի (1904-1916) մենակատար Բեզլար Աստվածատուրի Ամիրջանի (Ամիրջանյան, 1868-1935) դերը հայ կատարողական արվեստում, մասնավորապես՝ երգարվեստում: Նա հայ պրոֆեսիոնալ երաժշտական-կատարողական արվեստի պատմության մեջ մտավ գնահատելի ու մեծակշիռ ավանդով և իր արժանի տեղը գրավեց հայ բեմի առաջին խոշոր վարպետների շարքում՝ դառնալով հայ առաջին բարիտոնը:

Բացառիկ էր Անտոն Ռուբինշտեյնի «Դև» օպերայի դերը Բեզլար Ամիրջանյանի ստեղծագործական ճակատագրում: Բ.Ամիրջանը դարձավ Դևի կերպարի լավագույն մեկնաբաններից մեկը՝ կապող օղակ դառնալով այդ կերպարի

¹⁷ Տե՛ս Հայերեն օպերա, «Հորիզոն», 21 դեկտեմբերի, 1913, N 286, էջ 4:

¹⁸ **Մագմանյան** Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1911-1920թթ., ձեռագիր, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ:

առաջին մարմնավորողների՝ Պավել Խոխլովի, Բոգոմիր Կորսովի և հռչակավոր Շալյապինի միջև:

Гор Салназарян

Партия демона в интерпретации Беглара Амирджана

Резюме

В армянском исполнительском, в частности, в вокальном искусстве, неоспорима весомая роль Беглара Богдановича Амирджана (Амирджанян, 1868-1935) – солиста Большого (1895-1903), Тифлиского королевского театров (1903-1904), оперного театра Петербургского народного дома (1904-1916). Он вошел в историю армянского профессионального музыкально-исполнительского искусства, внося большой вклад в развитие данного направления, и занял свое достойное место в ряду первых армянских великих мастеров, становясь, по сути, первым армянским профессиональным оперным баритоном.

Уникально значение оперы «Демон» Антона Рубинштейна в творческой судьбе Беглара Амирджана. Б. Амирджан стал одним из лучших исполнителей партии Демона, связующим звеном между первыми исполнителями этой партии Павлом Хохловым, Богомиром Корсовым и легендарным Шаляпиным.

Gor Salnazaryan

Role of demon by the interpretation of Beglar Amirjan

Summary

Beglar Bogdanovich Amirjan - a soloist of the Bolshoi (1895-1903), the Tiflisky Royal Theaters (1903-1904) and the Opera House of the St. Petersburg People's House (1904-1916), has an undeniable role in Armenian performing arts, the vocal arts in particular. He became part of Armenian professional musical and performing arts history by contributing greatly to the development of this direction. Beglar Amirjan is one of the first Armenian great masters, and is, in fact, the first Armenian professional opera baritone.

The opera "The Demon" by Anton Rubinstein had special role for the creative life of Beglar Amirjan. He became one of the best performers of the role of the Demon, and a connecting link between the first performers of this role Pavel Khokhlov, Bogomir Korsov and the legendary Chaliapin.

Խմբագրություն է ուղարկվել 13.07.2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 03.08.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
albert.makaryan@ysu.am

**ՄՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻ «ԶՐՀՈՐԻ ՄՈՏ» ՊԱՏՄՎԱԾՔԻ
ԴԱՍՄՎԱՆԴՈՒՄԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. կրթության նոր չափանիշներ, դասավանդման մեթոդիկա, դասագիրք, 7-րդ դասարան, հայ գրականություն, Ստեփան Զորյան, «Զրհորի մոտ», պատմվածք, պատերազմ, անհատի հոգեբանություն, արդիականություն:

Ключевые слова и выражения: новые критерии образования, методика обучения, учебник, 7-й класс, армянская литература, Степан Зорян, «У колодца», рассказ, война, психология личности, актуальность.

Key words and expressions: new standards of education; teaching methods; textbook; 7th grade; Armenian literature; Stepan Zoryan; "Near the well"; story; war; individual's psychology; modernity.

**ՄՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ
(1889 - 1967)**



Ակնոցի հետևից խորիմաստ ու թախճոտ աչքերը մեզ հառած այս բարի մարդը գրող Ստեփան Զորյանն է՝ նորագույն շրջանի հայ գրականության նշանավոր ներկայացուցիչներից մեկը: Նա զարգացման նոր աստիճանի բարձրացրեց պատմվածքի և նովելի ժանրային ընդգրկումը՝

«Վիոքր տարածքում» ստեղծելով տպավորիչ այնպիսի պատկերներ, որոնք ներկայացնում են, այսպես կոչված, «տխուր», «Վիոքր մարդուն» իր հոգեկան խեղճությամբ ու ներքին անազատություններով:

Դու կծանոթանաս

- Ստեփան Զորյանի կենսագրության մի քանի կարևոր դրվագների.
- հեղինակի հուշերին.
- «Ջրհորի մոտ» պատմվածքին:

Դու կիմանաս

- Հեղինակի ստեղծագործության հիմնական թեմաները և ընդհանուր բնութագիրը:

Կսովորես

- Մեկնաբանել «Ջրհորի մոտ» պատմվածքի գաղափարական հիմնական բովանդակությունն ու պատումի որոշ առանձնահատկությունները.
- Համեմատել հեղինակի՝ պատերազմի թեմայով գրված մյուս պատմվածքներն իրար հետ և գտնել ընդհանրությունները:

Հետազոտական և ստեղծագործական աշխատանքի թեմաներ

- «Ջրհորի մոտ» պատմվածքի և դրա հիման վրա ստեղծված կինոնկարի համեմատություն ու քննարկում.
- ռուս գրողներ Անտոն Չեխովի և Նիկոլայ Գոգոլի մի քանի պատմվածքների ընթերցում ու քննարկում, որոշ ընդհանրությունների մատնանշում հայ հեղինակի՝ համաբնույթ ստեղծագործությունների հետ:

ԴԱՍ 1 ԳՐՈՂԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏԿԵՐԱԾ ՍԱՐԴԻԿ



Վանաձորի համայնապատկերը

1. Դու գիտե՞ս, որ Վանաձորի նախկին անունը Կիրովական էր, իսկ հինը՝ Ղարաքիլիսա:
2. Համացանցից գտի՛ր որոշ տեղեկություններ այդ քաղաքի մասին և գրի՛ր փոքրիկ շարադրություն նրա մասին:



Ստ. Զորյանի աշխատասենյակը Երևանի՝ Ստ. Զորյանի անվան թիվ 56 դպրոցը

Ստեփան Եղիայի Զորյանը ծնվել է 1889-ին Ղարաքիլիսայում՝ հողագործ գյուղացու ընտանիքում: «Ղարաքիլիսայում, - պատմում է Զորյանը «Ինքնակենսագրական նոթեր»-ում, - կային հայկական հաստատուն սովորույթներ, ուր կրոնական ու ժողովրդական տոները, ծեսերը կատարվում էին ամենայն ճշտապահությամբ, ջերմեռանդությամբ ու մեծ շուքով»: «Այս ամենի հետ միասին,- շարունակում է նա,- մեր ավանում կար մի տիրող զգացմունք՝ զարմանալի հայրենասիրություն. բոլոր տներում կախված էր «Ոգի Հայաստանի» նկարը՝ Անիի շքեղ ավերակների մեջ նստած մի սգավոր կին, որ հիշեցնում էր հայրենի երկրի երբեմնի անկախությունը և անցած փառքը, նաև 5-րդ դարի ազգային մեծ հերոս Վարդան Մամիկոնյանի՝ սաղավարտով դիմանկարը՝ որպես անձնագոհ հայրենասիրության սիմվոլ»:

Ազգային նվիրական այսպիսի հիշատակներով ապրող միջավայրում են անցել փոքրիկ Ստեփանի մանկությունն ու պատանեկությունը: Այդ ամենին գումարվել են նաև տատի և մոր պատմած զարմանահրաշ հեքիաթները, հատկապես մոր, որ «շատ ինքնատիպ ու կոլորիտով պատմող կին էր, և իր այդ պատմությունների համար հարևանությամբ ապրող ուսուցչուհիները նրան կոչում էին «**տիկին Հումերոս**»»:

3. *Փոքր հասակում քեզ ի նչ հեքիաթներ են պատմել տատիկդ, կամ մայրիկդ. դրանք բորբոքե՞լ են քո երևակայությունը՝ տանելով չարի ու բարու աշխարհները...*
4. *Իսկ դու երբևէ լսե՞լ ես ազգությամբ հույն աշխարհահոչակ էպոսագիր-բանաստեղծ Հումերոսի (Ք. ա. 8-րդ դար) մասին: Դու արդեն փոքր չես, և ժամանակն է, որ աստիճանաբար հարստացնես քո գիտելիքների պաշարը. ուրեմն համացանցից քաղի՛ր տեղեկություններ այդ նշանավոր մտածողի մասին և գրառումներ կատարի՛ր տետրում:*

Ստեփանը գրաճանաչ է դառնում տանը, իսկ 7 տարեկանից հաճախում է հայկական մասնավոր մի դպրոց, ուր սովորում է 2 տարի: Դպրոցը գործում էր գաղտնի, քանի որ ցարական իշխանությունները փակել էին հայկական դպրոցները: Այդ ժամանակից սկսած՝ Ստեփանն սկսում է կարդալ հայ և ռուս գրողների գրքերը. ընթերցում էր իրենց տնակում, կարդում էր անհագաբար՝ մինչև լուսաբաց մինչև աքլորականչ: «Այժմ,- հիշում է Զորյանը,- երբ ետ եմ նայում կյանքիս անցած ճանապարհին, ինձ թվում է, թե իմ ամենաերջանիկ օրերն անցան այդ խարխուլ, անզարդ տնակում, երբ ես, ամեն հոգսից ազատ, ամբողջովին իմ սիրած գրքերի հետ էի և պատրանքներով լցնում էի մեր պարտեզը, մանավանդ լուսնյակ գիշերներին»:

5 ամենասիրելի գրողները

- **Խաչատուր Աբովյան**
- **Րաֆֆի**
- **Ալեքսանդր Պուշկին**
- **Միխայիլ Լերմոնտով**
- **Նիկոլայ Գոգոլ**

Հայկական դպրոցներն այդպես էլ չեն վերաբացվում, և գեղջուկ հայրը որդուն ստիպված տանում է ռուսական դպրոց՝ նախապես հիշեցնելով. «Գնա՛, որդի՛, լավ սովորի ամեն ինչ, բայց երբեք չմոռանաս, որ դու հայ ես, հայոց լեզուն ամենից լավ պիտի սովորես»: Եվ Չորյանն իր գիտակցական ամբողջ կյանքում հավատարիմ մնաց հոր պատգամին:

Ստեփան Չորյանի **5 ամենանշանավոր մտքերը** մայրենիի մասին.

- «Լեզուն, իրոք, մի գանձ է, որին չի կարող փոխարինել աշխարհի ոչ մի հարստություն: Նա է ուրախության պահին բացում մեր սիրտը, իսկ տրտմության ժամին նա է սփռփում մեզ»:
- «Իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերև, որ տարվում է ամեն մի պատահական քամուց»:
- «Լիակատար կյանքով ապրելու համար մայրենի լեզուն պետք է ոչ միայն սիրել աչքի լույսի պես, այլև իմանալ այն անսխալ, լավապես, խորապես»:
- «Ամեն սերունդ իր ժողովրդի լեզուն՝ որպես գործիչ, որպես զենք, հղկում է, կատարելագործում և հարստացնելով փոխանցում հաջորդ սերնդին»:
- «Այդպես անենք և մենք... սիրենք, կատարելագործենք և հարստացնենք մեր մայրենի գանձը՝ մեր լեզուն»:

5 փաստ Ստեփան Չորյանի մասին

- Իսկական ազգանունը եղել է **Առաքելյան**, որը, հավանաբար բարեհնչյունության համար, փոխել է **Չորյան**-ի:
- 1904-ին ավարտելով ռուսական դպրոցը՝ Ներսիսյան դպրոցում կրթությունը շարունակելու նպատակով 1906-ին մեկնում է Թիֆլիս, սակայն ուշանալու պատճառով չի ընդունվում: Համառ ինքնուսուցմամբ ձեռք է բերում գիտելիքների պաշար:
- Թիֆլիսում աշխատել է զանազան թերթերում («Սուրհանդակ», «Մշակ»)՝ սկզբում՝ որպես սրբագրիչ, ապա՝ թարգմանիչ, հետագայում՝ գրական աշխատող և լրագրող:

- 1919-ին տեղափոխվում է Երևան, կատարում գրական, թարգմանական և հրատարակչական զանազան աշխատանքներ: 1965-ին ընտրվում է Հայաստանի ԳԱ ակադեմիկոս:
- Վախճանվել է 1967 թվականին Երևանում և թաղվել Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

1909 թ. Թիֆլիսում լույս տեսնող «Լուսնա» ամսագրում լույս է տեսնում Զորյանի առաջին պատմվածքը՝ «Քաղցածները», իսկ 1918-ին՝ առաջին ժողովածուն՝ «Տխուր մարդիկ» խորագրով:

5 ամենահայտնի ստեղծագործությունները

1. «Տխուր մարդիկ» պատմվածքների ժողովածուն
2. «Ցանկապատ» պատմվածքների ժողովածուն
3. «Խնձորի այգին» պատմվածքների ժողովածուն
4. «Պատերազմը» պատմվածքների ժողովածուն
5. «Պապ թագավոր» պատմավեպը:



Զախից՝ Նաիրի Զորյան, Արագի, Գուրգեն Բորյան, Ավետիք Իսահակյան, Դերենիկ Դեմիրճյան, Գևորգ Էմին, Ստեփան Զորյան, Սիլվա Կապուտիկյան

Ստեփան Զորյանի առաջին իսկ ստեղծագործությունները ջերմորեն ընդունվեցին ժողովրդի և հայ գրողների ընտանիքի կողմից: Նրան նկատեցին ու սիրեցին Հովհաննես Թումանյանն ու Ալեքսանդր Շիրվանզադեն, Վահան Տերյանն ու Դերենիկ Դեմիրճյանը, Կրթանես Փափազյանը, Նար-Դոսը, շատերը: Ո՞րն էր այդ սիրո գաղտնիքը: Սկսնակ գրողը, հմտորեն յուրացնելով հայրենի (Նար-Դոս, Գրիգոր Ջոհրապ...) և համաշխարհային գրականության (Գի դը Մոպասան, Անտոն Չեխով...)՝ փոքր արձակի բնագավառում կուտակած հարուստ փորձը, իր սրատես հայացքով որսաց նորը, այն փոփոխությունները, որոնք ընդլայնեցին պատմվածքի և նովելի թեմատիկ ու արտացոլման շրջանակները:

«Տխուր մարդիկ» պատմվածաշարում երևում են հերոսներ, որոնք իրենց անհամարձակ արտաքինի տակ խեղճ են ու անօգնական, ապրում են ճղճիմ հոգսերի մեջ: «Ցանկապատը» և «Խնձորի այգին» շարքերում պատկերվում են սեփականատիրական կրքից կուրացած մարդիկ, որոնք մի դեպքում ցանկապատել են իրենց սովորական հարաբերությունները, մյուս դեպքում առաջնորդվում են գոյության գայլային սկզբունքներով՝ այդպես էլ անհաղորդ մնալով ազնիվ ու անշահասեր հոգիների տանջանքներին: Մարդկային ազահությունից և շահի մոլուցքից «հիասթափվում է» անգամ երկու հարազատ եղբայրների աչքածակության կիզակետում հայտնված կովը՝ Ծովանը համանուն պատմվածքում: «Օ՛, տխուր է մարդկանց աշխարհը», - «մտածում է» կենդանին:

Նորագույն շրջանի հայ գրականության մի ուրիշ երանգ էր բերում «Պատերազմը» պատմվածաշարը: Այնտեղ կան խիստ ազդեցիկ գործեր («Պատերազմը», «Զաքարի հարսը», «Ջրհորի մոտ...»), որոնք պատկերում են ոչ թե պատերազմի դաշտը, այլ *պատերազմի բերած աղետալի հետևանքները մարդկանց հոգիներում*: Պատերազմը ծանր հետևանքներ է թողնում անգամ *կենդանու հոգեբանության վրա*: Այս տեսակետից չափազանց հուզիչ է «Շունը» փոքրիկ պատմվածքը:

5. *Ընթերցի՛ր Ստեփան Ջորյանի «Շունը» պատմվածքը և փորձի՛ր մտածել մարդուն հավատարիմ բարեկամի՝ շան վրա պատերազմի թողած ավերիչ հետևանքի մասին:*

6. *Դու արդեն ծանոթ ես Գուրգեն Մահարու Չալոյին, Վահագն Դավթյանի անանուն շանը և Ստեփան Ջորյանի՝ վերը նշված պատմվածքի «հերոսին»: Գրի՛ր շարադրություն այդ երեք շների մասին և վերնագրի՛ր ինքնուրույն:*

ԴԱՍ 2

ՄԱՐԴԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԸ

«Ջրհորի մոտ» պատմվածքը մի փոքրիկ, բայց հուզիչ դրվագ է Առաջին աշխարհամարտի (1914-1918) տարիներից: Հեղինակն այստեղ պատումը ներկայացնում է ինքնատիպ եղանակով պատերազմի դաշտում հայտնված հայազգի զինվորի՝ Բաղդասարի անունից: Նա ժողովրդախոսակցական հյութեղ ոճով և զինվորական բարբառով, երբեմն գեղջկական միամտությամբ պատմում է մարտադաշտում՝ մի ջրհորի տարբեր կողմերում, իրար դեմ դիրքավորված ռուս և ավստրիացի զինվորների մասին: Թշնամական երկու ջոկատներն էլ անասելի ծարավ են, սակայն վախենում են մոտենալ ջրհորին ու պապակը հագեցնել: Եվ նրանց մեջ ի վերջո հաղթում է բնության սովորական զավակը. ռուսը (նրանց կողմում էին կռվում նաև ուկրաինացին, հայը, վրացին, լատիշը) և ավստրիացին, մի պահ

մոռանալով պատերազմի մասին, մոտենում են ջրհորին, ուրախանում, «գրուցում» միմյանց անհասկանալի լեզուներով... Հետո էլ չեն ենթարկվում ռազմական հրամանին՝ կրակել լ: Ավելի ճիշտ, կրակում են, բայց... օդում:

Իսկ թե ինչպես է ավարտվում այս պատմվածքը, դու կիմանաս քիչ հետո, գուցեև հուզվես՝ այն կարդալով ամբողջովին:

Ընթերցանության համար այստեղ անհրաժեշտ է տեղադրել «Ջրհորի մոտ» պատմվածքը

Անձանոթ բառերի բացատրություններ

Ավստրո – Ավստրիա՝ պետություն Կենտրոնական Եվրոպայում, մայրաքաղաքը՝ Վիեննա

դուրան – տափակ, հարթ

դուրբին (ռուս. трыба) – հեռադիտակ

դաչա (ռուս. дача) – ամառանոց

ժուրավլի (ռուս. журавль) – կռունկ

բոչկա (ռուս. бочка) – տակառ

բակլաշկա (ռուս. баклажка) – փոքրիկ տափակաշիշ

չորտ վազմի (ռուս. черт возьми!) – գրո՞ղը տանի

ստուդենտ (ռուս. студент) – ուսանող

աֆիցեր (ռուս. офицер) – սպա

սարսաղություն – հիմարություն, ապուշություն

կատոլ (ռուս. котел) – շուգունե կաթսա

ակոպ (ռուս. окоп) – խրամատ

վաշե բլագորոդիյե (ռուս. ваше благородие) – Ձերդ բարեձնություն

նիկակ նիլցա՝ (ռուս. никак нельзя) – ոչ մի դեպքում չի կարելի

աղլուխ – թաշկինակ

դրուստ – ճիշտ

փողրաթ – կապալառու՝ պայմանագիր կնքած

վադա խորոշ (ռուս. вода хорошая) – ջուրը լավն է

գութ (գերմ. gut) – լավն է

ռեբյատա (ռուս. ребята) – տղաներ

պարուչիկ (ռուս. поручик) – սպա՝ վաշտի հրամանատարի օգնական

սարթ – խիստ

շինել – զինվորական համազգեստ

պրավերկի (ռուս. проверка) – ստուգում

ն նս անել – դարձվածք է՝ մեջտեղից վերացնել, սպանել

գազեթ (ռուս. газета) – լրագիր, թերթ

Այստեղ կարելի է հղում տալ համացանցային կայքին՝ դիտելու համար «Ջրհորի մոտ» 48 բուպեանոց ֆիլմը (ռեժիսոր՝ Ժիրայր Ավետիսյան):

1. Քեզ ավելի շատ դուր եկավ պատմվածքը, թե՛ դրա հիման վրա նկարահանված ֆիլմը: Ուրիշ ի՞նչ կինոնկարներ ես դիտել, որոնք ստեղծվել են գրական երկերից:
2. Կարո՞ղ ես մատնանշել «Զրհորի մոտ» պատմվածքի և համանուն ֆիլմի՝ քո կողմից նկատված տարբերությունները:
3. Պատմվածքն ինքնուրույն բաժանի՞ր 3 մասերի և դի՞ր համապատասխան վերնագրեր:
4. Ինչպե՞ս է ճգնաժամային իրավիճակում զինվորների մեջ հանկարծ արթնանում բնության սովորական զավակը, և ինչո՞ւ է մի պահ մոռացվում պատերազմը:
5. Ի՞նչ ես կարծում՝ այստեղ բուն պատերազմը մարտի՞ ղաշտում է, թե՞ հանգամանքների բերումով ջրհորի մոտ հավաքված բազմազգ զինվորների հոգիներում:
6. Ինչո՞ւ էին զինվորները սիրում ու հարգում վաշտի ռուս հրամանատարին: Ո՞րն է նրա արտաբերած նախադասության «Լավ չի՞, երբ մարդիկ էսպես մոտիկ բարեկամ են իրար» նախադասության թաքնված իմաստը:
7. Ինչպե՞ս կրնոթագրես կապիտանի նենգ արարքը:
8. Ինչո՞ւ զինվորները պատժեցին մատնիչին: Դու ինչպե՞ս կվարվեիր:
9. Տեքստից դո՞ւրս գրիր ժողովրդախոսակցական լեզվի հատուկ որոշ արտահայտություններ և դրանցով կազմի՞ր նախադասություններ:
10. Հեղինակն ինչո՞ւ է հաճախ օգտագործում ռուսերեն բառեր ու արտահայտություններ:
11. Բացատրի՞ր սեքստում կիրառված՝ «Մրտին կարծես մի քար է ընկել» դարձվածքի իմաստը: Իսկ ի՞նչ կնշանակի դրա հականիշ դարձվածքը՝ մեկ տառի փոփոխությամբ՝ «Մրտից կարծես մի քար է ընկել»:
12. Մտաբերի՞ր «Ամեն անգամ պապը գաթա չի ուտիլ» դարձվածքի հոմանիշ դարձվածքը և երկուսով էլ կազմի՞ր նախադասություններ:

Ստեփան Զորյանի 5 ամենանշանավոր մտքերը արվեստի և գրականության մասին

- «Արվեստի թե՛ նյութը, թե՛ աղբյուրը կյանքն է, և արվեստն ինքը ճշմարտություն է»:
- «Արվեստի նպատակն է վերարտադրել կյանքն ու բնությունը բյուրեղացած ճշմարտությամբ»:
- «Ես, իմ մասին խոսելով, պիտի ասեմ, որ և՛ գրի եմ առնում որոշ դիտողություններ, և՛ մտքումս կազմակերպում եմ ամբողջ գործը: Հետո ես ուզում եմ պարզել՝ ուր եմ գնում: Մինչև որոշ չլինի վերջին կայարանը, թեկուզ աղոտ կերպով, ես դժվարանում եմ գրել: Երբ

ամեն ինչ գրեթե կա մտքումս, ինձ զբաղեցնում է կառուցումը: Ամեն մի գրվածք նման է տան»:

- «Գրվածքներս համոզիչ դարձնելու նպատակով ես հաճախ նախընտրում եմ պատմողական ձևը... Ինձ թվում է, որ այդ պատմողական ձևը հենց հայկական ազգային ձևն է: Դա հնարավորություն է տալիս ոչ միայն գրվածքը համոզիչ դարձնել, այլև նյութը տալ խիտ, հավաք և նպատակասլաց»:
- «Կարիք չկա ընդգծելու ինչ-որ թեզ ու տենդենց: Թող ընթերցողն ինքը ջոկի լավն ու վատը... Կարիք չկա, որ գրողն ինքը բացատրի իր երկը, ինչպես անում էին այդ հին առակներում՝ տակին գրելով նրա «Բարոյականը»... Թող բացատրեն ուրիշները, եթե դրա կարիքը լինի»:

5 ամենաբնորոշ կարծիքներ Ստեփան Զորյանի մասին

- «Դուք մեր ապագա վիպասաններից մեկն եք լինելու»: ***Հովհաննես Թումանյան***
- ««Տխուր մարդիկ» գրքում ես զգում եմ մեր ազգային գրականության և եվրոպական գրական ձևերի սինթեզ, ինչ պակասում էր մեզ մինչ այժմ»: ***Դերենիկ Դեմիրճյան***
- «Տոհմիկ արձակագիր՝ իր ստեղծագործական բոլոր թելերով ու իր «նյարդով յուրաքանչյուր» կապված ժամանակի, հողի և կենդանի մարդկանց հետ, գիտակ և հաղորդակից համաշխարհային գրական մտքի նվաճումների»: ***Գուրգեն Մահարի***
- «Ուշադրություն դարձրեք, թե ինչպես դիտողականություն ունի, ինչպես է կարողանում կարճ մի նախադասությամբ արտահայտել առարկայի, երևույթի հանդեպ իր քնարական ու հումորիստական վերաբերմունքը»: ***Հովհաննես Հովհաննիսյան***
- «Ստեփան Զորյանը արևելահայ գրականության մեջ բերեց նախ և առաջ փոքր պատմվածքի, նովելի կուլտուրան, պատմելու մեծ վարպետությունը, ստեղծագործողի ազնվությունը, ճշմարտագիտությունը»: ***Գեղամ Մարյան***

Ալբերտ Մակարյան

Ստեփան Զորյանի «Ձրհորի մոտ» պատմվածքի դասավանդումը

Ամփոփում

Ուսումնամեթոդական հերթական այս հոդվածը ներկայացնում է ՀՀ հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի հայ գրականության դասագրքում տեղ գտած

հաջորդ թեմայի («Մտեփան Ջորյան. «Ջրհորի մոտ» պատմվածքը») դասավանդման հեղինակի սեփական նմուշօրինակը:

Հնդվածագրի եզրահանգումն այն է, որ նախ՝ աշակերտն ըմբռնի «պատերազմ» հասկացության հակամարդկային էությունը, որն այսօր, ցավոք, դարձել է խիստ արդիական, այնուհետև՝ ընկալի այդ աղետաբեր երևույթի թողած ավերիչ ազդեցությունը հատկապես մարդկանց հոգիներում: Մատուցվող նմուշօրինակում առկա են դիդակտիկ, ուսուցողական նյութեր, որոնց միջոցով դասերը կարող են դառնալ գրավիչ ու առավել ընկալելի:

Альберт Макарян

Преподавание рассказа Степана Зоряна «У колодца»

Резюме

В данной очередной учебно-методической статье представлен собственный авторский образец преподавания рассказа Степана Зоряна «У колодца», нашедшего место в учебнике по армянской литературе для 7-го класса общеобразовательной школы.

Целью автора статьи является, в первую очередь, то, чтобы ученик воспринял античеловеческую сущность понятия «война», что, к сожалению, сейчас особенно актуально, а затем – понять разрушительное воздействие этого явления в особенности на человеческие души. В представленном образце предлагаются дидактические, обучающие материалы, которые сделают уроки привлекательными и более доступными для восприятия.

Albert Makaryan

The Teaching of Stepan Zoryan's Story "Near the Well"

Summary

The current subsequent educational-methodical article presents the author's own sample for teaching the next topic ("Stepan Zoryan's Story "Near the Well ") which is reflected in the 7th grade textbook on Armenian literature for the RA General School.

The author of the article concludes that first of the pupils must comprehend the anti-human nature of the concept of "war, which today, unfortunately, has become very relevant, then they must perceive the destructive effect of this catastrophic event laid especially on people's souls. The provided sample contains didactic, instructive materials, through which the lessons can become more attractive and comprehensible.

Խմբագրություն է ուղարկվել 18.06.2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 06.07.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

**ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄՆԵՐԻ ՈՐՊԵՍ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. զարգացնող միջավայր, ճանաչողական հմտություններ, «անձնային-կենտրոնացված» ուսուցում, զարգացման լայն և ուղղակի իմաստներ, սոցիալական կոմպոնենտ, առարկայի և տարածության համահավաքության կոմպոնենտ, հոգեբանական կոմպոնենտ:

Ключевые слова и выражения: развивающая среда, познавательные навыки, «лично ориентированное» обучение, широкое и прямое значение развития, социальный компонент, компонент сопоставимости предмета и пространства, психологический компонент.

Key words and expressions: developing environment, cognitive skills, «person-centered» learning, broad and direct meaning of development, social component, the object-space comparability component, psychological component.

Նախադպրոցական կրթական հաստատությունների դերը ժամանակակից հասարակարգում աներկբա է իր կարևորության առումով, քանզի ընտանիքին՝ որպես առաջնային կրթող և զարգացնող միջավայրի փոխարինելու կամ շարունակելու է գալիս մանկապարտեզը՝ մի հաստատություն, որը կոչված է ապահովելու դեպի ինքնուրույն կյանք ընթացող երեխայի արդյունավետ ուղին:

Այդ առումով առանձնակի է կարևորվում այսպես կոչված «անձնային-կենտրոնացված» կրթության ներդրումը նախադպրոցական կրթական հաստատությունների արդյունավետ փոխգործակցության հիմքում, որն ինքնին անհնար է առանց զարգացնող միջավայրի և վերջինիս ազդեցության հստակ ուսումնասիրման և վերլուծության:

Հենց նախադպրոցական կրթական հաստատության սահմաններում է հարկավոր կազմակերպել և արդյունավետ ներկայացնել այնպիսի միջավայրի դերը, որն ուղղված է երեխայի անձնային աճի և դինամիկ զարգացման ապահովմանը: Այս գործընթացն ինքնին միակողմանի կամ մեկ ուղղվածությամբ չի դրսևորվում, քանզի իր մեջ ներառում է մի շարք կոմպոնենտների ներգրավվածություն: Ապացուցված է, որ նախադպրո-

ցական կրթական հաստատության աշխատանքի արդյունավետության հիմքը հենց կրթադաստիարակչական ևն աշխատանքի և զարգացման գործընթացի ինքնին զարգացնող միջավայրի ստեղծման ապահովումն է, որը, որպես կանոն, իրագործվում է երկու իմաստով:

Լայն իմաստով՝ զարգացնող միջավայրը ներառում է այն սոցիալ-մշակութային և սոցիալ-ադապտիվ տիրույթը, որտեղ կազմակերպվում և իրականացվում է երեխայի զարգացումը: Այստեղ շեշտադրվում է սոցիալ-մշակութային հարմարեցված միջավայրը, որի սահմաններում ընթանում է երեխայի զարգացման դինամիկան:

Ուղղակի կամ հոգեբանական իմաստով զարգացնող միջավայրը կրթական համակարգված կամ ներդաշնակ տարածություն է, որտեղ ընթանում է զարգացնող ուսուցումը կամ զարգացնող կոմպոնենտների ներդրումը:

Այս գաղափարախոսությունը առավելապես արծարծվել է Վ.Վ. Դավիդովի, Պ. Յա. Գալպերինի, Լ.Ս. Վիգոտսկու և այլոց աշխատություններում¹:

Ելնելով վերոնշյալից՝ առանձնացնենք զարգացնող միջավայրի հետևյալ կոմպոնենտները, որոնք համարվում են ճանաչողական հմտությունների ձևավորման նախահիմքը.

1. **Սոցիալական կոմպոնենտ** - ներառում է զարգացնող միջավայրն «ապահովող» կամ կառուցող անձանց արդյունավետ փոխգործակցության ապահովման կարողություն, որն անհնար է իրականացնել առանց փոխադարձ նվիրվածության, պրոֆեսիոնալ մոտեցման և դրական վերաբերմունքի (Ե. Ա. Կուլմին, Յու. Ն. Կմեյանով)²:
2. **Առարկայի և տարածության համահավաքության կոմպոնենտ**, որի շրջանակները ներառում են երեխայի բազմագործոն զարգացման կազմակերպումը, այսպես կոչված փոխգործուն միջավայրի ստեղծումը, որը հնարավորություն է տալիս երեխային գործունեության մեկ տեսակից անցում կատարել մեկ այլ տեսակի ճկունություն դրսևորելով և «փորձ» ձեռքբերելով:
3. **Հոգեբանական կոմպոնենտ**, որտեղ ներառված են զարգացման մանկավարժական ապահովման հոգեբանական նախադրյալները,

¹ Ս. Մարության, Ա. Դավլաբյան, Նախադպրոցական մանկավարժություն, Ե., 2008:

² Л.М.Кларина, Общие требования к проектированию моделей образовательной среды, способствующей познавательному развитию дошкольников /Готовимся к аттестации. СПб.: Детство-Пресс, 2002. с. 15.

որոնք էլ մեծ մասամբ հիմք են հանդիսանում իմացական-ճանաչողական գործընթացների արդյունավետ իրագործման և ճանաչողական հմտությունների ձևավորման համար:

Ըստ Վ. Ա. Պետրովսկու՝ հոգեբանական կոմպոնենտի ներդրամբ զարգացնող միջավայրը ձեռք է բերում գիտելիքների և սոցիալական փորձի ստացման ուղղորդված և անձնակենտրոն հիմք, որն էլ իր հերթին ունի իրագործման սկզբունքային մոտեցում կամ սկզբունքի ներդրում:

- 1) Առաջին սկզբունքը ներառում է փոխգործակցային դիքորոշման ձևավորման մեթոդոլոգիան, որի արդյունավետ կիրառումը հնարավորություն է տալիս ճանաչողական հմտությունների նախնական՝ առաջնային շփման և ճանաչման գործառույթը հաջողությամբ հաղթահարելու: Այստեղ զարգացնող միջավայրում ներդրում ենք այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «իրար հետ», «կողք-կողքի», «միասին», որոնք նպատակաուղղված հենք ունեն: Սա ի սկզբանե տարածվում է դաստիարակ-մանկավարժների վրա, ովքեր կարծես պետք է ճկվեն դեպքի երեխան, «դառնան» երեխային հասակակից, ըմբռնեն և հասկանան նրան նրա իսկ տարիքում, ապա՝ ճկվեն և բարձրանան մանկավարժի աստիճանի: Այս դրույթը հետագայում տարածվում է երեխաների վրա, ովքեր սերտ միավորում տեսնելով՝ ձեռք են բերում շփման մոտիվացիա:
- 2) Այս սկզբունքը կոչված է՝ զարգացնող միջավայրի ապահովման ակտիվություն ձևավորմանը, որն ապահովում է խաղային-ճանաչողական գործունեության ներդրումը: Այս սկզբունքը հնարավոր է դառնում իրագործել մեծերի և փոքրերի համատեղ ակտրվության իրագործմամբ, որտեղ մեծերը «սկսում են» ակտիվ մանկանալ և օրինակ դիդակտիկ (ուսուցողական) խաղերի կազմակերպման մեջ ակտիվ դերակատար են դառնում լավագույն արդյունք ապահովելու ակնկալիքով: Նմանատիպ ակտիվությունն արդյունավետ է հատկապես ռեֆլեքսիայի (վարքի ինքնակառավարման) մեխանիզմների որոշակի տարրերի ուսուցանման համար ավագ նախադպրոցական տարիքում: Օրինակ արդեն իսկ ներդրված ինքնասպասարկման հմտությունների ընդլայնումը սեփական փորձի միջոցով: Օրինակ թույլ տալ երեխային ինքնուրույն կատարել որևէ կազմակերպչական գործառույթ, մասնավորապես լինել խաղի կազմակերպողը և հետևողը: Այստեղ ի հայտ են գալիս թե՛ կազմակերպչական, թե՛ կիրառական հմտություններ:
- 3) Այս սկզբունքը վերաբերվում է երեխայի միկրոմիջավայրի զգայական զարգացմանը և զգայական ադապտիվ վարքի ապահովմանը, որի առկայությամբ յուրաքանչյուր երեխայի համար պետք է հնարավորինս

ապահովված լինի անհատական միջավայրի և գործունեության հուզական ազատությունը և բարեկեցությունը, ակտիվության նպատակադրված և ազատ ձևը: Այստեղ և այս միջոցով է ապահովվում երեխայի «անձնական տարածքի» մասին նախնական պատկերացումների ձևավորումը, որն էլ համադրվում է «ես» համադրության գարգացման նպաստող գործոնը:

- 4) Այս սկզբունքը պայմանականորեն կարելի է անվանել «թափանցիկության» կամ պատրաստակամության, բաց լինելու սկզբունք, ինչը հանարավորություն է ընձեռում զարգացնող միջավայրի բազմաբնույթ կոմպոնենտների ընդունումն ապահովել մի դրույթով, որն առանձնակի է կարևորվում զարգացման և դաստիարակության առումով: Այստեղ ներառվում են հասարակության փորձի, մշակութային արժեքների և սեփական ես-ի արժեհամակարգային դրույթներն ընկալելի դարձնելու կարողությունները, առանց որոնց ճանաչողական հմտությունների ձևավորումը և ընդամին զարգացնող միջավայրի ստեղծումը գործնականում արդյունավետ չի լինում: Այստեղ, իհարկե, պետք է հաշվի առնել երեխաների տարիքային, սեռային և անհատական առանձնահատկությունները, որոնց համահավասք ներդաշնակության մեջ է ընթանում երեխայի զարգացումը (Վոշկովա Ա.Ա.)

Երեխայի մանկությունը յուրատեսակ զարգացման փուլ է և պատկերացումների համակարգ, սեփական ես-ը կերտելու կարողություն, անհատականության ստեղծում, դերային փոխհարաբերությունների ակտիվացում: Այս ամենն ինչպես նշեցինք զարգացնող միջավայրի ստեղծման արդյունքում է «հասունանում», քանզի անձի ձևավորումը մանկավարժության կարևորագույն խնդիրն է, իսկ ճանաչողական հմտությունների ձևավորումը և զարգացումը՝ այն նախապայմանները, որոնց արդյունավետ իրագործումն է համարվում անձի կայացման բաղադրիչ:

Վերոնշյալ գաղափարախոսության հետազոտումը կրեց նաև էմպիրիկ (փորձարարական) հենք, որի շրջանակներում կազմակերպվեց «Խաղ և զարգացնող միջավայր» թեմայով փորձարարության կազմակերպում, որի նպատակն էր փորձի միջոցով ցույց տալ և վերլուծել ճանաչողական հմտությունների զարգացումը միջավայրի (զարգացնող) ազդեցությամբ, ինչը հանդիսանում է երեխայի անձի բազմակողմանի զարգացման հիմք:

Փորձարարական հետազոտությունն անցկացվել է Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի թիվ 2 ՀՈԱԿ մանկապարտեզի ավագ խմբի թվով 28 երեխաների շրջանում: Անցկացվող զարգացնող խաղը

հեղինակային է և կոչվում է «Ճանաչիր ընկերոջդ քո միջոցով»: Վերոնշյալ խաղի նպատակն է՝ վեր հանել այն բաղադրիչները, որով երեխան օժտում է ընկերոջը և ցանկանում է, որ նա լինի այդպիսին՝ այդպիսով արտացոլելով միջավայրի հանդեպ իր ունեցած պահանջմունքների հիերարխիան և այն, թե ինչը պետք է զարգացնել «ընկերոջ կերտման» համար:

Ընթացքը: Երեխաները շարվեցին դեմ հանդիման այն երեխաներին, որոնց իրենք համարեցին իրենց ընկեր: Նախապես անցկացվեց փոքրիկ զրույց- նախապատրաստում թեմայի շրջանակներում, ապա սկսեցինք խաղը: Յուրաքանչյուր երեխա մոտենում էր իր ընկերոջը և իր ցանկությամբ կամ բռնում էր ձեռքը, կամ նայում դեմքին և փորձում ներկայացնել ընկերոջը և ասել, թե ի՞նչն է գնահատում նրա մեջ: հատկանշական էր այն դրույթը, որ ողջ խաղի ընթացքում արդեն իսկ հասարակական կենսափորձի և սոցիալական դերային փոխհարաբերությունների տիրույթի ազդեցությամբ տարբերակվում էին սեռային և անձնային որակները, քանզի տղաներն օրինակ ընտրում էին տղաների ընկերակցությունը և օժտում այն հատկանիշներով, որոնք կամ իրենց էին բնորոշ կամ իրենք դրանք էին ճանաչում իրենց զարգացման միջավայրում: Այդ որակներն էին՝ քաջ լինելը, չստելը, խելացի և ուժեղ լինելը և այլն, իսկ աղջիկներն առավելապես մատնանշում էին գեղեցիկ լինելը, լավ քույրիկ կամ մայրիկ լինելը, քանի որ յուրաքանչյուր հասարակարգում սեռերի զարգացման հիմքում հենց անձնային- ճանաչողական հիմնադրույթի զարգացումն է, մի հանգամանք, որը դրվել էր հետազոտության հիմքում: Արդյունքում, փորձի վերլուծությունը փոքրիկ միկրոմիջավայրում ցույց տվեց, որ զարգացնող միջավայրը՝ որպես ճանաչողական հմտությունների ձևավորման նախապայման, հատկապես արդյունավետ է զարգացնել հենց նախադպրոցական տարիքում, քանզի այս տարիքում է դրվում զարգացման այն նախահիմքը, որը երեխայի համար ապահովում է ինչպես անձնակենտրոն կամ անձնային, այնպես էլ՝ սոցիալական և հասարակական դինամիկ աճ և զարգացում: Այս տարիքում է երեխան ձեռք բերում շփման և զարգացման պարզագույն տարրերի յուրացումը, որը փորձի և սխալի մեխանիզմների կիրառման արդյունքում վերափոխվում է փորձի, սխալի և արդյունքի մեխանիզմի, ինչն էլ նրա համար ապահովում է զարգացնող միջավայրը:

Աննա Միմոնյան

**Զարգացնող միջավայրը՝ որպես ճանաչողական հմտությունների
արդյունավետ ձևավորման նախապայման նախադպրոցական կրթական
հաստատություններում**

Ամփոփում

Սույն հոդվածում քննարկվում է զարգացնող միջավայրի դերը ճանաչողական հմտությունների ձևավորման առումով, որի վերլուծությունը և հետազոտությունը կատարվել է նախադպրոցական կրթական հաստատություններում՝ ելակետ ունենալով երեխայի առողջ հոգեկան զարգացման անհրաժեշտ բաղադրիչների ձևավորումը հենց նախադպրոցական տարիքում:

Анна Симонян

**Развивающая среда как предпосылка эффективного развития познавательных
навыков в дошкольных образовательных учреждениях**

Резюме

В статье рассматривается роль развивающей среды в развитии познавательных навыков, анализ и исследование которой проводилось в дошкольных образовательных учреждениях, начиная с выработки необходимых компонентов здорового психического развития ребенка в дошкольном возрасте.

Anna Simonyan

**The developing environment as a prerequisite for the effective development of
cognitive skills in preschool educational institutions**

Summary

The article considers the role of the developing environment in the development of cognitive skills, the analysis and research of which was carried out in preschool educational institutions, starting with the development of the necessary components of a healthy mental development of a child in preschool age.

Խմբագրություն է ուղարկվել 13.08.2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 03.09.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

ԷԼԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հենակետային վարժարանի անգլերենի ուսուցչուհի
avetisyan.elen@inbox.ru

**ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՁԱՆՈՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ
ՀԱՆՐԱՄՇՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՑԵՑԱԿԵՐՊԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. հանրամշակութային ձախողում, լեզվական սխալ, միջմշակութային կոմպետենցիա, հանրամշակութային կոմպետենցիա, հանրամշակութային սխալ, միջլեզվային փոխներթափանցում, ներլեզվային փոխներթափանցում:

Ключевые слова и выражения: социально-культурная неудача, языковая ошибка, межкультурная компетентность, социально-культурная компетентность, социально-культурная ошибка, межъязыковая интерференция, внутриязыковая интерференция.

Key words and expressions: socio-cultural failure, language error, intercultural competence, socio-cultural competence, socio-cultural error, interlingual interference, intralingual interference.

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ոլորտում կուտակվել է բավականին հարուստ փորձ լեզվական սխալների ուղղման մեթոդիկաների մշակման ուղղությամբ: Ինչպես հայտնի է, լեզվական սխալները կա՛մ լեզվական փոխներթափանցման, կա՛մ ուսուցման տեսության կիրառման թերացումների հետևանք են: Լեզվական փոխներթափանցումը «լեզվական համակարգերի, խոսքային մեխանիզմների փոխազդեցություն է, մայրենի լեզվի համակարգի ազդեցությունն է ուսումնասիրվող լեզվի վրա այն յուրացնելու ընթացքում»¹: Լեզվական և այլ բնույթի սխալները բացահայտվում են ամբողջական, հատկապես կոմպետենտային մոտեցման տեսանկյունից: Ըստ այդ մոտեցման՝ համապատասխան մակարդակով ձևավորված և զարգացած հաղորդակցական կոմպետենցիայի դեպքում նվազագույնի են հասնում լեզվական սխալները, հաղորդակցական ձախողումները: Փոխներթափանցումը, ինչպես հայտնի է օտար լեզուների մեթոդիկայից, լինում են միջլեզվային և ներլեզվային: Ներլեզվային

¹ Азимов Э. Г. Словарь методических терминов (теория и практика преподавания языков) / Э. Г. Азимов, А. Н. Щукин. - Санкт-Петербург : Златоуст, 1999. – С. 472 /97с./

սխալները հետևանք են երկու և ավել լեզուների բացասական փոխազդեցության:

Ներլեզվային սխալները ներլեզվային փոխազդեցության հետևանք են: Ինչպես նշում է Տիշուլինը «Ներլեզվային սխալների առաջացման հիմնական մեխանիզմներն են ընդհանրացումը, պարզեցումը և կանոնակարգումը²: Ընդհանրացման տիպական օրինակ է, երբ փորձում են կազմել անկանոն բայերի անցյալ ժամանակը -ed վերջավորության միջոցով: Կանոնակարգման տիպական օրինակ է այն, երբ անգլերենում բոլոր գոյականների հոգնակին փորձում են կազմել -s վերջավորության միջոցով՝ «mans», «childs», «knowledges» (անգլերեն) «men», «children», «knowledge» ձևերի փոխարեն: Պարզեցման հետևանքով պարզեցվում են բարդ կառույցները կամ երբ պայմանական նախադասություններում բայի ժամանակաձևերը սխալ են ընտրվում:

Լեզվական, գործաբանական և այլ բնույթ սխալները կարող են հաղորդակցման ձախողման պատճառ դառնալ: Հաղորդակցական ձախողումների տարբեր սահմանումներ են շրջանառվում: Հիմնականում առանձնանում են լեզվաբանների կողմից իրականացված հետազոտությունները: Համապարփակ ուսումնասիրվում են բանավոր խոսակցական լեզվում տեղի ունեցող հաղորդակցական ձախողումները³: Շատ հետազոտություններ նվիրված են միջմշակութային հաղորդակցության ընթացքում հաղորդակցական ձախողումների հաղթահարմանը (Гудков 2003), հաղորդակցական ձախողումների կանխարգելմանը և հաղթահարմանը, հաղորդակցական ձախողումների գործաբանական վերլուծությանը⁴: Բ.Յ.

² Тишулин П. Б. Виды языковых ошибок и возможности их исправления при обучении иностранному языку / П. Б. Тишулин // Известия высших учебных заведений. Поволжский регион. Гуманитарные науки. - 2012. - № 1 (21). - С. 132-137. /133 с./

³ Ермакова О.Н., Земская Е.А. К построению типологии коммуникативных неудач (на материале естественного русского диалога)// Русский язык в его функционировании. Коммуникативно-прагматический аспект. М.: Наука, 1993. - С.30-64.

⁴ Рингл М., Брюс Б. Опыт прагмалингвистического анализа коммуникативной неудачи в коммуникативном акте-диалоге в Интернет // Актуальные проблемы современного научного знания: материалы III конф. Пятигорск: Изд-во ПГЛУ, 2010. – С. 359-366.

Գորոդեցկին և Ի. Մ. Կոբոզևան դասակարգում են հաղորդակցական ձախողումների տիպաբանության հիմնական սկզբունքները⁵:

Առանձնակի նշանակություն ունեն լեզվական, լեզվամշակութային, հանրամշակութային, միջմշակութային փոխներթանցմանը նվիրված աշխատանքները⁶:

«Հաղորդակցական ձախողումները հետևանքները քանակի և սկզբնաղբյուրների տեսանկյունից կարող են լինել պարզ և բարդ»⁷:

Հաղորդակցական ձախողումները կարող են լինել գլոբալ, երբ ընդհատվում է հաղորդակցությունը և մասնավոր, երբ հաղորդակցվողներն առաջ եկող դժվարությունները հաղթահարելու գործընթացում շեղվում են թեմայից: Հաղորդակցական ձախողումների պատճառները կարող են լինել տարբեր՝ լեզվական, հոգեբանական, գործաբանական և այլն: Այսինքն հաղորդակցվողները կարող են ձախողումներ գրանցել լեզվի կառուցվածքի մակարդակում, անձերի տարբերությունների պատճառով, գործաբանական նկատառումներով:

Դ. Օստինն անվանում է հաղորդակցական ձախողումը «վրիպում»: Ըստ նրա վրիպումը տեղի է ունենում այն դեպքում, երբ հաղորդակցվողներն իրենց նպատակին չեն հասնում: Նա այդ «վրիպումը» որակում է որպես «կատարողական վրիպում», որը բխում է խոսքային ակտերի տեսության մեթոդաբանությունից⁸: Ե. Վ. Պաղուչևան նշում է հաղորդակցական ձախողումների այնպիսի սկզբնաղբյուրներ, ինչպիսիք են ոչ կապակցված երկխոսությունը, նախադասության շարահյուսական և

⁵ Городецкий Б.Ю., Кобозева И.М., Сабурова И.Г. К типологии коммуникативных неудач// Диалоговое взаимодействие и представление знаний. Новосибирск. - 1985. - С. 17-29.

⁶ Тимачев П. В. Лингвокультурная интерференция как коммуникативная помеха (на материале английского языка): автореф. дисс. канд.филол.наук /П. В. Тимачев. Волгоград, 2005. - 17 с., Полуяхтова С.В.Феномен интерференции в иноязычной профессиональной межкультурной коммуникации/С.В.Полуяхтова // Педагогическое образование в России.- 2012. -№ 1. - С.108-111., Павловская Г.А.Социокультурные ошибки речеповеденческого плана при проведении презентации на английском языке / Г.А.Павловская // Вестник ВГУ Серия: Лингвистика и межкультурная коммуникация.-2009.-№ 2. - С.155-157.

⁷ Городецкий Б.Ю., Кобозева И.М., Сабурова И.Г. К типологии коммуникативных неудач// Диалоговое взаимодействие и представление знаний. Новосибирск. - 1985. - С. 17-29.

⁸ Austin, J.L.How To Do Things With Words. ed. J.O.Urmson and Marina Sbisa. Oxford, 1962. - С.33 - 34.

իմաստաբանական անճշտությունը, աշխարհի մոդելների տարբերությունը. ընդհանուր տեսադաշտի խաթարումը⁹: Օտար լեզու դասավանդող անձինք սովորույթի ուժով ուշադրություն են դարձնում շարահյուսական և իմաստաբանական բնույթի սխալների վրա: Մակայն գործաբանական, հանրամշակութային բնույթի սխալները հիմնականում հետին պլան են մղվում:

Ըստ Օ.Պ.Երմակովայի և Ե. Ա. Զեմսկայայի՝ հաղորդակցական ձախողումը «հաղորդակցության գործընկերոջ կողմից արտահայտության լրիվ կամ մասնակի չհասկանալն է, այսինքն՝ երբ խոսողի հաղորդակցական դիտավորությունը չի իրագործվում կամ իրագործվում է մասնակի»¹⁰: Ըստ նույն հեղինակների՝ հաղորդակցական ձախողումների պատճառ կարող են լինել՝ 1) լեզվական համակարգի առանձնահատկությունները, 2) խոսողների տարբերությունները, 3) գործաբանական գործոնները:

Հաղորդակցական ձախողումների պատճառները տարբեր են լինում: Պատահական չէ, որ «հաղորդակցական ձախողում» հասկացությունը տարբեր տեսանկյուններից է սահմանվում՝ լեզվաբանական, հաղորդակցական, գործաբանական և այլն: Ակնհայտ է, որ հաղորդակցման ձախողման հիմնական պատճառը խոսքը ամբողջական կամ մասնակի չհասկանալն է: Ինչպես ընդունված է հայերենում ասել՝ խոսքը տեղ չի հասնում: Երբեմն, ում որ ուղղված է լինում խոսքը, պատրաստ չէ երկխոսության: Երբեմն հաղորդակցվողներից մեկը չի հետաքրքրվում քննարկման առարկայով: Շատ դեպքերում հաղորդակցվողները շեղվում են հաղորդակցական նորմերից և կանոններից, համապատասխան հաղորդակցական իրադրությունում հաղորդակցվողները ճիշտ չեն ընտրում պահանջվող կամ ընդունված լեզվաարտահայտչամիջոցները կամ ոչ խոսքային հաղորդակցական միջոցները, այսպես ասած «մարմնի լեզուն»:

Հարկավոր է տարազատել նույն լեզվող հաղորդակցվող լեզվակիրների շրջանում տեղի ունեցող և օտար լեզվով հաղորդակցվող մարդկանց միջև տեղի ունեցող հաղորդակցական ձախողումները:

Չետագոտողներն առանձնացնում են հաղորդակցական ձախողումների տարբեր պատճառներ՝ լեզվական կոմպետենցիան, հանրա-

⁹ Падучева Е.В. Семантические исследования [Текст]/Е.В. Падучева - М.: Речь, 2006. - С. 288.

¹⁰ Ермакова О.Н., Земская Е.А. К построению типологии коммуникативных неудач (на материале естественного русского диалога)//Русский язык в его функционировании. Коммуникативно-прагматический аспект. М.: Наука, 1993. - С.30-64.

մշակութային կարծրատիպերը, անձի հոգեբանությունը, սեռը, տարիքը և այլն: Երբ հաղորդակցությունը չափից ավելի ծիսականացված է, առաջնային է դառնում հանրամշակութային և գործարանական ուղղվածության հաղորդակցական սխալների կանխարգելումը: Հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում չափից ավելի ծիսականացումը: Ինչ-որ առումով ցանկացած ծես ազգամշակութային նշույթավորում ունի: Ծեսի լեզուն հիմնականում նեղ ազգային բնույթ ունի: Այս պարագայում կարևորվում է ծիսական հաղորդակցության հանրամշակութային հայեցակերպը, քանի որ հաղորդակցության մասնակիցները ոչ միայն տարբեր մշակույթներ են ներկայացնում, այլև տարբեր հանրամշակութային իրողություններ:

Հաղորդակցական սխալները և ձախողումները դժվարությամբ են նկարագրվում և բացատրվում, քանի որ դրանք ոչ միայն կոնկրետ հանրամշակութային, այլև իրադրային ենթատեքստ են ենթադրում: Իրադրային ենթատեքստը հաղորդակցական իրադրության բաղադրիչների՝ ժամանակի, տեղի, պաշտոնականության, ոչ պաշտոնականության, մասնակիցների նպատակադիրքորոշումների, մտադրությունների ամբողջությունն է: Այստեղից հետևում է, որ օտար լեզվով հաղորդակցվողը պետք է կարողանա ճիշտ որոշել հաղորդակցական իրադրության բաղադրիչները: Անձը պետք է կարողանա ճիշտ ընտրել խոսելու տեղն ու ժամանակը, պետք է հաշվի առնի հաղորդակցման մասնակիցների գործարանական առանձնահատկությունները՝ տարիքը, դիրքը, նպատակադիրքորոշումները, կյանքի մասին պատկերացումները և այլն: Եթե իրադրային ենթատեքստն ավելի շատ գործարանական ուղղվածություն ունի, ապա հանրամշակութային իրադրությունը սահմանվում է ավելի շուտ արժեքանական կարգերով և հասկացություններով: Այն տվյալ իրադրությանը բնորոշ և տվյալ մշակույթի վրա հիմնված վարքագծի նորմերի և կանոնների ամբողջությունն է, որը հաղորդակցվողների շփման ֆոնն է ապահովում:

Օտար լեզվի ուսուցման գործընթացում լուրջ դժվարություն են ներկայացնում հանրամշակութային սխալները: Հանրամշակութային սխալները կարող են լինել տարբեր՝ «սխալներ հանրամշակութային հենքային գիտելիքների մակարդակում, սխալներ հաղորդակցվողների

խոսքային վարքագծի մակարդակում, սխալներ գրավոր խոսքի ընդհանուր մշակույթի մակարդակում»¹¹:

Հատկապես հանրամշակութային սխալների պատճառով լեզվա-կիրների հետ շփումը կարող է առաջ բերել մշակութային-լեզվական շոկ: Ավանդաբար մեթոդիստներն ու մանկավարժները ուշադրություն են դարձնում հնչյունական/հնչյունաբանական, ձևաբանական-շարահյուսական, բառային-իմաստաբանական սխալներին: Սակայն գործաբանական բնույթի սխալներն անհրաժեշտ ուշադրության չեն արժանանում: Սակայն հենց գործաբանական-հանրամշակութային բնույթի սխալները կարող են ձախողել հաղորդակցությունը: Կ.Կլեպինն այդ առումով առանձնացնում են հաղորդակցությունը ձախողող սխալներ (kommunikationsbehindernde Fehler), և հաղորդակցությունը չձախողող սխալներ (nicht kommunikationsbehindernde Fehler)¹²:

Ակնհայտ է, որ հաղորդակցական կոմպետենցիաների հարաբերակցությունը հաշվի չառնելը հանգեցնում է տարաբնույթ հաղորդակցական սխալների և ձախողումների առաջ գալուն: «Առանձնակի նշանակություն ունի ներլեզվային սխալների առաջացման մեխանիզմների իմացությունը»¹³:

Կարևորվում են հատկապես Վ.Վ. Սաֆոնովայի և Լ.Գ. Կուզմինայի աշխատանքները, որոնցում քննության են առնված հանրամշակութային սխալները¹⁴:

Ըստ Կուզմինայի՝ «հանրամշակութային սխալ» հասկացությունը ենթադրում է խոսքի այն թերացումները և թերությունները, որոնք աշխարհի հանրամշակութային ընկալման տարբերությունների արդյունք է: «Հաղորդակցության մասնակիցը ընկալում է ուրիշ մշակույթի վարքագծի իրությունները, երևույթները, նորմերը իր կողմից յուրացրած աշխարհաընկալման մոդելի պրիզմայի միջոցով»¹⁵:

¹¹ Кузьмина Л. Г. Типология социокультурных ошибок в англоязычной письменной речи русских обучающихся / Л. Г. Кузьмина, В. В. Сафонова // Иностранные языки в школе. - 1998.- № 5. - С. 31-34.

¹² Kleppin Karin, Fehler und Fehlerkorrektur, Fernstudieneinheit 19, Langenscheidt, 1998. - p. 42.

¹³ Тишулин П. Б. Виды языковых ошибок и возможности их исправления при обучении иностранному языку / П. Б. Тишулин // Известия высших учебных заведений. Поволжский регион. Гуманитарные науки. - 2012. - № 1 (21). - С. 132-137.

¹⁴ Кузьмина Л. Г. Типология социокультурных ошибок в англоязычной письменной речи русских обучающихся / Л. Г. Кузьмина, В. В. Сафонова // Иностранные языки в школе. - 1998.- № 5. - С. 31-34.

¹⁵ Там же / С.32

Հանրամշակութային սխալների տիպաբանությանը կարող են վերաբերել հետևյալ շեղումները.

1) «Հանրամշակութային հենքային գիտելիքների մակարդակում տեղի ունեցող սխալներ, այսինքն՝ երբ սխալ են իմաստավորում հենքային բառապաշարը: Օրինակ՝ the first floor / der erste Stock ասելով, բրիտանացին կամ գերմանացին ակամայորեն պատկերացնում են այն հարկը, որը գտնվում է առաջին հարկի վերևում, առաջին հարկը մատնանշելու համար նրանք գործածում են the ground floor / das Erdgeschoss բառերը: Նման սխալների պատճառը մի լեզվից մյուս լեզու տվյալ հասկացության փոխանցելն է:

2) Մխալներ հաղորդակիցների խոսքային վարքագծի մակարդակում. Օրինակ, խոսողը thank you-ին պատասխանում է please բառով: Խոսքային-վարքագծային սխալներին վերաբերում է նաև հնչերանգի ընտրությունը, դադարները, խոսքի տեմպը, որը բնորոշ է լեզվակիրներին: Միևնույն ժամանակ, հաշվի չեն առնվում օտար լեզվին բնորոշ առանձնահատկությունները, ինչը հանգեցնում է տարբեր լեզուներով հաղորդակցվող զրուցակիցների կողմից հնչող խոսքի ընկալման դժվարության»¹⁶:

3) ընդհանուր մշակույթի համատեքստում գրելու սխալներ. Օրինակ՝ պաշտոնական նամակներում դիմելու ձևերի սխալ կիրառում. եզրափակող դարձվածի ոչ ճիշտ ընտրություն՝ Yours truly, Yours faithfully կամ Yours sincerely, գրավոր պաշտոնական խոսքում տարբեր խոսակցական կլիշեերի օգտագործումը. սխալներ անվան, հայրանվան և ազգանվան, ամսաթվերի գրության, տնային և աշխատանքային հասցեների ձևակերպման, տեքստի կառուցվածքի մեջ: Նման սխալները բացատրվում են օտար լեզուների դասավանդման ռուսական ավանդույթի մեջ ամենօրյա հաղորդակցության մեջ բանավոր խոսքի գերակշռությամբ¹⁷:

4) Վարքագծային (արտալեզվաբանական, ոչ խոսքային), այսինքն՝ «սխալներ, որոնք ուղղակիորեն կապված չեն օտար լեզվի օգտագործման հետ, բայց ուղղակիորեն ազդում են բանավոր հաղորդակցության հաջողության վրա»¹⁸: Վարքաձային սխալները ենթադրում են հաղորդակ-

¹⁶ Павловская Г.А. Социокультурные ошибки речеповеденческого плана при проведении презентации на английском языке / Г.А.Павловская // Вестник ВГУ Серия: Лингвистика и межкультурная коммуникация. – 2009. –№ 2. – С.155-157.

¹⁷ Овчинникова 2002. – С. 142.

¹⁸ Климович Н. И. Ошибка как инструмент измерения речевой компетенции / Н. И. Климович // Лингвострановедение: методы анализа, технология обучения: 7 межвузовский семинар по лингвострановедению: сборник статей : в 2 ч. Ч. 1: Языки в

ցական վարքի նորմերի խախտում, որոնք ընդունվել են տվյալ լեզվամշակութային միջավայրում (շփվող լինելը, լրակյացություն, մատչելիություն-սառնություն, հուզականություն-գսպվածություն, պաշտոնականություն-ընկերասիրություն և այլն): Դրանք կարելի է անել՝ օգտագործելով «body language» «մարմնի լեզուն»։ «Շատ ժեստեր տարբեր մշակույթներում տարբեր իմաստ ունեն, այդ ժեստերի օգտագործման սխալները հանգեցնում են տհաճ և հաճախ վտանգավոր հետևանքների: Կեցվածքի սխալները (թեքված մեջքը, գլուխը դեպի ուտերը թեքված, խոսքային հաղորդակցության ժամանակ կանգնած դիրքում և այլն), դիրքային սխալներ (գրուցակցից հեռավորության սխալ ընտրելը (չափազանց փոքր կամ մեծ) նվազեցնում է խոսքային հաղորդակցության արդյունավետությունը: Վարքագծային սխալները ներառում են նաև հագուստի տեսակի ընտրության կանոնների խախտումը («dress code»)»¹⁹:

Այսպիսով, հանրամշակութային սխալները հիմնականում հանրամշակութային կոմպետենցիայի ոչ բավարար ձևավորվածության հետևանք են:

Միջմշակութային փոխաներփանցման հետևանքով առաջ եկող սխալները հետևանք են ոչ այնքան անհրաժեշտ բառապաշարի բավարար չափով իմացության, այլև ավելի շատ հանրամշակութային բնույթի նորմերի չիմացության: Երբեմն բառի, բառակապակցության թարգմանությունը լուրջ խնդիրներ է առաջ բերում: Հատկապես դա վերաբերում է բովանդակությամբ պարզ թվացող արտահայտություններին: Օրինակ՝ «It's ok» ինդրանքը չի նշանակում չեզոք վերաբերմունք, այլ անբավարարվածություն: Օտար լեզու ուսումնասիրող անձը կարող է հաղթահարել միջմշակութային բնույթի փոխներթանցումը, եթե նրա մոտ բավարար չափով է ձևավորված հանրամշակութային կոմպետենցիան: Մեթոդիստները տարբեր մեթոդներ և ձևեր են առաջարկում սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման նպատակով: Մեծ տեղ է հատկացվում բնագիր ուսումնական նյութերին: «Անհրաժեշտ կիրառել ուսուցման ընթացքում վերբլեեսոներ կամ դերային խաղեր, ժամանակակից ֆիլմեր և սերիալներ: Երկրագիտական հայեցակերպերի ուսուցման

аспекте лингвострановедения / отв.ред. Л. Г.Веденина. - Москва: МГИМО-Университет, 2010. - С. 248-258.

¹⁹ Там же.

գործընթացում անհրաժեշտ է շեշտը տեղափոխել աշխարհագրությունից և պատմությունից վարքագծի նորմերի, արժեքների և ավանդույթների վրա²⁰:

Փոխներթանցումը հանդես է գալիս որպես ճանաչողական-խոսքային մեխանիզմների կոնֆլիկտային փոխազդեցություն, որը դրսևորվում է երկրորդային լեզվական անձի մոտ լեզվական, խոսութային, հանրամշակութային նորմերից մի լեզվամշակույթից մյուսի վրա ազդեցությամբ շեղումներով²¹: Ըստ նույն հեղինակի՝ այստեղ խոսք է գնում իրար հետ չհամընկնող տարբեր մշակույթների լեզվամշակութային պատկերների մասին: Ըստ այդմ՝ «օտարալեզու մշակույթի մասին աղճատված գիտելիքները շտկելու անհրաժեշտություն ունեն լեզվաբանական, խոսութային և հանրամշակութային մակարդակներում, որը սովորողի մոտ հաղորդակցական ձախողումներ են առաջ բերում»²²:

Փաստորեն, փոխներթանցումը տեղի է ունենում տարբեր լեզվամշակույթների խոսքային, մենթալ և ոչ խոսքային միավորների փոխազդեցության մակարդակում²³: Մշակելով միջմշակութային փոխներթանցման հաղթահարման մեթոդիկա՝ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ «միջմշակութային փոխներթանցումը ներառում է փոխներթափանցման լեզվամշակութային և հանրամշակութային տեսակները»²⁴:

Հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման դժվարությունն այն է, որ օտար լեզու ուսումնասիրողը պետք է յուրացնի «այլ մշակույթի իրակությունները, երևույթները, վարքագծի նորմերը իր կողմից յուրացրած աշխարհընկալման մոդելի պրիզմայի միջոցով»²⁵:

Հանրամշակութային բնույթի սխալները հաճախակի են հանդիպում տարեթվերի, դիմումների, հասցեների, եզրակացությունների, ամփոփում-

²⁰ Кузарь Д.Г., Клейнер Л.Н. Способы преодоления интерференции при обучении межкультурной коммуникации. -Минск. - 2019.- С. 236-238// Способы преодоления интерференции при обучении межкультурной коммуникации (bseu.by)

²¹ Тимачев П.В. Лингвокультурная интерференция как коммуникативная помеха (на материале английского языка): автореф. дисс. канд. филол. наук / П.В.Тимачев. Волгоград, 2005. - С.17.

²² Там же/ С.4.

²³ Там же/ С.6.

²⁴ Полуяхтова С. В. Феномен интерференции в иноязычной профессиональной межкультурной коммуникации / С. В. Полуяхтова // Педагогическое образование в России. -2012. - № 1. - С.108-111.

²⁵ Зимняя И.А. Ключевые компетенции — новая парадигма результата современного образования. URL: <http://www.eidos.ru/journal/2006/0505.htm>

ների, գործարարական նամակներ գրելու ընթացքում: Երբեմն հաղորդակցական ձախողումը հանգեցնում է մշակութային կոնֆլիկտի, ցնցման, քանի երբեմն դժվար է լինում սեփական մշակութային նորմերը հաղթահարելը: Պահանջվում է լուրջ և հետևողական աշխատանք, որ սովորողները կարողանան բացահայտել տարբեր լեզվամշակույթների տարբերությունները և նմանությունները, կատարելագործել իրենց հայրենագիտական և երկարագիտական գիտելիքները, հասկանալ լեզվակիրների լեզվական և մշակութային իրողությունները: «Այդպիսի համեմատությունը նպաստում է սովորողների ինտելեկտի զարգացմանը, օգնում է նրանց հայտնել սեփական կարծիքը»²⁶:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ հաղորդակցական ձախողումները կարող են ունենալ և՛ լեզվական, և՛ մշակութային պատճառներ: Այսինքն՝ կարող է ոչ միայն մի լեզվական համակարգն բացասաբար ազդել մյուսի վրա, այլև մի մշակույթը՝ մյուսի վրա: Այս համատեքստում մշակույթը դիտարկվում է լայն իմաստով: Միջմշակութային հաղորդակցության ընթացքում տեղի է ունենում մշակութային արժեքների փոխանցում, իմաստավորում և վերափոխարկում:

Եզրակացություն

Հաղորդակցական սխալները և ձախողումները դժվարությամբ են նկարագրվում և բացատրվում, քանի որ դրանք ոչ միայն կոնկրետ հանրամշակութային, այլև իրադրային ենթատեքստ են ենթադրում: Օտար լեզվի ուսուցման գործընթացում լուրջ դժվարություն են ներկայացնում հանրամշակութային սխալները: Կարևոր է նշել, որ ձևավորվել են բավականին հարուստ ավանդույթներ լեզվական/լեզվաբանական /քերականական, բառային, հնչյունական, իմաստաբանական, ոճաբանական/ սխալների ուղղման ոլորտներում: Մակայն գործաբանական-հանրամշակութային սխաների բացահայտման և ուղղման մեթոդիկական դեռևս նոր է զարգանում: Պատճառներից մեկն այն է, որ մեթոդիստները դժվարությամբ են յուրացնում խոսության-գործաբանական վերլուծության ընթացակարգերը, ընդհանրապես մեթոդաբանությունը: Մյուս պատճառն այն է, որ օտար

²⁶ Крамар Т.Е. Социокультурная интерференция и способы ее преодоления в процессе обучения английскому языку в школе / Т. Е. Крамар, С. В. Санникова // Современные подходы в методике и практике преподавания иностранного языка: материалы и доклады междунар. конференции / М-во образования и науки Рос. Федерации, Самар. нац. исслед. ун-т им. С. П. Королева (Самар. ун-т) ; отв. ред. В.В. Левченко - Самара: Изд-во Самарского университета, 2016. - С. 39-44.

լեզվի մեթոդիստներն անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում օտարալեզու հաղորդակցական կոմպետենցիայի բաղադրիչների վրա: Նրանք բավականին լավ են պատկերացնում լեզվական, խոսքային կոմպետենցիաները, սակայն հետազոտության հետին պլան են մղում հանրամշակութային, փոխահատուցող, ուսումնաձանաչողական կոմպետենցիաները:

Էլեն Ավետիսյան

**Հաղորդակցական ձախողումների հաղթահարման
հանրամշակութային հայեցակերպը
Ամփոփում**

Սույն հոդվածում քննության են առնվում հաղորդակցական ձախողումների բովանդակությունը, պատճառները, դրանց հաղթահարման հանրամշակութային հայեցակերպը: Հստակորեն շեշտադրվում է այն գաղափարը, որ լեզվակիրների միջև տեղի ունեցող հաղորդակցության ձախողումները հիմնականում տարբերվում են տարբեր լեզվական, մշակութային հանրություններ ներկայացնող մարդկանց հաղորդակցական ձախողումներից: Մահմանվում է «հաղորդակցական ձախողում», ինչպես նաև «սխալ», «վրիպում», «սայթակում» հասկացությունները: Վերլուծելով միջմշակութային հաղորդակցության ընթացքում հաղորդակցական ձախողումների պատճառները, բացահայտվում են հանրամշակութային ձախողումները և սխալները: Փորձ է արվում ցույց տալ օտար լեզվի ուսուցման գործընթացում հաղորդակցական ձախողումների հաղթահարման ուղիները, արդյունավետ ամսավարությունը:

Элен Аветисян

**Социально-культурный аспект преодоления коммуникативных неудач
Резюме**

Существуют богатые традиции в сферах исправления языковых, грамматических, лексических, стилистических ошибок, однако методика выявления и исправления прагматических и социально-культурных ошибок развивается не в должной мере. Это объясняется тем, что методисты и учителя иностранных языков имеют определенные трудности в связи с усвоением и применением дискурсивно-прагматических методов и процедур, в целом методологии. Очень часто игнорируется ими соотношение основных компонентов коммуникативной компетенции, в том плане, что на задний план отодвигаются социально-культурные и компесаторные, учебно-познавательные компетенции. Успех предупреждения и преодоления коммуникативных неудач в учебном процессе во многом зависит от того, как, какими методами учителя пытаются преодолеть социально-культурную интерференцию.

Socio-cultural aspect of overcoming communicative failures

Summary

There are rich traditions in the areas of correcting linguistic, grammatical, lexical, stylistic errors, but the methodology for identifying and correcting pragmatic and socio-cultural errors is not being developed to the proper extent. This is explained by the fact that methodologists and foreign language teachers have certain difficulties in connection with the assimilation and application of discursive-pragmatic methods and procedures, in general, methodology. Very often they ignore the ratio of the main components of communicative competence, in the sense that socio-cultural and compensatory, educational and cognitive competencies are relegated to the background. The success of preventing and overcoming communicative failures in the educational process largely depends on how, with what methods, teachers try to overcome socio-cultural interference.

Խմբագրություն է ուղարկվել 18.08.2021թ.

Հանձնարարվել է գրախոսության 08.09.2021թ.

Տպագրության է հանձնարարվել 06.10.2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՂԱՎԻԹ ԳՅՈՒՂՋԻՆՅԱՆ

Հրեաների լեզվի հայերեն անունները և դրանց տարբերակները 3

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՍԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Նորակազմությունները Հովհաննես Երզնկացու հոգևոր երգերում 18

БЕЛЛА ХОДЖУМЯН

Невербальные знаки и их вербализация в процессе межкультурной коммуникации 26

ЛУИЗА ТЕР-САРКИСЯН

Об одном из способов передачи слов-реалий в русских переводах армянского исторического романа Раффи «Самвел» 32

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

Ռճական հնարքները Ավետիք Բասիակյանի «Աբու-Լալա մահարի» պոեմում և դրանց անզլերեն թարգմանությունը 47

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈՒԲՅԱՆ

Նախկին Խորհրդային Հայաստանի գրադարանագիտական և մատենագիտական բնույթի պարբերականները. «Բիրլիոգրաֆիական ամսագիր», «Գրադարանավար», «Կուլտուր-լուսավորչական աշխատանք» և «Սշակույթ» 64

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ստեղծագործելու շնորհի անհատական եվ կանոնական ընկալումների դրսեվորումը հայ միջնադարյան քնարերգության մեջ 76

ԳԱՐԻՆ ՔԵՍՍԱԲԻԼՅԱՆ

Ողբերգականն ու հերոսականը Ստ. Ալաջաջյանի պատմա-գեղարվեստական արձակում («Եղեգները չխոնարհիլեցին») 89

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Հայկական և արաբական աղբյուրները Սասանյան
Պարսկաստանի նվաճման մասին **94**

ՏԻՐՈՒՀԻ ՄԻՐԵԿԱՆՅԱՆ

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տպարանի հիմնումը և
գործունեությունը (1819-1870 թվականներին) **104**

ՄՇԱԿՈՒՑԹ

ԱՐՓԻՆԵ ԹՈՐԻԿՅԱՆ

Հայոց Մեծ եղեռնի թեման Սարգիս Խաչատուրյանի
ստեղծագործություններում **126**

ՌՈՒԶԱՆ ԱՆԱՆՅԱՆ

Հայաստանյան պատկերները Ռաֆայել Շիշմանյանի
արվեստում **134**

ԳՈՌ ՄԱԼՆԱԶԱՐՅԱՆ

Դևի դերերգը Բեգլար Ամիրջանի մեկնաբանությամբ **140**

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Մտեփան Զորյանի «Զրհորի մոտ» պատմվածքի
դասավանդումը **150**

ԱՆՆԱ ՄԻՄՈՆՅԱՆ

Զարգացնող միջավայրը՝ որպես ճանաչողական
հմտությունների արդյունավետ ձևավորման նախապայման
նախադպրոցական կրթական հաստատություններում **161**

ԷԼԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հաղորդակցական ձախողումների հաղթահարման
հանրամշակութային հայեցակերպը **167**